

դրամատուրգիա

գրական-գեղարվեստական հանդես

50 ²⁰¹⁷ 51

ՊԻԵՄՆԵՐ

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՁՅԱՆ	2	ՊԱՏԱՀԱՐ
ԿԱՐԻՆԵ ԽՈԴԻԿՅԱՆ	22	ԵՐԿՈՒ ՕՐ «ԳՐԱԽՏՈՒՄ»
ՍԱՄՎԵԼ ԿՈՍՅԱՆ	58	ԵՎ ՉՅՈՒՆՆ ԻՋՆՈՒՄ Է...
ԱՐՇԱԿ ՍԵՄԻՐՁՅԱՆ	82	ԴԱՐՊԱՄՆԵՐԸ
		ԲԱՅՎՈՒՄ ԵՆ
ԳՈՀԱՐ ՄԱՐԿՈՍՅԱՆ-ԿԱՍՊԵՐ	116	ՀՈՒՇԱՐՁԱՆ
ՕԼԵԳ ՄԻԽԱՅԼՈՎ	132	ԵՐԴՎՅԱԼ ԿՈՒՅՍԵՐԸ

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿԸ



**Գուրգեն
ԽԱՆՋՅԱՆ**

*Փողի, շահամոլության սատանայական մեքենան
հարվածում է մեր շեմքի հիմնասյուներին, դիմանալու ենք
գայթակղություններին, թե տրվելու ենք... Խնդիր է:*

ՊԱՏԱՀԱՐ

(Գրաձև մեկ գործողությամբ)

Գործող անձինք

ԼՈՒՍԻՆԵ

ՍԱՀԱԿ

ՏԱՐՈՆ

ԼԻԼԻ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Գյուղական տուն, գիշեր, Լուսինե, Սահակ:

ԼՈՒՍԻՆԵ - (հորանջելով): Չքնե՛նք:

ՍԱՀԱԿ - (ինչ-որ հաշվարկներ է անում հեռախոսի մեջ): Կքնենք, քնելը խնդիր չի... Ոնց գցում-բռնում եմ՝ էլի ծերը ծերին չի հասնում: Էդ ի՞նչ պիտի տա մեր ծիրանի այգին, որ բանկի վարկը փակենք ու մի բան էլ ապրելու փող մնա, էլ չեմ ասում՝ ուրիշ բաներ... Լուսինե, իրիկվա ջուրը տվե՛լ ենք այգուն:

ԼՈՒՍԻՆԵ - Տվել ենք, ամեն ինչ արել ենք, դու մի անհանգստացիր, ցոգողը լիքն ա ճյուղերին, էս տարի լավ բերք կհավաքենք, էն Տարիելը Վրաստանից կգա՝ թանկ կառնի, կտանի, նա լավ գիտի մեր ծիրանի հարգը:

ՍԱՀԱԿ - Ասա՛ կարկուտ չխփի:

ԼՈՒՍԻՆԵ - Չի խփի, անցյալ տարի խփեց, հո ամեն տարի չի խփելու:

ՍԱՀԱԿ - Ինչի՞ որ:

ԼՈՒՍԻՆԵ - Դե, Աստված կխնայի:

ՍԱՀԱԿ - Է, եթե հույսներս մնաց աստծուն, կորած ենք:

ԼՈՒՍԻՆԵ - Ինչ անհավատ բաներ ես խոսում էս ուշ գիշերով: (Շան ոռնոցին.) Ըհը, Բողարն էլ բողոքեց: Գել չմտնի՞ բակը, գիտես, չէ՛, ինչքան գել ա հայտնվել էս մոտիկ սարերում:

ՍԱՀԱԿ - Շատացել են անտերները, բայց գելի ոռնոց չէր: Լսի, Լուսո, մտածում եմ...

ԼՈՒՍԻՆԵ - Հը՞:

ՍԱՀԱԿ - Էս միտքը գլխիցս դուրս չի գալիս...

ԼՈՒՍԻՆԵ - Դե ասա, թող դուրս գա:

ՍԱՀԱԿ - Մտածում եմ, կարող ա՛մ աշխարհը մեզ ա խաբում, մենք էլ՝ ինքներս մեզ, ու էդպես շարունակվելու է, միշտ, ամեն տարի, ամեն տարի ասելու ենք՝ ծիրանը, պոմիդորը, սածիլը, խոտը, անասունը, բանը, ասելու ենք՝ ոչինչ, էս տարի չեղավ, մյուս տարի անպայման կլինի, տեղը կհանենք, ու էսպես տարիները անցնելու են, մենք ծերանալու ենք

պարտքերի տակ կռացած, ու մեր երազանքներից ոչ մեկը չի իրագործվելու:

ԼՈՒՍԻՆԵ - Դե չէ, Սահակ... Այսինքն, չգիտեմ... Բայց դե, չէ... Էդքան հոռետես մի եղիր, հեն և, Հրաչոն ո՞նց ա ոտի կանգնել, էս նույն մեր գյուղում, նույն հողի վրա:

ՍԱՀԱԿ - Հրաչոն գյուղապետի ախպոր տղեն և:

ԼՈՒՍԻՆԵ - Դե, կարող ա դու էլ գյուղապետ դառնաս մի օր:

ՍԱՀԱԿ - Ոնց որ ձեռ առնես: Լսի, բայց ոնց ա, է, որ մարդիկ ոչ ծառ ու անասուն են խնամում, ոչ հող են փորում, չգիտես էլ՝ ինչ են անում, ու ամեն բան ունեն: Երևի արդարությունից, ազնվությունից, ուրիշ մեծ-մեծ բաներից չեն խոսում, պարզապես ձեռն ընկածը տանում են:

ԼՈՒՍԻՆԵ - Աշխարհի չափ հին պատմություն է, Սահակ ջան, միշտ էդպես է եղել ու կա, ոմանք գողացել են, թալանել, մյուսները պոմիդոր են աճեցրել կամ բեռնակրություն արել, նույնիսկ ծիծաղելի է սրա մասին խոսելը: Դու գողություն, թալան անել կարող ես:

ՍԱՀԱԿ - Չէ:

ԼՈՒՍԻՆԵ - Ես էլ չեմ կարող: Ուրեմն արի քնենք, առավոտ վաղ ենք արթնանալու, հազար գործ ու-

նենք, մերը գործն ա: Արի, թող մոայլ մտքերը, կհարստանանք, այ կտեսնես:

ՍԱՀԱԿ - Ինչի՞, որովհետև ով շուտ ա արթնանում, նրան աստված տալիս ամ:

ԼՈՒՍԻՆԵ - Ես երեկ լավ երազ եմ տեսել, մի լավ բան լինելու է:

Մեքենայի ուժգնացող հռնդյուն, ապա հարվածի ձայն, տունը ցնցվում է:

ՍԱՀԱԿ - Էս էլ լավ բանը:

ԼՈՒՍԻՆԵ - Էս ի՞նչ էր, Սահակ, երկրաշարժ:

ՍԱՀԱԿ - Երկրաշարժի նման չէր:

Սահակն ու Լուսինեն դուրս են վազում: Ետ են գալիս, նրանց հետ՝ Տարոնն ու Լիլին, որոնք խմած են:

ԼԻԼԻ - Վայ, էս ի՞նչ կայֆ տուն ա, էստեղ մարդ ա ապրում:

ՏԱՐՈՆ - Հես ա, էս մեր տուժված ախպերն ու քուրը ապրում են: *(Լուսինեին և Սահակին.)* Չվախեք, խփել եմ՝ լավ եմ արել:

ՍԱՀԱԿ - Ոնց թե՛ լավ եմ արել, տունը քանդեցիր...

ՏԱՐՈՆ - Ասում եմ լավ եմ արել՝ ուրեմն լավ եմ արել, դեպք ա՛ պատահել ա, ի՞նչ եք խառնվել իրար: Ես կփոխհատուցեմ, չվախեք: Դե նստեք, ի՞նչ եք կանգնել-մնացել, տուններդ հյուր ա եկել, մի հատ ժպտացեք գոնե:

ՍԱՀԱԿ - Հա, բայց ղնց եղավ, էս ե-
քա տունը չտեսա՞ք:

ԼԻԼԻ - Է, խամ ես Տարոնին, թե չէ էդ
հարցը չէիր տա, տղա ջան: Էդ-
պես բաներ ա արե՞լ, նա որ խմած
ա՛ աստված հեռու տանի, չի
քշում, է, օդերով թոցնում ա ավ-
տոն, մեռնեմ իրա դոխսին, իսկա-
կան կասկադյոր:

ՏԱՐՈՆ - Խեղձ Ռենջ Ռովերիս քիթ-
մոռոթը ջարդեցի, մի փեշ փող
կնստի: Այ մարդ, տունն էլ ծամփին
էսքան մոտիկ սարքեն, քիչ ա
մնում դնեմ՝ ես փոխհատուցում
պահանջեմ:

ԼՈՒՍԻՆԵ - Տունը չլինե՞ր՝ ձորն էիք
գլորվելու:

ՏԱՐՈՆ - Ծնորհակալ ենք, փրկեցիք
մեր մատաղ կյանքերը: (*Համբու-
րում է Լուսինեի այտը:*)

ՍԱՀԱԿ - Ի...

ՏԱՐՈՆ - Երախտագիտության ձև ա,
մի հուզվի վռագ:

ԼԻԼԻ - Հա, շնորհակալ ենք: (*Համ-
բուրում է Սահակին:*)

ՏԱՐՈՆ - Էս անգամ ի՛ չասիր, մեր
ախպեր, վայ թե դուրդ եկավ:

ԼԻԼԻ - Սաղ էն աֆերիստ աղվեսն էր
մեղավոր:

ՏԱՐՈՆ - Հա էլի, պոչն առած վա-
զում էր ծամփով: Տենաս սաղ
մնա՞ց անտերը: Ընկել էր լուսերիս
դեմը՝ վազում էր, ես էլ ասի՝
ծխլեմ լկտիին, բայց ինքը ոնց որ
թե թռավ, իսկ մենք մտանք ձեր

տուն: Բարև ձեզ: Հաշվեք՝ հյուր
ենք եկել: Չծանոթանա՞նք: Էս թի-
թիգիկը Լիլին ա, ես էլ Տարոնն
եմ:

ՍԱՀԱԿ - Սահակ:

ԼՈՒՍԻՆԵ - Լուսինե:

ՏԱՐՈՆ - Լուսինե ջան, Սահակ ախ-
պեր, էդ մի երկու փետի-մետի
համար դարդ մի արեք, մի հինգ
հարուր դոլար տամ՝ հերիք ա՛:

ՍԱՀԱԿ - Չգիտեմ, առավոտ լուսով
կնայենք, կհաշվենք:

ՏԱՐՈՆ - Լավ, հազար տվի, գոհ եմ...
Տեսնում եմ, որ գոհ ես: Տունը հեշ,
ախպերս, քուրս, տունը ի՛նչ, ավ-
տոս լրիվ ճմռթվել ա, գերանը
մտել ա կապոտի մեջ, դու ասա՝
մատորին բան էղած չլնի... Առա-
վոտ կարա՞նք տրակտոր բերենք,
քաշի-հանի:

ՍԱՀԱԿ - Կարանք:

ԼԻԼԻ - Մոտիկ հյուրանոց կա՞:

ԼՈՒՍԻՆԵ - Չէ, մարզկենտրոնում է
հյուրանոցը, մի քսան կիլոմետր:

ՏԱՐՈՆ - Ավտո չունե՞ք:

ՍԱՀԱԿ - Չէ:

ՏԱՐՈՆ - Ձի էլ չունե՞ք: (*Լիլիի ծիծա-
ղին:*) Չխնդաս, ջահել վախտ
ձիարշավարան եմ հաճախել,
նստացնեմ թամբին՝ թոցնեմ դա-
չաղի պես:

ՍԱՀԱԿ - Ձի էլ չունենք:

ՏԱՐՈՆ - Ուրեմն մնացինք ձեր տա-
նը:

ԼԻԼԻ - Ծատ էլ էկզոտիկ ա, ես ու դու

էն թախտին կքնենք, կարպետի վրա, լավ էլ չոր տեղ ա, դու չոր տեղին սիրում ես...

ԼՈՒՍԻՆԵ - Մարագ էլ ունենք, խոտի դեզերի վրա կուզենք քնեք, ավելի էկզոտիկ կլինի:

ՏԱՐՈՆ - Չէ, էդ չեղավ:

ԼԻԼԻ - Ինչի՞, Տարոն, չոր խոտի հոտը կարող ա շատ էլ լավ կայֆ տա:

ՏԱՐՈՆ - Այ մարդ, մուկ-բան կլինի, հավես չկա, ես մկներից վախում եմ, առյուծից չեմ վախում, բայց մկից վախում եմ, այսինքն՝ չեմ վախում, զգվում եմ: Բայց դե հիմա դեռ ժամանակը չի քնելուց խոսելու, կոկորդա չորացել է... Տնական արաղ չունենք:

ՍԱՀԱԿ - Չէ, ծիրանից մի քիչ քաշել էինք անցյալ տարի, էն էլ պրծել ա, վերջի հարուրը երեկ խմեցի:

ՏԱՐՈՆ - Հայ գյուղացու տանն է՛լ խմիչք չլինի:

ԼԻԼԻ - Գինի էլ չունենք:

ԼՈՒՍԻՆԵ - Չեմ հասկանում, խմելու համար ջարդեցի՞ք մեր ցանկապատն ու պատշգամբը:

ՏԱՐՈՆ - Չկարծեք խմելու գերի ենք կամ ալկոհոլիկ, ռեստորանում լավ քեֆ արինք Լիլիիս հետ, բայց հիմա տեսնում եմ, որ շտապեցինք դուրս գալ, կիսատ մնաց ոնց որ, լրացնենք, հը՛, ժողովուրդ: Այ մարդ, դե մի սևեռվեք, ասեցի՝ կսարքեմ ձեր պատ-մատը, հնից լավ կլինի: Հը՛...

ՍԱՀԱԿ - Ձեր ավտոյում չունենք:

ՏԱՐՈՆ - (*ծաղրով*): Ունենք, բայց պահել ենք նեղ օրվա: Լավ, էս գյուղում խանութ չկա՛:

ԼՈՒՍԻՆԵ - Չաքարի խանութը:

ՏԱՐՈՆ - Չգիտեմ, Չաքար է, Սեթոն է, Համոն է, ինձ համար մեկ է, գնացինք:

ՍԱՀԱԿ - Բայց էս ժամին փակ ա:

ՏԱՐՈՆ - Է բացենք:

ՍԱՀԱԿ - Չաքարը քնած կլինի:

ՏԱՐՈՆ - Է արթնացնենք:

ՍԱՀԱԿ - Սարթ մարդ ա, կարող ա քֆուր տա:

ՏԱՐՈՆ - Քնահարամ անելու համար էլ առանձին կվճարենք, չմտածես: Գնացինք, Սահակ ախպեր:

ՍԱՀԱԿ - Գնանք, ինչ արած:

ՏԱՐՈՆ - Ուտելու ինչ ունենք՝ հանեք, դրեք սեղանին, մինչև գանք:

ԼՈՒՍԻՆԵ - Էս ինչի՞ եք հրամաններ տալիս, պարոն:

ԼԻԼԻ - Բնավորությունն ա էդպես, մի նեղանա: Տարոն, շամպայն էլ կբերես, հա՛մ, ապելսին, շոկոլադ, մեկ էլ թե անանաս էղավ...

ՏԱՐՈՆ - Ահաա՛: (*Լուսինեին.*) Ձեզ ինչ բերեմ:

ԼՈՒՍԻՆԵ - Ամուսնուս:

ՏԱՐՈՆ - Պահ, էդքան իրար սիրում եք, հա՛մ: Լավ, կտեսնենք: (*Սահակին.*) Գնացինք, բախտավոր:

Տարոնն ու Սահակը դուրս են գալիս:

ԼԻԼԻ - Մի բան հարցնեմ, էլի, ոնց որ կինը՝ կնոջը, բայց չնեղանաս:

ԼՈՒՍԻՆԵ - Հարցրու:

ԼԻԼԻ - Էստեղ ո՞նց եք ապրում ախր, սիրուն կին եք, մաշկի խնամք ա, լոգանք ա, լվացք ա... (Մոծակին ձեռքից քշելով:) Ըհը, կծում են, հեսա կկարմրի-կուռի:

ԼՈՒՍԻՆԵ - Չշարժվեք:

ԼԻԼԻ - Ինչի՞:

ԼՈՒՍԻՆԵ - Կարիժ:

ԼԻԼԻ - Վայ, մամա ջան...

ԼՈՒՍԻՆԵ - (պոկելով բզեզին Լիլիի ոտքից): Կատակեցի, բզեզ է, մենք կարիժ չունենք: Ըհը: (Բզեզին մոտեցնելով:)

ԼԻԼԻ - Հեռու տար:

ԼՈՒՍԻՆԵ - Էսպես էլ ապրում ենք:

ԼԻԼԻ - Դժվար չի՞ կնոջ համար: Տղամարդը հեչ, տղամարդը անասունի պես բան ա, ուր էլ դնես՝ կապրի:

ԼՈՒՍԻՆԵ - Հեշտ չի, բայց դե ինչ արած: Ձեր քաղաքն էլ իր թերություններն ունի, աղմուկ, ծուխ, խառնաշփոթ... Էստեղ հանգիստ է:

ԼԻԼԻ - Ամենից հանգիստը դագաղի մեջ ա: Վայ, կներես:

ԼՈՒՍԻՆԵ - Մի բան էլ ես հարցնեմ: Ո՞նց եղավ, որ եկաք, եկաք ու ուղիղ մեր տուն մտաք ձեր մեքենայով. երևի ընթացքի ժամանակ համբուրվում էիք, չէ՞, ձիշտն ասա:

ԼԻԼԻ - Չէ, ի՞նչ համբուրվել, համբուրվելն էստեղ էր, հյուրանոցում:

Տարոնը հեռախոսով նամակ էր գրում, աչքը ծամփից կտրեց:

ԼՈՒՍԻՆԵ - Պարզ է: Բա ասում էիք՝ աղվես...

ԼԻԼԻ - Ասել եմք... Հա, ձիշտ ա, սկզբում աղվեսն էր, հետո նամակը... Թե՛ սկզբում նամակն էր... Բայց դուք մի անհանգստացեք, Տարոնը մի բան էլ ավել կտա:

ԼՈՒՍԻՆԵ - Երեխա ունե՞ք:

ԼԻԼԻ - Կարծեցիք, թե նրա կի՞նն եմ: Չէ: Բայց ինձ շատ ա սիրում, էսօր ասեց՝ վախ, մեռնեմ ձերմակ ծիծիկներիդ, ոնց եմ քեզ սիրում, Լիլիկա, ու կծեց... Էստեղ... Հա, սիրում ա, փող ա տալիս... Էդպես մի նայի, քորիկ ջան, ամեն մարդ իրա ապրելու ձևն ա գտնում, ես ուրիշ ձև չունեմ: Ես չեմ կարող խրժիթում ապրեմ քո պես: Ձիշտ ա, ես էլ մայրաքաղաքացի չեմ, Չարենցավանից եմ, բայց Երևանը քաշեց-տարավ: Ոնց որ վիշապ լինի Երևանը, հիպնոսում, տանում ա: Բայց լավ վիշապ ա, անփոխարինելի: Չէ, երևի կարամ փոխարինեմ, բայց, ասենք, Մոսկվայով, Փարիզով, Նյու Յորքով...

ԼՈՒՍԻՆԵ - Եղել է՞ս:

ԼԻԼԻ - Միայն Մոսկվայում: Բայց Տարոնը խոստացել ա Դուբայ տանի:

ԼՈՒՍԻՆԵ - Իսկ ծնողներդ:

ԼԻԼԻ - Ծնողներս՝ ի՞նչ, իրենց հա-

մար յոլա են գնում, մեկ-մեկ ես եմ փող տալիս, մեկ-մեկ իրենք են աշխատում:

ԼՈՒՍԻՆԵ - Սեղանը մնաց: Ես տամ, դու դիր...

Լուսինեն պահարանից կերակուր է տալիս, Լիլին դնում է սեղանին:

ԼԻԼԻ - Ահագին էլ ուտելիք կա, ինչ եք դժգոհում:

ԼՈՒՍԻՆԵ - Բայց նրբ եմ դժգոհել: Գյուղի տուն է, ոնց էլ լինի՝ ուտելիք կծարվի, հեչ որ չէ՝ լավաշ-պանիրը կա ու կա: Իսկ մենք դաուրմա էլ ունենք, թթու, ըհը, կարմիր բիբար էլ կա, բադրջանի խավիար...

ԼԻԼԻ - Դրանք բոտոսվիզմի բուն են, ես չեմ ուտի:

ԼՈՒՍԻՆԵ - Ես ամբողջ ծմեռ կերել եմ, բան չի եղել, էնպես որ՝ փորձված է, կարող ես հանգիստ ուտել: Կամ էլ մի կեր, քո գործն է:

ԼԻԼԻ - *(ձեռքը քսելով Լուսինեի ուսին):* Ինչ լավ մաշկ ունես, ինչ էլ լավ հոտ ա գալիս... *(Համբուրում է Լուսինեի ուսը:)*

ԼՈՒՍԻՆԵ - Մաշկ է, էլի...

ԼԻԼԻ - Դու բան չես հասկանում... *(Գրկում է Լուսինեին:)*

ԼՈՒՍԻՆԵ - Ի՞նչ ես անում...

ԼԻԼԻ - Մի շփոթվի էդպես, քույրիկիս պես պաշում եմ, ինչ վատ ա, քույրիկիս հիշեցի, քեզ պես սիրուն

աղջիկ ա... չէ, դու ավելի սիրուն ես:

Գալիս են Մահակն ու Տարոնը՝ մթերապարկով:

ՏԱՐՈՆ - Հալալ ա Ջաքարին, ամեն բան ուներ, մի քիչ միթմոթաց, որ զարթնացրինք, բայց հենց փողի ծերը տեսավ՝ քնելը մոռացավ: Անանաս չուներ, Լիլո:

ՍԱՀԱԿ - Ոնց էլ ուտում եք էդ բեջուրա միրզը, ոնց որ խիարին շաքար ու աղեկալոն ցանես՝ ուտես: Խմիչքը շատ առանք, էսքանը խմել չի լինի, մեղք ենք:

ՏԱՐՈՆ - Չենք խմի՝ կմնա, ինչ ես իրար խառնվել, կարող ա էս քանի օրս մի հատ էլ մխրձվենք ձեր տուն, հը՞:

ՍԱՀԱԿ - Համեցեք:

ՏԱՐՈՆ - Հա, բերեք ընտանիքներով բարեկամանանք:

ԼՈՒՍԻՆԵ - Դեռ մի էս առաջին այցելության տակից դուրս գանք...

ՏԱՐՈՆ - Այ մարդ, դե ասեցի՝ դուս կգանք, էլի, էս ինչ մարդ եք... *(Գրպանից հանելով, հաշվելով փողը, մեկնելով Սահակին:)* Ըհը, հազար դոլար, պրծամք: *(Ետ բերելով փողը:)* Չէ, մի ռուպե, ձեր օջախում շեֆը ոնց որ ինքն ա: Վերցրու, քուր ջան:

ԼՈՒՍԻՆԵ - Իրեն տվեք:

ՏԱՐՈՆ - Վերցրու, ախպերս: Արա, դե մեկն ու մեկդ վերցրեք, մնաց

ծեռիս՝ կփոշմանեմ, հա: *(Փողը
Լուսինեին մեկնելով:)* Առ, քուրս,
դու պահի, տղամարդիկ լավ փող
պահող չեն, կտա խմելուն, աղջ-
կեքին... Հանաք արի, քթների
վրագ մի ծռեք: ՈւՖ, շատ դժվար
ա, երբ մարդիկ հումորից խեղճ
են լինում: Դե լավ, տեսնում եմ՝
դեռ պատրաստ չեք փող վերցնե-
լու, հետո կտամ: *(Փողը գրպանն
է տանում, դարձյալ դուրս բե-
րում:)* Մի հուզվեք, տալիս եմ, ը-
հի՛ր... *(Տալիս է Լուսինեին:)*
Չնստե՛նք արդեն, շատ խոսե-
ցինք: Ինչ էլ լավ սեղան են գցել
աղջիկներս...

ԼԻԼԻ - Ծամպայնը բացեք, ծարավ
մեռա:

ՏԱՐՈՆ - *(օղին բացելով):* Սահակ
ախպեր, բաց շամպայնը:

**Սահակը անհաջող փորձում է
բացել շամպայնը:**

ԼԻԼԻ - Կյանքում շամպայն խմած
չկան... Տուր էստեղ, է:

ՍԱՀԱԿ - Մի բոպե... Ըհը, ոնց որ է-
ղավ: *(Ծամպայնը ժայթքում է աղ-
մուկով:)* Էս խմիչքը էնքան էլ չեմ
սիրում...

ԼԻԼԻ - Ծամպայնը ինձ նման ա, մի
անգամ որ սիրեցիր, հա սիրելու
ես: Լցրու:

ՏԱՐՈՆ - Դե, խմենք էսօրվա հա-
մար, էս հաջող օրվա կենացը:

ԼՈՒՍԻՆԵ - Չեմ հասկանում, մեքե-

նան ջարդել եք, մեր ցանկա-
պատ-պատշգամբը ջարդել եք ու
ասում եք՝ օրը հաջող է: Սրա հա-
ջողը ո՞րն է:

ՏԱՐՈՆ - Մեքենան կսարքվի, տունն
էլ կսարքվի, կարևորը մարդն ա,
մեզ բան չի էղել, ողջ-առողջ
նստած՝ խմում ենք: Պատկերաց-
նո՞ւմ եք, ավտոն ավելի ուժեղ
խփեի, կամ ձեզ ձխլեի, կամ էլ ես
ջարդուխորդ լինեի... Չէ, փառք
աստծուն, ամեն բան լավ էղավ:
Համ էլ ծանոթացանք, իմ նման
ընկեր ունեցաք, քիչ ան... *(Սահա-
կին:)* Ինչ սիրուն կին ունես, Սա-
հակ ախպեր:

ԼՈՒՍԻՆԵ - Ծնորհակալ եմ:

ՍԱՀԱԿ - Հա, չեմ դժգոհում, տգեղ
չի:

ՏԱՐՈՆ - Պահ, տգեղ չի... Էդ ի՞նչ
գեղջկական մեծամտություն ա:
Ոչ թե տգեղ չի, այլ չնաշխարհիկ
ա, դու պիտի երջանիկ լինես, մոմ
վառես, որ էս էժ ու ոչխարի, քար
ու հողի, ցելսի, աթարի մեջ քեզ
էս տեսակ մարգարիտ ա բաժին
հասել:

ՍԱՀԱԿ - Մենք ոչխար չունենք:

ՏԱՐՈՆ - Լուրջ ես ասո՞ւմ, կներես,
մեծապես սխալվեցի:

ԼԻԼԻ - *(Սահակին):* Մի կոմպլիմենտ
էլ դու ինձ արա, էլի:

ՍԱՀԱԿ - Դե... Պարտադիր ան:

ԼԻԼԻ - Հա հենց, արժանի չեմ:

ՍԱՀԱԿ - Դե... Էն, էլի, որ ասեցիր...

ԼԻԼԻ - Ո՞րը:

ՍԱՀԱԿ - Ծամպայնի նման ես...

ԼԻԼԻ - Էդքանին էլ շնորհակալ ենք:

ՏԱՐՈՆ - Ժողովուրդ, բա ձեր երեխաներն ո՞ր են, զոքանչանոց եք ուղարկել:

ԼՈՒՍԻՆԵ - Չունենք երեխա:

ԼԻԼԻ - Չի ստացվում:

ՍԱՀԱԿ - Ծատ լավ էլ ստացվում ա, բայց չենք շտապում, ֆինանսական դժվարություններ ունենք:

ՏԱՐՈՆ - Էլ ոնց կլիներ:

ՍԱՀԱԿ - Մի հատ կարգին ոտի կանգնենք՝ նոր:

ՏԱՐՈՆ - Խեղճ երեխա, ձեր ոտի կանգնելուն սպասի, կարող ա էդպես էլ լույս աշխարհի չգա: Լավ, էդպես մի հուզվեք, կատակեցի: Համ էլ ի՞նչ իմանաք, կարող ա մեր ոտով ձեր տուն մեծ բախտ ա մտել:

ԼԻԼԻ - Էլի ի՞նչ անցկացրիր մտքովդ:

ՏԱՐՈՆ - Հեչ, էնպես... Դե խմեցինք, էս օրվա համար, էս հրաշալի գիշերվա համար, մեր ծանոթության համար, չքնաղ տանտիրուհու համար:

Խմում են:

ՏԱՐՈՆ - Երաժշտությունից-բանից ի՞նչ ունեք, միացրեք, էս լռությունը վրես ազդում ա:

ՍԱՀԱԿ - Չունենք:

ԼԻԼԻ - Հեռուստացույց էլ չունենք:

ՍԱՀԱԿ - Չէ: Մենք դրա ժամանակը

չունենք, ամբողջ օրը գործի մեջ ենք, գիշերվա կողմը հոգնած գալիս ենք, հազիվ մեզ օգուտ անկողին:

ՏԱՐՈՆ - Գցում ու քնում... Բա իրար չեք սիրում հեչ:

ՍԱՀԱԿ - Դե, պատահում է:

ՏԱՐՈՆ - Երևի՝ ձմեռով, երբ գործ չկա:

ԼՈՒՍԻՆԵ - Գործ ձմեռով էլ կա, ինչքան ասես:

ԼԻԼԻ - Ձեր վիճակը վիճակ չի, բար մարդ ռեզուլյար սեքս չունենա, էլ ինչի՞ համար ա աշխատում:

ՏԱՐՈՆ - Բայց ճիշտ ա ասում, իմ արև:

ԼՈՒՍԻՆԵ - Եկեք փակենք էս անհարկի խոսակցությունը:

ՏԱՐՈՆ - Կարմրեց մեր քույրիկը... Ինչ էլ սազում ա...

ՍԱՀԱԿ - Ես միշտ մտածում եմ...

ՏԱՐՈՆ - Չէ հա:

ՍԱՀԱԿ - Մտածում եմ...

ՏԱՐՈՆ - Ապա, ապա, համարձակ...

ՍԱՀԱԿ - Մտածում եմ, ո՞նց ա, որ փողը ոմանց սիրում ա, կանում ա, ոմանց էլ՝ չէ, չէ ու չէ, կուզես...

ՏԱՐՈՆ - Քամակով բոմբ օգի, չէ:

ՍԱՀԱԿ - Թեկուզ: Ինչ ուզում ես արա, գիշեր-ցերեկ աշխատի, քեզ պատեպատ տուր, քո ասածի պես՝ բոմբ օգի, չի կանում, իսկ մի ուրիշը ձեռքերը գրպանները՝ պարապ-սարապ զվոնում ա, բայց փողը ձանձի պես գալիս՝ կանում ա իրան:

ՏԱՐՈՆ - Չլինի՞ ինձ ես ակնարկում:
ՍԱՀԱԿ - Ի՞նչ իմանամ, ես քեզ չեմ ծանաչում:

ՏԱՐՈՆ - Էս միամիտ մարդը կարծում ամ, թե փողը աշխատելով ամ:

ԼՈՒՍԻՆԵ - Բա ինչո՞վ, գողանալով:

ՏԱՐՈՆ - Ոչ էլ էդ: Էստեղ մեծ խորհրդավորություն կա, միստիկա: Փողը ի վերուստ է, փողը հենց էնպես արժեքավոր թուղթ չի, որ մարդն ամ մոգոնել, փողը ի վերուստ է ստեղծվել մարդու համար: Ու որպեսզի փողը քեզ սիրի, նախ դու պիտի իրան սիրես, շատ պիտի սիրես, մի այլ ձևի պիտի սիրես, հասկանո՞ւմ եք: Դա ձեր իմացած սերը չի, ուրիշ տեսակի սեր ամ, խոսքերով չեմ էլ կարա բացատրեմ, դա զգալ ամ պետք, կարամ մենակ ասեմ, որ փողը պիտի սիրես քո քուր ու ախպորից, ծնողից առավել, քո սեփական անձից առավել, թե ուզում եք իմանալ՝ ձեր տեր աստծուց էլ առավել: Հա, ի՞նչ, աստծուց ի՞նչ խեր եք տեսել էսքան ժամանակ, ինչ խեր կա՝ փողից ամ: Ու երբ փողն իմ ասածի պես կարենաք սիրեք, ինքն էլ ձեզ կսիրի պատասխան սիրով ու որտեղ էլ լինեք, ինչ էլ անեք՝ կգա, կկանի, կգուրգուրի ձեզ: Այ էսպես, հարգելի սեղանակիցներ:

ԼՈՒՍԻՆԵ - Հետաքրքիր տեսություն է:

ՏԱՐՈՆ - Հա, բա ո՞նց: Խմենք փողի

կենացը, իրա ոգին հիմա էստեղ ֆոֆոում ամ օդի մեջ, նայում ամ, տեսնի՞ ո՞րս ենք արժանի իր սիրուն: Խմեք, մի խորշեք, էդ քաղքենիությանը վերջ տվեք, խմեք՝ արժանի եղեք իրեն, թե չէ լրիվ կնեղանա ձեզնից, էլ ոչ տրակտոր կառնեք, ոչ պարարտանյութ, ոչ սերմ ու անասուն, հա, մեկ էլ էն բանից... խոտինձիչ: Պատկերացնո՞ւմ եք, էս նույնը արած լինեի մի քրջոտ ժիգուլիով, ինքս էլ՝ աղքատ-անփող, հիմա ո՞վ էր ձեր տան վնասը փոխատուցելու, ո՞նց... Ինչ լավ ամ, որ ես եմ, ու ես փող ունեմ: Իմ հերն ու իմ պապն իմ պես սիրել են փողը, էսի ժառանգական ամ, ինձնից էլ կանցնի իմ տղուն, թոռանս:

ԼՈՒՍԻՆԵ - Ստացվում է, որ ում մոտ ժառանգական չի, էդպես էլ մնալու է անփող, հա՞:

ՏԱՐՈՆ - Ցավոք՝ այո: Բայց էստեղ մի բայց կա. մի անգամ մեկը պիտի ռիսկ անի ու սիրի փողը իրենից ու իր աստծուց առավել, փողի համար անձնազոհության պիտի գնա:

ՍԱՀԱԿ - Այսինքն...

ՏԱՐՈՆ - Քարվան կտրի, բանկ թալանի, ունեցողից խլի ու նման բաներ... Ու որ արեց, էդ արարքը կտավի իր գենոմի մեջ, կդառնա ժառանգաբար փոխանցվող:

ԼՈՒՍԻՆԵ - Դուք ոչ միայն փողի,

այլև գենետիկայի մեծ մասնագետ եք, ինչպես տեսնում եմ:

ՏԱՐՈՆ - Իզուր եք ձեռ առնում, իմ տաղանդները շատ են:

ԼԻԼԻ - Հանձարները:

ՏԱՐՈՆ - Ըհը: Որ լավ ծանոթանանք, դեռ շատ եմ զարմացնելու ձեզ: Փողի կենացը:

Խմում եմ:

ՏԱՐՈՆ - Ըհը, սիրո առաջին քայլը դեպի փողը կատարվեց, անցնենք առաջ: *(Լիլիին.)* Աղջի, հեռախոսդ քոքի, պարենք, էս լռությունը ներվերիս վրա ազդում ա:

Լիլին հեռախոսով երաժշտություն է միացնում, պարում եմ:

ԼԻԼԻ - Վայ, էլ չեմ դիմանում, շամպայնը էսպես ա, հենց խմում եմ, փուչիկս պայթացնում ա: Ո՛ր ա...

ԼՈՒՍԻՆԵ - Դրսում:

ԼԻԼԻ - Ներսում չունեք:

ԼՈՒՍԻՆԵ - Չէ:

ՏԱՐՈՆ - Դրսում ռոմանտիկ ա, աստղերի տակ, ծառի քոքին:

ՍԱՀԱԿ - Ինչի՞ ծառի քոքին, կարգին փետից զուգարան եմ սարքել, պինդ:

ՏԱՐՈՆ - Դե ուղեկցիր գեղեցկուհուն, ջենթլմեն:

ԼԻԼԻ - Գնացի՞նք, շուտ:

Լիլին ու Մահակը դուրս են գալիս:

ՏԱՐՈՆ - Գիտե՞ք, ես շատ կին եմ տեսել, ավելի ծիշտ՝ համտեսել... Դե, մի մեղադրեք, ջահել տղա եմ, կյանքը գնում է, ետ չես պահի, ինչո՞ւ ոչ...

ԼՈՒՍԻՆԵ - Ձեր գործն է, բան չասացի, ինչո՞ւ եք արդարանում:

ՏԱՐՈՆ - Ձեր պահվածքից է, էնքան խիստ տեսք ունեք, որ մարդ անկախ իրենից սկսում է արդարանալ: Նայում եմ ձեր աչքերին ու զղջում եմ, որ խոսեցի:

ԼՈՒՍԻՆԵ - Առանց աչքերիս նայելու խոսեք:

ՏԱՐՈՆ - Չէ, հենց կնայեմ ու կխոսեմ: Որտե՞ղ կանգ առա:

ԼՈՒՍԻՆԵ - Որ շատ կին եք համտեսել, գլուխ էիք գովում:

ՏԱՐՈՆ - Այո: Բայց ձեզ նման կին չեմ հանդիպել, սպասեք, մի ընդհատեք, թողեք ավարտեմ: Ձեր հմայքը ուրիշ ա, ձեր հմայքը նման ա տատիս թխած փրփուր լավաշին, քաղցր գաթային...

ԼՈՒՍԻՆԵ - Մի խոսքով, ես նման եմ ձեր տատիկին:

ՏԱՐՈՆ - Մի ծաղրեք: Ասենք, ինչո՞ւ ոչ, գուցե նման եք, ես նրան ջահել չեմ տեսել, ասում են՝ գեղեցկուհի էր: Բայց իմ համեմատությունը ուրիշ զուգահեռով էր, ուզում էի մաքրության, բնականության հետ համեմատել: Իսկ երբ պատկերացնում եմ, թե այդ ամենի տակ ինչ վայրի կիրք է

թաքնված, շունչս կտրվում է, գլուխս պտտվում, աչքերիս դեմ մթնում...

ԼՈՒՍԻՆԵ - Չափն անցաք:

ՏԱՐՈՆ - Դեռ չեմ էլ հասել չափին, Լուսինե, ու չեմ էլ հասնի, դուք անչափելի եք, անկեղծ եմ ասում, հավատացեք: Ինչ ունեմ կեղծելու, կնոջ պակամ... Փառք ասածու, հրեն, Լիլին, գեղեցկուհի չի:

ԼՈՒՍԻՆԵ - Գեղեցիկ է:

ՏԱՐՈՆ - Բայց էդպես լիլիներ շատ կան, ինչքան ուզեմ, օրական կարող եմ փոխել: Իսկ դուք ուրիշ եք, բացառիկ, ոնց որ էգ հովազ:

ԼՈՒՍԻՆԵ - Ինչ որ եմ, իմ ամուսնունն եմ:

ՏԱՐՈՆ - Վախ, էդ իզուր ասեցիր, լրիվ վատացրեց:

ԼՈՒՍԻՆԵ - Վերջ տվեք: Փառք Ասածու, վաղը կգնաք՝ ու էլ երբեք չենք հանդիպի:

ՏԱՐՈՆ - Է ոչ, ինձնից էդպես հեշտ չեք պրծնի, իմ սիրտը որ մի բանի կպավ...

ԼՈՒՍԻՆԵ - Հուսով եմ՝ կատակում եք:

ՏԱՐՈՆ - Չէ, ինչ կատակ, սա շատ լուրջ է, չեք էլ պատկերացնում՝ ինչքան լուրջ: Ահա, մերոնք եկան դունդունալով, ինչ էլ սազում են իրար:

Գալիս եմ Լիլին ու Մահակը:

ՏԱՐՈՆ - Ծատ ուշացաք, կարող ամ ձեզ լավ չեք պահել:

ԼԻԼԻ - Ուֆ, սայթաքեցի, քիչ մնաց ընկնեի կեղտերի մեջ, լավ ա Սահակը հասցրեց՝ բռնեց:

ՏԱՐՈՆ - Որ հասցրեց, դա լավ ա: Բայց չհասկացա, դուռը բաց էիր թողել:

ԼԻԼԻ - Իբր փակ կամ որ...

ՍԱՀԱԿ - Փակ կա, ինքը պարզապես չգտավ, կողքից ա, ծռած մեխ ա, մի քիչ դժվար ա փակվում, բայց կա:

ՏԱՐՈՆ - Պարզ ա, սիրով գնացիք, սիրով եկաք:

ԼԻԼԻ - Խանդում ես:

ՏԱՐՈՆ - Էն էլ ոնց: Նստեք, նստեք խմենք, մի հատ էլ խմենք մեր ծանոթության համար, էս անակնկալ գիշերվա համար, որը կամաց-կամաց ավելի ու ավելի հետաքրքիր ա դառնում ոնց որ: Ողջ լինենք, դիմանանք կյանքի գայթակղություններին, այսինքն՝ ինչի՞ դիմանանք որ, ընդառաջ գնանք, վայելենք, թե չէ էս կյանքն էլ ո՞ւմ ա պետք:

ԼԻԼԻ - Մտքինդ ասա:

ՏԱՐՈՆ - Խմենք, ասեմ:

Խմում են:

ՏԱՐՈՆ - Ասում եմ՝ դուք որ էդքան սիրով գնում եք, չիշիկ եք անում, գալիս եք...

ՍԱՀԱԿ - Ի...

ՏԱՐՈՆ - Սպասի, մի բորբոքվի վռագ, էդ համբերությամբ ո՞նց ես

պոմիդոր, խիար աճացնում, այ ախպեր, չեմ հասկանում: Ասում եմ, որ էդքան իրար հավանում եք, ես մի հետաքրքիր առաջարկ ունեմ առաջիկա գիշերվա համար:

ԼԻԼԻ - Ես ոնց որ թե կռահում եմ:

ՏԱՐՈՆ - Ու դեմ չես, չէ:

ԼԻԼԻ - Ոնց ասես, քո խոսքը, չէ, քո փողը օրենք ա:

ՏԱՐՈՆ - Ըհը, երկու հոգի համաձայն են, մնում են մյուս երկուսը:

ԼՈՒՍԻՆԵ - Պարզ խոսեք:

ՏԱՐՈՆ - Խոսում եմ, էլի, խոսելն էլ ոնց ա լինում, դուք էլ եք անհամբեր ձեր ամուսնու պես, Լուսինե: Ասում եմ... Ուշադիր լսեք ու միանգամից չբորբոքվեք, մի հատ լավ զգեք-բռնեք... Ասում եմ՝ փոխվենք զույգերով, Սահակը՝ Լիլիի հետ, ես էլ դե՛ ինչ մնաց:

Լուսինեն ապտակում է, անմիջապես էլ Սահակն է հարվածում Տարոնի դեմքին:

ՏԱՐՈՆ - Էսպես միանգամից, էսքան սիրով ու կրքով, չէի սպասում...

ԼԻԼԻ - Վախ, էս ոնց ուռեց վռագ, էս ինչ արիք, վայրենիներ: Տուր պաչեմ, անցնի:

ՏԱՐՈՆ - *(Լիլիին վանելով)*: Սպասի: *(Սահակին.)* Լավ բան չարիի, ախպերս, հայ գյուղացին իրա հյուրին չի խփի, տաբուն անցար:

Դու հասկանում ես, որ սա առանց պատասխանի չեմ թողնի, հո հենց էնպես անտեր աչք չի, ով հասնի՝ խփի: Ձեռս քարի տակ չի, Սահակ, կարամ, օրինակ, հենց էստեղ գյուլեմ, կարամ վաղը մարդ ուղարկեմ՝ տնով տեղով, գոմով-անասունով վառեն-կորցնեն: Կարամ նույնիսկ գնամ դատաբժշկականի մոտ, գործ բացել տամ վրեղ, տանեն, տարիներով փակեն ծաղերի ետևում...

ԼՈՒՍԻՆԵ - Մի հատ խփելու համար:

ՏԱՐՈՆ - Այո, աղջիկ ջան, փողին մուննաթ, էնքան ծանոթ դատավոր ունեմ... Բայց գիտե՛ք, էսքան հնարավորություններիցս որը կընտրեմ... Ոչ մեկը: Ես կներեմ ձեզ, հա, ես բարի եմ, ներում եմ, ախպեր, գնացե՛ք՝ հանգիստ ապրեք, իմ նման բարի մարդու եք հանդիպել: Բայց էն իմ առաջարկությունը մնում ա ուժի մեջ, խփելը պատասխան չէր, ավելին՝ թուլության նշան էր:

ՍԱՀԱԿ - Հավաքվեք ու գնացեք մեր տնից:

ԼԻԼԻ - Ո՛ր, Սահակ, էս ուշ ժամին, գայլերը կուտեն մեզ, դու խիղճ ունես:

ՍԱՀԱԿ - Դու կարող ես մնալ...

ՏԱՐՈՆ - Այ թե ինչ, Լիլիին ուզում ես պահես, համ: Իմ Լիլին նրա դուրը եկել է: Դե որ էդպես է, չեմ հաս-

կանում՝ ինչ եք քաղքենիություն անում, քաղաքակիրթ աշխարհում ընդունված բան է, սովորական բան, զույգերը, որպեսզի իրար չհոգնացնեն, որպեսզի բնազդները թարմացնեն, մեկ-մեկ փոխվում են, ինչ մի սարսափելի բան կա, մի քիչ ազատ նայեք կյանքին, էլի, քսանմեկերորդ դարն ա:

ԼՈՒՍԻՆԵ - Դուք ինձ դուր չեք գալիս, պարոն, էս փաստարկը հերիք է:

ՏԱՐՈՆ - Ինչ ասեմ, լուրջ փաստարկ է ոնց որ: Բայց Լիլին ձեր ամուսնուն դուր է գալիս, հանուն սիրելի ամուսնու՝ գնացեք էդ քայլին, թող նա իրեն լավ զգա: Ձեր ամուսինը չի, ձեր հարազատը չի...

ՍԱՀԱԿ - Ինձ իմ կինն ա դուր գալիս, ու վերջ էս խոսակցությանը:

ՏԱՐՈՆ - Հազար դոլար տվեցի էն գերան-մերանին, մի երկու էդքան էլ կտամ... Հը՞... Լավ, երեք էդքան... Չէ՞...

ՍԱՀԱԿ - Ես իմ կնոջը չեմ ծախում:

ՏԱՐՈՆ - Չասեցի՞ ծախել, ապրանք է, ինչ է... (Լուսինեին.) Ինչ տգեղ է արտահայտվում ձեր ամուսինը: Ծախել: Ստրկատիրության դաժան ժամանակներն անդարձ անցել են, տղա ջան: Հինգ... Չէ, տասը հազար դոլար: Հենց հիմա էլ կտամ, ավտոյի սեյֆում ա: Մի ըրպե, էլի միանգամից վրա չտաք, տուժված մարդ եմ, մտածեք՝ նոր: Իսկ ես ու Լիլին դուրս

գանք: (Լիլիին.) Ջուգարանի տեղն իմացար, չէ՞, աղջիկ ջան: Մենք ձեզ մի քանի ըրպեով լքենք, կներեք:

Տարոնն ու Լիլին դուրս են գալիս:

ՍԱՀԱԿ - Հանգիստ ապրում էինք, էս մի երկու ժամվա մեջ էս ինչ կատարվեց...

ԼՈՒՍԻՆԵ - Տասը հազարի մասին եմ խոսում:

ՍԱՀԱԿ - Էս ամեն ինչի: Լսել էի, որ կյանքը անակնկալներ մատուցելու բնավորություն ունի, բայց անձամբ ինձ չէր մատուցել. ըհը: Տասը հազար դոլար մենակ կինոներում եմ տեսել, էն էլ երևի կեղծ փողեր են, կինոյում նկարելու համար: Սրանն էլ կեղծ չլինի:

ԼՈՒՍԻՆԵ - Լինի, չլինի՞ մեզ ինչ, իրա փողերն են:

ՍԱՀԱԿ - Հա, էլի, չենք տեսել, չենք էլ տեսնի, թքած: Բայց եքա փող ա, չէ՞: Մարդ ունենա, վարկը փակի, էն Հուսիկի օպելը առնի՝ ապրանք տանի քաղաք՝ բաժանի խանութներին, հետո գա, փողերը հավաքի... Չէ, էնպես եմ ասում, Լուսո ջան, ասենք թե մի օր, մի ինչ-որ տեղից գտնենք, ասենք թե ժառանգություն ստանանք:

ԼՈՒՍԻՆԵ - Մեզ ո՞վ ա ժառանգություն թողնելու, Սահակ, մեզ ժառանգություն թողնողը հաստատ պարտքեր ա թողնելու:

ՍԱՀԱԿ - Ժիշտ որ...

ԼՈՒՍԻՆԵ - Ես միշտ երազել եմ՝ էս մեր ծանապարհի վրա տուն սարքենք, մի պատիկ պանդոկ բացենք՝ ազգային խոհանոցով, թոնիրով... Հենց տեղում թխվի, եփվի, այցելուի աչքի առաջ, ես ու դու էլ, ազգային տարազներով, մատուցենք: Որ տեղն իմացան, սովորեցին՝ հաստատ կզան, տուրիզմը հիմա զարգանում աս:

ՍԱՀԱԿ - Հա, կաշխատեր: Միսը՝ մերը, կաթն ու մածունը՝ մերը, բանջարեղենը՝ մերը, էկոլոգիապես անարատ, համով, գնացող-էկողը հաստատ կուզի մտնի, հաց ուտի, մի երկու աշխատող էլ կվերցնենք... Լավ, է, խորացանք, չկա՝ չկա, հաշվենք՝ չի էլ եղել, էլի ես ու դու, մեր պրոբլեմները, կապրենք, մինչև հիմա ղնց ենք ապրել:

ԼՈՒՍԻՆԵ - Վատ, վատ ենք ապրել, Սահակ:

ՍԱՀԱԿ - Հա դե, բայց ինչ արած:

ԼՈՒՍԻՆԵ - Հեչ: Էն լպստածն ասում աս՝ էս ղնց ես ապրում էսպես, քսանմեկերորդ դարում:

ՍԱՀԱԿ - Կասի, երես առած աղջիկ աս, դրա նման մեկը մեր գյուղում էլ կար, հիշում ես, Նոյեմը, փախավ քաղաք, հետո էլ իմացա՝ Թուրքիայա գնացել, փող աշխատելու: Սրա վերջն էլ աս Թուրքիան:

ԼՈՒՍԻՆԵ - Լավ, արի փակենք էս պարապ խոսակցությունը:

ՍԱՀԱԿ - Փակ աս: Հիմա ինչ ես ասում, ես դրա վզին մի հատ էլ չտամ՝ տնից հանեմ:

ԼՈՒՍԻՆԵ - Ոնց կուզես, տան տղամարդը դու ես:

ՍԱՀԱԿ - Բայց շառ աս, տեսա՞ր ինչ էր ասում՝ դատարան, բան... Մենակ բանտ նստելն էր պակաս մեզ:

ԼՈՒՍԻՆԵ - Աստված ոչ անի: Համ էլ մեղք են, ո՞ր գնան էս գիշերով, մեզ չի սազի, հայ քրիստոնյայի տուն աս:

ՍԱՀԱԿ - Դե, աղջիկը չէ, աղջիկը մեղք աս, տուժված աղջիկ աս, թող մնա, բայց էն լախրշը թող ռադ լինի՝ իրա ավտոյի մեջ քնի:

ԼՈՒՍԻՆԵ - Լսի, Սահակ, անկեղծ, դուրդ գալիս աս Լիլին:

ՍԱՀԱԿ - Չէ հա, դու էլ... Աղջիկ աս, էլի... Հա, էլի որ վատը չի, բայց դե ինչ կապ ունի, քիչ սիրուն աղջիկ կամ էս աշխարհում:

Լուսինեն ծիծաղում է:

ՍԱՀԱԿ - Ինչի՞ ես ծիծաղում:

ԼՈՒՍԻՆԵ - Հեչ, դու էլ գիտես:

ՍԱՀԱԿ - Չէ, չգիտեմ, ասա:

ԼՈՒՍԻՆԵ - Գիտես:

Գալիս են Տարոնն ու Լիլին:

ՏԱՐՈՆ - Ըհը... (Հազար դուլար հանելով գրպանից:) Էս ձեզ, ձեր ծախսերին, կարգին սարքեք, քծիպություն չանեք, անունն էլ

դրեք Տարոնի անվան շքամուտք:
ՍԱՀԱԿ - *(փողը վերցնում է, ձեռքին անվճռական պահում):* Ոնց որ տվել էիր... *(Լուսինեին.)* Չէ...

ԼՈՒՍԻՆԵ - Հա, տվել եք:

ՏԱՐՈՆ - Հա՛...

ԼԻԼԻ - Տվել ես, ես վկա եմ:

ՏԱՐՈՆ - Այ քեզ բան... Դե լավ, որ մտքովս անցել ա, մի հատ էլ վերցրեք, շքեղ կսարքեք, կամ էլ ինձնից ձեզ նվեր կառնեք:

ԼՈՒՍԻՆԵ - Պետք չի, շնորհակալ ենք: *(Ամուսնու ձեռքից վերցնում է փողը, տալիս Տարոնին:)*

ՏԱՐՈՆ - *(վերցնում է):* Ըհը, տեսա՞ք, փողն իրա թևով եկել-կպել էր, դուք հրաժարվեցիք ինքնակամ, բա էլ ինքը ձեզ ո՞նց սիրի: *(Սահակին.)* Բայց դու ոնց որ տվայտվում էիր, ախպերս, դու կամաց-կամաց մոտենում ես փողին: Բերեք շամպայն խմենք, շամպայնը թարմացնում ա: Լցրու, Սահակ: Հանձինս քեզ՝ բոլոր ազնիվ մարդկանց կենացը, այսինքն՝ ոչ մեկի, էդպես մարդ չկա, սարքել են, որ տատանումների չափը չափեն, խմենք էդ սարքածի կենացը, մի օր գուցե իրականանա: *(Ծիծաղում է:)*

ԽՆՈՒՄ ԵՄ:

ՏԱՐՈՆ - *(հազայտով):* Բկիս մնաց: Լսեք, դրսում մի հատ միտք ա-ռաջացավ, ձեր զուգարանը տե-

ղով մտքի ստիմուլ ա: Մտածեցի՝ էս ձեր տան դեմը որ մի հատ կաֆե սարքեք, գիտե՞ք ոնց կաշխատի, վանք գնացող-եկող տուրիստները՝ լիքը, մի քիչ վանքից հեռու է, բայց դե տուրիստական կազմակերպությունների հետ որ լեզու գտնեք, շահագրգռեք՝ կբերեն:

ՍԱՀԱԿ - Կաշխատեր, հա: Լուսոյիս երագանքն ա:

ՏԱՐՈՆ - Կեցցե Լուսինեն, բիզնեսի մտածողություն ունի: Ազգային ձևով ամեն բան սարքվի, թախտերով, կարպետներով, բալիշներով, դուդուկ-քամանչայով... Ես լավ բիզնես ունեմ, թե չէ էստեղ մի տուն կառնեի, կսարքեի:

ՍԱՀԱԿ - Ի՞նչ բիզնես ա որ:

ՏԱՐՈՆ - Ինչ ասես, ունիվերսալ, որ պահին ինչը ձեռնտու եղավ, էն էլ անում եմ: Համ էլ ասեմ՝ որ գնաս, դու էլ անես: Կատակ արի, դու դա անել չես կարող, ինչքան էլ պատմեմ, էնպես որ արի չպատմեմ իզուր: Արի գնանք ծխենք դրսում, սիգարետ առանք, չէ, ոնց որ...

ՍԱՀԱԿ - Հա, առել ենք:

Մահակն ու Տարոնը դուրս են գալիս ծխելու:

ԼՈՒՍԻՆԵ - Դու չե՞ս ծխում:

ԼԻԼԻ - Ծխում եմ, բայց հիմա չեմ ուզում: *(Ուշադիր նայելով Լուսինեին:)* Չեմ հասկանում:

ԼՈՒՍԻՆԵ - Ես էլ:

ԼԻԼԻ - Տղամարդիկ թեև անասուն են, բայց իրանց հասկանալը միշտ չի, որ հեշտ ա: Էդքան փող երևի աշխարհի գեղեցկության մրցույթի հաղթողին կարելի է տալ: Դրանք կոտոշները որ տնկեցին... հատկապես՝ Տարոնը: Օգտվի, էլի, տասը հազար դոլար ես իսկի մի տարում չեմ աշխատի, ինչ ես կողի ընկել, մի անգամ ա՝ տուր-պրծի: Ասեմ որպես գաղտնիք՝ մի մեծ բան չի, էնպես, խուտուտ ա տալու՝ գնա, իրա մեծ-մեծ խոսալուն մի նայի:

ԼՈՒՍԻՆԵ - Լսի, Լիլի...

ԼԻԼԻ - *(ընդհատելով)*: Բարոյական ձառ չկարդաս, քուր, մեկ ա՝ չեմ հասկանա, ես դրա վրայով վաղուց անցել եմ, սուտ բան ա, թույլերն են մոգոնել, որ ուժեղներին դեմ անելու գոնե ինչ-որ բան ունենան: Տասը հազար, մի թափից, պատկերացնում ես, քո էդ խեղճը մինչև կյանքի վերջը խոտ հնձի, կով կթի, էդքան փող չի ունենա: Չէ, վատ տղա չի, դրա մասին չի խոսքը, բայց դե... Դու ինձ հասկանում ես: Հենց իրա համար էլ լավ կլինի, ինչքան հոգսից կազատվի, մի հատ պատկերացրու: Ես քեզ կօգնեմ:

ԼՈՒՍԻՆԵ - Պետք չի ինձ օգնել, դու քեզ օգնի...

ԼԻԼԻ - Մի կատաղի, Լուսինե ջան,

հանգիստ: Չնայած՝ էդ կատաղելի լավ նշան ա: *(Շոյում է Լուսինեի մազերը:)* Ինչ լավ հոտ ա գալիս քեզնից:

ԼՈՒՍԻՆԵ - Խոտն ա, խոտից ա... *(Հեկեկում է:)*

ԼԻԼԻ - Դե, քեզ մի տանջի, սիրուն ջան, էղածը մի բան չի: *(Գրկում է, համբուրում:)*

Լավում են ներս եկող տղամարդկանց ձայները:

ԼԻԼԻ - Գալիս են:

Լուսինե կարգի է բերում իրեն:

ՏԱՐՈՆ - Մի հատ էլ չխմենք: *(Լցնում է շամպայնը:)* Էս ձեր հրաշալի հյուրասիրության համար, ձեր բարի վերաբերմունքի համար. այ մարդ, տունը քանդողի նկատմամբ է՛լ էսքան բարություն... Ճիշտ ա, մի երկու հատ զարկեցիք քիթ-բերնիս, բայց ոչինչ, ես չեմ նեղանում, ձեր կենացը:

Խմում են: Տարոնը աննկատ աչքով է անում Լիլիին:

ԼԻԼԻ - Էլի փուչիկս պայթացնում ա էս շամպայնը:

ՏԱՐՈՆ - Վայ, մեռնեմ էն նուրբիկ փուչիկիդ:

ԼԻԼԻ - Բեզ ինչ կա... *(Սահակին.)* Չես ուղեկցի՞, կյանք, անտեր շներ կան, վրա կտան, կուտեն, մեղք կլինեմ հոգուդ վրա:

ՍԱՀԱԿ - Գնանք, հա, լիքը շուն կա էս կողմերը: (Լուսինեին...) Մենք գնանք...

ԼՈՒՍԻՆԵ - Գնացեք: Սահակ... Լավ, ոչինչ, գնացեք:

Լիլին և Սահակը դուրս են գալիս:

ՏԱՐՈՆ - Ռեպ սիրում ես, Լուսինե... Ափսոս, չկա, ավտոյի մեջ ա, միացնեիք, լսեիք... Բայց են կարամ քեզ համար երգեմ, իմ գրածն ա, երգեմ... «Ես քեզանից գերված, կույր-կույր գալիս եմ քո ետևից, դու ինձ տանում ես կործանման, չգիտեմ՝ ետ կգամ նորից, դու խիղճ չունես, դու անաստված ես, այ դաժան աղջիկ, բայց ես մեռնում եմ քեզ համար, ես մեռնում եմ քեզ համար, ես մեռնում եմ քեզ համար...»:

ԼՈՒՍԻՆԵ - (ընդհատում է): Չեմ սիրում ռեպ, ու դու էլ մի երգի, համ:

ՏԱՐՈՆ - Լավ, չես ուզում՝ չեմ երգի: Մի հաս ծխեմ:

ԼՈՒՍԻՆԵ - Մի ծխի, ես ծխի հոտը չեմ տանում, կամ էլ գնա՝ դրսում ծխի:

ՏԱՐՈՆ - Չէ, էլ չեմ ուզում, անցավ, սիրտս ուրիշ բան ա ուզում, շատ ա ուզում:

ԼՈՒՍԻՆԵ - Դրանք գալու միտք չունեն:

ՏԱՐՈՆ - Դժվար գան: Ո՞ր տղամարդը կդիմանա Լիլիի հմայքներին, եթե տղամարդ ա, իհարկե, քոնը տղամարդ ա, չէ՞:

ԼՈՒՍԻՆԵ - Տղամարդ ա:

ՏԱՐՈՆ - Ուրեմն չի դիմանա: Լիլին, գիտես, ոնց ա խելքամաղ անում, մտցնում ծոցը, պատմեմ...

ԼՈՒՍԻՆԵ - Պետք չի:

ՏԱՐՈՆ - Իսկական կին ա, ամեն բան գիտի իրա ասպարեզից, մատդ շարժես՝ ինքը հասկանում ա ուզածդ: Դրա համար էլ իրեք հարուր դուլար եմ տալիս մի օրվա համար: Բայց կա մարդամեկը, ում տասը հազար եմ տալիս առանց ափսոսալու, ուրախությամբ եմ տալիս, մի բան էլ ինքս եմ խնդրում-աղաչում, ընդամենը մի գիշերվա համար, էն էլ՝ կարճ գիշեր, կեսն արդեն կերել ենք:

ԼՈՒՍԻՆԵ - Բայց ինչի՞դ ա, պարզապես հակառակության ես ընկել, պատիվդ գետնով տալ չես ուզում:

ՏԱՐՈՆ - Չէ, այ մարդ, է, ինչ պատիվ, պատվի խաթր ես էդքան փող ծախսողը չեմ, պատվով լինե՛ր՝ հիմա փողի տեր չէի լինի: Չէ: Ես ռոմանտիկ տղա եմ, դու ինձ չես ճանաչում, ես շատ ռոմանտիկ տղա եմ, ես որ սիրեցի՝ վերջ, մեռնելով էլ լինի՝ կհասնեմ: Հա, ի՞նչ անենք, ես էլ էդ տեսակ եմ, սիրեք ինձ՝ ոնց կամ, ես էլ ձեզ կսիրեմ՝ ոնց կամ: Կյանք ա, անցնում ա, թռնում ա, հետո կզղջանք՝ ուշ կլինի:

ԼՈՒՍԻՆԵ - Ինչի, մեռնում ես, ծանր հիվանդ ես:

ՏԱՐՈՆ - Բայց ինչ անդամադրելի ես, երբ էդպես չարանում ես, աչուկներդ պլպլում են չարությունից, ուզում ես՝ ես մեռնեմ... Մեռնեմ ոտքերիդ տակ... *(Հանելով ատրժանակը գրպանից:)* Կրակեմ գլխիս ու արնաշաղախ ընկնեմ էդ սիրուն ոտքերիդ տակ... Ինչ ես էդպես նայում, կարծում ես չեմ անի՞:

ԼՈՒՍԻՆԵ - Ինչ իմանամ, գժի նման ես, արի՛ր՝ արի՛ր:

ՏԱՐՈՆ - Կանեմ, չկասկածես: *(Գրպանից հանում է փողի տրցակը, ատրժանակի հետ դնում սեղանին:)*

ԼՈՒՍԻՆԵ - Բայց քո նմանները իրանց չեն սպանի, ավելի շուտ՝ ուրիշներին կսպանեն:

ՏԱՐՈՆ - Երկուսն էլ կարող եմ, ինձ էլ, ուրիշներին էլ: Բայց ասեմ՝ իմ հարցով էնքան էլ չեմ շտապում, հլա դեռ ջահել եմ, ափսոս եմ, հլա դեռ շանսերս շատ են:

ԼՈՒՍԻՆԵ - Լսի, գուցե ամուսնանամ:

ՏԱՐՈՆ - Ինչի՞, լավ էլ ամուսնացած եմ, երկու երեխա ունեմ, երկու տղա: Բայց դա ինչ կարևոր ա, հո չենք ամուսնանում, որ ամուսնության գերին դառնանք, հո կյանքը ամուսնությունով կանգ չի առնում: *(Տեսնելով, որ Լուսինեն ժամացույցին է նայում:)* Համոզ-

վեցի՛ր, որ չեն գալու, Լիլին նրան մարագ տարավ, հիմա խոտերի մեջ տնքալով թավալ են տալիս: Ասեմ, Լիլին ոնց ա տնքում, թեև նկատել եմ՝ մեկ-մեկ դերասանություն ա անում, բայց լավ ա անում շան աղջիկը...

Տարոնը փնտրում է լուսի անջատիչը, գտնում՝ անջատում է լուսը:

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԳ

Նույն տունը: Լուսինեն հագնվում է: Գալիս է Սահակը:

ՍԱՀԱԿ - Տրակտորը բերին տղերքը: Բարի առավուտ:

ԼՈՒՍԻՆԵ - Բարև: *(Երկուսով նայում են սեղանին դրված փողին, Լուսինեն գլխի շարժումով ցույց է տալիս:)* Վերցրու, պահի:

ՍԱՀԱԿ - Զաշին դրանց ավտոն, մատոռն աշխատեց, պատկերացնում ես, շիթը, կռիլոն էր ծովել, դզմզեցինք, գնաց: *(Փողի մասին:)* Դու պահի, դու էս քունջուպումախը ինձնից լավ գիտես:

ԼՈՒՍԻՆԵ - Զունջուպումախով չի, սաղ կյանքդ քունջուպումախով ես ուղղորդվել, այ սարեցի, բանկ պիտի տարվի, էսքան փողը տանը չեն պահի:

ՍԱՀԱԿ - Դե, կտանենք իրար հետ, էլի:

ԼՈՒՍԻՆԵ - *(դառը քմծիծաղով)*: Լավ աշխատեցինք էս գիշեր:

ՍԱՀԱԿ - Դե լավ, դու էլ... Պատահեց, լինում է... Սենց բաներ են լինում աշխարհում ամեն օր:

ԼՈՒՍԻՆԵ - Էդ քեզ Լիլին է ասել:

ՍԱՀԱԿ - Չէ, Տարոնը: Դե հիմա հո մեզ չենք սպանելու...

ԼՈՒՍԻՆԵ - Չէ:

ՍԱՀԱԿ - Պիտի մոռանանք, հանենք մեր գլխից:

ԼՈՒՍԻՆԵ - Վախենամ՝ չկարենանք, Սահակ, ոնց էլ լինի՝ ժամանակ առ ժամանակ դուրս է գալու...

ՍԱՀԱԿ - Պիտի աշխատենք, ինչ եղել՝ եղել է, սատանեն մեզ հյուր եկավ էս գիշեր, ու պարզվեց՝ ինքը մեզնից ուժեղ էր:

ԼՈՒՍԻՆԵ - Ես կարծում եմ, սատանեն մեր մեջ ա միշտ, իրան առիթ էր պետք, էս գիշեր առիթ եկավ մեր տուն, ու մենք բաց չթողինք էդ առիթը:

ՍԱՀԱԿ - Լուսո, արի մոռանանք, հա՛, էս պահից մոռանանք՝ էլ չխոսենք էդ մասին:

ԼՈՒՍԻՆԵ - Փորձենք:

ՍԱՀԱԿ - Թուղթ ու գրիչ բեր՝ հաշվարկ անենք, թվերը լավ են մոռացնում մնացած ամեն բան: Ուրեմս էսպես՝ հազարը վարկն ենք մարում... Դու գրի, գրի... Եր-

կու հազար տալիս ենք՝ Հուսիկի ավտոն ենք առնում, որ լավ բազառ անենք՝ մի հինգ հարուր էլ գուցե օգենք, կարգին պինդ ավտոյա, ահագին մեզ քոմագ կլինի: Որ մի պուժուր տրակտոր էլ կարենանք առնենք, էլ դեմներս խաղ չի լինի, կդառնանք իսկական ֆերմեր:

ԼՈՒՍԻՆԵ - Թունաքիմիկատները, պարարտանյութը, անասունների կերը...

ՍԱՀԱԿ - Հա, գրի, հիմա հաշվեմ՝ գրի:

ԼՈՒՍԻՆԵ - Սահակ, բայց իմ ուշքումիտքը ճամփի վրա պանդոկ սարքելն ա, արի դու սկզբից դրա հաշվարկներն արա:

ՍԱՀԱԿ - Դե, էն, ինչ որ հաշվեցինք՝ անհրաժեշտ բաներ են, բայց մի վեց-յոթ հազար կմնա, կարծում եմ՝ հերիք ա, քարը, բանը կառնենք՝ ինքներս կսարքենք:

ԼՈՒՍԻՆԵ - Բա որ չհերիքեց:

ՍԱՀԱԿ - Դե...

Ուժեղ դղրոյուն, տունը ցնցվում է:

ԼՈՒՍԻՆԵ - *(սարսափած)*: Նորից...

Դարձյալ դղրոյուն:

ՍԱՀԱԿ - Չէ, էս ավտոյի խփած չի, էս ինչ-որ ուրիշ բան ա...



Կարինե ԽՈՂԻԿՅԱՆ

*Սկզբնական մոտիվացիան էր հայ թատերգության մեջ
համարյա չկա դեռնակտիվ պիես:
Գրելու ընթացքում մեկ անգամ ևս պարզեցի, որ եթե
իրական կյանքում արդարության, արդար պատժի համնեղը
ավելի ու ավելի է դասվում ֆանտաստիկայի ժանրին,
ապա դեռնակտիվ ժանրը այլընտրանք չի թողնում
հանցանքն ու հանցագործն անպայման պիտի
քացահայտվեն ու պատժվեն:
Չզարմանաք, եթե հաջորդ գործս
նույնպես դեռնակտիվ լինի:*

ԵՐԿՈՒ ՕՐ «ԳՐԱԽՏՈՒՄ»

(Իրոնիկ դեպրեսիվ 2 գործողությամբ)

Գործող անձինք

ԳԱՐՅԱՆ - խոշոր գործարար, 50-ն անց

ՆԱՆՈՐ - նրա երկրորդ կինը՝ 28 տարեկան

ԱՎԵՏ - Գարյանի ուսանողական ընկերը, փաստաբան,
50-ն անց

ԱՆԵՏ - Գարյանի դասընկերուհին, դատավոր

ԱՍՏՐԱ - Նանորի ընկերուհին, 28 տարեկան

ԳԵՆ - Աստրայի ամուսինը, 30-ն անց

ԱՐՄԱՆ - Գարյանի ռեֆերենտը, 30 տարեկան

ԼՈՒՍԻՆԵ - հյուրատան տնօրենը, 50-ն անց

ՄԱՆԵ - հյուրատան ավագ մենեջերը

ՄԱՔՍ - խոհարարը

ՍԱՐՈ - սպասավոր

ԱՆՈՒՇ - սպասուհի

Գործողությունը կատարվում է մեր օրերում, մեզանից ոչ հեռու:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍԱՐԱՆ. Հյուրատան նախասրահը: Բեմի կենտրոնում, քիչ խորքում տնօրենի սեղանն է:

ԼՈՒՍԻՆԵ - (հեռախոսով): Ցավում եմ, բայց այսօր հյուր չենք ընդունում... Վաղը նույնպես: Իսկ նոյեմբերի 1-ից մեր հյուրատան դռները բաց են... Իհարկե, նաև ու առաջին հերթին ձեզ համար, տիկին Գոհար, դուք մեր ամենահաճելի կենվորներից եք: Ի դեպ, ինչպե՞ս է իրեն գգում ձեր գեղեցկուհի Ջազան... Ի՛նչ եք ասում, էլի՞ մեղալ է ստացել: Ասել

եմ ու էլի կասեմ, այդպիսի նազանք, որ ունի ձեր եգիպտական կատուն, չունի ոչ մի պողիումի գեղեցկուհի, նույնիսկ Նաոմի Քեմփբելը: Իմ կողմից շոյեք նրա հմայիչ դնչիկը, մինչև ես բախտ կունենամ անելու նույնը... Եվ նորից եմ խնդրում, ներողամիտ եղեք... Ծնորհակալ եմ, որ մտնում եք իմ դրության մեջ... Այո, երկու օր, ընդամենը երկու օր, որից

հետո ես այցելում եմ էքստրասենսիս, պսիխոթերապևտիս, մասաժիստիս ու պլաստիկ վիրաբույժիս... Պատկերացրեք, երկու օրում կնձիռներ են հայտնվում... Դե, ուրեմն ձեզ սպասում ենք նոյեմբերի 1-ին: Ցտեսությամբ: *(Անջատում է կապը: Դիմում է Անուշին, որն այս խոսակցության ընթացքում աչքերն առաստաղին հառած՝ ուշադիր լսում էր:)* Լսեցի՞ր:

ԱՆՈՒԾ - Հենց մտածում եմ, որ էդ տվյալ կատուն պիտի ֆոֆոա աչքիս առաջ՝ ամիսսում եմ, որ Հայաստանում կանանց մենաստան չկա:

ԼՈՒՍԻՆԵ - Դու մենաստանում փակվողը չես, իսկ Գոհարը հոգյակ է: Ինչ վերաբերվում է սֆինքս կատուներին...

ԱՆՈՒԾ - *(շարունակելով նրա տոնով):* ...շատ խելացի ու քնքուշ էակներ են: *(Իր տոնով:)* Չեք համոզվի, Ջազան այլանդակ ու հիստերիկ կենդանի է: *(Կանխելով Լուսինեի դժգոհությունը:)* Բան չասացի: Ու որ էլի բան չասեմ՝ գնում եմ: *(Ուղղելով սպիտակ գոգնոցը՝ ուղղվում է դեպի կողքի դուռը:)*

ԼՈՒՍԻՆԵ - Անուշ, Սարոյին ասա՛ կաղնու մոտի նստարանն ու շուրջը լավ կարգի բերի:

ԱՆՈՒԾ - Եթե արդեն կարգի չի բերել:

ԼՈՒՍԻՆԵ - Ես ասացի՛ լավ կարգի բերի: Դենը երկու օրից մեկ ու կեսը այդ նստարանին նստած է անցկացնում:

ԱՆՈՒԾ - Մոռացաք ասել՝ խմած է անցկացնում:

ԼՈՒՍԻՆԵ - *(սթափեցնող շեշտով):* Մեր հաճախորդներին չենք քննարկում:

ԱՆՈՒԾ - *(հրր՝ մեղավոր շեշտով):* Երբ ենք քննարկել որ... *(Մտնում է կողքի դռնով:)*

ԼՈՒՍԻՆԵ - *(մեղմ ժպիտով):* Երեսառած... *(Հեռախոսազանգ:)* «Դրախտ» հյուրատուն... Ցավոք, ազատ սենյակ չկա: Հասկանում եմ, բայց... Մենք հավասարապես ուշադիր ենք բոլոր հաճախորդների նկատմամբ: Ոչ բոլորի՞... *(Սիրայիր տոնը թեթևակի «խստանում է»:)* Չեմ հասկանում, ինչ եք ակնարկում... Ես ձեզ խորհուրդ եմ տալիս զանգել երկու օրից, ու կհամոզվեք, որ մեր կողմից ուշադրության պակաս չեք զգա: Ամենայն բարիք: *(Անջատում է կապը:)*

Գալիս է Մամնն:

ՄԱՆԵ - Ջանգերը չէն դադարում:

ԼՈՒՍԻՆԵ - Չեմ հասկանում, ինչո՞ւ հանկարծ բոլորն ուզում են հենց այս երկու օրվա համար սենյակ պատվիրել:

ՄԱՆԵ - *(խորամանկ ժպիտով):* Չեք հասկանում...

ԼՈՒՍԻՆԵ - *(հեռախոսազանգ:)*

«Դրախտ» հյուրատուն: Ազատ համար չունենք: Անգամ ամենափոքրը... Երե... *(Հեռախոսը սեղանին շարտելով:)* Չբարեհաճեց մինչև վերջ լսել: Ինչ էիր ասում...

ՄԱՆԵ - Ասում եմ՝ զանգողների մեծ մասը երևի լրագրողներ են:

ԼՈՒՍԻՆԵ - Դրանք էին պակաս:

ՄԱՆԵ - Պարզ չէ՞, որ երբ Աստրան իր բլոգում գրեց ու նրա հարյուր հազարից ավելի բաժանորդներն իմացան, որ միլիոնատեր Դարյանի կինը...

ԼՈՒՍԻՆԵ - Երկրորդ կինը:

ՄԱՆԵ - ...ծննդյան տարեդարձը տոնում է այստեղ, մեր հյուրատունը պիտի դառնար լրագրողների թիրախը:

ԼՈՒՍԻՆԵ - Ըհը, քթներն ամեն տեղ խոթեն, փորփրեն ու ձեռքի հետ էլ պարզեն, որ վեց բարձրաշխարհիկ հյուրերին հինգ հոգով ենք սպասարկում:

ՄԱՆԵ - Ստիպված ենք, Լանորի կարգադրությունն է, նա կարծում է, որ այդպես ինֆորմացիայի հոսք չի լինի:

ԼՈՒՍԻՆԵ - Մեր կողմից՝ չեղավ, ինֆորմացիան նրա ամենամոտիկ ընկերուհին տարածեց: *(Հեռախոսազանգ:)* «Դրախտ» հյուրատուն... Քիչ առաջ դուք չէիք զանգողը... Այո, ես լավ լսողություն ունեմ, մորս երազանքն էր, որ հոբոյ նվագեմ սիմֆոնիկ նվագախմբում: *(Հեռախոսն անջատելով:)* Աչքիս՝ լրագրող էր:

ՄԱՆԵ - *(դարակից հանելով ամսագիրը):* Նրանցից մեկն արդեն գրել է՝ միլիոնատերը, նրա գեղեցկուհի կինը, գլամուրային բլոգերն ամուսնու հետ, սկանդալային դատավորը, ամենաբարձր հոնարար ստացող փաստաբանը՝ և հասարակության այս խայտաբղետ էլիտար սերուցքը երկու օր բլոգրի աչքից հեռու պիտի թուլանա ու հաճույք ստանա «Դրախտ» հյուրատանը: Ինչ պակաս գովազդ է մեզ համար:

ԼՈՒՍԻՆԵ - Հատկապես, որ ոչինչ չեմ վճարել դրա համար: *(Վերցնում է ամսագիրը, նայում հպանցիկ):* Երբ ես հասցնում սրանք կարդալ:

ՄԱՆԵ - Սրանց հերոսների մեծ մասը մեր հաճախորդներն են, որոնց մասին ամեն ինչ պիտի իմանանք:

ԼՈՒՍԻՆԵ - Կրեատիվ ես մտածում՝ կասեր Մաքսը: *(Հեռախոսազանգ:)* «Դրախտ» հյուրատուն: *(Այլ տոնով:)* Պարոն Արման, իհարկե, սպասում ենք: Ինչպես միշտ՝ երրորդ հարկը փակ է, առաջինում սպասարկող անձնակազմն է: Երկրորդ հարկում չորս լյուքս համարները մեր հյուրերի տրամադրության տակ են: Լան ձեզ համար... բայց... Ախ, պարոն Դարյանի կանքն է... Ուրեմն՝ ձեր համարն արդեն ձեզ է սպասում: *(Հեռախոսն անջատելով:)* Վերջին պահին Դարյանը որոշել է իր

ռեֆերենտին էլ բերել: Հետաքրքիր է...

ՄԱՆԵ - Դարյանը որոշել է խախտել ավանդույթը: Ես կասեի՝ շատ հետաքրքիր է:

ԼՈՒՍԻՆԵ - Դարյանի պրոբլեմն է: (Այլ տոնով:) Չէ, հենց իմ պրոբլեմն է՝ վեցի փոխարեն յոթ քմահաճ հաճախորդ պիտի սպասարկենք: Որտեղ տեղավորենք սրան:

ՄԱՆԵ - Երկրորդ հարկի ծախս-կողմյան վերջին համարում: Եվ մոտ կլինի իր շեֆին, ն մյուսներից հեռու, որովհետև այդ Արմանը ի վերջո սովորական գրագիր է:

ԼՈՒՍԻՆԵ - Ապրես, արագ ես կողմնորոշվում, մի քիչ ավելի ինքնավստահ էլ որ լինես, աջ ձեռքս կդառնաս:

Մանեն ժպտալով դուրս է գնում:

ԼՈՒՍԻՆԵ - (ներքին հեռախոսով): Խոհանոց:

ՄԱՋՍ - (բարձրախոսից): Խոհանոցը լսում է՝ ի դեմս շեֆ խոհարար Մաքսի, որն էս պահին ձեռքի տակ ունի ընդամենը մի օգնական:

ԼՈՒՍԻՆԵ - Առաջին անգամը չէ: Բայց առաջին անգամն է, որ հյուրերը յոթն են լինելու:

ՄԱՋՍ - Թեկուզ տասնյոթը: Արվեստ է երկուսի համար պատրաստելը, դրանից հետո սկսվում է արհեստը: Էնպես որ, իմ արհեստանոցը կազմ-պատրաստ է: Իսկ քո գծանոցը երբ կսկսվի:

ԼՈՒՍԻՆԵ - (նայելով ժամացույցին): Ուր որ է...

ՄԱՋՍ - Չմոռանաս կարմիր գորգը փռել: (Կապն անջատվում է:)

ԼՈՒՍԻՆԵ - (անսպասելի տաք ժայիտով): Զավզակ:

ՏԵՍԱՐԱՆ. Ներս են մտնում Աստրան ու Դենը:

ԼՈՒՍԻՆԵ - (ընդառաջ գնալով): Ուրախ եմ կրկին ձեզ ընդունել...

ԱՍՏՐԱ - (թեթև քամահրանքով ընդհատում է): Նույնչափ ուրախ եմ ես... (Տայելով Դենին:) Մենք ուրախ ենք: Դուք համարյա չեք փոխվել:

ԼՈՒՍԻՆԵ - Իսկ դուք միշտ նույն գեղեցկուհին եք:

ԱՍՏՐԱ - Գեղեցկուհին պահեք Նանորի համար: Ու նրա ներկայությամբ ուրիշին այդպես չդիմեք: Ձեր բիզնեսի ապագայի մասին եմ մտածում:

ԴԵՆ - (Լուսինեին): Չհավատաք: Նա միայն իր ապագայի մասին է մտածում:

ԱՍՏՐԱ - (ատամների արանքից): Չեմ հասկանում, ինչու եմ մինչև հիմա քեզ կողքիս պահում:

ԴԵՆ - (ծուլ արհամարհանքով): Ասեմ... Բայց տիկին Լուսինեն թող ականջները փակի:

ԼՈՒՍԻՆԵ - (կարծես ոչինչ չի լսել): Մեկ վայրկյան...

Լուսինեն մոտենում է սեղանին, ու զանգի կոճակը սեղմելուն պես

հայտնվում է Մարոն, անվավոր սայլակի վրա բերում է կռկռեյլ-նեք ու դուրս է գնում: Դենը մի բաժակը միանգամից խմում է, հետո վերցնելով երկրորդ բաժակը, արդեն ավելի հանգիստ խմելով նստում է բազմոցին:

ԱՍՏՐԱ - (թունտո): Օրը նոր է սկսվում:

ԴԵՆ - Ոմանց համար արդեն ավարտվել է:

Գալիս է Մանեն:

ՄԱՆԵ - (Աստրային): Ձեր իրերն արդեն վերևում են:

ԴԵՆ - Անցած տարի դուք չկայիք:

ԱՍՏՐԱ - (Դենին): Կար: (Մանենին.) Մանե, այդպես չէ: (Կռկռեյլ.) Թե սխալվում եմ:

ՄԱՆԵ - Ճիշտ են ասում ձեր մասին, որ եթե մեկին մի անգամ տեսնեք՝ էլ չէք մոռանա:

ԱՍՏՐԱ - (երկիմաստ): Եթե միայն այդ մեկը հայացքիս արժանի է:

ՄԱՆԵ - (Ժպտալով): Ծնորհակալություն բարի խոսքի համար: (Տեսնելով, որ Դենը դատարկ բաժակը աղմուկով կողքի հրեց, սայլակի ներքևի դարակից խմիչքով բաժակ է վերցնում ու տալիս է նրան: Վերադառնալով՝ ընթացքից դիմում է Աստրային, որը չի կարողանում թաքցնել Դենին ուղղված գայրալից հայացքը:) Ալկոհոլ համարյա չկա:

ԴԵՆ - (կում է անում, դեմքը ծամած-

ռում է, ցուցադրական ակնարկում է Մանենին:) Սրան երբ հասցրիր մշակել:

Մանեն, ասես չսելով վիրավորանքը, դուրս է գնում:

ԱՍՏՐԱ - Նրա տեսակը ծնված օրից է մշակված: (Լուսինեին.) Ավետն արդեն այստեղ է:

ԼՈՒՍԻՆԵ - Դուք առաջինն եք:

ԱՍՏՐԱ - Օհո... մշտապես առաջինը հայտնվող Ավոկադոն սկսել է ուշանալ: Վատ նշան է:

ԴԵՆ - Իրեն էլ ես ասելու Ավոկադո:

ԱՍՏՐԱ - Անպայման: (Լուսինեին): Ավետ-Ավո պլյուս ադվոկատ՝ չի ստացվում Ավո-կադո:

ԴԵՆ - Գուցե ստացվում է, բայց նա խոստացել է վիզդ պոկել:

ԱՍՏՐԱ - Իսկ դու դրան ես սպասում:

Լուսինեն կարծես նրանց չի լսում, ինչ-որ թրթր է ստուգում սեղանի ետևում կանգնած:

ԴԵՆ - Թե նրա հետ էլ լեզու կգտնես, քո լեզուն շատ ճարտար է: (Այլ տոնով:) Գնամ մաքուր օդ շնչելու:

ԼՈՒՍԻՆԵ - (հայացքը՝ թղթերին): Լանչից չուշանաք:

ԴԵՆ - Ուզում եք ասել՝ լժին չհասնեմ:

ԱՍՏՐԱ - Չես հասնի: Այնտեղ խմիչք չկա:

ԴԵՆ - Խմիչք ամեն տեղ կա: (Ծոցագրպանից հանելով տափաշիչը՝ կում է անում ու դուրս է գնում:)

Աստրան բաժակը աղմուկով
դնում է սայլակին, գնում դեպի
աստիճանները:

ԱՍՏՐԱ - (բարձրանալով): Դենը
խմում է սովորականից ոչ ավելի:
(Գնում է:)

ԼՈՒՍԻՆԵ - (քթի տակ, թունոտ): Ինչ-
պես չէ... Մյուս տարի կգա լրիվ
հարբեցող դարձած: Եթե, իհար-
կե, շարունակես կողքիդ պահել:

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Ավետը:

ԼՈՒՍԻՆԵ - Բարով եկաք: Ուրախ
եմ...

ԱՎԵՏ - Չշարունակեք: Ամեն տարի
նույն բառերը լսելը ժամանակի
անհիմաստ կորուստ է: (Ինքնա-
գոհ:) Էլի ես եմ առաջինը:

ԼՈՒՍԻՆԵ - (մեղավոր ժպիտով): Նե-
րեցեք, բայց Աստրան... այս ան-
գամ երկրորդն եք:

ԱՎԵՏ - Գործը տանի, հիմա էլ կգրի,
որ սկսել եմ ուշանալ ու դա վատ
նշան է: Ամուսինը դեռ նոյնն է:

ԼՈՒՍԻՆԵ - (զուսպ): Ներեցեք...

ԱՎԵՏ - Ահ, մոռացել էի ձեր պրո-
ֆեսիոնալ տակտի մասին:
(Բարձրանում է աստիճաններով):
Հետաքրքիր է, ինչ եք մտածում
մեր մասին, երբ մենակ եք մնում:

ԼՈՒՍԻՆԵ - (համենայնդեպս հավաս-
տիանալով, որ Ավետը վերևում է
ու չի լսում, քթի տակ): Ես նույ-
նիսկ ինձ եմ վախենում ասել, թե
ինչ եմ մտածում...

Լուսինեն սեղմում է զանգը:
Հայտնվում է Սարոն ու դուրս է
տանում սայլակը:

**ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Անետը՝
ձեռնափայտով, հենվել է Մանե-
նի թևին:**

ԼՈՒՍԻՆԵ - (ընդառաջ գնալով ու
ձեռքը բարևելու պատրաստ ա-
ռաջ պարզած): Բարի օր, սիրելի
Անետ:

ԱՆԵՏ - (բարևելու համար առաջ է
պարզում ձեռնափայտը): Բարև,
բարև...

ԼՈՒՍԻՆԵ - (առաջին անգամը չէ, որ
ձեռքի փոխարեն սեղմում է ձեռնա-
փայտը): Նորից ձեր հողացավը...

ԱՆԵՏ - Տարվա այս եղանակին ա-
ռանց ձեռնափայտ չեմ կարող:

ԼՈՒՍԻՆԵ - Բայց նույնիսկ այդպես...

ԱՆԵՏ - (ընդհատելով): ...կարողա-
նում եմ ինձ հարգել տալ: (Ակ-
նարկելով Մանեին.) Նոր է:

ԼՈՒՍԻՆԵ - Մանեին չե՞ք հիշում:

ԱՆԵՏ - (անտարբեր): Պիտի հիշեմ:

ԼՈՒՍԻՆԵ - Անցած անգամ մոռացել
էր չիզքեյքը բերել ձեր սենյակը:

ԱՆԵՏ - Հիշեցի: Եթե մարդը դեպքի
հետ է կապված՝ կհիշեմ, բայց
այնպես... ինչիս է պետք: (Մա-
նեին, որ այդ ընթացքում մեղմ
ժպտում էր, ասես ասվածը իրեն
չէր վերաբերում:) Վերելակը աջ
կողմում է:

ՄԱՆԵ - Չախ:

ԱՆԵՏ - Տեղանքն էլ չեմ հիշում, ա-

վելորդ գլխացավանք է: (Գնում են:)

Լուսինն կողքի սենյակից ճաշակով ձևավորված փունջ է բերում, դնում սեղանին: Գալիս է Մարոն՝ քարշ տալով պատկառելի մեծության ճամպրուկ:

ՍԱՐՈ - (հեալով): Մենակ իմանամ, թե սրա մեջ ինչ կա:

ԼՈՒՍԻՆԵ - Մասածի պորտատիվ սարք:

ՍԱՐՈ - Ինչատիվ...

ԼՈՒՍԻՆԵ - Եթե ասեմ՝ դյուրակիր, կհասկանամ: Բարձրացրու վերև, Անետը առանց մասածի քնել չի կարող: (Շեշտով:) Բայց դու ոչինչ չգիտես:

ՍԱՐՈ - Ես ինչ գիտեմ որ... (Ճամպրուկը տանում է դեպի վերելակը:)

ԼՈՒՍԻՆԵ - (անսպասելի տաք ժպիտով): Դու բան չիմանամ...

Գալիս է Մանեն:

ԼՈՒՍԻՆԵ - Եվ...

ՄԱՆԵ - Բազմոցին նստեցրի, ոտքերը բարձրացրի, դրեցի սեղանիկին, հրամայեց լանչից առաջ ուղեկցել ձաշասենյակ:

ԼՈՒՍԻՆԵ - Ավելի է գիրացել: Միայնակ կինը գիշերը մխիթարվում է սառնարանի դուռը բացել-փակելով:

ՄԱՆԵ - Տիկին Լուսինն...

ԼՈՒՍԻՆԵ - Երբեմն կարող եմ ասել՝ ինչ մտածում եմ... թեև դա նոն-

սենս է: Գնամ, Մաքսի արվեստի գործերը ստուգեմ, քանի պրիմադոնան չի հայտնվել: (Գնում է:)

Մանեն նայում է շուրջը, աննշան թերութուններ է շտկում, հետո նստում է անկյունում, փակում աչքերը:

ՏԵՄԱՐԱՆ. Գալիս է Արմանը, խոսում է հեռախոսով:

ԱՐՄԱՆ - «Դրախոսում» եմ... Իսկապես չգիտեմ, ինչու շեֆը հանկարծ որոշեց... Հույս չունենաս, թերթիդ համար ասելու ոչինչ չեմ ունենա... Եթե նույնիսկ լավ վճարես: Փողի կարիք ո՞վ չունի, իսկ ինձ շատ մեծ փողեր են պետք: Վերջ տուր, ինչ ծիտիկներ, նախ՝ երկուսն էլ ամուսինների հետ են, իսկ չամուսնացածը... ավելի լավ է չասեմ: Ու նրանցից ամեն մեկը մի վիուկ է...

Մանեն տեղից բարձրանալով, իբր անզգույշ՝ հրում է բազկաթուղ:

ԱՐՄԱՆ - (աղմուկ լսելով, շրջվում, տեսնում է Մանեին, հեռախոսի մեջ): Հետո կզանգեմ: (Անջատում է հեռախոսը, ուսումնասիրում աղջկան:)

ՄԱՆԵ - (անտեսելով նրա գննող հայացքը): Դուք Արմանն եք:

ԱՐՄԱՆ - Բայց դուք տիկին Լուսինն չեք:

ՄԱՆԵ - Օգնականն եմ:
ԱՐՄԱՆ - Փորձով կկիսվե՞ք:
ՄԱՆԵ - Ինչն է ձեզ հետաքրքրում:
ԱՐՄԱՆ - Ինչ ռեժիմով ենք ապրելու: Կոնկրետ՝ ես:
ՄԱՆԵ - Հյուրերը կարող են անել սրտի ուզածը: Սպասարկող անձնակազմը չի կարող լքել հյուրատան տարածքը, նույնիսկ մեր հեռախոսները երկու օր կպահվեն տիկին Լուսինեի սեյֆում, գաղտնիության նկատառումով:
ԱՐՄԱՆ - Աստրայի գրառումից հետո այդ ամենը ավելորդ չէ:
ՄԱՆԵ - (*սառը*): Անկախ հանգամանքներից, մեր հյուրատան ներքին կանոնակարգը չի խախտվում:
ԱՐՄԱՆ - Պարզ է... Ինչ եք կարծում, իմ հեռախոսն է՞լ կբանտարկվի սեյֆում:
ԼՈՒՍԻՆԵ - (*գալիս է, ընթացքից*): Դուք Արմանն եք:
ԱՐՄԱՆ - Ես եմ ու արդեն սկսում եմ հասկանալ, թե ինչո՞ւ աշխարհի լավագույն հյուրանոցները թողած՝ իմ տերերը նախընտրում են ձեր հյուրատունը:
ՄԱՆԵ - (*կիսաձայն*): Հենց նոր ձեր հեռախոսը ուղարկեցիք բանտ:
ԼՈՒՍԻՆԵ - (*չհասկանալով*): Մանե...
ԱՐՄԱՆ - (*ակնդետ նայելով Մանեին*): Վատ չէր... (*Լուսինեին*): Ես ասացի՝ իմ տերերը: Բայց եթե դա այդպես է, ինչո՞ւ ձևացնեմ:
ՄԱՆԵ - Համաձայն եմ, լավ ծառան ձևացնել չի կարող:

ԼՈՒՍԻՆԵ - (*խիստ*): Ճիշտ չսկսեցիք ձեր ծանոթությունը: (*Մանեին*)
 Հիմա մուտքի մոտ պիտի լինեիր:
ՄԱՆԵ - Ներեցեք... իհարկե... (*Արագ դուրս է գնում*):
ԼՈՒՍԻՆԵ - (*Արմանին*): Վատ չէր լինի, եթե ձեր տերերին դիմավորեիք նրանց մեքենայի մոտ:
ԱՐՄԱՆ - (*դռան մոտ շրջվելով*): Դուք ամեն ինչ ու բոլորին դնում եք իրենց տեղը: (*Գնում է*):
ԼՈՒՍԻՆԵ - Ծուռ հասկացողներից է: (*Վերցնում է փունջը, առաջ է գալիս*):

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս են Նանորն ու Դարյանը, նրանց հետևում է Արմանը:

ԼՈՒՍԻՆԵ - (*փունջը տալով Նանորին*): Այս անգամ էլ երջանկացրիք ձեր ներկայությամբ:
ՆԱՆՈՐ - (*փունջն անփույթ դնելով սեղանին, Դարյանին*): Ասա, որ երեկ ենք եկել Վիննայից:
ԴԱՐՅԱՆ - Որ այսօր այստեղ լինենք: (*Արմանին*) Զեյսը վերցրու մեքենայից, վարորդին ազատ արձակիր:

Արմանը գնում է:

ՆԱՆՈՐ - Միայն չասես, որ աշխատելու ես:
ԴԱՐՅԱՆ - Դու չես տեսնի, որ աշխատում եմ:

Գալիս է Մարոն՝ մատուցարանի վրա բերելով երկու բաժակ:

ՆԱՆՈՐ - (վերցնելով բաժակներից մեկը՝ տալիս է ամուսնուն): Խմում ես առանց մեկնաբանության: Լուսինե՛...

ԼՈՒՍԻՆԵ - (ռոբոտի վարժվածությամբ): Կոկտեյլ «Առողջություն», - երկու բաժին ուրց, մեկ բաժին դաղձ, դանակի ծայրով՝ կոճապղպեղ:

ՆԱՆՈՐ - (Դարյանին): Ինձանից հետո կարող ես վստահել միայն Լուսինեին: Եթե, իհարկե, վստահելու ընդունակ ես: (Վերցնելով իր բաժակը): Խնձոր, գազար...

ԼՈՒՍԻՆԵ - ...նեխուր, դանակի ծայրով՝ դարչին: Կոկտեյլ «Գեղեցկություն»:

ՆԱՆՈՐ - (Դարյանին): Մի օր գիրք կգրեմ՝ իմ գեղեցկության ու բո առողջության գաղտնիքը:

ԼՈՒՍԻՆԵ - Կարծում եմ՝ հետաքրքիր կլինի:

ՆԱՆՈՐ - (հայացքը չկտրելով Դարյանից): Կլինի մեզ նման, ուրեմն՝ անհետաքրքիր:

Գալիս է Արմանը, ձեռքին՝ քեյս:

ԴԱՐՅԱՆ - (Նանորին): Բանի չես սկսել թատրոնը՝ մենք կաշխատենք: (Արմանին.) Ավետին կանչիր:

Երկուսով բարձրանում են վերև:

ԼՈՒՍԻՆԵ - Ծրագիրը վերջին անգամ նայենք:

ՆԱՆՈՐ - (բաժակը դնելով սեղանիկին): Եթե առաջարկելու ուրիշ բան չունեք...

Մոտենում են սեղանին, նայում քղերը:

ՏԵՄԱՐԱՆ. Գալիս է Դենը՝ նկատելիորեն խմած:

ԴԵՆ - Ո՛ւմ եմ տեսնում՝ աննման Նանորը... Ուրեմն Ծննդյան տոները կարելի է համարել բացված:

ՆԱՆՈՐ - (ուսի վրայից նայելով, անփոյթ): Դեն՛...

ԴԵՆ - Մի ժամանակ ինքն էր: Ի՞նչ ես քրքրում թղթերը, ամեն ինչ կրկնվելու է անցած տարիների պես:

ՆԱՆՈՐ - Սիրտդ նոր բան է ուզում:

ԴԵՆ - Հին բան կա, որ տասը նոր արժե:

ՆԱՆՈՐ - (ակնդետ նայելով): Լսել եմ, օրվա բոլոր ժամերին կարող ես վիսկի առաջարկել:

ԴԵՆ - Ուզում ես... (Հանելով տափաշիչը): Մի քիչ մնացել է:

ՆԱՆՈՐ - Անցած տարի տափաշիչը չկար:

ԴԵՆ - Իսկ նախանցած տարի ուրիշ բան կար... հիշեցնեմ: (Փլվում է բազմոցին):

ՆԱՆՈՐ - Ավելի լավ է՝ մոռանաս:

ՏԵՄԱՐԱՆ. Գալիս է Աստրան՝ զգեստափոխված:

ԱՍՏՐԱ - (զնահատելով իրավիճակը): Ձեր հանդիպման ջերմությունից վարդերը կցրտահարվեն:

ՆԱՆՈՐ - Արդեն ցրտահարվել են:

(Գրկվում, համբուրվում են օդի մեջ:) Վիեննայից քեզ մի փոքրիկ բան եմ բերել:

ԱՍՏՐԱ - Նվեր...

ՆԱՆՈՐ - Կարող ես նվեր համարել:

ԴԵՆ - Ուրեմն նախագգուշացում է:

ՆԱՆՈՐ - (Դենին): Համարյա գուշակեցիր:

ԱՍՏՐԱ - Էլ ի՞նչ ես ձգում, միանգամից ասա, որ կատաղած ես վրաս:

ՆԱՆՈՐ - Պարզապես չէի սպասում:

ԴԵՆ - Իզուր: Նրանից ամեն ինչ պիտի սպասես:

ԱՍՏՐԱ - (Դենին՝ քամահրանքով):

Մեզ մենակ թող:

ԴԵՆ - (ծուլորեն տեղից ելնելով):

Տափաշիշս լիցքավորեմ: (Գնում է կողքի դռնով:)

ԱՍՏՐԱ - Ընդամենը մի քանի տող եմ գրել բլոգում:

ՆԱՆՈՐ - Ու մի քանի տողով ինչ շուն ասես՝ վրաներս ես բաց թողել:

ԱՍՏՐԱ - Թեթև ռեկլամը նույնիսկ քեզ չի խանգարի:

ՆԱՆՈՐ - Ռեկլամի կարիք չունեմ:

ԱՍՏՐԱ - Կարծում ես...

Հայացքներով մենամարտում եմ, հետո միաժամանակ ժպտում:

ՆԱՆՈՐ - (ասես ոչինչ չի ասվել): Անետին տեսնլ ես:

ԱՍՏՐԱ - Ծատ պետքս է...

ՆԱՆՈՐ - Ինձ էլ պետք չէ, բայց էթիկետը, ավելի ծիշտ՝ Դարյանը պահանջում է, որ տեսնեմ: (Գնա-

լով դեպի աստիճանները:) Դենին ծնշում ես:

ԱՍՏՐԱ - Իսկ դու երես ես տալիս: Վարդերը մոռացար:

ՆԱՆՈՐ - (հրամայական): Հետո սենյակս կբերես: (Գնում է:)

ԱՍՏՐԱ - (կամաց ու թունոտ): Ինչպես տիրուհին կասի: (Համար է հավաքում:) Կարոտել եմ... Գիտեմ, որ զբաղված ես, բայց հիշիր, որ կա-րո-տել-եմ...

Անջատում է հեռախոսը, ծաղկեփունջը վեր է նետում ու հանգիստ հետևում, ինչպես է այն շքմիում հատակին: Այդ պահին ներս մտած Լուսինեն հատակից վերցնում է փունջը, փորձում նախկին տեսքի բերել:

ԼՈՒՍԻՆԵ - Ես կբարձրացնեմ վերև: (Նայում է ժամացույցին:) Հինգ թուպերից լանչի զանգը կլինի:

ՏԵՍԱՐԱՆ. Կողքի դռնից գալիս է Դենը՝ տափաշիշը ձեռքին:

ԼՈՒՍԻՆԵ - (Դենին): Մաքսը ձեր պաստա կարբոնարան է պատրաստել:

ԴԵՆ - Մաքսին՝ ռեսպեկտ: (Գնում է դեպի դուռը:)

ԱՍՏՐԱ - (թունոտ): Իսկ եթե հանկարծ նկատեն բացակայությունը:

ԴԵՆ - Կմխիթարվեն քո ներկայությամբ: (Գնում է:)

ԱՍՏՐԱ - Միայն իմանայի՛ որտեղ է քարշ գալու:

ԼՈՒՍԻՆԵ - Առաջին անգամ որ եկաք... հինգ տարի առաջ էր, Աստված իմ...

ԱՍՏՐԱ - (թունոտ): Միայն չասեք, որ ժամանակը շատ արագ է թռչում:

ԼՈՒՍԻՆԵ - (թեթև ժպտով): Արդեն ասացիք... Դենը զբոսանքից եկավ ու ասաց. «Ես գտա աշխարհի ամենահանգիստ անկյունը, համոզված եմ, այնտեղ նույնիսկ օձ չկա»: (Կծու:) Փնտրողը նրան կգտնի ձեր կաղնու կողքի նստարանին:

ԱՍՏՐԱ - Ինչ է կատարվում հետը, չեմ հասկանում... (Մտնում է կողքի դռնով:)

ԼՈՒՍԻՆԵ - (կիսաձայն): Թե՛ չես ուզում հասկանալ:

Մեղմում է պատին ամրացված վահանակը՝ սրահը արձագանքվում է պղնձե զանգի դողանջով:

ՏԵՍԱՐԱՆ. Ճաշասենյակ: Լամչը ֆուրջեթի ձևաչափով է: Մարոն խմիչքն է մատուցում, Անուշը՝ ուտեստեղենը: Դեմից ու Անետից բացի բոլորն այստեղ են:

ԴԱՐՅԱՆ - (բարձր): Լանորին ուզում եմ համոզել, որ սա մեր վերջին հավաքը լինի «Դրախտում»:

ԱՎԵՏ - Համոզել Լանորին... նույնիսկ քո ուժերից վեր է:

ԴԱՐՅԱՆ - Վա՛տ կլինեք, եթե հիմա Մոնակոյում լինեիք: Կանայք խանութները կսրբեին...

ՆԱՆՈՐ - Կազինոները՝ ձեր գրպանները:

ԴԱՐՅԱՆ - Վատ տարբերակ չէ: (Ավետին նայելով՝ հատուկ շեշտով:) Գոնե տեսնում ես, թե ո՞վ է տանում փողերդ:

ԱՍՏՐԱ - Խանութների պահով լավ կլինեք, բայց Լանորը թույլ կտամ, որ ամուսինը իր ծննդյան օրը տարված լինի ուրիշով:

Լարված լռություն:

ԱՎԵՏ - (կեղծ ժպտալով): Եթե անգամ այդ ուրիշը թղթախաղի սեղանն է:

ԴԱՐՅԱՆ - Իզուր չեն ասում, որ սատանայի փաստաբանն էս:

ԱՎԵՏ - (շինծու անփութությամբ): Հիմա ես ուրիշ անուն ունեմ:

ՆԱՆՈՐ - (կասկածելի հետաքրքրությամբ): Ու ես տեղյակ չեմ...

ԱՍՏՐԱ - (Լանորին՝ հակահարվածի անցնելով): Թե՛ ձևացնում ես, որ մոռացել ես:

ՆԱՆՈՐ - (Աստրային՝ նույն տոնով): Հիշեցի, բլոգումդ հյուրերիս թվարկելիս Ավետին դարձրել էիր Ավոկադո: (Ավետին.) Ես միայն կրկնում եմ ուրիշի գրածը:

ԴԱՐՅԱՆ - (կանխելով Ավետին): Ավետ, համարենք, որ Աստրան անհաջող սրամտել է, ու թեման փակենք:

ԱՎԵՏ - (դժվարությամբ իրեն զսպելով): Միայն Լանորի ժպտի դիմաց:

**Նրա ասելուց հետո բոլորի հա-
յացքներն ուղղվում են Նանորին,
որը մթնած նայում է Դարյանին:**

ՆԱՆՈՐ - (զգաստանալով՝ ժպտում է): Ավետ, ես գնահատեցի մեծա-
հոգությունդ:

**Գալիս է Անետը՝ Մանեին հեմ-
ված, բայց առանց ձեռնափայ-
տի:**

ԴԱՐՅԱՆ - (նրան ընդառաջ գնա-
լով՝ համբուրում է ձեռքը): Ստի-
պում ես քեզ կարոտել:

ԱՆԵՏ - Դու ինձ չես կարոտում, այլ
մեր դպրոցական տարիները, երբ
ես նիհար էի, իսկ դու՝ առանց
ձաղատի:

ԴԱՐՅԱՆ - Ու երկուսով մի պաղպա-
ղակի փող էինք ունենում:

**Դարյանը Անետին օգնում է
նստել, մոտենում է Ավետին: Մա-
նեն աննկատ դուրս է գնում:**

ԱՍՏՐԱ - (կողքանց մոտենալով Ա-
նետին, կամաց): Լավ չէ երիտա-
սարդ կնոջ ներկայությամբ խոսել
ամուսնու ձաղատի մասին:

ԱՆԵՏ - (կամաց): Երիտասարդ կի-
նը մինչև հիմա չէր տեսել ձաղա-
տը: (Բարձր:) Նանոր, աչքիս
նիհարել ես:

ԱՍՏՐԱ - (արդեն գնում է դեպի
Դարյանը, բարձր, որ բոլորը
լսեն): Նա գիշերները ոմանց պես
չիզքեյք չի ուտում:

ՆԱՆՈՐ - (կեղծ վրդովմունքով):

Աստրան, ինչպես կարելի է... (Մո-
տենում է Անետին:) Անետ, սիրե-
լիս, պետք չէ հուզվել, Աստրան
ձեզ նկատի չուներ:

ԱՆԵՏ - (զգացվում է, որ հազիվ է ի-
րեն զսպում): Ինչո՞ւ պիտի հուզ-
վեմ չեղած բանի համար:
(Նանորի տոնով:) Իսկ մոտիկից
ավելի ես նիհարել:

ՆԱՆՈՐ - Այս երեկոյի առաջին
կոմպլիմենտը դուք արեցիք:

ԱՆԵՏ - Ծատ չոգևորվես, Դարյանը
ոսկորի հետ միս էլ է սիրում:

ՆԱՆՈՐ - Ի՞նչ գիտեք:

ԱՆԵՏ - Երբ մենք ավարտական ե-
րեկոյին վալս էինք պարում, դու
դեռ չէիր ծնվել:

ՆԱՆՈՐ - Հրաշալի է, սա էլ՝ երկրորդ
կոմպլիմենտը:

ԱՆԵՏ - Երրորդը հարց կլինի: Էլի
մեքենան գժի պե՞ս ես վարում:

Նանորի դեմքը մթնում է:

ԱՎԵՏ - (մոտենալով նրանց): Ո՞ւմ
եք բամբասում, աղջիկներ:

ՆԱՆՈՐ - (կարողանում է ժպտալ):
Միայն ոչ քեզ, դու հոգյակ ես,
ինչպես կասեր տիկին Լուսինեն:
(Անետին՝ մարտահրավերով:) Ես
պաշտում եմ արագությունը:
(Նրանց թողնելով՝ մոտենում է
Արմանին:)

ԱՎԵՏ - (հայացքով ուղեկցելով Նա-
նորին): Չե՞ս խնայում:

ԱՆԵՏ - Մեկ-մեկ պետք է, որ չափը
ձանաչի:

ԱՎԵՏ - Այդ մեկը՝ դժվար: *(Այլ տոնով):* Իսկ դու հոտառությունդ ես կորցրել:

ԱՆԵՏ - Հույս չունենան:

ԱՎԵՏ - Վերջին դատավարությանդ մասին կուլուարներում խոսում են:

ԱՆԵՏ - Միշտ էլ խոսել են:

ԱՎԵՏ - Մի օր կծիկի ծայրը որ քաշեն...

ԱՆԵՏ - Կծիկը մի քանի ծայր ունի, ու միայն մեկն է իմ ձեռքում:

ԱՎԵՏ - Սպառնում ես:

ԱՆԵՏ - Չէ, շանտաժ է:

ԱՎԵՏ - Սկատի կունենանք, իսկ դու չասես, որ չեմ զգուշացրել: *(Մոտենում է խմիչքի սեղանին:)*

Անետը նայում է նրան քամահրակամ քնծառով:

ՆԱՆՈՐ - *(Արմանին՝ ժպիտի տակ թաքցնելով տազնապը):* Ես սպասում եմ...

ԱՐՄԱՆ - Ինձ ձիշտ հասկացեք...

ՆԱՆՈՐ - Ուզում եք աշխատել մեզ մոտ:

ԱՐՄԱՆ - Կարծեմ զղջալու առիթ չեմ տվել:

ՆԱՆՈՐ - Հիմա էլ առիթ չեք տա: Դե... ինչ թղթեր էիք նայում:

ԱՐՄԱՆ - Կտակը...

ՆԱՆՈՐ - Եվ...

ԱՐՄԱՆ - Դարյանը ձեր անունը հանեց կտակից:

Նրանց է մոտենում Դարյանը:

ԴԱՐՅԱՆ - Էլի ինչ սյուրպրիզ է պատրաստում գեղեցկուհի տիկինս:

ՆԱՆՈՐ - *(լսածից դեռ ուշքի չեկած, ուստի և նյարդային):* Ինչ է իմ սյուրպրիզը քոնի դիմաց:

ԴԱՐՅԱՆ - Չգիտեմ՝ ինչ նկատի ունես, բայց քո փսփսոցը Արմանի հետ հանկարծ սյուրպրիզ չդառնա ինձ համար:

Արմանը շփոթված կողքի է քաշվում:

ՆԱՆՈՐ - *(ապշած):* Չհամարձակվե՞ս խանդել:

ԴԱՐՅԱՆ - *(երկիմաստ):* Զեզ համար վատ չէր լինի, եթե խանդելի: Եթե միայն խանդելի... *(Նանորին թողնելով՝ մոտենում է Աստրային:)*

Նանորը խմիչք է վերցնում, առանձնանում է անկյունում: Բողբոբը, Դարյանից ու Աստրայից բացի, գողումի հայացքներ են նետում մեկ Նանորի, մեկ Աստրայի հետ խոսող Դարյանի վրա:

ԴԱՐՅԱՆ - Ո՛ր է:

ԱՍՏՐԱ - Խմում է:

ԴԱՐՅԱՆ - Այստեղ չէ՞ր կարող խմել:

ԱՍՏՐԱ - Ուրիշ բան չունես ասելու:

ԴԱՐՅԱՆ - Ոչ հիմա ու ոչ այստեղ:

ԱՍՏՐԱ - Ե՞րբ ու դ՞րտեղ:

ԴԱՐՅԱՆ - Լսիր, իսկապե՞ս դուք մտերիմ ընկերուհիներ եք եղել:

ԱՍՏՐԱ - Հիմա էլ մտերիմ ընկերու-

հիներ ենք, բայց դա չի խանգարում, որ քնես ինձ հետ:

ԴԱՐՅԱՆ - *(կարծես հաժույք է ստանում իր հեզնանքից):* Ըհը, ես քնում եմ քեզ հետ, իսկ դու այդ ընթացքում խզբզում ես բլոզիդ մեջ:

ՆԱՆՈՐ - *(բարձր):* Ավետ, Մաքսի ֆիրմային կանապեններից կիյուրասիրե՞ք:

ԱՎԵՏ - Սիրով: *(Ափսեի մեջ ուտեստ է դնում, մատուցում նրան:)* Երջանկություն է ձեզ ծառայելը: *(Ավելի կամաց:)* Փոխանցումն արվել է:

ՆԱՆՈՐ - *(ժպիտն ու աշխուժությունը հակառակ են նրա խոսքին):* Ծննդյան նվեր:

ԱՎԵՏ - Նվերը հետո: Սա գործարք է, որից իմ բաժինն ունեմ:

ՆԱՆՈՐ - Այս անգամ չունես:

ԱՎԵՏ - Չե՞ն կարծում, որ ախորժակդ չափավորելու ժամանակն է:

ՆԱՆՈՐ - Դո՞ւ պիտի չափավորես: *(Բարձր:)* Դարյան, ես գիտեմ, ինչ սյուրպրիզ անեմ քեզ համար: *(Ափսեն տալիս է Ավետին ու դուրս է գնում:)*

Կարճ դադար:

ԱՆԵՏ - *(բարձր):* Դարյան, հերիք է խելքահան անես աղջկան, մոտարի, բան եմ ասելու:

ԱՍՏՐԱ - Անետ, ինչո՞ւ են բոլորը խելոք հնազանդվում ձեզ:

ԴԱՐՅԱՆ - Բացատրենք էլ՝ չես հասկանա: *(Մոտենում է Անետին, նախապես նրա համար խմիչք վերցնելով:)*

ԱՍՏՐԱ - *(մոտենալով Արմանին, ցուցադրական մտերմությամբ նրան թևանցուկ է անում):* Անետ, դեմ չե՞ք լինի, եթե ես էլ խելքահան անեմ այս ջահելին:

ԱՆԵՏ - Իզուր ժամանակ կկորցնես: Նա այնքան հիմար չէ, որքան թվում է: Թեև միշտ էլ կարելի է փորձել ջահել ու սիրունիկ տղաներին: *(Դարյանին՝ կամաց:)* Վերջին դատավարությունը հեշտ չի մարսվի:

ԴԱՐՅԱՆ - Ինչքան է պետք մարսել տալու համար:

ԱՆԵՏ - Դատախազը, ատենակալները... մի երկու լրագրող էլ՝ կողքից:

ԴԱՐՅԱՆ - Ծատ չե՞ն ասում:

ԱՆԵՏ - Դատը շահելուց չասացիր, որ շատ է:

Հայացքներով մեծամարտում են:

ԴԱՐՅԱՆ - *(տեղի տալով):* Քաղաք վերադառնանք՝ կստանաս:

ԱՆԵՏ - Արմանի հետ չուղարկես:

ԴԱՐՅԱՆ - Այսինքն...

ԱՆԵՏ - Կոնկրետ ոչ մի բան, ներքին ձայն է:

ԴԱՐՅԱՆ - Տղան մի տարի է՝ աչքիս առաջ է:

ԱՆԵՏ - Բայց՝ ոչ իմ:

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է շքեղ զգեստափոխված Նանորը: Հերթով նայելով ներկաներին, վերցնում է բաժակը:

ՆԱՆՈՐ - Ուշադրություն...

ԱՍՏՐԱ - Անակնկալներն սկսվում են:

ՆԱՆՈՐ - Բարեկամներս, սա մեր վերջին հանդիպումն է «Դրախտում»: (Դարյանին.) Տեսա՞ր, համոզելու կարիք չեղավ: (Բողորին.) Դե, ի՞նչ կասեք:

ԱՎԵՏ - Կասեմ, որ հրաշքներ դեռ պատահում են:

ԱՍՏՐԱ - (թունոտ քաղցրությամբ): Առավել ևս, որ գիտեմ, թե ինչքան թանկ է քեզ համար «Դրախտը», չէ՞ որ այստեղ առաջին անգամ հանդիպեցիր Դարյանին:

ՆԱՆՈՐ - (Աստրային): Այո, դու գիտես, թե ինչքան թանկ են ինձ համար այս հյուրատան հետ կապված հուշերս: (Դարյանին): Սիրելիս, այուրպրիզի համար շնորհակալություն կհայտնես Աստրային, ավելի ձիշտ՝ նրա բերանբացությանը: Այն պահից, երբ իմ գաղտնի ծննդյան տարեդարձները հայտնի դարձան բոլորին, «Դրախտը» կորցրեց իր իմաստը:

ՏԵՍԱՐԱՆ. Աղմուկով բացվում է դուռը, ներս է գալիս հարբած Դենը:

ԴԵՆ - (պղտոր հայացքը պտտում է

ներկաների վրա, մի կերպ պահելով հավասարակշռությունը): Ներկայացումն սկսվել է: Ու բոլորն ունեն իրենց դերն ու խաղում են պրոֆեսիոնալից լավ: (Նանորին.) Մի գլուխ այուրպրիզ ես խոստանում, բայց ամեն տարի նույն թատրոնն է: (Հայացքը գամում է Դարյանին): Բայց մեկ էլ տեսար՝ ռեժիսորը փոխվեց: Այդ ժամանակ նույնիսկ միլիոնները չեն օգնի: (Վտանգավոր ծոծվում է, Արմանը հասնում, բռնում է նրան: Արմանին:) Այստեղ ի՞նչ ես անում: Դու մեզնից մեկը չես դառնա: Երբեք չես դառնա: Դրա համար էլ քեզ կասեմ... (Իբր՝ կամաց է ասում, բայց լսելի է բոլորին:) Դրախտը կարող է դժոխք դառնալ:

Համր տեսարան: Առաջինը լռությունը խախտում է Աստրան. ծիծաղում է սկզբում անվստահ, հետո աստիճանաբար ծիծաղը դառնում է բարձր ու նյարդային: Մյուսները միանում են նրան: Բոլորը ծիծաղում են՝ Դենից բացի... Բենը մթնում է: Կարճատև դադար:

ՏԵՍԱՐԱՆ. Խավարում վերևից գլորվող ծանր մարմնի աղմուկ, խուլ ճիչ, աղեկտուր տնքոց ու... լռություն:

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍԱՐԱՆ. Նախասրահը: Լուսինեն նյարդային շարժումով համար է հավաքում:

ԼՈՒՍԻՆԵ - Ալո... ալո, հիվանդանոցն է... մեր հյուրը... արդեն... շնորհակալ եմ: (Անջատում, համար է հավաքում՝ պատասխանող չկա, անջատում, նայում է հեռախոսի սև էկրանին:)

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Մաքսը:

ԼՈՒՍԻՆԵ - Հերիք ներս ու դուրս անես... (Հեռախոսազանգ:) Պարոն Դարյան, բուժքրոջ հետ խոսեցի, վիրահատությունն ավարտվել է: Արմանին զանգեցի՝ չի պատասխանում: (Հեռախոսն անջատում, չտեսնող հայացքով նայում է Մաքսին, հետո սթափվելով:)

Գնա, մի երկու ժամ քնի:

ՄԱՔՍ - Մի երկու ժամի համար չարժե պառկել:

ԼՈՒՍԻՆԵ - Վաղը... այսինքն՝ արդեն այսօր տոնական ձաշ պիտի տաս:

ՄԱՔՍ - Ճաշն էլ կտամ, տորթն էլ՝ վրադիր: (Դադար:) Բայց մտածում եմ՝ կարող է հետաձգեն: Լավ-վատ՝ մի ամբողջ դատավոր է ջարդուփշուր եղել:

ԼՈՒՍԻՆԵ - Ջարդուփշուրը այն բառը չէ... (Մտազբաղ:)

ՄԱՔՍ - Վատ չի լինի, եթե ողջ մնա,

գոնե կիմանանք, թե գիշերվա կեսին ո՞ր էր գնում: (Խորամանկ շեշտով:) Կամ՝ ո՞ւմ մոտ:

ԼՈՒՍԻՆԵ - (հայացքով խեթելով): Ավելի լավ է՝ քնես:

ՄԱՔՍ - Հասկացա ու չքվեցի: (Ծեմին շրջվելով:) Բայց քեզ իսկապես չի հետաքրքրում՝ ում մոտ... (Արագ, որ Լուսինեն չարձագանքի՝ մտնում է կողքի սենյակ:)

ԼՈՒՍԻՆԵ - Չավզակ...

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Մանեն, գունատ է, խամրած:

ԼՈՒՍԻՆԵ - Ի՞նչ արիք:

ՄԱՆԵ - Սպասուհու հետ աստիճանները մինչև մաքրեցինք... ինչքան արյուն էր...

ԼՈՒՍԻՆԵ - Ճակատն էր պատռվել, լավ է, քունքին չէր դիպել: (Այլ տոնով:) Սենյակում աչքիդ բան չընկամ:

ՄԱՆԵ - Ի՞նչ:

ԼՈՒՍԻՆԵ - Ի՞նչ իմանամ, մի բան, որ հուշեր, թե ինչու էր սենյակից դուրս եկել:

ՄԱՆԵ - Անկողնուն ձեռք տված չէր... Սեղանի վրա հյուրն էր, նարնջի կճեպներն ու... (Ձայնն իջեցնելով:) Ափսեն:

ԼՈՒՍԻՆԵ - (չլսելով): Ի՞նչը...

ՄԱՆԵ - Զիզբեյքի ափսեն: Դատարկ:

ԼՈՒՍԻՆԵ - (*գարմացած*): Ամբողջը կերել էր:

ՄԱՆԵ - (*հոգոց հանելով*): Ըհը...

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս եմ Ավետոս ու Արմանը:

ԼՈՒՍԻՆԵ - Կապրի՞...

ԱՎԵՏ - Կապրի, բայց... վայ էն ապրելուն:

ԱՐՄԱՆ - Ողնաշարն է կոտրվել:

ԼՈՒՍԻՆԵ - Ճակա՞տը...

ԱՐՄԱՆ - Կարեցին, դա ոչինչ է կոտրված ողնաշարի դիմաց:

ՄԱՆԵ - Միայն այդքանը...

ԱՎԵՏ - (*գարմացած նայելով նրան*): Դրանից ավել ի՞նչ լիներ...

ՄԱՆԵ - (*զգալով ասածի անհեթեթությունը*): Ուզում էի ասել՝ մի ուրիշ բան...

ԱՐՄԱՆ - Մի ուրիշ բանը անուն ունի՞:

ՄԱՆԵ - Ներեցեք... (*Համարյա դուրս է վազում*):

ԼՈՒՍԻՆԵ - (*արդարացնող շեշտով*): Արյունոտ աստիճանները մաքրելը հեշտ բան չէ:

ՏԵՍԱՐԱՆ. Վերկից իջնում է Աստրան:

ԱՍՏՐԱ - Մեկն ինձ կասի՞, թե ժամը մեկին տիկին դատավորը ո՞ւմ հետ էր գնում հանդիպման:

ԱՎԵՏ - (*թունոտ*): Վատ թեմա չէ բլոգիդ համար:

ԱՍՏՐԱ - Նույնիսկ շատ լավն է, բայց Նանորի համբերության

հետ խաղալն ավելի վտանգավոր է: (*Արմանին՝ երկիմաստ*): Անետը շատ է սիրում սիրունիկ տղաներ...

ԱՐՄԱՆ - (*անխոռով*): Ձեր ամուսնուն նկատի ունեք:

ԱՎԵՏ - (*գոհ*): Բրավո: (*Աստրային*). Անետի վայնասունից հետո բոլորս դուրս թանք՝ Դենից բացի:

ԱՍՏՐԱ - Դենը իր տպավորիչ ելույթից հետո բարձրացավ վերև ու այնպես լակեց, որ կեսօրից շուտ խելքի չի գա: (*Լուսինեին*). Մաքսին ասեք, որ նախաձաշին հերկուլես եմ ուտելու:

ԼՈՒՍԻՆԵ - Անտառային հատապտուղներով: Ծրագրում փոփոխություն կլինի՞:

ԱՍՏՐԱ - Ի՞նչ փոփոխության մասին է խոսքը:

ԱՎԵՏ - (*սարկազմով*): Դե իհարկե, եղած-չեղածը կիսամեռ Անետն է:

ԱՍՏՐԱ - (*Ավետին*): Չեմ հասկանում, ինչ նկատի ունեք, բայց լավ ծանաչելով Նանորին կարող եմ ասել, որ նա տոնական տորթի մոմերը անպայման պիտի հանգցնի:

ԼՈՒՍԻՆԵ - (*մեղավոր շեշտով*): Պարզապես մտածեցի...

ԱՍՏՐԱ - Մտածելը ձեր գործը չէ: Ընդամենը Անետն է աստիճաններից գլորվել... Նորություն կա՞:

ԱՐՄԱՆ - Ողնաշարն է ջարդվել:

ԱՍՏՐԱ - (*առաջին պահ անակնկալի է գալիս, բայց արագ սթափ*-

վում է: *Լուսինենին*): Ուրեմն՝ տոնական ընթրիքը կրկնակի լավ պետք է կազմակերպեք: Նանորին պոզիտիվ է պետք: *(Գնում է դեպի աստիճանները: Հընթացս:)* Արման, առավոտյան Անետին ծաղիկներ տարեք, միայն ոչ քրիզանթեմներ: Խեղճը կուրախանա: *(Գնում է:)*

Տիան լուսինյան:

ԼՈՒՍԻՆԵ - *(Արմանին, Ավետին):* Ծանր գիշեր էր... Չեք ուզում հանգստանալ:

ԱՐՄԱՆ - Ես սուրճ կխմեի:

ԱՎԵՏ - Իսկ ես նոր զգացի՝ ինչպես եմ հոգնել: *(Բարձրանում է աստիճաններով:)*

ԼՈՒՍԻՆԵ - *(զանգում է):* Մանե, սուրճ բեր պարոն Արմանին: *(Դադար:)* Եթե Անետը ծանրամարմին չլիներ, գուցե այդպես չվնասվեր...

ԱՐՄԱՆ - Աչքիս առաջ է, ինչպես շեֆը Անետին գրկեց, հասցրեց բազմոցին: Իսկ երկու սանիտար հազիվ նրան տարան պատգարակով:

ԼՈՒՍԻՆԵ - Բա ինչ եք կարծում, մանկության ընկերներ են...

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Մանեն՝ մատուցարանի վրա բերելով սուրճով բաժակը:

ԱՐՄԱՆ - Ահա և սուրճը: *(Հեռախոսազանգ:)* Այո, դոկտոր... ինչ

հաղորդեմ շեֆին... Հենց այդպես... *(Հեռախոսն անջատելով՝ կանանց:)* Չեք հավատա...

Մանեի ձեռքից բաժակն ընկնում է հատակին, աղջիկը սարսափած նայում է Արմանին:

ԱՐՄԱՆ - Անետը ուշքի է եկել ու...

ՄԱՆԵ - Մահացել է:

ԱՐՄԱՆ - Ինչո՞ւ պիտի մահանա:

ՄԱՆԵ - Բա էլ ինչ...

ԱՐՄԱՆ - Կրկնել է Դենի ասածը:

ԼՈՒՍԻՆԵ - *(հմայված պես):* Դենի ասածը...

ԱՐՄԱՆ - Հիը... «Դրախոսը կարող է դժոխք դառնալ»:

Համր տեսարան:

ՏԵՍԱՐԱՆ. Ուշ նախաճաշ: Ժամացույցը՝ 11-ն անց 30 րոպե: Մեղանի մոտ միայնակ նստած Ավետը անխռով սուրճ է խմում: Մտնում է Նանորը:

ՆԱՆՈՐ - *(առանց ձևականության):* Չասացի՞, բաժինդ չես ստանա:

ԱՎԵՏ - Ես ծախսեր ունեմ:

ՆԱՆՈՐ - Ես՝ ավելի շատ: Ինչո՞ւ ես թաքցնում, որ Դարյանը ինձ կտակից հանել է: Կարծում էիր՝ չեմ իմանա:

ԱՎԵՏ - Իհարկե, կիմանայիր, բայց ոչ ինձնից:

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Սարոն՝ սրճեփով, սեղանի սպասքն է կարգավորում:

ԱՎԵՏ - (Սարոյի ներկայությունից ստիպված՝ աթոռը առաջ է քաշում, նստեցնում է Լանորին, ինքն էլ է նստում: Հարգալից տոնով): Ցավում եմ, որ ձեր ծննդյան օրը մթազնվեց ցավալի դեպքով:

ԼԱՆՈՐ - (փորձելով պահել պատշաճ տոնը): Եղածը եղել է: Իհարկե, վատ է, որ Անետը հիվանդանոցում է, բայց գոնե ողջ է:

ԱՎԵՏ - Դա շատ հարաբերական է, մնացած կյանքը... ի՞նչ կյանք, միայն տառապանք է:

Սարոն դուրս է գնում:

ԼԱՆՈՐ - (նախկին տոնով): Այդ տեքստը պահիր, Դարյանի մոտ կօգտագործես: Իսկ ինձ հանգիստ թող: Վերջապես, ծննդյանս օրն է...

ԱՎԵՏ - (տեղից բարձրանալով): Ես հիմա... (Արագ գնում է դեպի դուռ:)

ՏԵՍԱՐԱՆ. Դուռը բացվում է, Ավետը բախվում է Աստրայի հետ, համարյա զգվանքով ետ է քաշվում, որ մա ներս մտնի, որից հետո գնում է՝ դուռն աղմուկով փակելով:

ԱՍՏՐԱ - (նրա ետևից նայելով): Չէ, սա հեշտ ներող-մոռացողներից չէ, ավոկադոն կարող է կոկորդոմս մնալ: (Լանորին է մեկնում փոքրիկ փաթեթ:) Ինչ լավ է, որ դու ծնվել ես:

ԼԱՆՈՐ - (վերցնում է նվերը, թեթև գրկում): Ինչ լավ է, որ դու կաս: (Մի պահ նայում են իրար ու առաջին ու վերջին անգամ անկեղծ են ծիծաղում:) Առաջին անգամ երբ ասացինք այդ խոսքերը:

ԱՍՏՐԱ - Տաս տարի կա՛...

ԼԱՆՈՐ - Մի քիչ էլ՝ ավել: (Ուզում է բացել նվերը:)

ԱՍՏՐԱ - Հետո կբացես:

ԼԱՆՈՐ - Երեկոյան զգեստս հագնելուց առաջ, թե՛ հետո:

ԱՍՏՐԱ - Իհարկե, հետո:

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Ավետը՝ փոքրիկ տուփով:

ԱՎԵՏ - (տալով նվերը:) Գուցե արժանի չէ ձեր փայլին, բայց արժանի է ձեր համեստությանը:

ԱՍՏՐԱ - Այն հոնորարներով, որ պլոկում եք Դարյանից, ամենափայլուն նվերը կարող էիք գնել: (Լանորի ձեռքից ծանկում է տուփն ու բացելով, ի ցույց դնում ոսկե բարակ շղթայով ապարանջանը:) Այսքանն էլ հագիվ...

ԱՎԵՏ - (որ իզուր էր փորձում խլել տուփը՝ անզոր ու անսքող չարությամբ): Լեզուդ պոկել չեմ կարող, բայց մի օր վիզդ անպայման կպոկեն... ուրիշները...

Նրա պոթեկումից անակնկալի եկած կանայք լուռ են... Դադար:

ԼԱՆՈՐ - (առաջինը սթափվելով, խաղացկուն՝ Ավետին): Միայն

մտքովդ չանցնի նրա սպանությունը պատվիրել: Բո դեմ վկայություն կտամ: (Դեռևս տեղում սառած Աստրայի ձեռքից վերցնում է շղթան, մոտենում է Ավետին ու նրան հանձնելով՝ թույլ է տալիս կապել դաստակին, որից հետո թեթևակի համբուրում է նրա այտը:)
Հրաշալի նվեր է, հավատա:

ՏԵՍԱՐԱՆ. Այդ պահին ներս է մտնում Դարյանը:

ԴԱՐՅԱՆ - Ինչ հուզիչ տեսարան...

ԱՍՏՐԱ - (կծու): Խանդեցիր:

ԼԱՆՈՐ - (ավելի շատ Աստրային «հարվածելու» միտումով՝ շատ քաղցր է պատասխանում ամուսնուն): Դարյան, սիրելիս, այսօր կարող ես ինձ խանդել, թույլ եմ տալիս: (Մոտենում, ցուցադրական համբուրում է Դարյանին:)

ԱՎԵՏ - Իսկ նվերը...

ԼԱՆՈՐ - (համբուրի միջոց): Նվերը գիշերն եմ ստացել:

ԱՍՏՐԱ - Անետի վայրէջքից առաջ, թե՛ հետո:

ԼԱՆՈՐ - (իրենից վանում է Դարյանին, գնում, նստում, սուրճ է խմում: Անխոռով տոնով:)
Առաջ ու հետո:

ԴԱՐՅԱՆ - Հա՛... ինչ-որ չեմ հիշում: (Անտեսելով Նանորի չարացած հայացքը՝ դիմում է Ավետին:)
Նոր խոսեցի բժշկի հետ:

ԱՎԵՏ - Ի՞նչ ասաց:

ԴԱՐՅԱՆ - Ինչ արդեն ասել էր:

ԱՍՏՐԱ - Դարյան, Անետը ո՞ր էր գնում այդ ժամին:

ԴԱՐՅԱՆ - Ինչո՞ւ ես ինձ հարցնում:

ԱՍՏՐԱ - Այստեղ միակ մարդն ես, որ ամեն ինչի պատասխանը գիտե:

ԴԱՐՅԱՆ - Ես էլ կուզեի, որ այդպես լիներ: (Նայելով մթնոլորտի Նանորին:)
Ինչո՞ւ ես այդպես նայում:

ԼԱՆՈՐ - Գոնե հինգ րոպե կարո՞ղ եք ձևացնել, որ ծննդյանս օրն է:

ԴԱՐՅԱՆ - (մոտենում, համբուրում է ձեռքը): Ներիր մեզ, խնդրում ենք... Անետը բոլորիս խելքը տարավ:

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Դենը՝ արդեն հարբած:

ԴԵՆ - Սիրող ամուսինները աշխարհի իններորդ հրաշալիքն են... կամ իններորդ ալիքը:

ԱՍՏՐԱ - Որն իր հետ քշում-տանում է ամենքին ու ամեն ինչ:

ԴԵՆ - Պարզվում է՝ հիշում ես ասածներս, երբ ուզում ես:

ԴԱՐՅԱՆ - (Դենին ու Աստրային): Մենակ որ մնում եք, ինչպե՞ս եք դիմանում իրար: (Նստում է, Նանորը նրան սուրճ է լցնում:)
Դեն, գուցե վերջապես շնորհավորե՞ս Նանորին:

ԴԵՆ - Ախ, հա... դե, իհարկե... (Մոտենում է Նանորին:)
Կար ժամանակ, երբ Աստրան ամբողջ օրը վազում էր՝ հերթական ռեպոր-

տաժը եթեր տալու համար, իսկ դու հագուստներ էիր հորինում, ամբողջ գիշեր կարող էիր նստել ու կարել հերթական զգեստը՝ «ճ» կլասի մի ստուդիայում ցուցադրելու համար: Երկու ընկերուհիներ, որոնք որոշել էին նվաճել աշխարհը...

ԴԱՐՅԱՆ - Խմիչքը լեզուդ բացել է:

ԴԵՆ - *(ասես Դարյանին չլսելով, բայց դիմելով նրան):* Հետո Լանորը քեզ հանդիպեց, այստեղ: Մենք խմբով մտել էինք մի բաժակ սուրճ խմելու, դու ընտանիքով հանգստանում էիր: Նախկին ընտանիքով... *(Գրպանից ծալված թուղթ հանելով՝ տալիս է Լանորին:)* Պիտի որ գնահատես ինՖորմացիան: *(Տեսնելով, որ նա ուզում է բացել թուղթը:)* Ինձնից հետո: *(Ուղղվում է դեպի դուռը:)* Լանոր, ընթրիքին կուշանամ:

ԱՍՏՐԱ - Կարող ես ընդհանրապես չգալ:

ԴԵՆ - Չեմ կարող, տափաշիշս պիտի լիցքավորեմ: *(Ծեմից:)* Բարի ժամանց դրախտում... կամ դժոխքում՝ ինչպես կուզեք: *(Գնում է:)*

ԱՎԵՏ - *(դադարից հետո):* Լրիվ է ձեռքից գնացել:

ԱՍՏՐԱ - Զո գործը չէ:

ԴԱՐՅԱՆ - Մեր գործն է: Պետք է մի բան անել, թե չէ կորցնում է իրականության զգացումը:

ՆԱՆՈՐ - *(մտախոհ):* Ես կասեի՝ սրվում է իրականության զգացումը:

Մի պահը չորսը նայում են իրար:

ԱՍՏՐԱ - Ինչ եք լարվել, նա միշտ էլ փալաս է եղել: *(Լանորին.)* Ասում էի, չէ՞, ես գնամ դատարան, ո՞ւմ պետքն էր, թե ով եմ ու ինչ կապ ունեմ քեզ հետ: *(Ավետին.)* Դու էլ պակասը չէիր... *(Նմանակելով:)* «Դենը լավագույն տարբերակն է, ամեն ինչ հաշվարկված է, քանի որ դատավորը Անետն է ու ամեն ինչ կանի տեղը տեղին: Արե՞ց... Արեց, որովհետև Անետն է: Իսկ Դենը մի օր հարբած ինչ ասես՝ դուրս կտա ու դրանից հետո կսկսվի իսկական սկանդալը:

ՆԱՆՈՐ - *(որ կարողում էր գրությունը, մոայլվում է, հետո թափահարելով թուղթը, անբնական աշխուժությամբ):* Ուզո՞ւմ եք իմանալ, ինչ է գրված:

Մպաստական լռություն:

ՆԱՆՈՐ - *(դադարը պահելուց հետո):* Տորթը կտրելուց առաջ կասեմ: *(Աստրային.)* Տղամարդիկ մեզ կներեն, եթե նրանց լքենք:

ԴԱՐՅԱՆ - Կներենք, միայն թե չափավոր կբամբասեք:

ՆԱՆՈՐ - Ինչո՞ւ եմ քեզ թվում, որ իմ միակ հոգսը քո անձը քննարկելն է:

ԴԱՐՅԱՆ - Որովհետև քո միակ հոգսը ես եմ:

Նանորն ուզում է ինչ-որ բան ասել, բայց դուրս է գնում, Աստրան

ամբողջ տեսքով ցույց տալով, որ ստիպված է հետևել ընկերուհուն՝ կամաց փակում է դուռը:

ԴԱՐՅԱՆ - *(կանանց դուրս գալուն պես ժպիտը մարում է, չոր):* Ինձ ասելու բան չունեն:

ԱՎԵՏ - Լանորին կտակից հանելը...
Կարող է՝ դավաճանում է:

ԴԱՐՅԱՆ - Ինձնից առաջ դու կիմանայիր:

ԱՎԵՏ - Ուրեմն...

ԴԱՐՅԱՆ - Շատ արագ սովորեց փողին: Բայց հիմա դա չենք քննարկում: Հարցս կրկնեմ՝ ինձ ասելու բան չունեն:

ԱՎԵՏ - Երեկ բոլոր հարցերը չքննարկեցիք:

ԴԱՐՅԱՆ - Բացի մեկից: Անկախ աուդիտ եմ հրավիրել:

ԱՎԵՏ - Ե՛րբ:

ԴԱՐՅԱՆ - Անցած շաբաթ:

ԱՎԵՏ - Ինչո՞ւ ես չգիտեմ:

ԴԱՐՅԱՆ - Որովհետև դու չպիտի իմանայիր:

ԱՎԵՏ - Չեմ հասկանում... անկեղծորեն...

ԴԱՐՅԱՆ - Համարյա անկեղծ գարմացար: *(Այլ տոնով:)* Պարզվում է, երեք տարի է խոշոր գումարներ եմ վճարում իրավաբանական խորհրդատվության համար: Պատահաբար չգիտե՞ս այդ իրավաբանական գրասենյակի հասցեն:

ԱՎԵՏ - Ինչո՞ւ պիտի իմանամ:

ԴԱՐՅԱՆ - Փոխանցումները դու ես արել:

ԱՎԵՏ - *(ինչ-որ բան որոշելով):* Ես կբացատրեմ...

ԴԱՐՅԱՆ - Առանց բացատրության: Վաղը երեկոյան բոլորը, մինչև վերջին սենթը, փոխանցվի հաշվեհամարիս:

ԱՎԵՏ - Բայց...

ԴԱՐՅԱՆ - Տոկոսներով: Ինչքան է կազմել՝ կիմանաս Արմանից: Խարդախությունը բացահայտողը նա է: *(Հասնելով դռանը, առանց շրջվելու:)* Միայն չասես, որ մենակ ես գործել: *(Գնում է:)*

ԱՎԵՏ - *(կարծ մտորումից հետո գանգում է):* Ես ճաշասրահում եմ: *(Լյարդային ետուտառաջ է անում:)*

ՏԵՄԱՐԱՆ. Գալիս է Արմանը:

ԱՐՄԱՆ - Լսում եմ:

ԱՎԵՏ - *(առանց ձևականության):* Զո հաշվով սխալվեցի: Մտածեցի՝ սիրուն մոռութով ջահել է, իսկ դու՝ ոչ ավել ու ոչ պակաս, ֆինանսական խարդախություն ես բացահայտում:

ԱՐՄԱՆ - *(ինքն էլ չի խաղում):* Ծեֆն ինչ ասաց:

ԱՎԵՏ - *(չարախիհնդ):* Համենայնդեպս, ինձ չես փոխարինի:

ԱՐՄԱՆ - Դրանից վատը կա: Կարգին տոկոս է ստացվել:

ԱՎԵՏ - Դեռ կզոջաս, որ հանդիպել ես ինձ: *(Ավելի կատաղելով Արմանի ժպիտից՝ դուրս է գնում՝ դուռը շրխկացնելով:)*

Արմանը սուրճ է լցնում ու վերցնելով կարկանդակը՝ կանգնած, ախորժակով ուտում է:

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Մանեն:

ՄԱՆԵ - Ինչ է պատահել պարոն փաստաբանին, ինքն իրեն նման չէր:

ԱՐՄԱՆ - Լույն է կծել:

ՄԱՆԵ - Նրան լույն է կծել, իսկ դուք չեք կշտացել խոհանոցում մատուցած նախաճաշից:

ԱՐՄԱՆ - Կշտացել եմ, բայց ախորժակից չեմ բողոքում:

ՄԱՆԵ - (նայելով ափսեներին): Դե՞նը էլի չի նախաճաշի:

ԱՐՄԱՆ - Հիմա նրա նշանաբանն է՝ երկու վիսկին մի բուտերբրոտ է: Աստրայի նման կին ունեցողին այլ բան չի մնում:

ՄԱՆԵ - Բայց դուք... շատ ուրիշն եք:

ԱՐՄԱՆ - Ծնորհակալություն:

ՄԱՆԵ - Հաճոյախոսություն չէր: Սկզբից խելոք մանչուկ երևացիք, բայց կարգին ինտրիզան եք:

ԱՐՄԱՆ - Ոչ միայն:

ՄԱՆԵ - Վտանգավոր տիպ եք:

ԱՐՄԱՆ - Չեք պատկերացնում՝ ինչքան վտանգավոր եմ: Աչքիցս ոչինչ չի վրիպում: Օրինակ՝ դուք արդեն մեկ անգամ վրիպել եք:

ՄԱՆԵ - (լարվելով): Չեմ հասկանում...

ԱՐՄԱՆ - Անետի հաշվով:

ՄԱՆԵ - Ազատե՞ք սրահը, ընթրիքին պիտի պատրաստվենք:

ԱՐՄԱՆ - Ինչ եք ձեզ կոտորում, նախկին փայլն ու ապլոմբը չի լինի: Նախ՝ ընդհանուր տրամադրությունը էն չէ, հետո էլ՝ Անետը չի լինի, Դենը կուշանա...

ՄԱՆԵ - (իրը ցավակցական): Իսկ դուք կճաշե՞ք ոչ թե այստեղ, այլ խոհանոցում, սպասարկող անձնակազմի հետ:

ԱՐՄԱՆ - Ձեզ հետ միասին: (Հեռախոսազանգ:) Այո, արդեն եկա: (Գնում է դեպի դուռը:)

ՄԱՆԵ - (անթաքույց ծաղրով): Տե՛րն էր, թե՛ տիրուհին:

ԱՐՄԱՆ - Ես մեկ տիրոջ ծառա եմ: (Աղմուկով փակում է դուռը:)

Մանեն նրա ետևից լեզու է ցույց տալիս: Հեռախոսազանգ:

ՄԱՆԵ - Մա՞քս... հիմա ի՞նչ ժյուլիենի ժամանակն է... Ավե՛տն է պատվիրել: Լավ, գալիս եմ: (Գնում է:)

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Աստրան, տեսնելով, որ մենակ է, համար է հավաքում:

ԱՍՏՐԱ - (շտապով): Չանջատես, կարձ կկապեմ: Եթե մինչև ընթրիքը չհանդիպենք՝ ես ամեն ինչ կասեմ Նանորին: Հա, կորցնելու ոչինչ չունեմ: Ու չեմ գղջա...

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Մանեն՝ մատուցարանի վրա բերելով արծաթե փակ սկուտեղ ու ստուսի փոքրիկ, կափարիչով աման, դասավորում է սեղանին:

ԱՍՏՐԱ - (հետևելով նրան): Սա ի՞նչ է...

ՄԱՆԵ - Ավետը ժյուլյեն է պատվիրել:

ԱՍՏՐԱ - Պահ, գուրմանիս տեսեք... Գիտե՞ք, հայերեն ինչպես է գուրմանը:

ՄԱՆԵ - Համադամասեր: (Ձանգում է՝ չտեսնելու տալով Աստրայի կոտրատվելը:) Պարոն Ավետ, ժյուլյենը սեղանին է... (Անջատում է հեռախոսը:) Նա Դարյանի մոտ է ու շուտ չի պրծնի շեֆի ձեռքից:

ԱՍՏՐԱ - (ձեռքը մեկնելով սոուսի ամանին): Իսկ սա՞ ինչ է:

ՄԱՆԵ - Սոուս է: (Տեսնելով, որ Աստրան ուզում է բացել կափարիչը, ավելորդ շտապողությամբ կանխում է նրան:) Մաքսը սխտորը չի խնայել:

ԱՍՏՐԱ - (ձեռքը ետ քաշելով): Ատում եմ սխտորը:

Մանեն գնում է: Աստրան բացում է արծաթե սկուտեղի կափարիչն ու նայում ուտեստին...

ՏԵՍԱՐԱՆ. Ճաշասենյակում շատ բան չի փոխվել: Ընդամենը արծաթե կափարիչն է ընկած հատակին, սեղանին չկա սոուսի ամանը, իսկ սեղանի վրա կիսաքեք պառկած է Նանորը: Բացվում է դուռը, ներս է մտնում Ավետը, բայց շեմի մոտ, դեմքով միջանցքը կանգնած շարունակում է խոսակցությունը:

ԱՎԵՏ - Դարյան, թող հանգիստ ուտեմ, հետո էլի քո տրամադրության տակ եմ: (Փակում է դուռը, շրջվում ու տեսնում է սեղանն ու Նանորին:) Ինչպես կասեր դասականը՝ մարդը ժամանակս կերավ, կինը՝ ծաշս: (Մոտենալով:) Նանոր... (Ձեռքը հպում է Նանորին, նա սկսում է սահել ներքև: Բարձր:) Նանոր...

Ներս է ընկնում Դարյանն ու քարանում է շեմին...

ՏԵՍԱՐԱՆ. Ճաշասենյակն է: Նանորին տեղափոխել են բազմոցին, նա ծածկոցով ծածկված է: Սեղանից մեկ քայլ առաջ, աթոռներին նստած են Դարյանը, Ավետը, Աստրան, Արմանը: Նրանցից ձախ (բազմոցն աջ կողմում է) կողք-կողքի նստած են Լուսինեն, Մաքսը, Մանեն, Մարոն ու Անուշը:

ԴԱՐՅԱՆ - ...Ասացի՛ ոչ մի զանգ: Ոչ մի ոստիկանություն:

ԼՈՒՍԻՆԵ - Պարոն Դարյան, սա հյուրատուն է, մենք պարտավոր ենք... (Դարյանի հայացքից կծկվելով:) Վախենամ՝ մեզ չհասկանան:

ԴԱՐՅԱՆ - Ինձ կհասկանան: Որովհետև այստեղ սպանություն է կատարվել ու ձեզնից մեկը մարդասպանն է:

ՄԱՔՍ - (հրր՝ ինքն իրեն): Բայց ինչո՞ւ միանգամից սպանություն:

Կարող է՝ կաթված է... կամ ինքնասպանություն...

ԱՍՏՐԱ - Լանորն ու՝ ինքնասպանություն:

ԱՎԵՏ - Ի՞նչ կաթված, եզի պես առողջ էր... (Ծփոթված ներկաների հայացքներից:) Այսինքն՝ առողջից առողջ էր ու հանկարծ՝ կաթված...

ԴԱՐՅԱՆ - (խուլ ձայնով): Նրան սպանել են:

ԱՐՄԱՆ - Եթե այդքան վստահ եք... (Դարյանը ծանր նայում է նրան:)
Ուրեմն կասկածում եք մեզինից մեկին:

ԴԱՐՅԱՆ - Ասենք թե...

ԱՐՄԱՆ - Ուրեմն կարող եք ասել, թե ում էր դա ձեռնտու:

ԴԱՐՅԱՆ - (կարծես առաջին անգամ է Արմանին տեսնում): Մտքերդ հետաքրքիր ընթացք են ստանում:

ԱՐՄԱՆ - Մասնավոր խուզարկու չեմ, եթե դա եք ակնարկում: Բայց տրամաբանությունից ուժեղ եմ:

ԱՎԵՏ - Շատ արագ չսկսեցիր տրամաբանել, թե՛ լավ նախապատրաստված ես:

ԱՍՏՐԱ - Դու էլ պակաս չէիր նախապատրաստվել:

ԱՎԵՏ - Ի՞նչ ես դուրս տալիս:

ԱՍՏՐԱ - Չեն կրակել, դանակով չեն խփել, մնում է ժուլյենը: Ինչպես եղավ, որ քո պատվիրած ժուլիենը Լանորը կերավ:

ԱՎԵՏ - Իրեն հարցրու: (Նորից շփոթվելով բոլորի հայացքներից,

Դարյանին:) Այս կինը ում ասես՝ կգժվեցնի: (Աստրային.) Եթե նույնիսկ իմ ժուլիենը ինքն է կերել, հետո՞ ինչ...

ԱՍՏՐԱ - Հետո այն, որ բոլորն սպասում են տոնական ընթրիքին, իսկ դու հատուկ ժուլյեն ես պատվիրում: Ժուլյենի համար Լանորի խելքը գնում էր, ու դա բոլորը գիտեն, նաև՝ դու:

ԱՐՄԱՆ - (Աստրային): Թույլ կտամք: (Ավետին.) Հարցն ավելի ձիշտ ձևակերպեմ: (Հարկավոր դադարը պահելուց հետո:) Ձեր փոխանցած գումարները Լանորի հետ էիք կիսում:

ԱՍՏՐԱ - (սուլում է): Չէ հա... (Դարյանին.) Լանորը քեզ փիտրե՛լ է...

ԴԱՐՅԱՆ - (արհամարհական): Գողանում էր քիչումիչ:

ԱՎԵՏ - Գողանալը մի բան է, սպանելը՝ հանցանք:

ՍԱՐՈ - (կամաց՝ Անուշին, բայց բռնորին լսելի): Ստացվում է՝ գողանալը հանցանք չէ:

ԱՆՈՒԾ - Մի բան գիտե, որ ասում է:

ՄԱԶՍ - (անսպասելի տեղից բարձրանում, մոտենում է սկուտեղին): Թողեք, հենց հիմա կուտեմ մնացածը ու կհամոզվեք, որ...

ԱՐՄԱՆ - (տեղից վեր թռչելով, բռնում է թևից): Ո՛չ մի դեպքում, սա իրեղեն ապացույց է: Նստեք ձեր տեղը: (Մաքուր դժգոհ հնազանդվում է:) Ո՞վ է այստեղ բերել սկուտեղը:

ՄԱՆԵ - *(անվստահ ծայնով)*: Ես:
ԱՐՄԱՆ - Սենյակում ո՞վ կար:
ԱՍՏՐԱ - *(շատ վստահ)*: Ես:
ԱՐՄԱՆ - Առաջինը ո՞վ դուրս եկավ սենյակից:
ՄԱՆԵ - *(ավելի վստահ)*: Ես:
ԱՍՏՐԱ - *(արդեն՝ անվստահ)*: Դա ոչինչ չի նշանակում:
ԱՐՄԱՆ - Եթե ընդունում ենք, որ ժյուլյենը թունավորված էր...
ԱՍՏՐԱ - Բայց ինչո՞ւ պիտի սպանեի ամենամտերիմ ընկերուհուս:
ԴԱՐՅԱՆ - Նրա ամուսնու հետ ամուսնանալու համար:

Շփոթված լռություն:

ՄԱՋՍ - *(Լուսինեին, բայց լսելի է բողբոջին)*: Ճի՞շտ լսեցի:
ԼՈՒՍԻՆԵ - Հիմա հասկացա՞ր, թե Դենն ինչու է խմում:

Աստրան կարծես կորցրել է խստելու ունակությունը:

ԱՐՄԱՆ - Արդեն երկու կասկածյալ ունենք: *(Դարյանին.)* Շարունակե՛նք:
ԴԱՐՅԱՆ - Անպայման:
ԱՍՏՐԱ - Սպասեք... *(Դարյանին)*: Այո, ես ուզում եմ ամուսնանալ քեզ հետ, բայց դա չի նշանակում, որ կարող եմ սպանել ընկերուհուս:

ՍԱՐՈ - *(կամաց՝ Անուշին, բայց բողբոջին լսելի)*: Ամուսնանալ կարող է, սպանել՝ ոչ:

ԱՆՈՒՇ - Ուրեմն՝ կարող է, որ ասում է:

ԱՐՄԱՆ - Վերջին անգամ ո՞վ է տեսել Նանորին:

Լռություն: Վերջապես Մանեն համարձակություն է ստանում:

ՄԱՆԵ - Այստեղից դուրս գալուց հանդիպեցի Նանորին:

ԱՍՏՐԱ - *(տեսնելով, որ բողբոջը կասկածանքով են նայում, վրդովված)*: Ես էլ էի ուզում դուրս գալ, բայց Նանորը ներս մտավ: Ասաց, որ Ավետը սնկով ժյուլյեն է պատվիրել, բայց քանի որ Դարյանի մոտ խցանվել է, ինքը կուտի:

ԼՈՒՍԻՆԵ - *(հոգոցով)*: Ժյուլյենը Նանորի թուլությունն էր:

ԱՍՏՐԱ - Եվ ոչ միակը: Հետո ես գնացի:

ԱՐՄԱՆ - Ինչո՞ւ:

ԱՍՏՐԱ - Որովհետև ուտել չէի ուզում:

ԱՐՄԱՆ - *(Մանեին)*: Միայն ժյուլյեն բերեցիք:

ԱՍՏՐԱ - Նաև սոուրը:

ՄԱՋՍ - *(զարմացած)*: Ի՞նչ սոուս:

ԱՐՄԱՆ - *(նայելով սեղանին)*: Սոուս չկա: *(Մանեին.)* Ո՞ր է սոուրը:

Մանեն բարձրանում է, սեղանին մոտենալու համար պիտի անցնի Նանորի կողքով, կռփկի հետ տանում է հատակին հասնող ծածկոցը, որը դանդաղ բացում է հանգուցյալի դեմքը: Մանեն սկսում է դանդաղ փլվել հատակին:

ԱՐՄԱՆ - (հասնում, նստեցնում է աթոռին): Հետո կուշաթափվեք: Հիմա ասացեք, երբ դուրս եկաք, սոուսը սեղանին էր:

Մանեն մի կերպ հաստատական օրորում է գլուխը:

ՍԱՐՈ - (աշակերտի նման ձեռք բարձրացնելով): Ինձ խոսք հասնում է: Տիկին... հանգուցյալը ինձ կանչեց ու ասաց, որ սոուսը սեղանից ու սենյակից տանեմ:

ԱՐՄԱՆ - Ինչո՞ւ:

ԱՍՏՐԱ - (հոգոց հանելով): Նա էլ է ատում սխտորը: Ատում էր...

ԱՐՄԱՆ - (Մարոյին): Ծարունակիր:

ՍԱՐՈ - Ծարունակելու բան չմնաց: Ամանը տարա խոհանոց, ուզեցի դնել սառնարանը...

ՄԱՋՍ - (անսպասելի պոռթկում է): Ծատ ձիշտ արեցիր, որ տարար: Էդ սոուսը անհամատեղելի է ժյուլյենի հետ: (Մանեին.) Զեզո՞ւմ էր ասել, որ սոուսն էլ բերես:

ՄԱՆԵ - (հազիվ լսելի): Ոչ ոք: (Խելք ուշաթափվում է:)

ԴԱՐՅԱՆ - (անտարբեր): Տարեք այստեղից, նյարդերը թույլ են:

Մարոն ու Անուշը դուրս են տանում Մանեին:

ՄԱՋՍ - (շարունակելով «եփ գալ», *Լուսինեին*): Պետք չէր օգնականներիս բաց թողնել, որովհետև նրանց մտքով չէր անցնի ծովաթերթով ժյուլյենի հետ մատուցել իմ սխտորով սոուսը...

ԱՎԵՏ - Ինչ ծովաթերթ, տանել չեմ կարող այդ ծովային հրեշներին: Ես սնկով եմ պատվիրել:

ՄԱՋՍ - (արդարանալով): Սունկը դուրըս չեկավ: (*Լուսինեին*.) Հազար եմ ասել, էդ խարդախներից սունկ չվերցնես, լսողն ո՞վ է:

ԱՐՄԱՆ - (տեղը նստեցնելով «մարտի պատրաստվող» *Լուսինեին*): Մաքս, վերադարձեք ծովաթերթին:

ՄԱՋՍ - Վերադառնամ, որովհետև ծովաթերթը թարմ էր, ես էլ էնպես պատրաստեցի, որ պարոն Ավետը տարբերությունը համարյա չզգար:

Գալիս է Մարոն, աննկատ նստում է իր տեղը:

ԴԱՐՅԱՆ - (ասես արթնանալով ծանր քնից, *Մաքսին*): Սնկի փոխարեն ծովաթերթ էր:

ՄԱՋՍ - (փիլիսոփայական համակերպվածությամբ): Խոհանոցում հաճախ են էդպիսի կազուսներ լինում ու պրոֆեսիոնալիզմը էդ դեպքերում է պետք գալիս:

ԱՎԵՏ - Ու տարբերությունը չէր զգացվում:

ՄԱՋՍ - (չզսպելով ինքնագոհությունը): Հատուկ համեմունքներ ավելացրի, իսկ կաթնային կրեմը էնպես եթերային ստացվեց, որ...

ԴԱՐՅԱՆ - Լռե՛ք: (*Աննպատակ ետուառաջ է անում, ներկաները*

զարմացած հետևում են նրան:)
Անկարելի է... *(Դեռ ուշքի չեկած՝
փլվում է աթոռին:)* Անհեթեթ, ա-
նիմաստ մահ...

ԱՍՏՐԱ - Գուցե բացատրենք...

ԴԱՐՅԱՆ - Լանորը սարսափելի ա-
լերգիա ուներ: Ծովամթերքներից:
Մի անգամ հազիվ փրկվեց, Լեա-
պոլում էինք: Այնտեղ իմացանք
ալերգիայի մասին, որովհետև
դրանից առաջ կերած չկար:

ԱՍՏՐԱ - Մինչև քեզ հանդիպելը
այնքան բան չէր կերել: *(Ի պա-
տասխան բոլորի հայացքների:)*
Հա, մի ժամանակ Լանորն ու ես
հազիվ էինք ծայրը ծայրին հասց-
նում:

ԼՈՒՍԻՆԵ - Ու երբ սկսել է սպազմից
խեղդվել, կողքին մեկը չի եղել...
խեղձ աղջիկ...

**Դարյանը գլուխն առնում է ձեռ-
քերի մեջ, մնացածները շփոթ-
ված իրար են նայում, Աստրան
սրբում է մի հատիկ արցունքը...**

ՍԱՐՈ - *(ասես շարունակում է հենց
նոր կիսատ թողած խոսքը):* Սոու-
սը դրսում թողնել չի կարելի:
Դնելու էի սառնարանը, բայց,
հակառակի պես, ոտքիս մկանը
ձգվեց: Վերջերս հաճախ է լինում,
ժամանակ չկա, որ բժշկի գնամ:
Իսկ մկանը որ ձգվում է, ոտքս
ծալվում է: Հասցրի աթոռից
բռնվել, բայց ամանը ձեռքիցս
ընկավ... *(Վախեցած:)* Բայց

կտորները աղբամանի մեջ են,
կարող եմ բերել:

ԴԱՐՅԱՆ - *(դեռ իր մտքերի հետ՝
Արմանին):* Ինչ է ասում:

ԱՐՄԱՆ - Կարևոր՝ ոչինչ: *(Սարո-
յին.)* Կարիք չկա, արդեն պարզե-
ցինք, ինչ է եղել:

ՄԱԶՍ - *(նոր գիտակցված վախով):*
Ինձ կբռնեն...

ԱՐՄԱՆ - Հետաքննությունը ցույց
կտա:

ԴԱՐՅԱՆ - Ինձ մենակ թողեք:

**Հերթով դուրս են գալիս: Մնում է
Դարյանը:**

ԴԱՐՅԱՆ - *(բացում է ծածկոցը, նա-
յում Լանորին:)* Սա էլ՝ քո
ծննդյան օրը...

**ՏԵՍԱՐԱՆ. Դուռը բացվում է,
մերս է նայում Ավետը:**

ԱՎԵՏ - Հիմա կարո՞ղ են ոստիկա-
նությանը տեղյակ պահել:

ԴԱՐՅԱՆ - Թող անեն, ինչ ուզում
են: Իսկ դու ներս արի: *(Փակում է
կնոջ դեմքը, նստում, ակնդետ
նայում է նստել չհամարձակվող
Ավետին:)* Ո՞ւմ գաղափարն էր:

ԱՎԵՏ - *(գլխով ցույց տալով հան-
գուցյալին):* Նրանը:

ԴԱՐՅԱՆ - Դե, իհարկե, հիմա
պաշտպանվել չի կարող: Ինչի՞ն
էր պետք փողը:

ԱՎԵՏ - Փողը միշտ էլ պետք է:

ԴԱՐՅԱՆ - Բի՞չ էի տալիս:

ԱՎԵՏ - Պետք եղածից ավելին:

ԴԱՐՅԱՆ - Իսկ երբ ամուսնացանք, ինչքան համոզեցի, որ իր նորածնության սրահը բացի իմ փողերով: Հետո ամեն ինչ փոխվեց:

ՏԵՄԱՐԱՆ. Գալիս է Աստրան:

ԱՍՏՐԱ - Դենը չկա:

ԱՎԵՏ - Առաջին անգամն է:

ԱՍՏՐԱ - Տափաշիչը հազիվ չորս ժամ է հերիքում, որից հետո հայտնվում է նոր բաժին լցնելու համար: Արդեն վեց ժամ է անցել:

ԴԱՐՅԱՆ - (զանգում է): Արման, արի:

Դադար: Սպասում են:

ՏԵՄԱՐԱՆ. Գալիս է Արմանը:

ԴԱՐՅԱՆ - Գտեք Դենին:

Ներս է ընկնում Լուսինեն:

ԼՈՒՍԻՆԵ - Դենին բան է պատահել:

ԱՐՄԱՆ - Ինչից եզրակացրիք:

ԼՈՒՍԻՆԵ - Իր մշտական տեղում չի:

ԱՎԵՏ - Որտեղից գիտեք:

ԼՈՒՍԻՆԵ - (պայթում է): Ես ամեն ինչ գիտեմ: Իմ տարածքում ամեն ինչ իմ հսկողության տակ է: Եթե իմ տեղում լինեիք՝ կիմանայիք, որ մինչև նստարանը մանր ավազ լցրած արահետ է, իսկ ավազի վրա ոտնահետք չկա:

ԱՎԵՏ - Հետո՞ ինչ...

Դրսից աղմուկի ձայն է լսվում:

ՏԵՄԱՐԱՆ. Ներս է նայում Անուշը, ժեստերով հասկացնում է Լուսինեին՝ դուրս գալ:

ԴԱՐՅԱՆ - Ներս արի ու խոսիր:

ԱՆՈՒԾ - (մտնում է, հուզվելով բոլորի ուշադրությունից՝ անսպասելի շուտասելուկով վրա է տալիս): Չեք պատկերացնի՝ ինչից փրկվեց Սարոն: Մկանը էլի ձգվեց, վերջերս շատ է լինում, ամեն անգամ ասում եմ՝ գնա բժշկի, բայց նա նրբ է իմ խոսքին... (Սկատելով Լուսինեի սաստող հայացքը): Ինչ էի ասում... հա, ուրեմն Սարոս մի կերպ հասավ նստարանին, նստեց, բայց հենց էդ պահին հիշեց, որ ջրի պոմպը չէր անջատել, տեղից ելավ ու... ինչ տեսնենք: Սողալով վեր է բարձրանում:

ԱՍՏՐԱ - Ո՞վ:

ԱՆՈՒԾ - Օձը:

ՏԵՄԱՐԱՆ. Դուռը բացվում է, ներս է ընկնում Սարոն:

ՍԱՐՈ - (շնչակտոր): Լճում... Դենը...

Բոլորը կարկամած նրան են նայում:

ԱՍՏՐԱ - Դե՞նը:

ՍԱՐՈ - Հա:

ԱՍՏՐԱ - Ոչ:

ՍԱՐՈ - Հա: Մեռածը էլ ո՞նց է լինում:

Ներս եկած Մանեն, լսելով վերջին բառերը, հենվում է պատին ու դանդաղ սկսում է սահել ներքև:

ԱՎԵՏ - (ակնարկելով ուշաթափվող Մանեհին): Էլի՛...

ԱՐՄԱՆ - Սովորություն է դառնում:

Անուշն ու ոտքը մի կերպ քարշ տվող Սարոն Մանեհին դուրս են տանում: Լուսինեն հետևում է նրանց:

ԱՍՏՐԱ - (Ավետին): Սիգարետ տուր:

Ավետը սիգարետ է տալիս, նախապես վառելով:

ԱՍՏՐԱ - (չդիմելով ոչ մեկին): Ինչ է կատարվում այստեղ:

ԱՎԵՏ - Այստեղ՝ չգիտեմ, բայց դու հիմա լժի ավիին պիտի լինեիր:

ԱՍՏՐԱ - Կեղծ տեսարանների սիրահար չեմ: Նրա համար դա լավագույն լուծումն էր:

ԴԱՐՅԱՆ - Թե՛ քո:

ԱՍՏՐԱ - Բոլորին: (Գնում է դեպի դուռը): Իսկ Դենը չէր սխալվում՝ մեր թատրոնի ռեժիսորը փոխվել է: (Արմանին.) Կուղեկցե՛ս մինչև լիճը: (Գնում են:)

ԴԱՐՅԱՆ - Կիսամեռ Անետը, մեռած Նանորը, խեղդված Դենը... Գիտե՛ս, հաջորդը ով է:

ԱՎԵՏ - Իհարկե, չգիտեմ:

ԴԱՐՅԱՆ - Կարող եմ հուշել:

Համը տեսարան:

ՏԵՍԱՐԱՆ. Ճաշարահը նախկին տեսքն է ստացել: Ծածկոցով փակված Նանորը չկա: Դարյա-

նը նստած ծխում է: Գալիս է Արմանը:

ԴԱՐՅԱՆ - Ինչ ասացին:

ԱՐՄԱՆ - Դենի մարմնի վրա բռնության հետքեր չկան, բայց վիսկին մինչև կոկորդն է լցված: Տեղանքը նախնական զննելուց հետո կարծում են, որ հնարավոր է դժբախտ պատահար. սայթաքել է թաց ջրիմուռների վրա ու...

ԴԱՐՅԱՆ - Ուրեմն՝ պատահականություն է... թե՛ ինքնասպանություն:

ԱՐՄԱՆ - Ավելի լավ է՝ պատահականություն:

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Սարոն, գրություն է տալիս Դարյանին, դուրս է գնում:

ԴԱՐՅԱՆ - (առանց գրությանը նայելու տալիս է Արմանին): Ավետից է: Կարդա:

ԱՐՄԱՆ - (կարճ երկմտանքից հետո): «Բանկից զանգեցին: Դու կարող էիր ավելի դաժան վարվել, բայց բավականացար ինձ սնանկացնելով: Դրա համար շնորհակալ պիտի լինեմ մեր ուսանողական ընկերությանը: Ինչպես պայմանավորվել ենք՝ մեր ծամփաները այլևս չեն հատվի»: **ԴԱՐՅԱՆ** - (դադարից հետո): Ավետը այդպես էլ նամակ գրել չտվորեց: Վարորդը եկել է: (Արմանը հաստատական զլխով է անում:)

Այստեղ անելիք չունենք:

Շեմին հանդիպում է Աստրային, առանց նրան նայելու գնում է:

լի աղջիկ է, ու չհամարձակվեք նրան սիրահետել, նա հոգյակ է: *(Զարմացած թողնելով Արմանին՝ գնում է:)*

ՏԵՍԱՐԱՆ. Աստրա, Արման:

Արմանը կարճ մտորումից հետո դուրս է գնում:

ԱՍՏՐԱ - Ե՛րբ եք գնում:

ԱՐՄԱՆ - Գուցե Դարյանին հարցնեք:

ԱՍՏՐԱ - Ուզո՞ւմ ես աշխատել նրա մոտ:

ԱՐՄԱՆ - Լավ է չասացիք՝ մեզ մոտ:

ԱՍՏՐԱ - Շուտով կասեմ: Դե՛...

ԱՐՄԱՆ - Արդեն գնում ենք:

ՏԵՍԱՐԱՆ. Դռան ետևում քաշքշուկ է, վերջապես հայտնվում է Մանեն և նրան ուղղորդող Արմանը:

ՄԱՆԵ - Հանգիստ թողեք ինձ...

ԱՐՄԱՆ - Միայն չուշաթափվես...

ՄԱՆԵ - *(վերջապես ձեռքն ազատելով):* Անտա՛շ:

ԱՐՄԱՆ - Իսկ դու այնպես ես տաշված, որ բռնել չի լինում:

ՄԱՆԵ - Ո՞վ է ձեզ թույլ տվել դու-ով խոսել:

ԱՐՄԱՆ - Իմ կատարած հետաքննությունը:

ՄԱՆԵ - Ի՞նչը...

ԱՐՄԱՆ - Ճիշտ լսեցիր: Անետի ընկնելու ու քո հարցի միջև ուղիղ կապ կար:

ՄԱՆԵ - Մի ապուշ հարց տվեցի ու ընկա կրա՛կը:

ԱՐՄԱՆ - Ամեն ինչ սկսվեց այդ հարցից: Ես էլ ի՛նձ հարց տվեցի՝ ուրիշ ինչի՞ էիր սպասում դու:

ՄԱՆԵ - *(դեռ փորձելով խաղալ):* Ինչի՛:

ԱՐՄԱՆ - Ասենք՝ Անետի թունավորվելուն:

ՄԱՆԵ - *(արդեն՝ այլ տոնով):* Ի՛նչ էլ հնարեցիք...

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Լուսինեն: Աստրան դուրս գնալուց նրա կողքով այնպես է այնպես, որ մի կողմ հրի:

ԼՈՒՍԻՆԵ - *(ուսը շփելով):* Խեղձ Դեն... իսկ ինքը ողջ մնաց:

ԱՐՄԱՆ - Հիմա կասեք, որ ոտքս բարի չէր:

ԼՈՒՍԻՆԵ - Ոչ, սա Դենի անեծքն էր:

ԱՐՄԱՆ - Կարծո՞ւմ եք:

ԼՈՒՍԻՆԵ - Համոզված եմ: Այնքան ուժեղ անեծք էր, որ նույնիսկ ինձ հասավ:

ԱՐՄԱՆ - Ձե՛զ:

ԼՈՒՍԻՆԵ - Եթե լավագույն աշխատողս վերջնահաշիվ է պահանջում, հեռախոսն առած իրերն է հավաքում...

ԱՐՄԱՆ - Մանե՛ն:

ԼՈՒՍԻՆԵ - *(մի պահ ուշադիր նայում է Արմանին, հետո իբր՝ իմիջիայլոց):* Այս պատմության մեջ մի բան այն չէր: Իսկ Մանեն հրաշա-

ԱՐՄԱՆ - Չե՞ն ուզում իմանալ, ինչը նրան փրկեց թունավորումից:

ՄԱՆԵ - (*հասկանալով, որ խաղալն անհմաստ է*): Շատ եմ ուզում:

ԱՐՄԱՆ - Աստրայի խայթոցը... Լա բոլորի ներկայությամբ հայտարարեց, որ Անետը գիշերը չիզքեյք է ուտում:

ՄԱՆԵ - (*հոգոցով*): Այդ անիծված չիզքեյքը...

ԱՐՄԱՆ - Առավոտ վաղ գնացի հիվանդանոց, ծաղիկներ տարա, վարդեր, որոնք այնքան ուրախացրին գիտակցության եկած Անետին, որ նա պատասխանեց հարցերիս: (*Հատուկ լռում է*.)

ՄԱՆԵ - (*համբերությունը հատած*): Դե՞...

ԱՐՄԱՆ - Հենց ձեռքը տարել է ափսեին, հիշել է Աստրայի ասածը, դուրս է եկել պատշգամբ ու թխվածքը շարտել է թփերի մեջ: Դրա համար էլ ափսեի մեջ մի փշուր չէր մնացել:

ՄԱՆԵ - (*լարվածությունից դողալով*): Տեր Աստված...

ԱՐՄԱՆ - Կանչե՞ք տեր Աստծուն, նա դեռ շատ է ձեզ պետք գալու:

ՄԱՆԵ - (*հուզիչ հույսով*): Կարծում ես:

ԱՐՄԱՆ - Անցանք դու-ի՞: Կոնտակտը կհեշտանա: (*Դադարից հետո, կտրուկ*.) Սոուսի մեջ էլ մկնդեղ էր: Ասում ես «Այո» կամ «Ոչ»:

ՄԱՆԵ - (*հազիվ լսելի*): Այո:

ԱՐՄԱՆ - Ու եթե Լանորը սխտորը չատեր՝ կմեռներ քո մկնդեղից: Բախտդ բերեց, որ առաջինը ժուլյենը կերավ:

ՄԱՆԵ - Սոուսի մեջ սխտոր չկար, միայն մկնդեղ էր, իսկ այդպես ասացի, որ Աստրան հանկարծ չուտեր:

ԱՐՄԱՆ - Ինչ բարի ես: Լանորի համար նախատեսված թոյնը նրա ոխերիմ ընկերուհուն չես տալիս: (*Լոր մտքից՝ ապշահար*.) Բայց ինչ իմացար, որ Ավետի ժուլյենը Լանորն էր ուտելու:

ՄԱՆԵ - Երբ սուրճը տարա, Դարյանը այնպես էր պատին դեմ տվել Ավետին իր փաստաթղթերով, որ պարզ էր՝ նա այնտեղից շուտ դուրս չէր գա: Իսկ Լանորին իբր պատահաբար ասել, որ Մաքսը ժուլյեն է պատրաստել, դժվար չէր: Լա Ավետի ձեռքից էլ կխլեր...

ԱՐՄԱՆ - Դու բոլոր հաճախորդներին ես այդպես ուսումնասիրում:

ՄԱՆԵ - Միայն նրանց, բայց հիմա սարսափում եմ, որ մտածում եմ...

ԱՐՄԱՆ - Դու սարսափողը չես: Օրինակ՝ օձից:

ՄԱՆԵ - Սովորական լորտու էր:

ԱՐՄԱՆ - Բայց Դենը մահից ավելի օձից էր վախենում:

ՄԱՆԵ - Ես չգիտեմ, ինչ էր ինձ հետ կատարվում...

ԱՐՄԱՆ - Իսկ ես գիտեմ: Ֆեյսբու-

քում Մանե անունով շատ կան, բայց Հովյան ազգանունը հազվադեպ է: Մի քիչ էլ խորացա ու պարզեցի, որ երեք տարի առաջ թողել ես իրավաբանական ինստիտուտն ու հյուրանոցային գործ ես սովորել: Ու ռեզյումեդ ուղարկել ես միայն «Դրախտ» ու այնքան ես սպասել, մինչև ազատ տեղ է բացվել: Մնացածը դու կասես:

ՄԱՆԵ - *(դադարից հետո, դժվարությամբ բառեր գտնելով):* Երեք տարի առաջ, մայիսի 22-ին, հարբած վարորդը վրաներով սպանեց եղբորս: Նա վերջին զանգի երեկոյթին էր գնում: Դատավարության ժամանակ վարորդի կողմից վկան պատմեց, որ եղբայրս ոչ թե մայթին է եղել, այլ անցել է փողոցի արգելված մասով, փաստաբանն էլ ապացուցեց, որ հարբածը եղբայրս է եղել: Իսկ դատավորը դահլիճից ազատ արձակեց վարորդին: *(Դադար:)* Վարորդը Նանորն էր, վկան՝ Դենը, փաստաբանը՝ Ավետը, դատավորը՝ Անետը:

ԱՐՄԱՆ - Իսկ ծախսերը փակեց Դարյանը:

ՄԱՆԵ - Իզուր բողոքարկեցինք: Մորս սիրտը չդիմացավ: Հայրս նրա մահից հետո լռեց: Խռովեց աշխարհից ու չի խոսում: Նույնիսկ ինձ հետ: Ես մնացի մենակ: Սկսեցի հետևել նրանց ու տեսնում էի,

ինչպես են ապրում անհոգ, երջանիկ, մոռացած սպանված եղբորս... Այդպես հայտնաբերեցի «Դրախտը»: Մնացածը արդեն գիտես: Հիմա գնամ:

ԱՐՄԱՆ - Ո՛ր:

ՄԱՆԵ - Ես գնում էի քննիչի մոտ, երբ ինձ բռնեցիր ու այստեղ բերեցիր:

ԱՐՄԱՆ - Ճիշտ արեցի: Ինչ էիր ասելու քննիչին: Սոուսի ամանի կտորները, թփերից քերած-հանած չիզքեյքը չկան, անհետացել են:

ՄԱՆԵ - Ինչպես թե:

ԱՐՄԱՆ - *(բազմանշանակ):* Այդպես էլ է պատահում. սոուսի և չիզքեյքի մեջ եղած մկնդեղը ցնդում է՝ սոուսի ու թխվածքի հետ:

ՄԱՆԵ - Բայց դա նշանակում է...

ԱՐՄԱՆ - Իրեղեն ապացույցը թաքցնե՛լ: Ոչ մի դեպքում: Բո մկնդեղը իր առջև դրված խնդիրը չի լուծել ու... լիկվիդացվել է:

ՄԱՆԵ - Իսկ զամբյուղը:

ԱՐՄԱՆ - Ի՛նչ զամբյուղ:

ՄԱՆԵ - Լորտուն զամբյուղի մեջ էր:

ԱՐՄԱՆ - Լորտուն ազատ ֆոֆոում է, զամբյուղը՝ չգիտեմ: Ու էլի քո բախտից Դենը ոչ թե իր մշտական ծառի տակ էր գնացել նստելու, այլ լծում հարբած լողանալու:

ՄԱՆԵ - *(անսպասելի պահանջով):* Բա որտե՞ղ է զամբյուղը:

ԱՐՄԱՆ - Ինչ իմանամ: Էլի հարց ունեն:

ՄԱՆԵ - Ինչի համար ես արել այդ բոլորը...

ԱՐՄԱՆ - Մի օր երևի հասկանամ: (Նայելով Մանեին:): Էլի հարց...

ՄԱՆԵ - (կարճ դադարից հետո): Ո՞ւմ հետ էր հանդիպելու Անետը:

ԱՐՄԱՆ - (առաջին անգամ շփոթվում է): Ինձ: Ինչ ես այդպես նայում, հիվանդանոցում ասաց, որ գալիս էր ինձնից գիրք վերցնելու: Թե ինչպես էր տեսել, որ մոտս դետեկտիվ կա՝ չգիտեմ:

ՄԱՆԵ - (երկիմաստ): Դրա համար ձեռնափայտ չէր վերցրել, այցը կարող էր վերածվել ինտիմ հանդիպման: Ուրեմն ճիշտ են ասում, որ նա սիրում է ջահել, սիրունիկ մոռութներ...

ԱՐՄԱՆ - Դե, դե...

ՄԱՆԵ - Իսկ եթե ցած չգլորվե՞ր...

ԱՐՄԱՆ - Ես կգլորեի նրան:

Դռնից ներս է մայրամ Սարոն:

ՍԱՐՈ - Ծեֆը կանչում է:

ԱՐՄԱՆ - (Մանեին): Տեղիցդ չշարժվես, հիմա կգամ: (Գնում է:)

Հեռախոսագրանգ: Մանեն մայրամ է Էկրանին, դողացող ձեռքով սեղմում է կոճակը:

ՄԱՆԵ - Հայրիկ... դու զանգեցիր... Ես լավ եմ: Չէ, ճիշտ եմ ասում, ամեն ինչ նորմալ է... Ինչ, հեռուստացույցով ասացին... Ուրեմն՝

արդեն գիտես: Ճիշտ է, վարորդը, վկան, դատավորը... Պատժվել են, հայրիկ: Եթե հանդիպենք, քեզ պատմելու շատ բան ունեմ... Ես էլ, հայրիկ, ես էլ քեզ շատ եմ սիրում: (Անջատում է, լալիս է:)

ՏԵՄԱՐԱՆ. Գալիս է Արմանը: Տեսնելով, որ նա լալիս է, շրջվում է դեպի պատուհանը:

ԱՐՄԱՆ - Ամիսներ առաջ մեկը զանգել էր Դարյանին ու ասել, որ նրա թիկունքում Ավետը ֆինանսական մութ գործարքներ է անում:

ՄԱՆԵ - (արցունքները սրբում, շրջվում է Արմանի կողմը): Ես էի զանգել: Անցած տարի ինձ հաջողվեց լսել Ավետի ու Նանորի խոսակցությունը: Մնացածը դժվար չէր կռահել: Իսկ զարմիկիս համար ցանկացած բանկային համակարգ մտնելը խաղ ու պար է: Էլի հարցեր կան:

ԱՐՄԱՆ - Մնացին Աստրան ու Դարյանը:

ՄԱՆԵ - Որ նրանք սիրեկաններ էին, հեշտ իմացա, Աստրան առանց մեքենայի էր գնում գաղտնի հանդիպումների բնակարանը, նրան հետևելը հեշտ էր: Նա Դարյանի ամենամեծ պատիժը կդառնա, առանց իմ միջամտության:

ԱՐՄԱՆ - Չգիտեմ՝ հիանում եմ քեզնով, թե՞ սարսափում:

ՄԱՆԵ - Ոչ հրեշ եմ, ոչ հրեշտակ: Ես

ուզում էի իրավաբան դառնալ, օրենքը պաշտպանել, բայց տեսա, թե ինչպես են այդ օրենքը օգտագործում այս աշխարհի հզորներն ու երբեք չեն պատժվում:

ԱՐՄԱՆ - Ու որոշեցիր ինքդ պատժել:

ՄԱՆԵ - Հիմա ուրախ եմ, որ ոչինչ չստացվեց, բայց եթե նրանք իմ ձեռքով սպանվեին, չէի զղջա:

ԱՐՄԱՆ - Գիտե՞ս, ինչ եմ մտածում, դատական նիստերին մասնակցել ես ու նրանք քեզ պիտի որ տեսած լինեին:

ՄԱՆԵ - Ոչ միայն: Նրանցից ամեն մեկի հետ խոսել եմ, խնդրել եմ, նրանք տեսել են արցունքներս, լսել են անեծքներս...

ԱՐՄԱՆ - Ու չէիր վախենում, որ մեկնումեկը քեզ կձանաչի:

ՄԱՆԵ - Հասկանում ես, նրանք նայում ու չեն տեսնում մեզ: Մեզ նմաններին...

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Լուսինն:

ԼՈՒՍԻՆԵ - Տաքսին սպասում է ձեզ: *(Կանխելով նրանց:)* Ես եմ պատվիրել: Մանե, հուսով եմ, չես մոռանա ինձ զանգել, բայց շաբաթը մեկ անգամից ոչ ավելի: Ասենք, դու էլ զբաղված կլինես, վստահ եմ, շարունակելու ես ուսումդ: Լավ իրավաբան... չէ, հետաքննիչ կդառնաս: *(Արմանին.)* Աստրան տիրոջդ տարավ: Պիտի բավա-

րարվես տաքսիով: Արագացրեք, հաշվիչն աշխատում է:

Մանեն ու Արմանը Լուսինեի «զրոհից» սակված, դուրս են գնում: Լուսինեն կարգի է բերում սենյակը:

ՏԵՍԱՐԱՆ. Գալիս է Սարոն, ձեռքին՝ զամբյուղ:

ՍԱՐՈ - Անուշը ձեր սենյակն էր հավաքում ու... *(Առաջ բերելով զամբյուղը:)* Այգու նստարանի տակից սա ո՞նց է հայտնվել ձեր պահարանում:

ԼՈՒՍԻՆԵ - *(դադարից հետո, ակնդետ նայելով ու երկիմաստ շեշտով):* Սարո, Անուշին կասես, որ ոչ մի զամբյուղ չի եղել նստարանի տակ, իսկ դու սա կբարձրացնես ձեղնահարկ ու կմոռանաս դրա գոյության մասին: Եղավ:

ՍԱՐՈ - *(մելանխոլիկ):* Հա, ոնց որ միշտ:

ԼՈՒՍԻՆԵ - Սպասիր... մեջը մի անգամ էլ ստուգիր:

ՍԱՐՈ - Ստուգել եմ: Դատարկ է:

ԼՈՒՍԻՆԵ - Ուրեմն՝ այս անգամ էլ փորձանքը մեր կողքով անցավ:

Սարոն գնում է: Հեռախոսագանգ:

ԼՈՒՍԻՆԵ - Այո՞... Հյուրատուն «Դրախտ»: *(Հաղթական գոհունակությամբ:)* Մենք սպասում ենք ձեզ...



**Սամվել
ԿՈՍՅԱՆ**

*Սովորական պատմություն, երբ իր նպատակի ետևից
գնացողը ընտրում է ուրիշի անցած ճանապարհը՝
մտածելով, թե կարող է ուրիշինը իրենը դարձնել:
Հետևանքները դժվար չէ գուշակել:*

ԵՎ ՉՅՈՒՆՆ ԻՋՆՈՒՄ Է...

(Գրամա յոթ պատկերով)

Գործող անձինք

ԱՐԱՄ

ՆՈՒՆԵ

ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ

Քաղմահարկ շենքի սովորական բնակարան: Պատուհանը պարտադիր է: Սենյակի դռնից կարելի է մտնել ննջասենյակ կամ խոհանոց: Բնակարանը վաղուց չի վերանորոգվել: Սենյակի կահավորանքը հին է ու մաշված:

ԱՐԱՄ - (սենյակում ետուտաջ է անում): Մեկ, երկուս, երեք... Երեք քայլ, և ուրիշ աշխարհում եմ: Տեսականորեն է ուրիշ, թե չէ նույն աշխարհն է, նույն անհրապույր սենյակը... Երեք քայլ ետ գնալն էլ ոչինչ չի փոխի...

ՆՈՒՆԵ - (երկու բաժակ սուրճ է բերում, դնում սեղանին): Էլի շուրջերկրյա ծանապարհորդությամբ ես ելել:

ԱՐԱՄ - Ծուրջերկրյա չի ստացվում, պատերը չեն թողնում:

ՆՈՒՆԵ - Երևակայությունդ ինչի համար է:

ԱՐԱՄ - Միտքս հասցնում է պտտվել աշխարհի շուրջը, մարմինս դանդաղում է: Երեք քայլից ավել չի շարժվում... Երեք քայլ առաջ, երեք քայլ ետ... Առաջ ու ետ, առաջ ու ետ... Ժամանակը

ճոճվում է, ու զգում եմ՝ ոնց եմ ծերանում:

ՆՈՒՆԵ - (հեզանքով): Ասա՝ մանկանում... Ծերն ամեն օր սենյակը չէր չափի:

ԱՐԱՄ - Պարապ մնաց՝ կչափի: Չնայած պապս ասում էր՝ սուրճ խմելը չափելուց լավ է:

ՆՈՒՆԵ - Ոնց որ պապիդ ես քաշել:

ԱՐԱՄ - (սուրճի բաժակից կում է անում): Պապս ուրիշ մարդ էր:

ՆՈՒՆԵ - Պապերը նրա համար են պապ, որ ուրիշ լինեն:

ԱՐԱՄ - Կամ ուրիշ են, որովհետև պապ են:

ՆՈՒՆԵ - Մի անգամ էլ զանգիր:

ԱՐԱՄ - Օգուտ չկա:

ՆՈՒՆԵ - Բնավորությունդ էլ է փոխվել: Չշարժեն՝ չես շարժվի...

ԱՐԱՄ - Հո չե՞ս մտածում, որ իմ կամքով եմ տանը նստել:

ՆՈՒՆԵ - Մտածելու տրամադրությոնս էլ է կորել:

ԱՐԱՄ - (*գանգում է*): Գործակալությունն է... Հա, էլի ես եմ, ծանաչեցիք... Մտածում եմ, կարող է նորություն ունենաք... Չկա՞... Սպասում եք: Ո՞ւմ եք սպասում... Ես որ հոգնել եմ սպասելուց: Կարծում եք... Երբ կծշտեք... Չգիտեմ: Ասում են, անորոշությունը ազդում է հոգեկանի վրա... Ինչ իմանամ՝ ով է ասում: Ասողի վրա երևի ազդել է... Կփորձեմ, հա, վաղն էլ կփորձեմ, մյուս օրն էլ:

ՆՈՒՆԵ - Հը՞...

ԱՐԱՄ - Նույնն է:

ՆՈՒՆԵ - Այսքան ժամանակ գործ չեն գտել:

ԱՐԱՄ - Առաջարկում են... Վուլկանիզացիա, բենզակայան, շինարարություն...

ՆՈՒՆԵ - Ասում էիր՝ պետք լինի, ամեն ինչ կանես:

ԱՐԱՄ - Մասնագիտությունս եմ ավստսում:

ՆՈՒՆԵ - Ափսոսելու ավելի արժեքավոր բաներ կան: Հիմա ո՞վ է իր մասնագիտությամբ աշխատում:

ԱՐԱՄ - Ուզում եմ առաջինը լինել:

ՆՈՒՆԵ - Երբ վանի՞ք...

ԱՐԱՄ - Միշտ էլ ուզել եմ:

ՆՈՒՆԵ - Ուրեմն ձիշտ չես ուզել:

ԱՐԱՄ - Էլի ի՞նչ չար բան անցավ մտքովդ:

ՆՈՒՆԵ - Չի անցել, քարացել-մնացել է:

ԱՐԱՄ - (*քայլում է սենյակում*): Մեկ, երկրորդ, երեք...

ՆՈՒՆԵ - Չորրորդը մոռացար:

ԱՐԱՄ - Չմոռացա, չորրորդը մեջս չի: Երեքից հետո մեջս քայլ չկա... Ամեն քայլը նոր աշխարհ է: Իմ վիճակն է նույնը:

ՆՈՒՆԵ - Եկած օրից քայլում ես... Վիճակդ նույնն է, բայց դու այլևս նույնը չես:

ԱՐԱՄ - Ամսի քանի՞սն է:

ՆՈՒՆԵ - Երեք օրից տանտերը կհայտնվի...

ԱՐԱՄ - ...համակենտրոնացման ծամբարի վերակացուի պես: Նույն օրը, նույն ժամին: Առանց ուշանալու:

ՆՈՒՆԵ - Ո՛ր էր, բնակարանից դուրս հաներ: Գյուղ կվերադառնայինք...

ԱՐԱՄ - Տուրիստ չեմ եկել, որ մի քանի օր թափառելուց հետո վերադառնամ:

ՆՈՒՆԵ - Բա ո՞վ ենք, եթե տուրիստ չենք: Քաղաքացի չենք... արդեն գյուղացի էլ չենք: Ո՞վ ենք...

ԱՐԱՄ - (*մոտենում է պատուհանին, նայում է դուրս, արտասանում է*).
*Եվ ձյունն իջնում է, ձյունն իջնում է
Այտերիս վրայով բառերիս վրա,
Թվում է, ցավը նահանջում է
Ու ցավն էլ ձերմակ*

կդառնա հիմա...

Իսկ ձյունն իջնում է,

ձյունն իջնում է,

Ցավի անունը մոռացել եմ,

Տեսնես կա՞ մեկը, որ ինձ հիշում է

Թեկուզ և վաղուց հեռացել եմ...

ՆՈՒՆԵ - Երբ ես գրել:

ԱՐԱՄ - Քաղաք գալու առաջին օրը:
ՆՈՒՆԵ - Հիշում ես.

*Ես սիրում եմ քեզ, իսկ դու չգիտես,
Եթե իմանաս, գուցե զարմանաս,
Իսկ գուցե սիրես, ինչ իմանամ ես,
Քո աչքերը ջինջ չեն ասում ոչինչ...*

Անունդ էլ չէիր գրել:

ԱՐԱՄ - Նոր էի սիրահարվել...

Զարմացել էի, որ այդքան տարի,
էն էլ մեր փոքրիկ գյուղում, քեզ
չէի տեսել: Իրար հետ խաղացել
ենք, նույն դպրոցը գնացել, ու մեկ
էլ հանդիպում ենք, նայում եմ աչ-
քերիդ մեջ ու... Ոնց որ տեսողու-
թյունս գտնեմ: Անունս չէի գրել,
բայց իմացել էիր՝ ես եմ:

ՆՈՒՆԵ - Որովհետև ես էլ քո աչքերի
մեջ էի նայել: (*Դադար, երազ-
կոտ:*) Քեզ կարոտել եմ:

ԱՐԱՄ - Դիմացդ եմ:

ՆՈՒՆԵ - Բանաստեղծություն գրող
Արամին եմ կարոտել, սիրահար-
ված Արամին... Քաղաքում փոխ-
վել ես: Նախկին ոգևորված,
կապը կտրած Արամը չես: Այն
Արամը ուզում էր աշխարհը նվա-
ծել: Հիմա ամեն օր գործակա-
լությունների դռներն ընկած գործ
ես մուրում: Այն Արամն ու դու
նույնը չեք: Մարմինը նույնն է,
ներսում ամեն ինչ խառնվել է, ո-
չինչ իր տեղում չէ: Երբեմն թվում
է, քեզ հետ լինելով դավաճանում
եմ Արամին, այն Արամին, որի
հետ պատրաստ էի դժոխք գնալ:
Իմ զգացմունքներին եմ կարոտել:
Չենք էլ զգում, որ մեր հետ սերն

էլ է մաշվում: Երևի սեր չի էլ մնա-
ցել: Մնացել է իրար հետ ապրե-
լու սովորությունը: Ընդամենը...
Ինչ կար քաղաքում, որ գյուղում
չէինք կարող գտնել:

ԱՐԱՄ - Հույսը չկար, որ կարելի է
ինչ-որ բանի հասնել:

ՆՈՒՆԵ - Հասամք:

ԱՐԱՄ - Ճանապարհին ենք:

ՆՈՒՆԵ - Ճանապարհի վերջը չի
երևում: Ասածդ ճանապարհի վրա
անորոշության ամպեր են կախ-
ված: Խխունջի պես փակվել ենք
էս վարձով տանը: Գյուղում ու-
սուցչուհի էի, ապրում էի երեխա-
ներով, սովորեցնում էի, կիսվում
էի հետները: Հիմա ծխախոտի
մնացորդներով լիքը մոխրաման-
ներն եմ դատարկում: Ով կանչում
է, վարժեցրած կապիկի պես վա-
զում եմ, կոտրատվում, ժպտում
եմ աջ ու ձախ, ինչ է՝ մի քանի
դրամ թեյավճար թողնեն: Օրվա
վերջում ոնց որ ծխախոտի մնա-
ցորդները մեջս լցված լինեն:
Ներսս մաքուր բան չի մնացել, ե-
րազներս էլ են կեղտոտվել: Ու-
սուցչուհին ու՛ր, մատուցողուհին՝
նւր... Քո գործն էլ չի լինում: Նրա-
նից է, որ դու էլ չգիտես՝ ինչ ես ու-
զում: Քաղաքի կեսը գործ է
փնտրում, ղվ հենց այնպես քո ու-
զածը քեզ կտա: Բարեկամներին
կտան, հարազատներին կտան,
փող տվողներին: Քոնը բետոն
խառնելն է... Ամեն օր կարող են
առաջարկել, մինչև ջահելությունը

հասցնես բետոնի տակ թողնել: Մինչև հիմա զարմացած ես, որ քաղաք մտնելիս ծափահարություններով չեն դիմավորել: Ծափահարությունները հետո էլ չեն լինի, ծափահարություններից ետ են վարժվել: Կեսը ձեռքերը բարձրացնելու ուժ չունի, մյուսներն էլ ածպարարությամբ են զբաղված և անտեղյակ են՝ երբ է պետք ծափահարել: Սեփական մարմնիդ շուրջը ծամփորդություններ ես անում: Ինչքան ուզում ես աշխարհներ հայտնաբերիր, ղում է հետաքրքիր հազար անգամ հայտնաբերվածը, թեկուզ և նորը: *(Դադար: Խմում է վերջին կում սուրճը, Արամի դատարկ բաժակն էլ է վերցնում:)* Այսքան շատ չէի խոսել: Ուրիշների սիրտը կյանքով է լի, իմը՝ չասված բաներով: Ժամանակ չի լինում: Ասում էիր՝ քաղաքում գործը թափած է: Կռացիր՝ վերցրու, ինչո՞ւ չես վերցնում: Թե՞ վերցնելու բան չկա: Արդեն չես էլ երազում: Ի՞նչ երազես... Հասկացել ես, որ երազի ետևից գնացողը չի վերադառնում:

ԱՐԱՄ - Մեր երազը ինքը մեզ մոտ կգա:

ՆՈՒՆԵ - Եթե չի եկել ու անցել: *(Դուրս է գալիս:)*

ԱՐԱՄ - Անցած լիներ՝ հետքը կերևար:

ՆՈՒՆԵ - *(վերադառնում է լաթը ձեռքին):* Ախր, քաղաքում ինչո՞ւ

պիտի այսքան փոշի լինի: *(Սեղանն է մաքրում:)* Մաքրած-չմաքրած՝ նույնն է, չես հասցնում շրջվել, նորից փոշի է նստում: Գյուղում էլ էսքան փոշի չկար: Փոշին բառերի վրա էլ է նստում:

ԱՐԱՄ - Զիչ խոսես՝ չի նստի:

ՆՈՒՆԵ - *(նայում է ձեռքի ժամացույցին):* Գնալուս ժամը եկավ: Վաղուց այս ժամին տանը չէի եղել: Մեկ էլ ե՞րբ վթար կլինի, որ սրժարանը դատարկվի: Գնամ... Գնամ՝ հագնվեմ, չուշանամ: Մեկ էլ տեսար՝ կեղտոտ մոխրամաններն էլ բողոքի ցույց արեցին: *(Ժպիտի պես մի բան է հայտնվում դեմքին, և կիսաժպիտով էլ դուրս է գալիս:)*

Արամը մոտենում է պատուհանին, ճակատով հենվում է ապակու, անշարժանում է:

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Նույն սենյակը: Արամը խոսում է բջջային հեռախոսով:

ԱՐԱՄ - Լավ եմ: Մամ, ասեցի լավ եմ... Պոպոքի պես: Աշխատանք... Երկու օր է՝ աշխատում եմ: Միջազգային ծրագիր է: Խոստացել են մի քանի ամսից բարձրացնել: Կհերիքի... Ի՞նչ սոված... Լուսնն էլ է աշխատում... Որոշել ենք մեկիս աշխատավարձը հավաքել: Հո անընդհատ վարձով չե՞նք ապրելու: Զեռին չի զանգել... Երե՛կ... Ո՞նց էր... Գյուղի գործերը ո՞նց են...

Եւրո եւ ընդունվել, ամոթ է բացա-
կայեմ: Եւրոն էլ է լավ... Չէ, մամ,
դրա ժամանակը չի: Ծառը պիտի
արմատները խորացնի, որ
պտուղ տա... Էլի չասեցիր, ձեզ
մոտ ինչ կա: Մամ... Հայաստա-
նում եմ, Սիբիրում չեմ... Կգամ, է-
լի... Եւրոն էլ հետ, էլ ում... Ձեզ լավ
նայեք, բարևի բոլորին: *(Անջա-
տում է հեռախոսը:)* Ճիշտ որ սո-
ված հավը երազում կորեկ է
տեսնում: Միջազգային ծրագիր...
Թան էլ չէ՝ մաճուն: Բա ինչ ասեի:
Հետո էլ, բարի սուտը սուտ չի:
Բարի սուտը վատ բանը թաքցնե-
լու համար է: Ծրագիրը լավ հնա-
րեցի, էն էլ միջազգային, մինչև
իրիկուն ամբողջ գյուղը կիմանա:
Չլինի՞ նախախնամությունը այս
անգամ... Եթե երրորդ քայլից
ոտքս աթոռին զուգահեռ լինի,
նշանակում է... Կարևորը, զուգա-
հեռ լինի: *(Քայլում է:)* Մեկ, եր-
կուս, երեք... Չեղավ... քայլերս մի
քիչ լայն պիտի օգեի: Միևնույն է,
զանգեմ: *(Ձանգում է:)* Ալր... Ինչ
իմացաք, որ ես եմ: Ծատ եմ զան-
գում... Պարապությունից է, գործ
գտնեմ, չեմ զանգի: Էլի չկա, հմ:
Լուրջ չեք հետաքրքրվում: Լուրջ
ե՞ք: Արդեն երեք ամիս է: Մյուսնե-
րը տան վարձ չեն տալիս: *(Հեռա-
խոսն անջատում է, նայում է
պատուհանից դուրս:)* Ոչ մի նո-
րություն: Պատուհանից դուրս
նույն անշուք խանութն է, նույն
քանդված ասֆալտը: Հնարավոր

է, մարդիկ էլ նույնը լինեն: Եւրո-
նից է, որ աշխարհին իմ միջից եմ
նայում: Իմ նույնի միջից: Գոնե
տագնապը չլիներ, սկսել է շուտ-
շուտ սրտիս տակ հայտնվել: Եւրո-
նեի բախտից էլ... հազարավոր
ուսուցիչներ են աշխատանքի
հերթագրված: Սրճարանում շատ
չի դիմանա, ծախի՞մ է՝ կթաղվի:
Ֆիզիկապես էլ, հոգեպես էլ...
(Գոռում է:) Էհե՛ն: Ուզում եմ՝ մե-
կը ձայնս լսի, իմ սիրած գործն եմ
ուզում, լսեցի՞ք: Էն աշխարհում չէ,
էս, էս աշխարհում... *(Տրորում է
սիրտը:)* Տագնապը երկարում ու
վախեցնում է: Երևի վախը անո-
րոշության հետ եմ խառնել:
Եւրոն աշխատած հացից տան-
ջանքի հոտ է գալիս: Գնալով հո-
տը ուժեղանում է: Օրը քանիսի
առաջ է վիզ ծռում, որ ինձ պահի:
*(Բռունցքով հարվածում է սեղա-
նին, պատին:)* Անապահովության
բերանն ենք ընկել, ծամոնի պես
ծամում է: Երևի ինչքան ուզի՝
կծամի: Հրեշի պես է, հոգնել չու-
նի: Վախն էլ ոնց որ դրա ստվե-
րը... Ու գիշատիչ է՝ նախ սրտի
միջինն է ուտում, հետո՝ սիրտը:
Բայց ոչ մեկը ասածներին չի հա-
վատա: Վախի դեմքը տեսած պի-
տի լինեն, որ հավատան: Ոչ
մարմին ունի, ոչ դեմք, իսկ շնչա-
ռությունը զգում եմ: Ոտնաձայ-
ներն էլ եմ լսում: Վտանգի
ոտնաձայները: Բանաստեղծու-
թյան վերնագիր է: Ուշ է: Բառերս

դիմում գրելու համար էլ չեն հերիքի: Նորից ինքս իմ վրա ագռավի պես կռում եմ: Կռում-չկռում, վախը բառերս էլ է կերել: Ինձ էլ հո չի կերել: *(Շոշափում է իրեն:)* Ամբողջական եմ, չվնասված խնձորի պես: Եթե երրորդ քայլից ոտքս սեղանի ոտքին զուգահեռ լինի... դեռ կկարողանամ բառերս, էլի ինչ-որ բաներ ետ բերել: Լավ կլինի քայլերիս մեծությունը փոխեմ: Կարևոր է՝ ինչ քայլերով ես առաջ գնում: *(Հայացքով չափում է տարածքը, որը պիտի անցնի: Վերջապես քայլում է:)* Մեկ, երկուս, երեք... Թնն... Իմանայի՝ անհաջողության գեղձը ուղեղի որ կիսագնդում է: Էդ գեղձը ուղեղս լրիվ գրավել է: Ինչո՞ւ... *(Նորից ձեռքով հարվածում է սեղանին, կրկնելով՝ ինչո՞ւ: Հարվածում է պատին՝ ինչո՞ւ: Մոտենում է պատուհանին, ձեռքերը պարզում է առաջ:)* Հեյ, մարդիկ, կասե՞ք՝ ինչու: Լռում եք, չէ՞, բոլորդ էլ լռում եք: Ոչ մեկին չի հետաքրքրում ուրիշի անհաջողությունը: Իմանաք էլ, չեք ասի: Որ չվարակվեք: Անհաջողությունն էլ վարակիչ է: Մի քանիսի վարակվելը հեչ, համաճարակ չլինի: Գրիպի համաճարակ, կարմրուկի համաճարակ, անհաջողության համաճարակ: Գործազրկությունը մոռացա: Ամենադաժան համաճարակը: Փոխելու ձևը չգիտեմ, թե՞ մոռացել են: Գուցե կորցրել

են... *(Դադար: Նայում է ձեռքի ժամացույցին:)* Հիստերիկ եմ դարձել: Կամ էլ դարձրել են: Եթե թողնեմ տասն անգամ պտտվեմ սեղանի շուրջը, ուրեմն... Իրավիճակը փոխելու ձևը կորցրել են: Տասն անգամ, առանց վազելու... *(Խոր շունչ է քաշում, պտտվում է սեղանի շուրջը ժամացույցին նայելով:)* Մեկ, երկուս, երեք...

Ներս է մտնում Նունեն: Տեսքը հոգնած է: Ջարմացած մայրում է սեղանի շուրջը պտտվող Արամին:

ՆՈՒՆԵ - Աշխարհից հոգնեցիր, սեղանի շուրջն ես պտտվում:

ԱՐԱՄ - *(Նունեին տեսնելով կանգ է առնում):* Պիտի թողնեմ տասն անգամ պտտվեմ:

ՆՈՒՆԵ - Որ ի՞նչ:

ԱՐԱՄ - Իմանամ՝ աշխարհը փոխելու ունակությունը ո՞նց են կորցրել:

ՆՈՒՆԵ - Ո՞վ է կորցրել:

ԱՐԱՄ - Ով պարտավոր է փոխել:

ՆՈՒՆԵ - *(փլվում է բազկաթոռին):*

Տիրոջից բացի ոչ ոք չի կարող:

ԱՐԱՄ - Տերը ոչ մոռանում է, ոչ էլ կորցնում:

ՆՈՒՆԵ - Ուրեմն փոխելու ժամանակը չի եկել:

ԱՐԱՄ - Բա ե՞րբ է գալու:

ՆՈՒՆԵ - Էլի Տիրոջից բացի ոչ մեկը չի ասի:

ԱՐԱՄ - Տիրոջ ծայնը ո՞վ է լսել որ... Բայց անհաջողակներին այնքան էլ չի սիրում:

ՆՈՒՆԵ - Հոգնածների հետ ո՞նց է:

ԱՐԱՄ - Նույնը:

ՆՈՒՆԵ - Տերը հաջողակներից ավելի պիտի խորշի... դրանց ավտորժակից: Տեսար՝ մի օր էլ Տիրոջը կերան: Էդքան ուտել կլինի:

ԱՐԱՄ - Կուտեն՝ Տիրոջն էլ, երկիրն էլ... Տնաշենների ավտորժակը մի քանի անգամ մեծ է իրենցից: Որ ուշադիր նայես, ամպերի վրա էլ դրանց ատամնահետքերը կան:

ՆՈՒՆԵ - Ամպերը... Հիշում ես, գարնան վերջին օրն էր: Այդպիսի մայրամուտ այլևս չեմ տեսել: Ինչ ամպեր էին, հրե գնդերի պես կարմիր ու ծանր: Հետո երկինքը միանգամից լցվեց աստղերով: Աստղերն այնքան շատ էին, որ տեղավորվելու համար հրմշտում էին իրար: Թե ինչու հիշեցի...

ԱՐԱՄ - Հենց այդ օրը մտածեցի, որ եթե աստղերից մեկն ընկնի... Ոչ մի բան էլ չընկավ:

ՆՈՒՆԵ - Քիչ մնաց ես ձորն ընկնեի: Մոռացել էի, որ ձորի բերանին ենք, աչքերս երկնքից չէի կտրում: Վերջերս գյուղը շուտ-շուտ եմ սկսել հիշել, համարյա ամեն օր: Հորեղբորս երեխաներին՝ Վարդանին ու Հասմիկին հիշում ես: Ծեկլիկ, կապույտ աչքերով, չորրորդ Ա-ի առաջին շարքում էին նստում: Կեսօրին մի ընտանիք եկավ: Դրանց երեխաները՝ ոնց որ Վարդանն ու Հասմիկը... Պատվում էի շուրջները, առիթ էի փնտրում շոյելու: Ծնողներն ինչ-որ բան զգալով սկսե-

ցին թարս նայել: Մի պահ մոռացա՝ որտեղ եմ: Ինձ դպրոցում էի պատկերացնում, դիմացս արևահարված դեմքերով աշակերտներն էին՝ մաքուր, կոկիկ, մի քիչ էլ չարածճի...

ԱՐԱՄ - Մայրս զանգեց, մեզանից էր հարցնում: Խաբեցի, իբր աշխատում եմ: Արտասահմանյան ինչ-որ ընկերությունում:

ՆՈՒՆԵ - Գյուղ գնանք: Հոգնել եմ քաղաքից էլ, սրճարանից էլ, մեր վիճակից էլ...

ԱՐԱՄ - Մորս ինչ եմ ասելու: Նոր ընդունված, արդեն հաջորդ օրը պարապ-սարապ ֆոֆոում եմ...

ՆՈՒՆԵ - Հնարելուց լավ ես:

ԱՐԱՄ - Չուզեցի վշտացնել:

ՆՈՒՆԵ - Կողքին լինեիր, չէր վշտանա:

ԱՐԱՄ - Էլի հին տերևներն ես քամուն տալիս: Ուշ է: Գնացքն անցել է: Մենք էլ ենք փոխվել, գյուղն էլ: Գալուց առաջ ինչ էինք երագում: Ինչքան վստահ էինք, որ քաղաքը մերն է լինելու: Չեղավ: Գյուղը կորցրինք, քաղաքն էլ մերը չեղավ: Մերը լինե՛ր՝ կարող էինք վերադառնալ: Հաղթողներին չեն դատում: Հիմա ստացվում է մեր թքածը լիզել... Չլինելու բան է: Խելագարություն: Մնում է հուսալ, որ հաջողությունը մի օր էլ մեր դռան տեղը կիմանա: Այն ժամանակ կերևա՝ ով ով է: Այն ժամանակ կապացուցեմ...

ՆՈՒՆԵ - Սեղանի շուրջը պտտվե-

լով... (Դադար:) Թվում է՝ հոգնածները պիտի լռեն: Ինչքան շատ եմ հոգնում, այնքան շատ եմ ուզում խոսել: Ինչից է: Երևի, երբ ուզում եմ խոսել, լռում եմ, որովհետև չի կարելի: Ամենաշատը հենց ինձ զսպելուց եմ հոգնում ու որ՝ չի կարելի: Հերիք է մեկը կանչի՝ աղջի, կանչողները շատ են, ոտքերս թուլանում են, ուզում եմ աշխարհի լուտանքները թափել նրա վրա՝ հիմար, ես քեզ համար ինչ աղջի... Անգամ կեղտոտ ափսեն ու մոխրամանն եմ ուզում գլխին ջարդել: Բայց չի կարելի: Մոտենում ու ժպտում եմ, ցույց եմ տալիս, իբր, երազել եմ, որ մայրս անունս աղջի դներ...

ԱՐԱՄ - Գոնե մի ժպտա:

ՆՈՒՆԵ - Թեյավճարը ժպտալու համար են տալիս:

ԱՐԱՄ - Թքած:

ՆՈՒՆԵ - Սրճարանում թքելը հակահիգիենիկ է, թքել չի կարելի: Թքողը անձրևի տակ է մնում: Այս տանիքը չթքելու հաշվին է:

ԱՐԱՄ - Խոստանում եմ, շուտով էդ սրճարանը էլ չես գնա:

ՆՈՒՆԵ - Առանց քեզ էլ խոստացողները շատ են: Պինդ եմ, կդիմանամ: Դեռ դիմանում եմ: Զո գործերը լավ չեն: Անգործ տղամարդը՝ ոնց որ ժանգոտած գերանդին տանիքին: Ոնց էլ չես գժվում... Պարապությունից սնահավատ մտքերը գրավել են ուղեղ: Գյուղացիների վրա էիր

ծիծաղում... Հարցերդ սեղանի շուրջը պտտվելով, չգիտեմ, էլի ինչ օյններով ես փորձում լուծել: Ինչքան այստեղ ենք, ոտքերդ ամպերի մեջ են:

ԱՐԱՄ - Գետնին տխուր է: Իմանաս՝ ինչ հիանալի վերնագիր եմ գտել, քեզ դուր կգա: «Տագնապի ոտնածայները»: Ո՞նց է...

ՆՈՒՆԵ - Լավը լավ է, միայն ոնց որ կաթսայի կափարիչը տան ու ասեն՝ մեջը հարիսա եփիր: Կաթսան չկա, թե չէ վերնագիրը նույն կափարիչն է: Ուրախանալու բան է գտել... Զո այդ ոտնածայները վերջերս ականջներիցս դուրս չեն գալիս: Կպչուն, զզվելի... Չես հասկանա՞ ոնց են ներսդ լցվում: Թե մեր մեջ ինչ են գտել... Տագնապելու համար կորցնելու բան էլ չունենք: Մանկությունն ու պատանեկությունը թռել են, երիտասարդությունն էլ ընդհատումներով է: Մնացել է քնելը: Զնում եմ, ու սիրուն երագները ուրիշ տեղ են տանում: Հետո պարզվում է՝ ուրիշ ասածը մեր գյուղի դաշտերն են, ծառ ու կանաչը, լեռն ու ձորը, կովազան աքաղաղներն ու կեսօրին ծառերի շվաքում պառկած ծուլացած շները: Փորձում եմ մեր տունը գտնել, դպրոցը, մեկ էլ ինչ-որ մեկը գոռում է՝ աղջի... Ու սև մոխիրը ծածկում է ամեն ինչ: (Դժվարությամբ բարձրանում է բազկաթոռից, գնում է ննջասենյակ:) Տեսնես այս գիշեր որտեղ կհայտնվեմ...

ԱՐԱՄ - Վախը մեջդ եղավ՝ դրախտում էլ սև մոխրի միջով ես քայլելու: *(Սենյակից դուրս է գալիս:)*

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԳ

Նույն սենյակը: Արամը մենակ է: Անշտապ թերթում է գիրքը, կարդում է... փակում է գիրքը:

ԱՐԱՄ - Ասում էի, լուրջ բան չէ: Բժշկական հանրագիտարանում էլ է գրված՝ թեթև արտահայտված ընկձախտ, դեպրեսիա: Խնդրեմ, էջ 71... *(Բացում է գիրքը:)* Այս հիվանդներին, այսինքն՝ ինձ, հատուկ է անտարբերությունը: Անձնական ու հասարակական իրադարձությունները նրանց այնքան էլ չեն հուզում: Ու ամենակարևորը... Մտավոր գործունեությունը դանդաղում է, աղքատանում, կորչում է պատկերավոր մտածողությունը, ակամայից ծանր մտքեր են ծնվում, որոնց պատճառով անցյալն ու ներկան տպավորվում են որպես սխալների ու անհաջողությունների ժամանակահատված: Ոնց որ ներսիցս արտագրած լինեն: Տագնապի պատճառն էի ուզում: Ծարունակվող անհաջողություններից ու սխալներից մարդու ոտքերն էլ կթուլանան: Պատկերավոր մտածողությունն է կորչում... Դրանից հետո ինչ էլ գրես՝ կիսատ դիմում է լինելու: *(Կարդում է:)* Հետաքրքիր է, խորհուրդ է տրվում հիվանդության մասին շատ չհիշել, սակայն այս հի-

վանդները անընդհատ իրենց հիվանդության մասին են մտածում: Բուժումը ո՞րն է... *(Կարդում է:)* Պարզ է... *(Գիրքը մի կողմ է գցում:)* Բժշկական գրքերը կարդալիս միշտ պիտի քեզ համոզես, որ մեռած չես: Թեև ճիշտ է, որ միջավայրն ու իրավիճակը պիտի փոխել: Հետո՞ ինչ, որ ճիշտ է... Միջավայրը թաշկինամկ է, որ շուտ-շուտ փոխես: *(Մտտենում է պատուհանին, նայում է դուրս:)* Փողոցն էլ է միջավայր... Փողոցը կօգնի... Գյուղը կօգնի... Կօգնեն, թե՛ վիճակն ավելի կբարդացնեն: Որպեսզի միջավայրը քոնը լինի, միջավայրի արյունն էլ քո արյան կարգին պիտի համապատասխանի: Միջավայրի արյունը... Վատ պատկեր չէր: Ուրեմն պատկերավոր մտածողության ունակությունը լրիվ չեմ կորցրել: Էն աշխարհի միջավայրն ինչպիսին կլինի: Այստեղ փոշին է շատ, այնտեղ՝ երևի լուրջությունը: Այստեղ միջավայրի մեջ ես, այնտեղ միջավայրն է քո մեջ: *(Ազոավի կոռոց է լսվում:)* Ըհը... Էն աշխարհի մասին լսեց: Ոնց որ էն աշխարհի լրտեսը լինի: Սրանք ինչի՞ց են տառապում, որ դաշտերն ու անտառները թողած քաղաք են լցվել: *(Ազոավն ավելի երկար է կոռում: Արամը ձեռքը սեղմում է սրտին:)* Ազոավից ո՞վ է խեր տեսել, որ... Եթե մինչև խահանոցից վերադառնալս ազոավը նորից կոռա, նշանակում է... Նու-

նեն... կամ գյուղում մերոնցից մեկը... (Ականջը մոտեցնում է պատուհանին, փորձելով ազոսավի կոռոցը բաց չթողնել:) Լռել է... կամ էլ թռել-գնացել է: Ինքը չկա, բայց կոռոցը մնացել է արյանս մեջ: (Ընկնում է բազկաթոռին:) Հոգնեցի... Ինքս իմ ներսի վիճակախաղից հոգնեցի: Դատարկությունն էլ է հոգնեցնող, անորոշությունն էլ, թշվառությունն ու անկարողությունն էլ: Լուսնի հոգնածությունն էլ է հոգնեցնող: Ձեռը ծար լինի, գիշերով գյուղ կվերադառնա: Կարծում է՝ գյուղում առաջվանը կլինի՝ ուրախ ու կենսախինդ, ով առավտորը շուտ ոտաբոբիկ վազում էր խոտերի միջով, որպեսզի ոտքերը ցողով լվանա: Գյուղում, հնարավոր է, լավ լինի, բայց ինձ համար չէ: Գյուղացիները պարտավաճներին չեն ներում, չեն հավատում ու չեն վստահում: (Նայում է ժամացույցին:) Ժամանակն է օրվա պարտականությունս կատարել՝ զանգել գործակալություն: (Զանգում է:) Գործակալությունն է... Ես եմ, ուրիշ էլ ո՞վ: Հոյս կա... Էդ մի բանը, որ միշտ լինում է... Վերջին հույսը... Ոչ մեկը չգիտի: Կարող է՝ չի մեռնում: Մեռնի, ո՞վ է մեռնողին էն աշխարհ ուղեկցելու: Ո՞նց՝ պետք չի: Անծանոթ միջավայր է, միայնակ դժվար կլինի: Մի շաբաթից փորձեմ... Հա, կփորձեմ, փորձը փորձանք չի: Իմ ուզածը գտաք՝ մաղարիչն ինձ վրա: Առայժմ: (Հեռախոսով ե-

րաժշտություն է միացնում: Արտասանում է:)

Գործ չունեցողն ի՞նչ է անում,
Ինչ էլ անի, բան չի անում:
Կորցնելու էլ չկա ոչինչ.
Ծատրը շատ չէ ու քիչն էլ՝ քիչ:

Պարային շարժումներով պատվում է սեղանի շուրջը: Ներս է մտնում Նուսեն, տեսքը հոգնած է, մարմինը՝ քիչ կռացած: Չարմացած նայում է Արամի տարօրինակ պարին:

ՆՈՒՆԵ - (խոսում է դժվարությամբ):
Պտտվում ես, թե՞ գլուխս է պտտվում... (Ճոժվելով մոտենում է բազկաթոռին, նստում է:)
Գլուխս չի՞ պտտվում:

Արամն անջատում է երաժշտությունը:

ՆՈՒՆԵ - Գյուղում սեղան չկամր, շուրջը պտտվեիր... Գյուղում լիքը սեղան կա: Սեղանները ապրողներից շատ են: Վիսկին լավը չէր:

ԱՐԱՄ - Հարբած ես:

ՆՈՒՆԵ - Ասում են՝ վիսկին քշում է հոգնածությունը:

ԱՐԱՄ - Ո՞ր անասունն է ասել:

ՆՈՒՆԵ - Անասուն չէր... մարդու նման էր:

ԱՐԱՄ - Սրբիչի պես ծոմռվել ես:

ՆՈՒՆԵ - Վրա մի տուր... գլուխս ավելի է պտտվում...

ԱՐԱՄ - Ուրիշ ի՞նչ ես արել:

ՆՈՒՆԵ - Միայն վիսկի եմ խմել:
Գլուխս կբռնես... բռնիր, թող չպտտվի:

ԱՐԱՄ - Էլ էդ սրճարանը չես գնա,

արգելում եմ, էդ սրճարանը վաղ-վանից փակ է քեզ համար:

ՆՈՒՆԵ - Ուռն... *(Ծափ է տալիս:)*
Կքնեմ, ինչքան սիրտս ուզի: Կլողանամ, կհարդարվեմ... աչքիդ էլ սրբիչ չեմ երևա: Բնակարանը կմաքրեմ, թե չէ փոշին ոնց որ տան երրորդ շնչավորը լինի: Կեսօրին էլ կգնամ նոր գործ փնտրելու: Ուրախությունից գլխիս պտտվելն էլ դադարեց: Սրճարան չեղավ, թող ռեստորան լինի: Թե չէ դպրոցում մատուցողը գործ չունի: Թե՛ կյանքը փոխվել է ու մատուցողները դպրոցին էլ են պետք:

ԱՐԱՄ - Լրիվ շնորհքից ընկել ես:

ՆՈՒՆԵ - Ծնորհքից ցերեկն եմ ընկել... միանգամից ընկա: Վիսկի էլ չէի խմել, գլուխս էլ չէր պտտվում:

ԱՐԱՄ - Էլի ի՞նչ է եղել:

ՆՈՒՆԵ - Ասեցի՝ վրա մի տուր:

ԱՐԱՄ - Ասելիքդ ասա:

ՆՈՒՆԵ - Մի րոպե աչքերս փակեմ... *(Փակում է աչքերը, քիչ անց բացում:)* Էս օրվա պես չէր եղել: Գալիս-գնում էին, գալիս-գնում էին... Չէի հասկանում՝ մոխրամաններն ու կեղտոտ ամաններն ուր եմ տանում, ինչ եմ ետ բերում: Մեկ էլ թիկունքիցս՝ ուսուցչուհի... Չմտածեցի՝ ինձ հետ են: Նորից՝ ուսուցչուհի... հետո էլ՝ Նունե: Քարացա: Քրտինքը վրաս տվեց: Ծրջվեցի: Մեր դասարանի Ռոբերտին կհիշես... էն պզուկոտին... Նրա ծնողներն էին: Մո-

տեցա: Ուսուցչուհի՛, սրճարանում ես դաս տալիս... դեմքի արտահայտությունը տեսնեիր: Հազիվ զսպեցի, որ չկոպտեմ, ժպտացի, ցույց տվեցի, որ ուրախ եմ: Ասացի, իբր, տուն ենք ուզում գնել, փողը պակասում է, գործից հետո մեկ-մեկ այստեղ եմ գալիս: Երևի չհավատացին: Հաստատ չհավատացին: Քեզանից հարցրեցին: Ուշքս, միտքս դրանց ծամփելն էր, իրենք էլ պատմում ու պատմում են... Պատմում են՝ ոնց են տրակտոր գնել, ոնց են Ռոբերտին համոզել տրակտորը քշի... Վերջում չէի լսում՝ ինչ են ասում: Առաջին անգամ ուրախացա, որ այս ու այն կողմից կանչեցին: Վաղը գյուղի թեման մենք ենք լինելու, սպասիր մերոնց ու ձերոնց զանգերին: Հաշվե՛լ ես, տուն առնելու համար ինչքան փող է պակասում: *(Ծիծաղում է:)* Էլի շատ խոսեցի, զլուխս նորից սկսեց պտտվել: Երաժշտությունը միացրու: Կմիացնե՛ս:

ԱՐԱՄ - Հիմա՛:

ՆՈՒՆԵ - Վաղը ես էլ կարող եմ:

ԱՐԱՄ - Վրադ հալ չկա: *(Միացնում է, ռիթմիկ երաժշտությունը փոխում է տան տրամադրությունը:)*

ՆՈՒՆԵ - Ավելի բարձր:

ԱՐԱՄ - Հարևանները կգժվեն: *(Բարձրացնում է երաժշտության ձայնը:)*

ՆՈՒՆԵ - Ո՞նց է՝ մենք չենք գժվել... *(Սկսում է պարել: Ծարժումները)*

կտրուկ են, նյարդային: Մի պահ պարը դադարեցնում է, ծնկում է, հատակին ինչ-որ բան է փնտրում:)

ԱՐԱՄ - Իսկը ուղտի պարը կամրջին: (Փորձում է նրան բարձրացնել:)

ՆՈՒՆԵ - Պետք չէ... (Վանում է Արամին, շարունակում է փնտրել:)

ԱՐԱՄ - Ինչ ես փնտրում:

ՆՈՒՆԵ - Սիրո փշրանքները:

ԱՐԱՄ - Ասա՛ խմելը քո ինչ բանն է:

ՆՈՒՆԵ - Մեղավորը դու ես, ասում էիր՝ սերը վերջ չունի: Ասում էիր՝ մեր սերը աշխարհին էլ կհերիքի: Չէիր անհանգստանում, երբ փշուրները թափվում էին: Փշրանքների մասին ո՞վ էր մտածում: Կենցաղը ամեն ինչ կերավ, փշուրներն էլ հետը խժռեց: Կենցաղի խրախճանքը շարունակվում է: Ու թույլ ես տալիս, որ շարունակվի... (Բռունցքներով հարվածում է հատակին և բղավում:)

ԱՐԱՄ - (ծնկում է նրա կողքին, փորձում է հանգստացնել): Հանգստացիր, խնդրում եմ, հանգստացիր... Կքնես, ու վաղը նորից լավ կլինի...

ՆՈՒՆԵ - Չի՛ լինի: Մեղավորը դու ես: Ես գիժ չեմ, ես հոգնած եմ, կորցնելուց եմ հոգնել: Հոգնածության համար ինչո՞ւ շտապօգնություն չի գալիս: (Անսպասելի խաղաղվում ու պառկում է հատակին:)

Արամը փորձում է գրկել, բարձրացնել նրան:

ՆՈՒՆԵ - (թույլ է տալիս, որ Արամը գրկի, գլուխը հենում է ուսին: Մի քանի վայրկյան անշարժանում են): Մրսեցի... պինդ գրկիր, խնդրում եմ, ինձ իմ անկողինը տար: Ես վաստակել եմ, որ ինձ գրկած իմ անկողինը տանեն: (Արամը քնքշորեն գրկում է Նունեին:)

Երաժշտությունը ավելացնում է պահի հուզականությունը: Երաժշտության ուղեկցությամբ Արամը Նունեին տանում է ննջարան:

ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԳ

Նույն բնակարանը: Հայտնվում է Նունեն փոքր-ինչ ճոճվելով:

ՆՈՒՆԵ - (պայուսակը զցում է սեղանին, զարմացած շորջն է նայում): Տանը չի՛: Արամ... (Դուրս է գալիս սենյակից, արագ վերադառնում): Ննջարանում չի: (Գնում, վերադառնում է:)

Զուգարանում էլ չի: (Պատուհանից նայում է դուրս:) Ուշ է ախր... (Պայուսակից հանում է սիգարետ, ծխում է:)

Ծխախոտը տեսնի՛ կգժվի... Գժվում է՝ գժվի, վաղուց եմ գժվել: Տուն պահող կինը ինչ ուզի՝ կանի: Կծխի, կխմի... Գյուղում չեմ, որ մեծ ու փոքր ամոթանք տան, արգելեն: Գյուղում կինը կին է, տղամարդը՝

տղամարդ: Կինն իր գործն ունի, տղամարդը՝ իր: Գյուղում պարապ տղամարդը... թեկուզ պարապ, ո՞ր է... Արամ... Չի լսում, կամ տանը չի: Լիներ, մի քիչ տղամարդ խաղար: Գլուխս օղիից պայթում է, թե ինչո՞ւ եմ խմում: Զզվում ու խմում եմ, ոնց որ սատանան գողի: Ինքս ինձ հնարել եմ, իբր, առանց խմելու ոտքերս կծալվեն: Վերջը լավ լինի, չնայած լավ վերջը ո՞րն է: Լավ վերջ ե՞րբ է եղել: Էն էլ մեր օրերում: Վերջը հեքիաթներում է լավ: Արամ... *(Դժվարությամբ ոտքի է կանգնում, բացում է պատուհանը, ծխախոտի ծուխը փչում է դուրս:)* Ականջներս զնգում են, ո՞վ անունս տվեց: Բամբասանքի ջրաղացը հիմա աղում է ամբողջ ուժով: Ու հետաքրքիր է, որ մերոնք չեն զանգել: Ինչե՞ր պատմած կլինեն, հետն էլ չեղածը գույնզգույն ենթադրություններով կզարդարեն: Ջահել աղջիկը, թեկուզ մատուցողուհի, էդքան հարբած տղամարդկանց մեջ... Չլինի՞ մերոնք ամոթից են սուս արել: Շատերն էլ Արամին կխոճան, որ իմ նման անբարոյականի է հանդիպել: Ժիշտ էլ կանեն, ինչո՞վ անբարոյական չեմ: Հարբում եմ, ծխում եմ, առավոտից ժպտում, կոտրատվում եմ ուրիշների տղամարդկանց առաջ... *(Լստում, նոր ծխախոտ է վառում:)*

ԱՐԱՄ - *(ներս է մտնում, ծխախոտը տեսնելով արագ մոտենում, ձեռքից խլում է):* Շատ սիրուն էիր, էս էլ ջրծաղիկը...

ՆՈՒՆԵ - Խփիր, եթե խփելը փրկություն է:

ԱՐԱՄ - Չե՞ս հասկանում, որ փոսն ես գլորվում:

ՆՈՒՆԵ - Արդեն գլորվել եմ:

ԱՐԱՄ - Վե՛րջը...

ՆՈՒՆԵ - Լավ չի լինի: Հեքիաթ չունենք, որ վերջը լավ լինի: Կարող է՝ ունեցել ենք, կամ մտածել ենք, որ ունեցել ենք: Մեր հեքիաթը մեզանից առաջ է փոսն ընկել:

ԱՐԱՄ - Որ ամեն օր հարբես...

ՆՈՒՆԵ - Խառնում ես, գինովցածը հարբածը չի:

ԱՐԱՄ - Նույն էշությունն է: Համառությունդ էլ է նույն կենդանունը:

ՆՈՒՆԵ - Այսքանից հետո աչքիդ ինչ ասես կերևամ: Էշ էլ կերևամ: Լավ ես անում, էշից շատ եմ բանում: Վաղն էլ աղվես կդառնամ, մյուս օրը՝ բու: Ուզո՞ւմ ես, նապաստակի պես վազվզեմ: Մտքումդ բան պահիր: Եթե վազվզեմ ու ոչնչի չդիպչեմ... Վազվզեմ...

ԱՐԱՄ - Թիթեռ չե՞ս ուզում լինել: Սիրուն, գունավոր թիթեռ կլինես:

ՆՈՒՆԵ - Սարդ էիր ուզում ասել: Բեզ էլ սարդոստայնի մեջ ես զգում: *(Նոր ծխախոտ է հանում, սադրիչ նայում է Արամին:)* Մտքովդ չանցնի արգելել:

ԱՐԱՄ - Միայն փորձիր:

ՆՈՒՆԵ - Ի՞նձ ես վառելու:

ԱՐԱՄ - Փորձիր՝ կտեսնես:

ՆՈՒՆԵ - *(ծխախոտը տուփի մեջ դնելով, ավելի հանգիստ):* Գյուղից չե՛ն գանգել:

ԱՐԱՄ - Ո՞վ:

ՆՈՒՆԵ - Սրանց լռությունը վտանգավոր է, այդպիսի բանը գյուղում չեն մարսում: Մինչև հազար պոչ չկացնեն, չեն հանգստանա: *(Դադարից հետո, կտրուկ:)* Ո՞ր էիր:

ԱՐԱՄ - Արդարության ետևից էի գնացել:

ՆՈՒՆԵ - Ո՞նց ես ձանաչել, որ ետևից գնացել ես:

ԱՐԱՄ - Ազատության հրապարակում նստացույցի էի:

ՆՈՒՆԵ - Հետո՞...

ԱՐԱՄ - Արդարություն էինք պահանջում:

ՆՈՒՆԵ - Չեղածը ումի՞ց էիք պահանջում:

ԱՐԱՄ - Երևի կա:

ՆՈՒՆԵ - Չլինի էլ՝ կներկրեն, ինչո՞ւ չեն ներկրում:

ԱՐԱՄ - Ճաշացանկի հետ ես խառնում:

ՆՈՒՆԵ - Ո՞նց է, տնից դուրս էիր եկել:

ԱՐԱՄ - Որոշեցի գործակալություն անձամբ գնալ:

ՆՈՒՆԵ - Էլի նախարարի հաստիք չկա՞ր:

ԱՐԱՄ - Ոչինչ էլ չկար: Բենգալցակայան, շինարարություն... էս անգամ վուլկանիզացիան էլ չկար: Տուն չէի ուզում գալ, աննպատակ թափառում էի: Չիմացա, ոնց Ա-

զատության հրապարակ հասա: Օպերայի մուտքի աստիճաններին երիտասարդներ էին նստած, հետները նստեցի: Նստադուլավորները արդարություն էին պահանջում, մտածեցի՝ պահանջելը պարագությունից լավ է:

ՆՈՒՆԵ - Ումի՞ց:

ԱՐԱՄ - Չինաստանի կառավարությունը մեզ հետ ի՞նչ կապ չունի:

ՆՈՒՆԵ - Մերը ունի՞:

Դրսից ձայներ են լսվում՝ արդարություն, արդարություն, արդարություն:

ԱՐԱՄ - Ազատության հրապարակ են գնում:

ՆՈՒՆԵ - Ենթադրենք կառավարությունն ասում է՝ եկեք, ձեր բաժին արդարությունը տարեք: Դու էլ գնում բերում ես: Ի՞նչ ենք անելու: Ոչ ուտելու է, ոչ էլ տան վարձը կարող ենք տալ: Հետո՞, էլի նստելու՞ եք:

ԱՐԱՄ - Ավելի խելոքը կասի՝ ինչ անենք:

ՆՈՒՆԵ - Լիներ, ասած կլիներ: Այ, չնստողները գիտեն իրենց անելիքը: Սրժարաններում հարբում ու կոտրում են, քարշ են գալիս սառնաներով, գործ չեն փնտրում, ուզեն՝ կաշխատեն, ինչ ուզեն՝ կաշխատեն: Ուզեն՝ Մայամիում կհանգստանան կամ Ավստրալիայում:

ԱՐԱՄ - Որ լավ նստենք, էդքան չեն ուզի:

ՆՈՒՆԵ - Այսինքն՝ այնքան նստեք, մինչև արմատներ գցեք ու մի քանի տերևաթափ տեսնեք: Ուզում եմ ծխել:

ԱՐԱՄ - Երագում էլ չհամարձակվես: Իսկ ընդհանրապես...

ՆՈՒՆԵ - Ընդհանրապես՝ ինչ...

ԱՐԱՄ - Վարքդ դուր չի գալիս:

ՆՈՒՆԵ - Վա՛րքս, թե՛ ես:

ԱՐԱՄ - Գործերս լավանան...

ՆՈՒՆԵ - Ժառանգությունն ես ստանալու:

ԱՐԱՄ - Իմ ժառանգությունը դու ես:

ՆՈՒՆԵ - Լինեի՛ տեր կկանգնեիր: Եկեղեցում ասացիր՝ տեր եմ, ու չեղար:

ԱՐԱՄ - Որ տեր չեմ, ի՛նչ եմ:

ՆՈՒՆԵ - Ուղեկցող:

ԱՐԱՄ - Ո՛ր եմ ուղեկցում:

ՆՈՒՆԵ - Տեղ չենք հասել, որ իմանամ: Չենք քայլել, որ հասնենք: Ուզում եմ երեխայի պես բարձր լացել: Ձենս գլուխս գցել ու լացել: Բոլոր նրանց համար, ում սիրելու ժամանակն է, բայց սիրելու փոխարեն արդարություն են փնտրում: Այն օրերի համար, որ փայլուն ու գունավոր էին թվում, իսկ իրականում օձառի պղպջակներ էին:

Արտասվում է՝ աստիճանաբար ձայնը բարձրացնելով: Հետո կտրուկ մոտենում, պատն ու պատին կից իրերը շոշափելով պտտվում է սեմյակում: Չանգում է Արամի բջջային հեռախոսը:

ԱՐԱՄ - Մամ, ի՛նչ է եղել... այսքան ուշ... Ի՛նչ... Երբ, ինչի՞ց...

ՆՈՒՆԵ - Ի՛նչ է եղել:

ԱՐԱՄ - *(հեռախոսը սեղանին դնելով):* Հայրդ է մահացել, երկու ժամ առաջ: Ինֆարկտից...

Նույնն փլվում է հատակին:

ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԳ

Նույն բնակարանը: Արամը անհանգիստ գնում-գալիս է, զգացվում է, որ պատրաստվում է կարևոր վճիռ կայացնել:

ԱՐԱՄ - Սրժարանից պիտի հեռանա, քանի հոգեպես հաշմանդամ չի դարձել: Եթե արդեն չի դարձել: Կարգին ամուսին լինեի... *(Աթոռներից մեկը բերում է իր դիմաց, գրուցում է հետը:)* Միշտ մեզ հետ ես եղել, զգացել ես մեր ծանրությունը, ամեն ինչ տեսել ու արձանագրել ես: Միակն ես, որ կարող ես ձիշտը ասել, թե ինչ ամուսին եմ: Լռում ես, փորձում ես արդարանալ, իբր, շնչավոր չես, իբր, իրերը տեսնում, բայց չեն կարողանում արտահայտվել: Այդպես հեշտ է, այդպիսի մարդիկ էլ կան: Ո՛վ եմ, ինչի՞ համար եմ... Փակուղի մտած վագոն, որ մոռացել է իր նշանակությունը, որովհետև իր գոյության մասին են մոռացել: Սուտ է, իբր, ամեն մեկի բախտն իր ձեռքում է: Բախտ կա՝ տիրոջ առջևից է գնում, բախտ էլ կա՝ պահմտոցի է խաղում տիրոջ հետ: *(Պատուհանից նայում է դուրս:)* Ոչ մեկի ծակատին գրված

չի՝ հալածված է, թե բախտավոր: Գուցե ճակատի ներսի կողմից է գրված, որ չջնջվի: Ծամոնի պես ձգում եմ ժամանակը: Ամեն մտքիս վրա հարցական է նստած: Հետն էլ անորոշ է, քեռին ինչ կվճռի: Բեռին է ու չհամաձայնեց... կամ համաձայնությունը հետաձգեց ավելի ուշ ժամանակի: (Դադար:) Եթե հիմա... պետք չի: Այս անգամ կարելի է առանց գուշակության: Պետք չի ոչ քայլել, ոչ հաշվել, ոչ թռչել, ոչ պառկել... Համընկնի էլ, ոչինչ չի փոխվում: Ինձ մոտ համընկնում է, իրականության հետ՝ չէ: Վերջ սնոտիապաշտությանը, լինող բանը կլինի: (Վերցնում է հեռախոսը, խորը շունչ է քաշում, հավաքում է համարը:) Բեռի... ես եմ, քեռի, չես լսում: Արամն է, Արամը... Հա, ղնց ես: Մենք ոչինչ, մաման էլ է լավ: Նունեի հայրը մահացավ... Ինֆարկտից: Ծաբաթներ առաջ: Ոնց է, հիշե՛լ եմ, նեղն եմ, քեռի: Հա, խնդրանք ունեմ, ուզում եմ մոտո գալ: Կընդունեն: Մոռացել ես, ճարտարագիտականն եմ ավարտել: Աշխատավարձն է ցածր, նույնիսկ տան վարձին չի հերիքում: Չէ, դեռ չգիտի... Կհամաձայնի: Մերոնք էլ չգիտեն, մերոնք էլ դեմ չեն լինի... Պարզ չի, որ փլավ չեն բաժանում, ամեն ինչի պատրաստ եմ: Էնքան, որ Նունեն այստեղ յուր գնա, ես՝ այդտեղ: Կլինի... Բեռի, մի բան

էլ, պարտքով փող ուղարկես, որ տոմս առնեմ... Կուղարկե՛ն: Աշխատեմ՝ կվերադարձեմ: Ծատ կաշխատեմ: Գիտեի, որ չես մերժի: Բեռի ջան, ավելի հարազատ ղվ ունեմ... Հա, քեռի ջան, կցավակցեմ: Հա, քեռի ջան, գալուց հետո կխոսենք: Առայժմ: (Հեռախոսը գցում է սեղանին:) Վերջ, վիճակը զգված է, հետդարձի ճանապարհի չկա, գնում եմ, մնաց Նունեի մաղթանքը: Չի դժգոհի, ինչն է դժգոհելու, պարահանդես չեմ գնում: Կհասկանա, որ բոլորն իր համար է: Կհասկանա՞ որ... (Հարվածում է ճակատին:) Հիմար եմ, հիմար, ինքն ինչ է անելու... Ուզում եմ սրճարանից հանել: Հետո... Առանց ինձ ինչ է անելու: Հսկա քաղաք ու ինքը մեն-միայնակ...

ՆՈՒՆԵ - (ներս է մտնում օրորվելով: Սևազգեստ է: Զգացվում է, որ հարբած է: Փորձում է ուղիղ քայլել: Վերջապես հաջողվում է բազկաթոռին մոտենալ: Արամը փորձում է օգնել, վանում է): Ինքս, օգնություն պետք չի:

ԱՐԱՄ - Հերիք չի, չափ ունեցիր, ինչքան կարելի է: Մի օր պատի տակ ես ընկնելու-մնաս:

ՆՈՒՆԵ - Ընկել եմ, ուսերս էլ փոշոտվել են:

ԱՐԱՄ - Բեզ ղնց են թողնում՝ սպասարկես:

ՆՈՒՆԵ - Չեն թողնում: Աշխատանքի ժամերին ալկոհոլ չի կարելի:

ԱՐԱՄ - Էլ ո՞նց ես խմում:

ՆՈՒՆԵ - Աշխատանքից հետո, տուն գալուց առաջ:

ԱՐԱՄ - Ինչո՞ւ:

ՆՈՒՆԵ - Ասեմ... Առանց խմելու դժվար է այս բնակարանը մտնել: Վախենում եմ մտնել: (*Լստում է:*)

ԱՐԱՄ - Լախկինում չէիր վախենում:

ՆՈՒՆԵ - Լախկինում դու էլ ուրիշ էիր:

ԱՐԱՄ - Բնակարանը փոխենք:

ՆՈՒՆԵ - Լույսն է:

ԱՐԱՄ - Ինչո՞ւ:

ՆՈՒՆԵ - Բնակարանը փոխեցինք, բա մենք, մեզ ո՞վ է փոխելու: Չնայած արդեն փոխել են, ես առաջվանը չեմ, դու էլ առաջվանը չես: Սկզբում քեզ ոգևորում էի, հիմա բեռ եմ թվում, բոլոր անհաջողություններիդ մեղավորը... Կուզենայիր, չէ՞, չքվեի, անհետանայի: Կուզենայիր: Մի օր չես դիմանա ու կխոստովանես: Ավելի ուշ հնարավոր է նույնիսկ ուզենաս խեղդել:

ԱՐԱՄ - Աթոռներին ու պատերին մոռացար, վաղը նրանք էլ են հարձակվելու:

ՆՈՒՆԵ - Գժի տեղ ես դրել, կարծում ես, գժվել եմ:

ԱՐԱՄ - Ծարունակես խմել, դրան էլ կհասնես:

ՆՈՒՆԵ - Ես գիժ չեմ:

ԱՐԱՄ - Առայժմ չես:

ՆՈՒՆԵ - Վաղն ավելի խելոք կլինեմ:

ԱՐԱՄ - Չմոռանաս, որ վաղն էլ այսօրվա շարունակությունն է:

ՆՈՒՆԵ - Ջուր կբերեմ:

Արամը գնում, ջուր է բերում:

ՆՈՒՆԵ - (*խմելով*): Երևի ոչ մեկը չի կասկածում, որ հորս ես եմ սպանել:

ԱՐԱՄ - Էլի ի՞նչ անցավ մտքովդ:

ՆՈՒՆԵ - Չի անցել... Մեր սարերի քամիներն էլ չեն կարողանում միտքս մաքրել մուծից: Վախեցմիր... Ոչ մեկին չեմ ասել, որ հետս ես եղել...

ԱՐԱՄ - Էլ չխմես, ծնկաչոք եմ խնդրում: Ես կաշխատեմ, էլի նախկինը կլինեմ:

ՆՈՒՆԵ - Չդիպչես: Չփորձես ինձ հավաքել...

ԱՐԱՄ - Տեսիլքները խելոք լրիվ կերել են:

ՆՈՒՆԵ - Տեսիլք չկա, խորը փոս է, լույսը համարյա չի երևում:

ԱՐԱՄ - Ամեն ինչը աչքիդ շրջված է երևում: Լույսը չես տեսնում, որովհետև ոչ թե փոսի միջից, այլ փոսի վրայից փոսի մեջ ես նայում: Մի օր էլ փոսը կընկնես:

ՆՈՒՆԵ - Հարբած զգույշ եմ, հարբած չեմ ընկնի: Մենակ ավելի զգույշ եմ:

ԱՐԱՄ - Ինչո՞ւ մենակ, ես դեռ չեմ անհետացել:

ՆՈՒՆԵ - Բայց փոսի միջից ինձ ներքև ես քաշում: (*Բարձրանում, հենվում է պատուհանին:*) Մութ է... Հորս չէի ուզում սպանել: Ակամա սպանություն... Լռությունն էլ ինձ էր սպանում: Լռությունը միշտ վախեցրել է: Լռության մի-

ջով վատ մտքերը գնում-գալիս էին... իմ վատ մտքերը: Այդ մտքերն էլ հորս սպանեցին:

ԱՐԱՄ - Հայաստանում ամեն երրորդը սրտից է մեռնում:

ՆՈՒՆԵ - Բոլորին էլ ինչ-որ մեկը սպանում է: Սիրտը չի դավաճանի, եթե չսպանեն: Ես չլինեի, հորս սիրտը դեռ երկար կծառայեր:

ԱՐԱՄ - Հո չե՞ս մտածում, որ Հայաստանում միայն դահիճներ ու զոհեր են:

ՆՈՒՆԵ - Գերեզմանափորներին մոռացար:

ԱՐԱՄ - Աչքիդ ես ո՞վ եմ:

ՆՈՒՆԵ - Զոհն ու դահիճը միասին:

ԱՐԱՄ - *(հեզնանքով ու վիրավորված):* Բա գերեզմանափորը:

ՆՈՒՆԵ - Հնարավոր է, գերեզմանափոր էլ լինես, թեև հորս ուրիշները թաղեցին: Թաղեցին, չնայած պինդ մարդ էր: Լռությունը, նրա լռությունը... Չասված բառերը խցանեցին նրա անոթները: *(Ջուր է խմում:)* Ներսս վառվում է: Խմիչքից չի, հուշերն են վառվում: Հորս մահանալուց հետո անընդհատ վառվում են, ուզում են հանգցնել, չեն մարում: Կարծում էի, կվառվեն-կվերջանան: Վառվում են, ու չգիտես, որտեղից նորերն են հայտնվում: Հուշերի մանրամասները խելագարացնում են:

ԱՐԱՄ - Չսպասված մահը բոլորին էլ շփոթեցնում է: Ո՞ւմ մտքով կանցներ, որ հորդ սիրտը կդավաճանի:

ՆՈՒՆԵ - Աղետը կանխագույժ էի և ազդակը հորս սրտի լռությունն էր...

ԱՐԱՄ - Ժամանակը ցավը կմեղմի: Ժամանակը լռությունը նորից կյանքի ձայներով կլցնի:

ՆՈՒՆԵ - Առայժմ մեզանից խլել է այդ ձայները և անհայտ է, ուր է տարել...

ԱՐԱՄ - Էլ չի տանի:

ՆՈՒՆԵ - Չկա, որ տանի, գտնի՝ էլի կտանի:

ԱՐԱՄ - Եթե սթափ ես...

ՆՈՒՆԵ - Հիմա չէ... Ոչինչ չեմ ուզում: Հիմա բարի գիշեր մաղթիր, չնայած այս տանն այլևս ոչինչ բարի չէ: *(Առանց պատասխանի սպասելու դուրս է գալիս:)*

ԱՐԱՄ - Բարի գիշեր: *(Գնում է Նունեի ետևից, քիչ անց վերադառնում է:)* Չկարողացա ասել: Չիմացա՝ ինչպես ասել, ասելի էլ, երևի չհասկանար: Միևնույն է, կիմանա: Մնաց՝ քեռին խոսքի տերը լինի: *(Պատուհանից դուրս է նայում:)* Անորոշ ժամանակից հետո պատուհանից ուրիշ տեսարաններ կերևան: Բոլորովին ուրիշ տեսարաններ...

ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԳ

Նույն բնակարանը: Արամը անհանգիստ գնում-գալիս է սենյակում:

ԱՐԱՄ - Չգիտեմ, ինչքան եմ բացակայելու: Ենթադրենք քեռին էր՝ մերժում էր, ասում էր՝ մի արի,

ի՞նչ էր լինելու: Մի օղակով երկարելու էր անհաջողությունների շղթան: Ընկձախտն էլ նոր ծյուղեր էր տալու: Նունեն ռոր է, ինչո՞ւ է ուշանում: (*Պատուհանից նայում է դուրս:*) Չեմ էլ ասել, որ քեռին կանչել է: (*Շայում է ժամացույցին:*) Տանը պիտի լինեք, չլինի՞... ավելի լավ է վատ բաներ չմտածեմ: Կարող եմ ներշնչել, ու վատը կատարվի: Լավի մասին պիտի մտածել, այնքան, մինչև Նունեն ներս մտնի: Եթե մինչև յոթ հաշիվը հասնեմ միջանցքի դռանը... էլի հիմարացա: (*Շայում է ժամացույցին:*) Իրականում այնքան էլ ուշ չի, ես եմ շտապում: Ասած լինեի, այսքան չէի անհանգստանա: Գուցե դուրս գամ, փողոցում դիմավորեմ: Որ ի՞նչ, եթե սրճարանում խմելով է ընկել... Խմել ու կորցրել է ժամանակի զգացողությունը: Ապշելու է, Նունեն ռոր, խմիչքն՝ ուր... Ում էլ ասես, չեն հավատա: Ի՞նչ կատարվեց, ի՞նչ եղավ: Երևի ինքն էլ չգիտի: Կամ էլ գիտի, խոստովանելն է դժվար: Ասում է՝ սթափ վախենում է բնակարանը մտնել: Ինձնից ինչո՞ւ է վախենում: Խմիչքից վախենալու փոխարեն ինձնից է վախենում: Մի բանը հաստատ է, հոգին ու օրգանիզմը ալկոհոլին երկար չեն դիմանա: Ողջ օրն էլ ոտքի վրա է: Մղձավանջներն ու տեսիլքները ավելի վրա կտան: (*Շայում է ժամացույցին, պատուհանից դուրս:*

Ջանգում է:) Պատասխանիր... Հեռախոսն ինչո՞ւ է անջատել... (*Նորից է զանգում:*) Անհույս է: Մնաց սրճարանը: (*Ջանգում է:*) Այո, սրճարանից է... Նունեին եմ ուզում: Երբ է գնացել: Ցերեկով ռոր է գնացել, չի ասել... Չի վերադարձել... Ամուսինը՝ Արամը: Հասմիկն է, ծանաչեցի, ռնց չէ... Քեզ էլ չի ասել: Մինչև հիմա չկա: Չգիտեմ էլ, ի՞նչ եղած կլինի... Կարծում ես: Երևաց՝ կասեմ: Դու էլ զանգիր... Չէ, ինչ խուժապ... Իհարկե, կսպասեմ, առաջին անգամ է այսքան ուշանում: Բարի գիշեր: (*Հեռախոսը դնում է սեղանին:*) Կեսօրին դուրս է եկել ու չի վերադարձել: Ո՞ր է գնացել... Մի երկու ընկերուհի ունի... այսքան ուշ չէր մնա, Հասմիկին էլ չի ասել: Չի էլ խմել, կեսօրին խմած չի լինի: Գյուղ զանգեմ, ի՞նչ ասեմ... Ավելի հիմար վիճակում չեմ եղել: (*Սենյակից գնում, նոթատետրը թերթելով վերադառնում է:*) Արևիկ, Արևիկ, Արևիկ... գտա: (*Հավաքում է համարը:*) Արևիկ, դո՞ւ ես... Արամն է, Նունեի ամուսինը: Կներես, այս ժամին անհանգստացնում եմ, Նունեն մինչև հիմա չի եկել, մտածեցի, գուցե քեզ ասած լինի՝ ուր է: Չէ... Ջանգում եմ, հեռախոսը չի պատասխանում: Ներիր, խնդրում եմ, բարի գիշեր: (*Դադար:*) Իզուր էլ զանգեցի, զուր տեղը անհանգստացրի: Անընդհատ վատն եմ

մտածում... Տագնապի ոտնաձայները... գլխիս մեջ: Ոտնաձայները չէ, դոփյունները... (Քարանում է անսպասելի մտքից:) Հավատալու չի... Հավատալու չի, թե՛ չեմ ուզում հավատալ՝ խմիչքի նկատմամբ անսպասելի սերը, անտարբերությունը... Ծուտ պիտի մտածեի: Չեմ էլ կասկածել... Վերջին շրջանի վարքը... չէ, հնարավոր չի: (Շոշափում է գլուխը:) Կոտոշներս ո՞ր են: Նունեն և ուրիշ տղամարդ... Ինչո՞ւ հնարավոր չի, ինքն էլ չուզենա, իրեն կկանեն: Երկուսի գլուխն էլ կջարդեմ... Ծատ չոգևորվեմ, առայժմ ենթադրություն է: Բայց եթե պարզվի, ինչ էլ ասելու: Երևի ասելու բան չունի, որ չքվել է: Նունեն՝ ու գիշերը տուն չգա: Աշխարհը չի կարող այսքան այլանդակվել, հո աշխարհի վերջը չի: Իմ անելիքը չգիտեմ: Չէ, գիտեմ, Ռուսաստանը կփրկի: Կփրկի՞ որ... (Ձանգում է:) Չկա, չի պատասխանում կամ չի ուզում պատասխանել, անջատել է: Մնում է, ես անջատվեմ: Էս տնից, Նունեից, քաղաքից, Ռուսաստանից, էս անիմաստությունից: (Պատուհանից դուրս է նայում:) Ձյունը որտեղից... Մարտը վերջանում է ու ձյուն... (Արտասանում է:)

*Եվ ձյունն իջնում է, ձյունն իջնում է,
Այտերիս վրայով օրերիս վրա,
Թվում է՝ ցավը նահանջում է*

*Ու ցավն էլ ձերմակ կդառնա հիմա:
Իսկ ձյունն իջնում է, ձյունն իջնում է,
Ցավի անունը մոռացել եմ,
Տեսնես կա մեկը, որ ինձ հիշում է,
Թեկուզ և վաղուց հեռացել եմ...*

Դրսից աղմուկ է լսվում: Մարդկանց խումբը բղավում է՝ արդարություն, արդարություն: Բացում է պատուհանը, նայում է դուրս:

ԱՐԱՄ - Հիմա ամենաշատ արդարությունը ինձ է պետք, միայն չգիտեմ որտեղ փնտրել: Հեյ, գոնե տեղը գիտե՞ք, թե՛ կանչում եք, որ ինքը ձեզ գտնի: (Դուրս է գալիս:)

ՊԱՏԿԵՐ ՅՈԹԵՐՈՐԿ

Նույն բնակարանը: Գալիս է Արամը, ինչ-որ բան է փնտրում:

ԱՐԱՄ - Դատարկություն է, գիշերվանից հետո շենքերը երևում են, ծառերը երևում են, Նունեն չի երևում, փողոցում էլ չերևաց, չնայած անընդհատ փնտրում էի: Տանն էլ չկա: Անտանելի է, որ քեզ չհարցնելով հավատոյ ձնագնդու պես հալչում է և զգում ես, ինչպես է հալոցքը լցվում աչքերիդ մեջ: Մի՞թե արտասովելը տղամարդու՝ սեփական պարտությունն ընդունելու առաջին նշանը չէ: Ո՞վ կմտածեր, որ կորցնելն այսքան ցավալի է: Երևի նրանից է, որ էլ կորցնելու ոչինչ չունեմ: Երբ իրականությամբ

վրա ոչ թե դու, այլ նա է իշխում, ստացվում է, որ դու էլ դու չես և մեկ ուրիշն է փորձում քո հարցերի պատասխանները գտնել: Անորոշությունը խելագարացնում է: Լուսնե, Լուսնե... Լուսնեից ավելի իմ մեղքն է, ի՞նչ արեցի, որ չհեռանա: Երևի ինչպես ամեն ինչի շատը, վստահության շատն էլ է վնասակար: Իսկ հավատի շատը... Ասում են, հավատը շատ չի լինում, պարզվում է՝ իմը շատ էր: Գուցե իսկապես շատ չէր, գուցե... Պետք չէ, հնարավոր է... Միայն նրան ոչինչ եղած չլինի: Միայն եղած չլինի: *(Հեռախոսագանգ:)* Ինքն է, ո՞նց է արդարանալու: *(Տայում է հեռախոսի էկրանին:)* Ինքը չի: Հիմա ամենաշատը մորս հետ չէի ուզի խոսել: Ալո, մամ... ինչո՞ւ ես լալիս, ի՞նչ է եղել... Բեռնի, ի՞նչ... ավտովթար... Ո՞նց կոմայի մեջ է, չլինելու բան է, մամ, մի քանի օր առաջ եմ հետը խոսել: Երեկ երեկոյան... Հանգստացիր, մամ, քեռին պարտավորներից չի... Ինչո՞ւ անջատեց... երևի չկարողացավ շարունակել: Բեռնի իմ վերջին բաց դռն էր: Անհաջողությունների պարանը սեղմում է կոկորդոս: Լուսնն չպիտի դավաճաներ, Լուսնն իմ թալիսմանն էր, թալիսմանը կորցնելը վատ նշան է: Մեղավորը միշտ էլ կորցնողն է, այլ ոչ, ինչը կորցրել ես: *(Մոտենում է պատուհանին:)*

Ծենքերն իրենց տեղում են, ծառերը՝ նույնպես, բանջարեղեն վաճառող կինը անցորդների կանչում է իրենից առևտուր անելու: Երեխաների ձիչն ու ծիծաղը շարունակվում է, կարծես ոչինչ չի եղել: Ո՞նց չի եղել, եղել է, չէք տեսնում կամ չէք ուզում տեսնել: Ախր, բոլորիդ դեմքին նույն նշանն է՝ պարտության նշանը, եթե ուրիշի ցավը ձերը չէ: Դատարկ դուրս եմ տալիս, կարծես նրանցից մեկն էլ ես չեմ: *(Մոտենում է սենյակի դռանը:)* Միակ բաց դուռը, որը ոչ մի տեղ չի տանում, այս դռնով դուրս եկողը վերադառնում է անիմաստության բեռը ուսերին: Հիմա ի՞նչ եմ անելու կամ ի՞նչ եմ ուզում անել: Լուսնն իմ դիմաց փակեց դուռը, քեռին էլ: Իմացմն, որ իմ վերջին բաց դռներն էին: *(Մոտենում է պատուհանին:)* Հեյ, ձեզանից մեկը կասի՞, երբ բաց դուռ չկա, ինչ անել: Լռում եք: Չգիտե՞ք, թե՞ լռելն ավելի ապահով է: Չեք էլ գիտակցում, որ եթե մեկի համար վատ է, ապահովությունը մի օր էլ ձեզանից է խռովելու: Երևի, երբ բոլոր դռները փակ գտնեք, կհասկանաք, միայն ուշ չլինի: Վերջը միշտ էլ տխուր է և կարևոր չէ՝ ինչի վերջը: *(Սեղանը քաշելով բերում է ջահի տակ, բարձրանում է սեղանին, ստուգում է ամրությունը:)* Պինդ է, կդիմանա, թեև անի-

մաստությունը կյանք ասվածից ծանր է: *(Իջնում է սեղանից:)* Ինքս ինձ համար դուռ կբացեմ, աշխարհի ամենամեծ դուռը: Կբացեմ: *(Գնում, վերադառնում է պարանը ձեռքին:)* Սա ինձ կօգնի: *(Բարձրանում է սեղանին, պարանի մի ծայրը կապում է ջահից, սեղանը քաշում է նախկին տեղը, աթոռն է դնում ջահի տակ: Փորձում է պարանի մյուս ծայրով օղակ սարքել: Վերջապես հաջողում է: Մոտենում է պատուհանին:)* Գտա իմ դուռը, որով միայն ես կարող եմ մտնել ու դուրս գալ: Ձերը չի՝ իմն է, միայն իմը: Թե ինչու այդպես էլ ինձ չսիրեցիք... *(Կանգնում է աթոռին, պատրաստվում է օղակը պարանոցին իջեցնել:)* Ինձ կներես, մայրիկ...

Ներս է մտնում Նուսեն: Մի կողմ է նետում պայուսակն ու ճչալով վազում է դեպի Արամը: **Ձեռքից բռնելով իջեցնում է աթոռից, հարվածներ հասցում նրա կրծքին:**

ՆՈՒՆԵ - Հիմար, գիժ, հիմար, գիժ...

ԱՐԱՄ - Չդիպչեն:

ՆՈՒՆԵ - Գիժ...

ԱՐԱՄ - Ծարունակեցիր, իսկապես կգժվեմ:

ՆՈՒՆԵ - Խելքիդ ինչ է փչել:

ԱՐԱՄ - Օղակը քո պարանոցին պիտի լիներ:

ՆՈՒՆԵ - Կոպտելը քո խաչը չէ:

ԱՐԱՄ - Չէ՞ որ գլխիս կոտոշներ ես

դրել: Հարբում ես, գիշերով չգիտեմ ում հետ ու որտեղ ես քարշ գալիս ու դեռ ուզում ես՝ սիրալիր լինեմ: Ո՞ր էիր:

ՆՈՒՆԵ - Կոտոշներ... որտեղից հնարեցիր:

ԱՐԱՄ - Խոսքը կտուրը մի գցիր:

ՆՈՒՆԵ - Գլուխդ շփիր, համոզվելու համար, որ կոտոշներ չկան:

ԱՐԱՄ - *(ձեռքը գլխին է տանում, շփոթված իջեցնում է):* Ո՞ր էիր: Ընկերուհիներիդ անունը չտաս, նրանց տանն էլ չես եղել:

ՆՈՒՆԵ - Ինչո՞ւ էիր գժվել:

ԱՐԱՄ - Հրեշտակ չձևանաս, թևերդ չկան: Ո՞ւմ մոտ ես թողել: Թե՛ հիմա անթև հրեշտակները մողայիկ են:

ՆՈՒՆԵ - Կախվելը մողայիկ չէ:

ԱՐԱՄ - Բարոյականությունն էլ է մողայից դուրս:

ՆՈՒՆԵ - Ինչո՞ւ էիր գժվել:

ԱՐԱՄ - Կասեմ, եթե ասես՝ ուր էիր: Տանը չես գիշերել, երկնքում չես եղել, որտեղ ես քնել: Հեռախոսդ ինչո՞ւ էիր անջատել, ինչո՞ւ չէիր զգուշացրել, սրձարանից ինչո՞ւ էիր շուտ դուրս եկել... Լիքը ինչուներ, ամեն մեկը նետի պես սուր:

ՆՈՒՆԵ - Օհո՞... վիրավորված տղամարդը բացատրություն է պահանջում: Հետո ինչ, որ սրձարանից շուտ եմ դուրս եկել ու չեմ վերադարձել: Գոնե հիշեիր, որ երեկ հորս մահվան քառասուներորդ օրն էր, պայմանավորվել էինք միասին գյուղ գնալ:

ԱՐԱՄ - Մոռացել էի, զգուշացնելի:

ՆՈՒՆԵ - «Զգուշացնելի»... Թե՛ն էլի զբաղված էիր սեղանի շուրջը պտտվելով, որ մոռացել էիր: Ինձ ես մոռացել, ինձ... Վիրավորվել էի ու մենակ գնացի: Գյուղում էլ հազար սուտ հորինեցի, թե ինչու եմ մենակ: Հեռախոսն անջատել էի, որ ծայնդ չլսեմ: Երեկոյան վերադառնալու էի ու չէիր էլ իմանա, որ գնացել եմ: Ձեր տանն էի, երբ մայրդ իմացավ, որ քեռիդ կոմայի մեջ է: Այդ վիճակում չէի կարող նրան մենակ թողնել:

ԱՐԱՄ - (*քիչ խաղաղված*): Իմ վիճակը պատկերացրու՝ չկաս ու չկաս: Ոչ մեկից ոչ մի տեղեկություն: Բեռու ավտովթարի լուրից ավելի ընկճվեցի, ուղեղս սառույցով լցվեց, չգիտեի՝ ինքս իմ հուսահատությունից ոնց ազատվել: Չէի հասցրել քեզ ասել, որ քեռու հետ պայմանավորվել էի, նրա մոտ էի գնալու: Պարզվեց, կյանք ասվածն ընդամենը բաժակ է և իմ բաժակը դատարկվել, ընկել ու փշրվել է: Հետո փակվող դռների ձայներից ականջներս խցանվե-

ցին: Բաց դուռ էի փնտրում ու չգտա:

ՆՈՒՆԵ - Ու որոշեցիր դուռն այս օղակով փոխարինել: Չէիր վախենում, որ կոտոշներդ կխանգարեն: Ռուսաստան էիր գնում առանց ինձ, օղակի միջով՝ առանց ինձ: Թե՛ն վիրավորանքը ներսիցդ ջնջել էր Նունեին, նույնիսկ հիշողությունը նրա մասին: Այսպես չի կարող շարունակվել: Չգիտեմ դու ոնց, ես վերադառնում եմ: Ուսուցչուհիներից մեկը ծննդաբերելու է, խնդրեցին նրան փոխարինել: Հուսով եմ, էլ չես գժվի:

ԱՐԱՄ - Նունե...

ՆՈՒՆԵ - Որոշես վերադառնալ, քեզ համար էլ գործ կձարվի:

ԱՐԱՄ - Նունե...

ՆՈՒՆԵ - Ինքդ որոշիր:

ԱՐԱՄ - Ոնց որ նորից գտա քեզ:

ՆՈՒՆԵ - Չէ, տեղս իմացար: Հասնելու համար ծանապարհ ունես անցնելու: (*Ուզում է գնալ:*)

ԱՐԱՄ - Ո՛ր:

ՆՈՒՆԵ - Իրերս հավաքելու:

ԱՐԱՄ - Իմ իրերը չմոռանաս: (*Հետևում է Նունեին:*)

Բեմն աստիճանաբար մթնում է:

*ՁԱՅՆ - Եվ ձյունն իջնում է, ձյունն իջնում է,
Այտերիս վրայով օրերիս վրա,
Թվում է՝ ցավը նահանջում է,
Ու ցավն էլ ծերմակ կդառնա հիմա...*



Արշակ ՍԵՄԻՐՋՅԱՆ

Վաղ թե ուշ, մեզանից յուրաքանչյուրը պատասխան է տալու իր արածների համար: Երկնային թագավորությունում, ուրիշի կյանքի և դժբախտության հաշվին կուտակած միլիոնները ոչ մի արժեք չեն ներկայացնում և դժվար թե աջ ու ձախ կաշառք բաժանելով կարողանան դրախտի սպառնով դարպասները բացել: Երանի թե մարդ արարածը վերջապես հասկանա իրական կյանքի արժեքները և գնահատի դրանք:

Հայ ազգի դեմքն իր պետությունն է, իր բանակն ու ու զինվորները: Նրանք մեր հպարտությունն են, բայց շատ անգամ նրանց կյանքի հաշվին են շատերը «Դանայան տակառ» դարձած երախներով փորձում հարստանալ՝ 21-րդ դարի զինվորներին սահմանի բերան կանգնեցնելով 1980-90-ական թթ. զենքերով: Իսկ հետո կոկորդիլոսի արցունք թափելով սգում են տղաների մահը, մոռանալով, որ շատ անգամ հերոսի մահվան պատճառ են դարձել փողի հանդեպ անհազ մոլուցք ունեցող երախները:

Ինչևէ... Թող յուրաքանչյուրը իրեն գտնի և իր մեղքի բաժինը որոնի պիեստում: Իզուր չէ, որ դարպասները բացվեցին: Թող հիշեն, որ մի գեղեցիկ ու արևոտ օր էլ այս նույն դարպասները բացվելու են իրենց համար:

ԳԱՐՊԱՄՆԵՐԸ ԲԱՑՎՈՒՄ ԵՆ

(Տրագիկոմեդիա (ֆանրագիա) 2 գործողությամբ)

Գործող անձինք

ԵՐՋԱՆԻԿ - պատգամավոր

ՆՈՒՆՈՒՖԱՐ - դժոխքի քարտուղարուհի

ՍԱՄՍՈՆ - դժոխքի պահակ

ԳԱԼՈՒՍՏ - մարդու իրավունքների պաշտպան

ԱՆԵՏԱ - սփյուռքահայ

ՀԱՄԵՍՏ - անհամեստ կին

ԳԱԲԻԵԼ - հրեշտակ

ՄՈՍՈ - սատանա

ԱԹԱԲԵԿ - քահանա

ՊԱՅԾԱՌ - Երջանիկի մայրը

ԱԶԱՏ - ազատամարտիկ, հաշմանդամ

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Գրախոս-դժոխք ճանփարածին: Աջ կողմում գտնվում են դրախտի դարպասները, որի շուրջը գերակշռում է սպիտակ լույսը: Չախ կողմում դժոխքի դարպասներն են՝ կարմիր լույսի գերակշռությամբ, մեջտեղում դուռ է՝ «Ընդունող հանձնաժողով» ցուցանակով: Բեմի երկու կողմերում՝ մեկական նստարան: Կենտրոնական մասում սեղան, աթոռներ: Մեղանի մոտ նստած է Նունուֆարը՝ կարճ, գրավիչ, կարմիր ու փայլվիլուն շրջագգեստով, գլխին ծաղիկներից հյուսված պսակ է: Նա կարդում է փաստաթղթերը, գրում-ջնջում է: Աջ նստարանին քնած է Երջանիկը՝ կիսավարտիքով և հողաքափերով: Չախ նստարանին ննջում է Գալուստը՝ էլեգանտ հագուկապով: Երջանիկը խռոսցնում է, Նունուֆարը հայացքով խեթում է, շարունակում է իր գործը: Չանգում է Նունուֆարի բջջայինը:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - «Մեղքերի թողություն» ՓԲԸ ընդունող հանձնաժողով, օրիորդ Նունուֆարը լսում է: Վերջապես զանգեցիր... *(Բարձր ծիծաղում է:)*

ԵՐՋԱՆԻԿ - *(կիսաարթուն):* Կարո՞ղ եք մի քիչ կամաց ծիծաղել, չե՞ք տեսնում, քնած մարդ կա:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - *(հեռախոսով):* Ես հիմա ծիծաղից կմեռնեմ...

ԵՐՋԱՆԻԿ - Ձեզ հետ չեմ, ասում եմ, մի քիչ կամաց:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - *(Երջանիկին):* Ավելի լավ է լռե՞ք: *(Հեռախոսով):* Գազը վերջացել է՝ բենզին բեր, թե չէ դրանք շատ են աշխուժացել, պիտի վերջապես խելքները գլուխները գամ, թե՛ չէ... Դու բեր, բեր, Սամսոն պապին դրանց հարցերը կլուծի:

ԳԱԼՈՒՍ - Լսեք, այ ընկերուհի, չե՞ք հասկանում, որ խանգարում եք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Իբր էն մեկը քիչ էր, հիմա էլ՝ սա: Չեք տեսնում՝ աշխատում եմ:

ԳԱԼՈՒՍ - Աշխատեք, բայց ձեր հաշվին, ոչ թե ուրիշների:

ԵՐՋԱՆԻԿ - Էս մարդը ծիշտ է ասում:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - *(հեռախոսով):* Արտոջան, էս նորեկներն արդեն զզվացրին, սպասիր տեսնեմ՝ ինչ են ուզում: Չանջատես, էստեղ կապը լավ չի բռնում: *(Բջջայինը կողքի է դնում:)* Պարոնայք, չլինի՞ մտածում եք, թե հինգաստղանի հյուրանոցի լյուքս համարում եք, որ դեռ հրամաններ եք տալիս:

ԵՐՋԱՆԻԿ - Կթողնե՞ք հանգստանանք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Հանգստանալու էնքան ժամանակ կունենաք: Չնայած շատ մեծ հարց է՝ կհանգստանա՞ք, թե՛ կանհանգստանաք:

ԵՐՋԱՆԻԿ - Էս կնիկը լրիվ ցնդել է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Նախ՝ օրիորդ: Եվ հետո, չփորձե՞ք վիրավորել:

ԳԱԼՈՒՍ - Ես կբողոքեմ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ո՞ւմ:

ԳԱԼՈՒՍ - Նախարարությանը:

Դուք իրավունք չունեք ոտնահարել քաղաքացիների իրավունքները: Ես ինքս պաշտպանում եմ նրանց և հիմա դո՞ք փորձում եք բռնանալ ինձ վրա:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Մի՞ բոպե, մի՞ բոպե...

(Թղթերին նայելով): Գալուստ Փառամոյան: Մարդու իրավունքների պաշտպան: Ամեն բան ձիշտ է:

ԳԱԼՈՒՍ - Դե, որ ձիշտ է, իմացեք, թե ինչպես պետք է խոսել օրենքի մարդու հետ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ձեր օրենքներն էստեղ չեն անցնում: Էստեղ մենք ենք օրենքներ որոշում:

ԳԱԼՈՒՍ - Բայց դուք ո՞վ եք:

ԵՐՋԱՆԻԿ - Ես ձեր կազմակերպության հարցը Ազգային ժողովում կբարձրացնեմ: Երևի լավ չեք ճանաչում պատգամավոր Երջանիկ ձիվաղյանին:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Մեր դարպասներից ներս մեզ ահաբեկում եք:

ԵՐՋԱՆԻԿ - Ձեր դարպասները մեր դարպասների շարունակությունն են:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Հանգստացեք, որ քիչ հետո անհանգստանաք:

ԳԱԼՈՒՍ - Ինչ է ասում, ոչինչ չեմ հասկանում:

ԵՐՋԱՆԻԿ - Սրանց նմաններին մեզ նմանները պիտի անհանգստացնեն:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - (*հեռախոսով*): Արտոջան, բենզինը կրկնակի կբերես, ավելի լավ վառենք, որ խելքները գլուխները գա: (*Անջատում է բջջայինը:*)

ԳԱԼՈՒՍ - Բույրիկ ջան, չլինի՞ նոր մոլորակ եք ստեղծել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Սա հավերժության մոլորակն է:

ԵՐՋԱՆԻԿ - Ասում էի, չէ՞, էս կնիկը լրիվ ցնդել է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - (*խիստ*): Արդեն ասացի՝ օրիորդ:

ԵՐՋԱՆԻԿ - Թող լինի օրիորդ: (*Դադար:*) Այ՛ մարդ, էս ո՞ր եմ ընկել: Հերիք չէ սա, ընդունարանում էլ էն բիձեն կյանքս կերավ... (*հրեն ցույց տալով*), ինչ ունեի-չունեի՝ հանեց վրայիցս:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Դա Սամսոն պապիկի աշխատանքն է:

ԵՐՋԱՆԻԿ - Իսկ իրավունքների պաշտպանն ինչո՞ւ չի հանվել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ճիշտ է ասում: (*Գալուստին*.) Պարոն Փառամոլյան, ինչ կասեք:

ԳԱԼՈՒՍ - Ձեր ասած Սամսոն պապիկը ոտքից գլուխ մի լավ չափեց, հասկացավ, որ անվտանգ մարդ եմ ու ասաց, որ էսպես էլ կարող եմ մտնել ներս:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ուրեմն ձեզանից վտանգ չի զգացել: (*Երջանիկին*.)

Ինչը չեմ կարող ասել ձեր մասին, պարոն Ճիվաղյան:

ԵՐՋԱՆԻԿ - Բայց ես պատգամավոր եմ, ես ներկայացնում եմ օրենքը:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ուրեմն այնքան էլ լավ չեք ներկայացնում, որ կասկածներ եք առաջացրել: (*Ձննում է Երջանիկին: Փայտով:*) Բայց էսպես էլ վատ չէ, ինձ պատգամավորական հրապուրանք եք ներշնչում:

ԵՐՋԱՆԻԿ - (*շոյված*): Բա որ ինձ ջահել ժամանակ տեսնեիք... Բոլոր աղջիկների սպիտակ ձիով ասպետն էի:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - (*նայելով կիսամերկ Երջանիկին*): Երևում է... Երևում է...

ԳԱԼՈՒՍ - Կարո՞ղ եք ձեր սիլիբիլին ուրիշ վայրում անել: (*Մեկուսի:*) Էստեղ ոչ կարգ կա, ոչ էլ կանոն:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ինչո՞ւ եք բողոքում:

ԳԱԼՈՒՍ - Եթե պարզաբանեք, չենք բողոքի:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Չանեիք՝ չգայիք:

ԳԱԼՈՒՍ - Ինչ չանեիք:

ԵՐՋԱՆԻԿ - Ո՞ր չգայինք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ուր որ եկել եք: Կարծում էիք, կարմիր գորգ պիտի փռեինք ու շամպայնով դիմավորեինք ձեզ:

ՁԱՅՆ - (*լավում է դժոխքի դարպասներից*): Վայ, մամա ջան... Վախ, վախ, վախ...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Խնդրեմ... Սա էլ մեր լյուքս հյուրանոցի համարն է:

ԳԱԼՈՒՍ - *(վախով)*: Սա ի՞նչ է նշանակում:

ԵՐՋԱՆԻԿ - *(անհանգիստ)*: Ո՛վ է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Մեր հավերժական հյուրանոցի հավերժական բնակիչը:

ԵՐՋԱՆԻԿ - Այս անօրինության հարցը անպայման կբարձրացնեմ Ազգային ժողովում: *(Ուզում է մտենալ դժոխքի դարպասներին:)*

Այդ պահին այնտեղից դուրս է գալիս Սամսոնը՝ արյունոտ շորերով, կացինով և շիկացած շամփուրով: **Երջանիկն ու Գալուստը գոռալով ետ են քաշվում:**

ՍԱՄՍՈՆ - Նունիկ ջան, էդ առաքիչն ինչ եղավ: Բերում է, թե՛ չէ...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Բիչ առաջ զանգեցի, Սամսոն պապի: Կրկնակի եմ պատվիրել:

ՍԱՄՍՈՆ - Ծատ լավ ես արել, թե՛ չէ դրանք շատ ոգևորվեցին:

ԳԱԼՈՒՍ - Ներեցեք, իհարկե, Սամսոն պապի, բայց այդ ի՞նչ եք անում:

ԵՐՋԱՆԻԿ - Ես էլ կուզեմ իմանալ:

ՍԱՄՍՈՆ - Դաստիարակչական աշխատանք եմ կատարում:

ԵՐՋԱՆԻԿ - Մեզ ծաղրում եք: Պարոն Գալուստ, վեր կացեք, գնանք էս մանկապարտեզից:

ԳԱԼՈՒՍ - Ես դատի կտամ ձեր կազմակերպությանը:

ԵՐՋԱՆԻԿ - Ծորերս էլ տվեք: Թե՛ մտածում եք, թանկանոց կոստ-

յումս ձեզ նվեր եմ տվել: Մի հատ ինձ նայեք, հետո էլ՝ ձեզ:

ՍԱՄՍՈՆ - *(ծիծաղելով)*: Տեսնում եմ, տեսնում եմ, պատգամավոր ջան:

ԵՐՋԱՆԻԿ - Պարոն Գալուստ, գնացինք:

ԳԱԼՈՒՍ - Ես էստեղ մեկ րոպե ավել չեմ մնա:

Երջանիկն ու Գալուստն ուզում են գնալ: Սամսոնը կանգնում է նրանց դիմաց:

ՍԱՄՍՈՆ - Էդ ո՞ր...

ԳԱԼՈՒՍ - Ձեր կազմակերպության փակման ծրագիրը կնքելու:

ՍԱՄՍՈՆ - Մեր մոտից դեռ ոչ ոք չի վերադարձել:

ԵՐՋԱՆԻԿ - Իմ սահմանած օրենքները դեռ ոչ ոք չի խախտել:

ՍԱՄՍՈՆ - Նունիկ ջան, սրանց խելք սովորեցրո: *(Գնում է «Ընդունող հանձնաժողով» դռնով:)*

ԳԱԼՈՒՍ - Սպասեք, ո՞ր եք գնում:

ԵՐՋԱՆԻԿ - Ա՛յ մարդ, բա շորե՞րս: *(Հարվածելով փակ դռանը:)* Դուք պարտավոր եք հարգել ինձ նման մարդուն, ես ներկայացնում եմ օրենքը:

ԳԱԼՈՒՍ - Ես էլ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ձեր օրենքները մեր հոգիների աշխարհում ոչ մի նշանակություն չունեն:

ԵՐՋԱՆԻԿ - Ի՞նչ հոգիներ:

ԳԱԼՈՒՍ - Գուցե ավելի պարզ բացատրեք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ի՞նչ կա չհասկանալու, շուտով պետք է որոշվի ձեր

հետագա ճակատագիրը հանդերձյալ աշխարհում:

ԳԱԼՈՒՍ - Ի՞նչ հանդերձյալ աշխարհ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Այս:

ԵՐՋԱՆԻԿ - (*սարսափած*): Ուզում եք ասել, որ մե՞նք...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Չէի ուզում ասել... Արդեն ասացի:

ԵՐՋԱՆԻԿ - (*հրեն շոշափելով*): Ուրեմն մե՞նք...

ԳԱԼՈՒՍ - (*հրեն շեշափելով*): Ես չեմ հավատում:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Լսեք, դուք մեռել եք, չգիտե՞ք:

ԵՐՋԱՆԻԿ և **ԳԱԼՈՒՍ** - Ո՞նց թե մեռել ենք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Մեռնելն էլ ո՞նց է լինում... Վերջին շունչը փչել եք, ու վերջ:

ԵՐՋԱՆԻԿ և **ԳԱԼՈՒՍ** - Բայց ե՞րբ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Դուք մեռել եք, ի՞նձ եք հարցնում:

ԵՐՋԱՆԻԿ - Բայց ինչի՞ց:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Հիմա ասեմ... (*Նայում է թղթերին*.) Պարոն ճիվաղյան, դուք մահացել եք թմրադեղի չարաշահումից:

Երջանիկը գլուխը բռնած նստում է:

ԳԱԼՈՒՍ - Իսկ ե՞ս, քույրիկ ջան:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - (*նայելով թղթերին*): Կաշառք վերցնելու պահին էնքան էիք ուրախացել դուլարները տեսնելով, որ հանկարծամահ եք եղել: Փաստորեն ուրախությունից էլ են մեռնում:

Գալուստը գլուխը բռնած նստում է:

ԵՐՋԱՆԻԿ - Նունուֆար ջան...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Հա ջան:

ԳԱԼՈՒՍ - Քույրիկ ջան...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Վայ, ի՞նչ:

ԵՐՋԱՆԻԿ և **ԳԱԼՈՒՍ** - Բա հիմա ի՞նչ պիտի անենք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Պիտի սպասեք:

ԵՐՋԱՆԻԿ և **ԳԱԼՈՒՍ** - Ինչի՞ն:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Երկնային դատաստանին:

ԵՐՋԱՆԻԿ - Դա ի՞նչ է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - (*ցույց տալով դարպասները*): Ա՞՞ջ, թե՛ ծախ:

ԵՐՋԱՆԻԿ և **ԳԱԼՈՒՍ** - Չէ...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Լռե՛ք: Չի կարելի մյուս ննջեցյալներին խանգարել:

ԵՐՋԱՆԻԿ - Ուրեմն վե՞րջ...

ԳԱԼՈՒՍ - Վե՞րջ ամեն ինչին...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Վե՞րջ:

ԵՐՋԱՆԻԿ - Իսկ փողե՞րս, հյուրանոցնե՞րս, բիզնեսնե՞րս...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Էդ մասին կարող եք չմտածել, դրանք ձեզ պետք չեն:

ԵՐՋԱՆԻԿ - Ո՞նց թե՛ պետք չեն, այցավդ տանեմ: Ամբողջ կյանքում աշխատեմ, տուն-տեղ դնեմ, որ հիմա էլ ասեք՝ պետք չեն:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ձեր մշտական տունն արդեն սա է:

ԵՐՋԱՆԻԿ - Էս աղբանոցը:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ձեր ասած աղբանոցում բոլորը հավասար են: Ինչպես դուք, էնպես էլ՝ մյուսները:

ԵՐՋԱՆԻԿ - Էն բիձեն է՛լ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Նա ձեզանից բարձր է:

ԵՐՋԱՆԻԿ - Այ՛ մարդ, չեմ հասկանում, էս ի՛նչ օրենքներ են, որ բոլորը հավասար են: Դուք ի՛նչ կասեք, Գալուստ եղբայր: Ինչի՛ մասին եք մտածում:

ԳԱԼՈՒՍՏ - Մտածում եմ, թե ինչ պիտի անեմ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Արդեն ասացի... Պիտի սպասեք:

ԳԱԼՈՒՍՏ - Զուրիկ ջան, կարո՞ղ եմ կես ժամով գնալ էն աշխարհ, մտնեմ տուն, կնոջս ու երեխաներիս հրաժեշտ տամ, ասեմ, որ մեռել եմ ու գամ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Լսեք, այ իրավունքների պաշտպան, էնտեղ հերիք չէր, հիմա էլ էստեղ եք ուզում ձեր իրավունքները խախտել: Սա ձեզ համար երկրային կյանքը չէ:

ԳԱԼՈՒՍՏ - Ախր, շատ կտխրեն, որ իմանան:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Նրանք գիտեն, որ մահացել եք, ձեզ արդեն առոքփառոք թաղել են:

ԳԱԼՈՒՍՏ - Իսկ կարո՞ղ եք ասել, շատ են լացել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Չգիտեմ, արտասովորներն անկեղծ էին թե ոչ, բայց նրանց պակասը չեք ունեցել:

ԳԱԼՈՒՍՏ - Ինչ լավ է...

ԵՐՋԱՆԻԿ - (*խանդով*): Իսկ ինձ ո՞նց են թաղել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ձեզ՝ ավելի փառահեղ: Բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները եկել էին ձեր թաղմանը:

ԵՐՋԱՆԻԿ - Էդ էր պակաս, որ չգային:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Մի քանիսն էլ թաքուն ծիծաղում էին:

Գալուստը քնծիծաղում է:

ԵՐՋԱՆԻԿ - (*ջղային*): Ո՞նց թե՛ ծիծաղում էին: Ովքեր...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - (*թղթերին նայելով*):

Նրանք դեռ չեն մահացել, նրանց անուններն էստեղ գրված չեն: (*Փրփրած երջանիկին*;) Լավ, լավ, էդքան մի անհանգստացեք:

ԵՐՋԱՆԻԿ - Ախր, ո՞նց չանհանգստանամ: Հաստատ իմ ենթականերից կլինեին: Մինչև մեռնելս ինձանից շան պես վախենում էին, եթե ասեի, որ գլուխները պատին խփեին՝ կխփեին: Իսկ դուք ասում եք՝ ծիծաղում էին:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Դուք ձեզ պիտի լավ զգաք, պարոն ճիվաղյան:

ԵՐՋԱՆԻԿ - Էսքանից հետո ո՞նց ինձ լավ զգամ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Պիտի լավ զգաք, որ շատերը կերազեին ձեզ նման թաղում ունենալ: Ես պարզապես ապշած եմ:

ԵՐՋԱՆԻԿ - Ինչի՛ց:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ձեր դագաղի բռնակները ոսկուց էին:

ԵՐՋԱՆԻԿ - (*երջանիկ*): Բա հիմա էդ ոսկին ո՞ր է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Որդերն ուտում են:

ԵՐՋԱՆԻԿ - Ո՞նց թե... Ուրեմն ես հալալ քրտինքով աշխատեմ, որ վերջում ամեն ինչ որդերի բաժին դառնա:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Արդար քրտինքով

աշխատածը երբեք որդերի բաժին չի դառնում:

ԳԱԼՈՒՍՏ - *(աղերսագին):* Նունուֆար քույրիկ...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - *(կտրուկ):* Արդեն ասացի՞ ո՛չ:

ԵՐՋԱՆԻԿ - Ա՛յ ցավդ տանեմ, թողեք, էս մարդը գնա ու ետ գա: Հո չփախամվ...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Դուք իրավունք չունեք էս ծամփաբաժնից բացակայելու, էստեղ պիտի սպասեք, մինչև պարզ դառնա ձեր ձակատագիրը:

ԵՐՋԱՆԻԿ - Եթե փող է պետք, միայն ասեք՝ ինչքան: Թողեք, էս մարդը գնա, գա, էլի, հո դահիճ չեք: *(Ձեռքը ուզում է տանել գրպանը: Հիշում է, որ կիսամերկ է:)* Փողերս էլ մնացին էդ բիծու մոտ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Անիմաստ է ձեզ ինչոր բան բացատրելը:

«Ընդունող հանձնաժողով» դռան ետևից աղմուկ է լսվում:

ՍԱՄՍՈՆ - Ա՛յ կնիկ, հանվիր:

ԱՆԵՏԱ - Ասիկա ի՛նչ բռնություն է: Բաց թողեք ինձի...

ԳԱԼՈՒՍՏ - Ի՛նչ է կատարվում:

ԵՐՋԱՆԻԿ - Էս ո՞վ է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - *(թղթերին նայելով):* Մեր լյուքս հյուրանոցի նոր հաձախորդը:

ՍԱՄՍՈՆ - Լամվ է, շատ լավ է...

ԱՆԵՏԱ - Ձեռքերդ քեզի քաշե՛, այլանդակին մեկը: Օգնեցե՛ք...

ԵՐՋԱՆԻԿ - Զույրիկ ջան, սպասիր,

գամ օգնեմ: *(Ուզում է մոտենալ դռանը:)*

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Էդ ո՞ր, պարոն պատգամավոր, չի՞ կարելի:

«Ընդունող հանձնաժողով» դռնից շնչակտուր ներս է վազում Անետան՝ նորաոճ հագուկապով, ետևից՝ Սամսոնը:

ՍԱՄՍՈՆ - Ա՛յ կնիկ, հորդ տանը չես:

ԱՆԵՏԱ - Կուզեիր շորերս պատռելիր, որ մարավ կուրծքս տեսնեիր: Ամուսնյակիս կըսեմ, գլուխդ կջարդե, անպատկա՛ն: *(Ապտակում է:)*

ՍԱՄՍՈՆ - Ա՛յն...

ԱՆԵՏԱ - Չահուամա՛ն քեզի:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Տիկին, ձեզ կարգի հրավիրեք:

ԱՆԵՏԱ - Դուն ո՞վ ես, այ ներկված ծաղրածու: *(Ցույց տալով Սամսոնին:)* Ինքը անբարոյականությունը կընե, ինձի կըսե՛ք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Սամսոն պապին իր գործն է անում:

ԱՆԵՏԱ - Կտեսնիմ, թե ինչպես կընե: *(Դադար:)* Բեյրութը թողել եմ, եկել Հայաստան, ընկել եմ աս վայրենիներուն ձեռքը: *(Չայնե-լով:)* Դերենիկ...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Սա ձեր Բեյրութը չէ, մի քիչ կամաց: Դուք իրավունք չունեք խանգարելու ննջեցյալների հանգիստը:

ԱՆԵՏԱ - Դերենիկը հո՞ս կննջե:

ԳԱԼՈՒՍՏ - Չգիտեմ, ձեր ամուսինն էստեղ է ննջում, թե՛ չէ, բայց որ

դուք արդեն ննջում եք, դա փաստ է:

ԱՆԵՏԱ - Ես առանց իմ Դերենիկի ոչ մի օտար վայրում չեմ ննջե: (*Նա-յելով դժոխքի դարպասներին:*) Ինչ տարօրինակ գործակալություն է:

ԵՐԶԱՆԻԿ - Դժոխքն է եկել ձեզ մոտ:

ԱՆԵՏԱ - (*դեպի Սամսոնը*): Դժոխքը հիմա աս պարոնին գլխուն կբերիմ, ինձի պես պարկեշտ կնոջ հետ սիրաբանե և ամուսնյակիս գլխուն կտողնե՞ր աճեցնե: (*Մոտենում է դժոխքի դարպասներին:*) Դերենիկ, դուռը բաց, ինձի կուզեին բռնաբարել...

ՍԱՄՍՈՆ - (*ետ պահելով*): Ա՛յ կնիկ, ետ արի, հո խայտառամկ չես:

ԱՆԵՏԱ - Խայտառակը դրոն ես, ես իմ իրավունքները կպաշտպանիմ:

ԵՐԶԱՆԻԿ - Բույրիկ ջան, մենք արդեն ունենք:

ԱՆԵՏԱ - Ինչ ունիք:

ԵՐԶԱՆԻԿ - Մարդու իրավունքների պաշտպան: (*Յույց է տալիս Գալուստին:*) Նա ձեր իրավունքները կպաշտպանի:

ԳԱԼՈՒՍ - Իհարկե, կպաշտպանեմ և չեմ թողնի ոտնահարել այս տիկնոջ իրավունքները:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Դեռ հարց է, թե ով ում իրավունքներն է ոտնահարում: Տիկին Անետա, նստեք և հանգստացեք:

ԱՆԵՏԱ - Կթողնի՞ք, որ հանգստանամ: (*Յույց տալով Սամսոնին:*)

Աս պարոնը Դերենիկիս նվիրած պայուսակը գողցած ու իր պահարանը խցկած է:

ՍԱՄՍՈՆ - Ա՛յ ցավդ տանեմ, ես ինչ մեղք ունեմ, որ դա իմ աշխատանքն է: Ոչ ոք իրավունք չունի անձնական իրերով էստեղ մտնել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Սամսոն պապի, քեզ ոչ ոք չի մեղադրում: Դու քո աշխատանքը շատ լավ կատարել ես:

ԱՆԵՏԱ - Հիմա Դերենիկս կուգա, ան ժամ կտեսնինք, թե ինչքան լավ կատարած է իր անբարո աշխատանքը: Դերենիկ, դուրս արի, վախկոտի՛ն մեկը:

ՍԱՄՍՈՆ - Ձեր ամուսինն էստեղ չէ:

ԱՆԵՏԱ - Ինչպե՞ս թե՛ էստեղ չէ: Մենք միասին կերթայինք տուն: (*Երանությամբ:*) Նման հարսանիք աշխարհը տեսած չէ, մեր միակ աղջիկը աշխարհի ամենագեղեցիկ հարսնացուն էր: Ես ու Դերենիկս այնքան խմած էինք, որ գլուխներս կուրցուցինք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Երևում է, թե ինչքան եք խմել: Դրա համար էլ էստեղ եք:

ԱՆԵՏԱ - Ինձ հոս թողած է, ինքն ալ վախից անհայտ ծակը մտած է:

ԳԱԼՈՒՍ - Տիկին Անետա, ձեր ամուսինն էստեղ չէ: Ոնց հասկանում ենք, նրա բախտը բերել է:

ԱՆԵՏԱ - Նրա բախտը բերեց, որ ամուսնացավ ինձի հետ:

ԳԱԼՈՒՍ - Բայց ձեր բախտը չբերեց:

ԵՐՋԱՆԻԿ - Այ մարդ, ինչո՞ւ եք էդ-
քան ձգձգում, միանգամից ասեք,
էի...

ԱՆԵՏԱ - Պետք չէ ոչինչ ըսել, ես ա-
մեն բան արդեն հասկըցա: Հաս-
կըցա, որ պիտի բաժնվիմ ատ
դավաճանեն:

ՍԱՄՍՈՆ - Դուք արդեն բաժանվել
եք, պետք չէ ավելորդ ծախս ա-
նել:

ԱՆԵՏԱ - Ինչպե՞ս թե՛ արդեն, ես դեռ
ստորագրությունս տված չեմ:

ԵՐՋԱՆԻԿ - Տիկին Անետա, դուք մե-
ռել եք:

ԳԱԼՈՒՍ - Պատգամավոր ջան, էդ-
պես միանգամից պետք չէր ասել:
Սիրտը կծաքի:

ԱՆԵՏԱ - Ինչպե՞ս թե՛ մեռել եմ...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ինչպես շատերը:
(Թողթերին նայելով:) Ձեր ամուսի-
նը ավտովթարի է ենթարկվել:

ԱՆԵՏԱ - Ուրեմն ինձի պես գեղեց-
կուհին արդեն մեռած է: Տեր
Աստված, հիմա ուշագնաց կլի-
նեմ: (Ուշաթափվում է:)

ԳԱԼՈՒՍ - Օգնեցեք... Էս կինն իս-
կապես մահացավ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Սամսոն պապի, ջուր
բեր:

ՍԱՄՍՈՆ - Հենց հիմա: (Գնում է:)

**Երջանիկն ու Գալուստը Անետա-
յին պառկեցնում են մատաբա-
նին:**

ԳԱԼՈՒՍ - Տիկին, ուշքի եկեք:

ԵՐՋԱՆԻԿ - Ա՛յ մարդ, էս կնկան ի՞նչ
եղավ:

**Գալիս է Սամսոնը՝ ջրի բաժա-
կով:**

ՍԱՄՍՈՆ - Վերցրու, Լուինկ ջան:
(Բաժակը տալիս է Լուինուֆարին:)

ՆՈՒՆՈՒՖԱՐ - (ջուրը լցնելով Անե-
տայի դեմքին): Տիկին Անետա,
ուշքի եկեք, դուք արդեն մահացել
եք: Պետք չէ ընկնել ավելորդ
ձևականությունների ետևից:

ԱՆԵՏԱ - (ուշքի գալով): Հիմա որ-
տե՞ղ կգտնվիմ:

ՍԱՄՍՈՆ - Ձեր մշտական տանը:

ԱՆԵՏԱ - Ասացեք, որ ատիկա ձիշտ
չէ: Ես դեռ երիտասարդ եմ և չէի
կըրնա այդքան շուտ մահանալ:
Իմ սիրելի նորահարսիկ աղջի-
կը... (Ողբում է:)

ԳԱԼՈՒՍ - Իմ ընտանիքը... իմ ան-
չափահաս երեխաները... (Ողբում
է:)

ԵՐՋԱՆԻԿ - Իմ պաշտոնը... իմ բիզ-
նեսը... իմ հարգանքը... (Ողբում
է:)

ՍԱՄՍՈՆ - Էս ի՞նչ սիմֆոնիկ համերգ
է:

**Գրախտի դարպասներից դուրս է
գալիս Գաբրիել Հրաշագործյա-
նը՝ սպիտակ հագած: Գլխին
սպիտակ, փետրավոր գլխարկ է:
Երջանիկը, Գալուստն ու Անե-
տան զարմացած նայում են
Գաբրիելին:**

ԳԱԲՐԻԵԼ - Բարեկամներ, խնդրում
եմ, կամաց արտասվեք: Դուք
խանգարում եք մեր հոգևոր ա-
ղոթքին:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ներեցեք, պարոն

Գաբրիել Հրաշագործյան, այս տիկինը դեռ տվայտանքների մեջ է:

ԳԱԲՐԻԵԼ - Մեղրաջուր տվեք, հանգստացնում է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ոնց ասեք: Սամսոն պապի, մեղրաջուր բեր:

ՍԱՄՍՈՆ - Հենց հիմա: *(Գնում է:)*

ԳԱԲՐԻԵԼ - Օրիորդ Նունուֆար, վերջին շաբաթվա տվյալները պատրաստ չե՞ն:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ոչ, պարոն Հրաշագործյան, սպասում ենք թեկնածուների հավաքագրմանը:

Գալիս է Սամսոնը՝ մեղրաջրի բաժակով:

ՍԱՄՍՈՆ - Տիկին Անետա, խմեք:

ԱՆԵՏԱ - Ասիկա քաղցր է, ես կգիրանամ:

ՍԱՄՍՈՆ - Խմեք, խմեք, էլ վտանգ չկա:

ԵՐԶԱՆԻԿ - Տո, խմիր, այ ցավդ տանեմ, ինչ ես փրփուրներից կախվել:

ԳԱԲՐԻԵԼ - *(նկատելով Երջանիկին):* Այս մարդն ինչո՞ւ է կիսամերկ:

ԵՐԶԱՆԻԿ - Ա՛յ Հրաշագործյան ջան, պապին է ստիպել:

ԳԱԲՐԻԵԼ - Սամսոն պապի, ինչո՞ւ եք նրան մերկացրել:

ՍԱՄՍՈՆ - Պարոն Հրաշագործյան, գրպաններից թմրանյութ եմ հայտնաբերել:

ԳԱԲՐԻԵԼ - Գրպանները դատարկեք, շորերը տվեք: Թե չէ կարող

է հիվանդանալ ու վարակել մյուս թեկնածուներին:

ԵՐԶԱՆԻԿ - Հրեշտակ ջան, ասեք, գրպանիս փողերը չգողանա:

ՍԱՄՍՈՆ - *(վիրավորված):* Պատգամավոր ջան, բա էդ ասելու բան է, որ ասում ես:

ԳԱԲՐԻԵԼ - Պարոն Սամսոն, բացի թմրանյութից, բոլորը կվերադարձնեք:

ՍԱՄՍՈՆ - Ես իմ աշխատանքը միշտ էլ լավ եմ կատարում:

ԱՆԵՏԱ - Պարոն Գաբրիել, ամուսնուցս նորություն չունի՞ք:

ԳԱԲՐԻԵԼ - Տիկին, մենք միայն ցուցակագրում ենք երկնային կյանքի հոգիներին: Իսկ երկրային կյանքի խառնաշփոթի հետ ոչ մի կապ չունենք: *(Բողոքին.)* Տիկնայք և պարոնայք, խնդրում եմ չաղմկել: *(Մտնում է դրախտի դարպասներից ներս:)*

ԵՐԶԱՆԻԿ - Էս գիշերվա երագն ո՞վ էր:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Հաստատ ձեր Ագգային ժողովից չէր:

ԳԱԼՈՒՍՏ - Մեր սև սիրտ, սրա հոգևոր աղոթքներ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Լսեցի՞ք, դրախտի շեֆը կարգադրեց չաղմկել: Լստեք ու սպասեք ձեր դատաստանին:

Բողորը նստում են: Դժոխքի դարպասներից դուրս է գալիս Մոսո Չարագործյանը՝ սև հագած: Գլխին կարմիր, փետրավոր գլխարկ է:

ՄՈՍՈ - Չհասկացա՞մ... Էս ինչո՞ւ եք

դարդոտված նստել: Պարեք, ուրախացեք, աղմկեք, հո թաղում չէ՛, որ սուգ եք կապել: Կյանքը վայելե՛ք, վայելե՛ք...

ԵՐԶԱՆԻԿ - Թողնում են, որ վայելենք, այ ցավդ տանեմ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Պարոն սատանա Չարագործյան...

ՄՈՍՈ - Նունիկ ջան, հազար անգամ ասել եմ, որ քեզ համար ես ուղղակի Մոսո եմ: Մոսո՛... պարոնս ո՞րն է: *(Կսմթում է:)*

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Վայ, մի արեք, ամաչում եմ: Էսքան մարդ կա, իմ մասին ի՞նչ կմտածեն:

ՄՈՍՈ - Տո, ո՞վ իրավունք ունի քո մասին վատ բան մտածել: Հերները կանիծեն:

ԵՐԶԱՆԻԿ - Սատանա ջան...

ՄՈՍՈ - Հա ջան:

ԵՐԶԱՆԻԿ - *(ցույց տալով դժոխքը):* Էնտեղ ո՞նց է:

ՄՈՍՈ - Ձեզ ո՞ր պահն է ավելի շատ հետաքրքրում:

ԵՐԶԱՆԻԿ - Բոլոր պահերը:

ԳԱԼՈՒՍ - Ճիշտն ասած, ինձ էլ է բոլոր պահերը հետաքրքրում:

ԱՆԵՏԱ - Եթե անկեղծ ըսեմ, ինձի էլ կհետաքրքրե:

ՄՈՍՈ - Սամսոն պապին կրակ է վառում ու թողնում է, որ մի լավ թեժանա... թեժանա ասացի՝ հիշեցի: Նունիկ ջան, ինչո՞ւ չես զանգել ու էլի վառելիք պատվիրել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Արտոյին զանգել եմ ու պատվիրել, շուտով կհասնի: *(Չանգում է:)* Արտո, որտե՞ղ ես...

Կարո՞ղ է, Փարիզից ես գալիս: Ծո՛ւտ արա, Մոսոն խառնվել է իրար:

ՄՈՍՈ - Տուր, ես կխոսեմ: *(Վերցնում է բջջայինը:)* Ձեզ հետ Մոսո Չարագործյանն է խոսում: Եթե կես ժամից վառելիքը չբերեք, կազատվեք աշխատանքից: Ինձ չի հետաքրքրում՝ ձեր երեխաները սոված կմնան, թե՛ չէ: Ինձ համար մեղավոր հոգիներն ավելի կարևոր են: *(Անջատում է բջջայինը, տալիս Նունուֆարին:)* Արտոն որ ապրանքը բերի, չմոռանաս կտրոնը վերցնել: Թե չէ վերջերս սկսել եմ կասկածել, սոված ընտանիքը հաստատ մեր վառելիքի հաշվին է պահում: *(Մտնում է դժոխքի դարպասներից ներս:)*

ԵՐԶԱՆԻԿ - *(Սամսոնին):* Մրսեցի, շորերս բերեք: Չլսեցի՞ք, հրեշտակ եղբայրը հրաման սովեց: Ես որ հիվանդանամ ու գրիպ կպնեմ, դո՞ւք եք պատասխան տալու:

ՍԱՄՍՈՆ - Մի գոռա, պատգամավոր ջան: Արի հազցնեմ, զնանք:

Երջանիկն ու Սամսոնը գնում են:

ԳԱԼՈՒՍ - Նունուֆար քույրիկ...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - *(նազանքով):* Հա ջան:

ԳԱԼՈՒՍ - Ձեր հեռախոսը մեկ րոպեով կտա՞ք, զանգեմ, գոնե ընտանիքիս ձայնը լսեմ: Տեսնեմ՝ ի՞նչ են անում, ինչքան են լացել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Կամ էլ չեն լացել:

ԳԱԼՈՒՄ - Բա դա ասելու բան է, որ ասացիք, Լուսինա քույրիկ:

ԼՈՒՆՈՒՄ - (բջջայինը տալով):
Վերցրեք: Բայց նրանք ձեր ձայնը չեն լսի:

ԳԱԼՈՒՄ - Ոչինչ, կարևորը ես նրանց կլսեմ ու կարոտս կառնեմ նրանցից: (Զանգում է:)
Այո... Այո... Այո...

ԼՈՒՆՈՒՄ - Ասացի՛ նրանք ձեզ չեն լսում:

ԳԱԼՈՒՄ - (հեռախոսով): Ազնիվ ջան, ես եմ՝ Գալուստը: Իմ ազնիվ Ազնիվ... Ինչ Սեդրակ, Գալուստն է, Գալուստը... Այո... Այո... Անջատեց: (Ապշած:)
Իմ Ազնիվը... Իմ փոքրիկ Ազնիվը:

ԼՈՒՆՈՒՄ - Ծանո ազնիվ էր ձեր փոքրիկ Ազնիվը:

ԱՆԵՍԱ - Օրիորդ Լուսինա, աս մարդուն ինչ մեղու կծած է:

ԼՈՒՆՈՒՄ - (սմանակելով): Փոքրիկ ազնիվ մեղու կծած է:

ԳԱԼՈՒՄ - (տեղից վեր կենալով):
Վերջ, ես գնում եմ:

ԼՈՒՆՈՒՄ - (նրան ետ պահելով):
Ո՞ր եք գնում, պարոն Փառամույսյան:

ԳԱԼՈՒՄ - Թողեք, էլ էստեղ չեմ ուզում մնալ: (Փորձելով ազատվել):
Ասում եմ, բաց թողեք... Իմ Ազնիվն ինձ դավաճանել է, ես պիտի մեռնեմ:

ԱՆԵՍԱ - Խայտառակություն, ամուսինը նոր մահացած, կինն արդեն ուրիշի գիրկը նետված է:

ԳԱԼՈՒՄ - Գնում եմ ինձ կամրջից

զգեմ... Ես ուզում եմ ինքնասպան լինել:

ԱՆԵՍԱ - Պարոն Գալուստ, դուք արդեն մեռած եք, ինչո՞ւ կցանկանաք ձեզի կրկնակի տանջել:

ԳԱԼՈՒՄ - Գնամ, ինձ կամրջից զգեմ, որ երկրորդ անգամ մեռնեմ: Առաջին անգամ ուրախությունից մահացա, էս անգամ տխուր մեռնեմ, որ գոնե մեռնելուց մի բան հասկանամ: (Ուզում է գնալ:)

ԼՈՒՆՈՒՄ - Տիկին Անետա, օգնեք, սա որ փախավ, ինձ գործից կազատեն:

ԱՆԵՍԱ - Օգնիմ, օրիորդ Լուսինա: (Երկուսով ետ են բերում Գալուստին, նստեցնում են:)
Պարոն Գալուստ, դուք այդքան անխիղճ մեկն եք:

ԳԱԼՈՒՄ - Իմ խիղճը մեռավ:

ԼՈՒՆՈՒՄ - Ձեր խիղճը մեռավ էն ժամանակ, երբ կաշառք էիք վերցնում:

ԱՆԵՍԱ - Լսեք, այ կաշառակերին մեկը, աղջնակին որ գործից ազատեցին, անոր ընտանիքը դուք պիտի պահիք:

ԳԱԼՈՒՄ - Չէ, ես հաստատ գնում եմ:

Վազում է դեպի «Ընդունող հանձնաժողով»-ի դուռը: Այդ պահին շնչակտուր ներս է ընկնում Համեստը՝ հարսի զգեստով:

ՀԱՄԵՍԱ - Անիծյալ լինես դու, հարբեցողի մեկը...

**Գալուստը, Անետան ու Նունու-
ֆարը վախից ընկրկում են: Հա-
մեստը սիրտը բռնած նստում է
աթոռին:**

ԱՆԵՏԱ - Աս ի՛նչ զգգված հարս է:

ՀԱՄԵՍ - Ժողովուրդ ջան, վա՛նտ
եմ... մի բաժակ ջուր տվեք:

ԳԱԼՈՒՍ - Բույրիկ ջան, ի՛նչ է պա-
տահել:

ՀԱՄԵՍ - Էլ ի՛նչ պիտի պատահեր...
Թող անիծվի էդ սրիկան:

ԳԱԼՈՒՍ - Ձեզ վատ բա՛ն է արել:

ՀԱՄԵՍ - Վատ բանը ո՞րն է,
կյանքս կործանեց:

ԳԱԼՈՒՍ - Փաստորեն արդեն գի-
տե՛ք, որ մեռել եք:

ՀԱՄԵՍ - Բա ո՞նց չգիտեմ: Խնդրում
եմ, ջուր տվեք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - *(ներքին հեռախո-
սով):* Սամսոն պապի, ջուր բեր,
շտապ դեպք է:

ՀԱՄԵՍ - Դա դեռ հերիք չէր, ըն-
դունարանում էլ էն բիճեն թռավ
վրաս, ուզում էր համբուրեր:

**Գալիս է Սամսոնը՝ ջրի բաժակը
ձեռքին:**

ՍԱՄՍՈՆ - Վերցրու, Նունիկ ջան:

ՀԱՄԵՍ - *(տեսնելով Սամսոնին):*
Այ, սա էր:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - *(բաժակը վերցնե-
լով):* Սամսոն պապի, բա չէս ա-
մաչում:

ՍԱՄՍՈՆ - Ինչի՛ համար:

ՀԱՄԵՍ - Ինձ պաչելու:

ՍԱՄՍՈՆ - Ախր, ո՞ր մի տղամարդը
կարող է քո կողքով անտարբեր
անցնել: *(Գնում է:)*

ԱՆԵՏԱ - Անամոթին մեկը:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Վա՛յ, Սամսոն պա-
պի... Ինչքան մեծանում է, էնքան
մոլագար է դառնում: *(Բաժակը
տալիս է Համեստին:)* Վերցրեք:

ՀԱՄԵՍ - *(ջուրը խմելով):* Վա՛յ, էս
ինչ վատ եմ... Բա որ իմանայի
մեռնելու եմ, էդ փողոցով կանց-
նեի՛:

ԱՆԵՏԱ - Ի՛նչ ըրած եք, որ մեռած
եք:

ՀԱՄԵՍ - *(նմանակելով):* Հարբած
վարորդի ցանցը ընկած եմ:

ԳԱԼՈՒՍ - Որտեղի՞ց իմացաք, որ
մեռնում եք: Թե՛ միանգամից եք
մեռել:

ՀԱՄԵՍ - Առավոտից հիվանդանո-
ցի վերակենդանացման բաժնում
պառկած էի: Ավելի լավ կլիներ
միանգամից մեռնեի, քան էդքան
տանջվեի: Կյանքս կործանեց,
հերիք չէր, դեռ կողքս էլ պառկած
տնքում էր անիծվածը: *(Դեպի
«Հնդունող հանձնաժողով»-ի դու-
ռը:)* Էս բիճեն էստեղ, նա՛ էստեղ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ և **ԳԱԼՈՒՍ** - Ո՞վ:

ՀԱՄԵՍ - Կողքիս պառկած սիյուու-
քահայր:

ԱՆԵՏԱ - Եթե սիյուուքահայ եղած է,
ուրեմն պարկեշտ մարդ մըն է:

ՀԱՄԵՍ - Ծանո պարկեշտ էր, շատ,
ինձ ավտովթարի ենթարկեց, հե-
րիք չէ, դեռ կիսամեռած վիճա-
կում էլ ուզում էր գրկեր: Ասում էր,
որ ես իր անթառամ ծաղիկն եմ:

ԱՆԵՏԱ - *(լալիս է):* Ատիկա իմ Դե-
րենիկն է: Ինքը միայն ինձի կը-

սեր, որ ես իրեն անթառամ ծաղիկն եմ:

ՀԱՄԵՍ - Ուրեմն այդ սրիկան ձեր ամուսինն է:

ԱՆԵՍԱ - Այո, ինձ բերեց հոս, ինքը մնաց հոն:

ՀԱՄԵՍ - Երկուսիս միասին բերեց:

ԱՆԵՍԱ - Ես ձեզի կուզեմ գրկել ու անթառամ ծաղիկ ըսել, դուք էլ ձեզի լավ զգացած եք: *(Ուզում է գնալ:)*

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Էդ ո՞ր, տիկին Անթառամ:

ԱՆԵՍԱ - Պարոն Գալուստ, եկեք ինձի հետ:

ԳԱԼՈՒՍ - Բայց ո՞ր ենք գնում:

ԱՆԵՍԱ - Զիչ առաջ դուք կուզեիք, հիմա էլ ես կուզիմ: Եկեք գնանք, ձեռք-ձեռքու բռնած, դավաճանված սիրահարներու պես մեզի ցած զգինք կամուրջեն:

ԳԱԼՈՒՍ - Ես վախենում եմ կամուրջներից: Իմ անագնիվ Ազնիվին Աստված կպատժի:

ԱՆԵՍԱ - Իսկ իմ անբարոյական Դերենիկին ես պիտի պատժիմ: Կգնամ ու երկնքեն կրակներ կզցիմ անոր գլխին, նոր կամրջեն կնետվիմ: *(Խփելով դժոխքի դարպասներին:)* Պարոն Մոսո, դարպասները բացեք...

Մոսոն դուրս է գալիս:

ՄՈՍՈ - Չե՞ք տեսնում, գործ եմ անում, ինչո՞ւ եք բռնել մեկ խանգարում:

ԱՆԵՍԱ - Կարո՞ղ եք ձեր ձարձատող

փայտերեն մեկը տալ, որ զցիմ ներքև ու ատ անբարոյականին զլուխը վառիմ:

ՄՈՍՈ - Էս կինն աննորմալ է:

ԱՆԵՍԱ - Թող աննորմալ ըլլամ, ատիկա չի խանգարե: Բայց կուզիմ, որ վերակենդանացման բաժնում Դերենիկն հոգին ավանդե: Ես ապրելու իրավունք չունի:

ՀԱՄԵՍ - Այո, չունի: Ես պիտի պատասխան տա արածների համար:

ԱՆԵՍԱ - Ես դեռ ամուսինս է, դուն շատ մի ոգևորվի: Միայն ես իրավունք ունիմ անոր ձարձատող փայտերով վառիլ: *(Լացակումած:)* Ինձի պես փարթամ ու գեղեցիկ կնոջը փոխարինել է քեզմով:

ՄՈՍՈ - *(Համեստին):* Ա՛յ աղջի, դու էստեղ ի՞նչ ես անում:

ՀԱՄԵՍ - Մոսո... *(Գրկախառնվում են:)*

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Դուք իրար ձանաչում եք:

ՀԱՄԵՍ - Մ.թ.ա...

ՄՈՍՈ - Դեռ մի բան էլ ավել...

ՀԱՄԵՍ - Մի դասարանում ենք սովորել:

ՄՈՍՈ - Հիշո՞ւմ ես, չէիր թողնում ստուգողական աշխատանքը քեզնից արտագրեի, ես էլ մագերդ քաշում էի: Դու էլ դասղեկին բողբոջում էիր, ինձ էլ դուրս էր հանում դասարանից: *(Ծիծաղում է:)*

ՀԱՄԵՍ - Ո՛նց չեմ հիշում, այ տղա... *(Ելալով հագուստին:)* Էս ի՞նչ ես հագել:

ՄՈՍՈ - Նոր աշխատանքային համազգեստս է, պաշտոնս են բարձրացրել:

ՀԱՄԵՍ - Բայց լավ էլ սազում է, ոնց որ հատուկ քեզ համար կարված լինի: Էն աշխարհում չկարողացար պաշտոն ստանալ, էստեղ ես առաջ գնում:

ՄՈՍՈ - Դե, ինչ անեմ, Համեստ ջան, դիահերձողի պաշտոնի բարձրացումը ո՞րն էր:

ՀԱՄԵՍ - Էստեղ գոնե նորմալ վարձատրում են, թե՛ էն կյանքի նման գրոշներ են տալիս, որ մի կտոր սև հաց ուտես, չսատկես, հաջորդ օրն էլի գործի գնաս ու աշխատես դրանց համար:

ՄՈՍՈ - (*հպարտ*): Էստեղ ոչ մի խնդիր չունենք:

ՀԱՄԵՍ - Ուրեմն ես էլ լավ կապրեմ էստեղ:

ԱՆԵՏԱ - Չհասկըցամ... աս անբարոյականին կմիջնորդիք, որպեսզի ապահովե իր կյանքը, իսկ ինձի պես հավատարիմ կնոջը կանտեսիք:

ՄՈՍՈ - (*Համեստին*): Վերջին սիրեկանիցդ ինչ նորություն կա:

ՀԱՄԵՍ - Էդ ուտող-ուրացողի անունը չտանս, տանջվեցի նրա պատճառով:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - (*Ժաղրով*): Վայ, վայ, էս ինչ տանջված կին ես:

ԱՆԵՏԱ - Ասիկա տանջվածի տեսք է, ընտանիքներ կքանդե, ամուսնյակիս էլ ձիշտ ծանապարհից կշեղե: Ինքը իմ ձեռքով պիտի

տանջվի: (*Ուզում է հարձակվել Համեստի վրա:*)

ՀԱՄԵՍ - Էս պառավին հեռու տարեք... սիրտս ավելի է խառնում: Մարդը սպանեց, կինն էլ ուզում է հոգիս տանջի:

Գալուստն ու Նունուֆարը բռնում են Անետային, Մոսոն՝ Համեստին: Դուրս է գալիս Գաբրիելը:

ԳԱԲՐԻԵԼ - Ասացի, չէ՞, չի կարելի աղմկել: Դուք խանգարում եք իմ բնակիչների անդորրը և հոգևոր աղոթքը:

ԱՆԵՏԱ - Աս տիկնոջն ըսեք, բոլորի ամուսիններուն կուզե սեփականաշնորհիլ:

ԳԱԲՐԻԵԼ - Պարոն Չարագործյան, այդպես էլ չհասկացա՞ք, որ չի կարելի հոգիներին միմյանց դեմ տրամադրել:

ՄՈՍՈ - Հրեշտակ ջան, ես ինչ անեմ, որ ուզում են իրար մազ պոկել ինչ-որ Դերենիկի համար: Էստեղ է՛լ ես եմ մեղավոր:

ԳԱԲՐԻԵԼ - Դուք մեղավոր եք այնքանով, որ նրանց սանձարձակությունը չեք կանխում:

ՄՈՍՈ - Կատաղած կնոջ հետ խելք դնել չի կարելի:

ԱՆԵՏԱ - (*Համեստին*): Դուն պատասխան պիտի տաս, անառակ:

ԳԱԲՐԻԵԼ - Տիկնայք, պետք չէ վիճել:

ԱՆԵՏԱ - Ինքը ամուսնուս գողանա ինձնեն, դուք կուզեք, որ անոր ծակա՞տը պագնեմ:

ՀԱՄԵՍ - Էդ քո անբարոյական սփյուռքահայն էր ուզում փաթաթվել ինձ:

ԱՆԵՏԱ - Ուրեմն դուն կանչած ես, որ շան պես վագած է:

ՀԱՄԵՍ - *(նմանակելով)*: Ես ինչ կանչած եմ, ինձի վրաերթի ենթարկած է, հետո էլ հիվանդանոցում վրաս թռած է:

ԳԱԲՐԻԵԼ - Տիկնայք, խնդրում եմ...

ԱՆԵՏԱ - Դուն լռե՛: Դուն չես հասկընա դավաճանված կնոջ հոգեվիճակը: *(Զննելով Համեստին)*: Եվ ո՞ւմ հետ է դավաճանել Դերենիկ կոչվածը... անձաշակին մեկը:

ԳԱԲՐԻԵԼ - Տիկնայք...

ԱՆԵՏԱ և **ՀԱՄԵՍ** - Սա մեր անձնական գործն է:

ԳԱԲՐԻԵԼ - *(Մոտոյին)*: Դուք ճիշտ էիք, կատաղած կնոջից վատ բան չկա: Ինչ լավ է, որ այդպես էլ չամուսնացա: *(Մտնում է դրախտ)*:

ՀԱՄԵՍ - Ուրեմն մի բանն էն չէ, որ չի ամուսնացել... Ժողովորդ, էլի վատ եմ, սիրտս խառնում է:

ԳԱԼՈՒՍ - Կարո՞ղ է՝ մեռնելուց հետո ձեր ծնշումն ավելի է բարձրացել:

ՀԱՄԵՍ - Էստեղ լոգարան կամ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Կա, բայց թոպեավձար է:

ԳԱԼՈՒՍ - Ոչինչ, մեր պատգամավոր ընկերը կվճարի:

ՀԱՄԵՍ - *(զգվանքով)*: Էստեղ պատգամավոր էլ կամ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Կա: Մի ժամ է՝ հագնվում է: Թե ինչն է էդքան հագնում, Աստված գիտի:

ՀԱՄԵՍ - Դրանց հոգին շատ խորն է... վայ, էլի վատ եմ: Ո՞ր կողմն է լոգարանը:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - *(ցույց տալով դժոխքի կողմը)*: Էն...

Համեստը գնում է լոգարանի կողմը:

Մյուս կողմից գալիս է էլեգանտ հագնված, հարքած Երջանիկը:

ԱՆԵՏԱ - Ասիկա մեր պատգամավորը չէ:

ԳԱԼՈՒՍ - Ինքն է, որ կա:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Պարոն Երջանիկ, ինչո՞ւ եք այդքան երջանիկ:

ԵՐԶԱՆԻԿ - Ես երջանիկ չլինեմ, ո՞վ երջանիկ լինի: Ինչ կա-չկա՝ իմն է: Բոլորդ ինձ հետ պիտի հաշվի նստեք:

ԱՆԵՏԱ - Աս մարդը խենթեցած է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Հարբած է: Պարոն Երջանիկ, որտե՞ղ եք խմել:

ԵՐԶԱՆԻԿ - Ես միշտ էլ պիտի խմեմ, ոչ ոք արգելելու իրավունք չունի:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Նստեք և հանգստացեք:

ԵՐԶԱՆԻԿ - Թող հանգստանան նրանք, ովքեր անհանգիստ են:

ԱՆԵՏԱ - Ասիկա նորմալ պատգամավորի պատասխամն է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Չասացիք՝ որտեղ եք հասցրել հարբել:

ԵՐԶԱՆԻԿ - *(երանուրջամբ)*: Բայց Սամսոն պապիկը շատ հյուրասեր մարդ է:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Սամսոն պապի...

Ներս է մտնում Սամսոնը՝ հարբած:

ՍԱՄՍՈՆ - Ինչ-որ մեկն ինձ կան-
չում էր... *(Օրորվում է:)*

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Հա՛, կանչում էր:

ԱՆԵՏԱ - Աս մարդն է՛լ է գինովցած:
Չեմ հասկընա, հոս գիշերային
ակո՛ւմբ է, ի՛նչ է...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Սամսոն պապի, չե՛ս
ամաչում: Էս աշխատանքը քեզ
են վստահել, որ հոգիների հետ
քե՛ֆ անես:

ԳԱԼՈՒՍՏ - Մարդ են, էլի, մտքնե-
րով անցել է, թող խմեն, մեկ է, էլ
կորցնելու ոչինչ չունեն: Մի կյանք
էինք ապրում, է՛ն էլ արդեն չենք
ապրում: Հիմա հանգիստ ինչ ու-
զենք՝ կարող ենք անել:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Իրավունքների պաշտ-
պանիս տեսեք: Լավ էլ ձեր գործն
անում եք: Պատկերացնում եմ, թե
ժամանակին ո՞նց եք աշխատել:

ՍԱՄՍՈՆ - Լուսնիկ ջան, ախր, չես
թողնում բացատրենք... Մեր
պատգամավորը որ ասաց, է՛ն-
քան հուզվեցի, քիչ էր մնում էս
անտեր աշխարհի դուռը բացելի,
հետադարձ տոմսը տայի ու ու-
ղարկելի է՛ն կյանք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Հիմա դիմում կգրեմ
Բարձրյալին, որ քեզ աշխատան-
քից ազատի:

ԵՐՋԱՆԻԿ - Լուսնուֆար ջան, թույլ
տուր ծննդյանս օրը մի լավ նշեմ:
Գոնե էս աշխարհում ուրախա-
նամ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Էսօր ձեր ծննդյան
օրն է:

ԵՐՋԱՆԻԿ - Հա, Լուսնուֆար ջան, է՛ն

կյանքում չհասցրի 50-ամյակս
նշել:

ԵՐՋԱՆԻԿ և **ՍԱՄՍՈՆ** - *(երգում են):*
«Ձախորդ օրերս ձմռան նման
կուզան ու կերթան»:

ԳԱԼՈՒՍՏ և **ԱՆԵՏԱ** - Ծնորհավո՛ր:
(Փաթաթվում են Երջանիկին:) Ու-
ռան...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Վերջացրե՛ք, ուզում
եք ինձ է՛լ աշխատանքից հեռաց-
նեն:

ԵՐՋԱՆԻԿ - Ես քեզ ավելի լավ աշ-
խատանք կտամ, Լուսնուֆար
ջան: Հե՛չ չմտածես, կթողնե՛մ, որ
մի մազիդ դիպչեն: Օբյեկտներ ու-
նեմ՝ աշխարհը չունի: Փող ունեմ՝
աշխարհը չունի: *(Գրպանից
հանում է փողերը և շարտում օդ:
Բոլորը սկսում են ազահորեն հա-
վաքել:)* Տեսնո՞ւմ եք, Երջանիկ
ճիվաղյանը ինչքան առատաձեռն
է:

ԳԱԼՈՒՍՏ - *(փողերը հավաքելով):*
Հա էլի՛, իսկական դուլար է: *(Դնում
է գրպանը:)*

ԱՆԵՏԱ - *(փողերը հավաքելով):* Ասի-
կա աստվածային թուղթ է: *(Դնում
է գրպանը:)*

ԵՐՋԱՆԻԿ - Աստվածային է, բա ինչ է,
աստծո տեղն ինքն է հրաշքներ
գործում: Հիմա Աստծուն ո՞վ է հաշ-
վի առնողը, եթե փող ունես: Փողն
ինքն արդեն Աստված է: Փողն ու
Աստվածը դարձել են հոմանիշ-
ներ:

ՍԱՄՍՈՆ - *(փողերը հավաքելով):*

Երագում էլ էսքան փող չէի տեսել:
(Դնում է գրպանը:)

ՆՈՒՆՈՒՖԱՐ - (փողերը հավաքելու): Էս բոլորն իմն են, պարոն պատգամավոր:

ԵՐՋԱՆԻԿ - Զոնն են, Նունուֆար ջան, իհարկե, քոնն են:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ուխա՛յ... (Գումարը դնում է կրծկալի մեջ:)

Երջանիկը մատից հանում է ոսկե մատանին, տալիս է Նունուֆարին:

ԵՐՋԱՆԻԿ - Սա էլ քեզ, Նունուֆար ջան, որ Բարձրյալին բարեխոսես, ինձ դրախտի VIP համարներից մեկում տեղավորի: Եթե պետք լինի, իրեն էլ բաժին կտամ: Իմ անունից կասես՝ քանի ես կամ, ինքը փողի խնդիր չի ունենա:

Գալուստն ու Անետան անկուշտ հայացքով նայում են մատանուն:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Կասեմ, ո՞նց չեմ ասի: (Մատանին դնում է մատին:)
Սամսոն պապի:

ՍԱՄՍՈՆ - Հա, Նունիկ ջան:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Գնա բեր:

ՍԱՄՍՈՆ - Ինչը բերեմ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Օղու շիշը: Պարոն ճիվաղյանի ծննդյան օրը պիտի առանձնահատուկ նշենք:

ՍԱՄՍՈՆ - Ո՛նց ասես:

ԵՐՋԱՆԻԿ - Սամսոն պապի, ոչխարի պանիրը չմոռանաս:

ՍԱՄՍՈՆ - Չէ, դա հաստատ չեմ մոռանա: (Գնում է:)

ԵՐՋԱՆԻԿ - Ժողովուրդ ջան, հիմա էն քեֆ ենք անելու, որ ամբողջ կյանքում չմոռանաք:

ԱՆԵՏԱ - Ես խնջոյքներեն կվախենամ:

ԵՐՋԱՆԻԿ - Բայց ինչո՞ւ կվախենաս, այ ցավդ տանեմ:

ԱՆԵՏԱ - Խնջոյքները միշտ տխուր վերջաբան կունենան: Դերենիկիս հետ մասնակցեցի ու տխուր վերջաբան եղավ:

ԵՐՋԱՆԻԿ - Սա ձեր պատկերացրած քեֆը չէ: Մեր քեֆը հոգու քեֆ է:

ԱՆԵՏԱ - Կատարսի՛ն կապրիք:

ԵՐՋԱՆԻԿ - Էդ ի՞նչ է:

ԱՆԵՏԱ - Հոգուն հետ առնչություն ունի:

ԵՐՋԱՆԻԿ - Ուրեմն հենց դրանից էլ կապրենք: (Գալիս է Սամսոնը, բերում է օղու շիշն ու ոչխարի պանիրը:)
Ա՛յ, սա ուրիշ բան... (Կորցնում է հավասարակշռությունը:)

ՍԱՄՍՈՆ - Վա՛յ, ի՞նչ եղավ, պատգամավոր ջան:

ԳԱԼՈՒՍՏ - Նստեք, հանգստացեք:

ԵՐՋԱՆԻԿ - Արդեն լավ եմ զգում:

ԱՆԵՏԱ - Ինչպե՛ս թե լավ կզգաք, եթե գլխապտույտ ունեցած եք:

ԵՐՋԱՆԻԿ - (նմանակելով): Ոչ մի բան էլ ունեցած չեմ, ամեն ինչ անցած է:

ՍԱՄՍՈՆ - Պատգամավոր ջան, լվացվեք, որ էլի պիտի խմենք: (Ուզում է օգնել:)

ԵՐՋԱՆԻԿ - Ես ինքս... (Գնում է լողաբանի կողմը:)

Գալիս է Մոսոն: Բոլորը վախից քարանուձ են:

ՄՈՍՈ - Էս ի՞նչ երեկոյթ եք կազմակերպել:

ԱՆԵՏԱ - Ծննդյան:

ԳԱԼՈՒՍ - Հրածեշտի:

ՍԱՄՍՈՆ - Հանդիպման:

ՄՈՍՈ - Հիմա ո՞ր մեկը...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - *(կեղծ ժպիտով):* Բոլորը միասին:

ՄՈՍՈ - Սամսոն պապի, հաստատ քո ձեռքի գործն է:

ՍԱՄՍՈՆ - Ընկեր Մոսո, ես ի՞նչ մեղավոր եմ, թող մի քիչ ուրախանան: Ծուն-գել՝ մարդ են, էլի: Գուցե սա իրենց վերջին ուրախությունն է:

ԱՆԵՏԱ - Սամսոն պապին ձիշտ կըսես, մենք էլ կուզինք ուրախանալ, ի՞նչ մեղավոր ենք, որ եկած-հասած ենք հոս:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Մոսո ջան, էսօր մեր պատգամավորի ծննդյան օրն է:

ՄՈՍՈ - *(ժպիտով):* Լավ է, շատ լավ է:

ԱՆԵՏԱ - Աղվոր է, աղվոր:

ՄՈՍՈ - Սամսոն պապի, օղի կա:

ՍԱՄՍՈՆ - Էն էլ ինչքան...

ՄՈՍՈ - Հիանալի է: *(Գնում, ականջ է դնում դրախտի դարպասներին, ետ է գալիս:)* Լավ է, որ մեր հրեշտակ եղբայրը քնած է: *(Նայելով շուրջը:)* Իսկ հորեյարն ո՞ր է:

Լոգարանից շնչակտուր ցերս է վազում Երջանիկը:

ԵՐԶԱՆԻԿ - Չի կարող պատահել...

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ի՞նչ է եղել, պարոն Ճիվաղյան:

ՍԱՄՍՈՆ - Պատգամավոր ջան, վատ երա՞՞գ եք տեսել:

ԵՐԶԱՆԻԿ - Երանի երազ լինե՞ր...

Լոգարանից դուրս է գալիս Համեստը:

ՀԱՄԵՍ - Սրիկա՛:

ԵՐԶԱՆԻԿ - Դու որտեղի՞ց հայտնվեցիր:

ՀԱՄԵՍ - Գիտեիր՝ հեշտ կարծենս, գիտեիր՝ մոռացել եմ:

ԵՐԶԱՆԻԿ - Դու էստեղ ի՞նչ ես անում:

ՀԱՄԵՍ - Ինչ որ դու:

ԵՐԶԱՆԻԿ - Դու է՞լ ես մեռել:

ՀԱՄԵՍ - Հա:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Իրար ծանաչո՞ւմ եք:

ԵՐԶԱՆԻԿ - Չենք ծանաչում:

ՀԱՄԵՍ - Ուտող-ուրացող:

ՍԱՄՍՈՆ - Մի՞ թույլ... Հերթով խոսեք, որ բան հասկանանք: *(Համեստին:)* Ինչո՞ւ եք մեր հարգարժան պատգամավորի հետ անհարգալից խոսում:

ՀԱՄԵՍ - Ի՞նչ էլ հարգարժան եք գտել:

ՄՈՍՈ - Առանց վիրավորանքի:

ՀԱՄԵՍ - Ես հավատում էի քեզ, իսկ դու ինձ խաբեցիր...

ՍԱՄՍՈՆ - Բայց նա պատգամավոր է, ինչպե՞ս կարող է խաբել:

ՀԱՄԵՍ - Բոլոր տղամարդկանց մոռացա հանուն քո սիրո, իսկ դու ինչպե՞ս վարվեցիր ինձ հետ:

ԵՐԶԱՆԻԿ - Ես ի՞նչ մեղք ունեմ, որ դու մեռար:

ՀԱՄԵՍ - Դու իմ միակ հույսն էիր, իմ ապրելու երջանկությունը, իսկ դու ինչպես վարվեցիր ինձ հետ:

ԵՐԶԱՆԻԿ - Ախր ես էլ մեռա:

ՍԱՄՍՈՆ - Եկեք չմոռանանք, թե ինչի համար ենք հավաքվել: Այսօր մեր պատգամավորի ծննդյան օրն է:

ԱՆԵՏԱ - Աս անառակն իմ ամուսնուն ալ իր ցանցը գցած է, ինչպես շատերուն: Իրան հետ սեղան չեմ նստի:

ՀԱՄԵՍ - Էնպես չի, որ երազում եմ ձեզ հետ սեղանի շուրջ նստել:

ԵՐԶԱՆԻԿ - Վերջացրեք:

ՀԱՄԵՍ - (Երջանկիկ): Իսկ քեզ շնորհավորելու ցանկություն չունեմ:

ՄՈՍՈ - Չարժե այն կյանքի տարածայնությունները բերել այս

կյանք: Սամսոն պապի, օղին բաց:

ՍԱՄՍՈՆ - Հենց հիմա, Չարագործյան ջան: (Բացում է օղին, լցնում է բաժակները:)

Նունուֆարը հրավիրում է սեղանի շուրջ: Համեստն ու Անետան տատանվում են, բայց տեսնելով, որ բոլորը նստում են, իրենք էլ են մոտենում: Բոլորը բարձրացնում են բաժակները:

ԲՈԼՈՐԸ - Պարոն ճիվաղյան, ձեր ծնունդը շնորհավոր:

Խմում են: Մոսոն ծափ է տալիս, հնչում է քոչարի: Բոլորը ուս-ուսի տված պարում են: Դրախտից դուրս է գալիս Գաբրիելը: Չարմացած նայում է, դեմքին հայտնվում է մեղմ ժպիտ, աննկատ մտնում է դրախտ:

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բոլորը քեֆ են անում, հարբած են: Երգում են «Ծնունդդ շնորհավոր»:

Նունուֆարը սուրճ է մատուցում:

Երջանիկը գրպանից փող է հանում, տալիս է նրան:

ԵՐԶԱՆԻԿ - Նունուֆար ջան, սա վերցրու:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Պարոն ճիվաղյան, շատ առատաձեռն եք: (Փողը դնում է կրծկալի մեջ:)

Գալուստն ու Մամսոնն ազահորեն նայում են փողին:

ԳԱԼՈՒՍ - Տիկին Անետա, հուսով եմ, էլ բարկացած չեք Համեստի

վրա:

ԱՆԵՏԱ - Բարկացածը շատ բարկացած եմ, ես անոր հետ հետո կխոսիմ:

ՀԱՄԵՍ - Բայց ինչ մեղավոր եմ, որ ձեր ամուսինն է մեզ հասցրել էս օրին ու հետո ուզում էր գրկել ինձ:

ԱՆԵՏԱ - Դուն որ անոր չգայթակղեիր, շատ լավ էլ ինձի կսիրեր:

ՍԱՄՍՈՆ - Բարեկամներ, լցնենք բաժակները: Պարոն Երջանիկ, ևս մեկ անգամ ձեր ծնունդը շնորհավոր:

ԲՈԼՈՐԸ - Ծնորհավոր:

Խմում են: Գալիս է Գաբրիելը: Բոլորը քարանում են:

ՍԱՄՍՈՆ - Հրեշտակ ջան, միայն Աստծուն չասես:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ես մեղավոր չեմ: Էս մարդիկ ծնունդ են նշում: Օղին Սամսոն պապի է բերել:

ՍԱՄՍՈՆ - Նունիկ ջան, ես ինչ մեղավոր եմ, պարոն պատգամավորն ուզեց, դու էլ թույլ տվեցիր:

ԳԱԲՐԻԵԼ - Նման բաներն անթույլատրելի են այստեղ, բայց քանի որ թեկնածուների մտքով անցել է, կփորձեմ հասկանալ:

ԱՆԵՏԱ - Պարոն հրեշտակ, դուք հրեշտակային սիրտ ունիք:

ԵՐՋԱՆԻԿ - Հրեշտակ ջան, քո արած լավությունը չեմ մոռանա: Արի, մեզ հետ նստիր, մի բաժակ էլ դու խմիր:

ԳԱԲՐԻԵԼ - Ներեցեք, բայց ինձ հակացուցված է խմիչք օգտագործել:

ՄՈՍՈ - Գաբրիել ջան, մի բաժակ թաքուն խմիր, ո՞վ պիտի տեսնի:

ԳԱԲՐԻԵԼ - Դուք շարունակեք նշել, միայն խնդրում եմ, շատ չաղմկեք, որ դրախտի երջանիկ հոգիների հանգիստը չխանգարվի:

ԵՐՋԱՆԻԿ - Ա՛յ ցավդ տանեմ, էդ

մաքուր հոգիներին էլ կանչի, թող գան:

Դրախտից գալիս է Ագատը՝ հաշմանդամի սայլակին նստած, զինվորական համազգեստով, մնում է դարպասների մոտ: Նրան չեն նկատում:

ԳԱԲՐԻԵԼ - Պարոն Երջանիկ, դուք ուրախացեք, իրենք էլ թող այնտեղ ուրախանան:

ՍԱՄՍՈՆ - Այս բաժակով էլ եկեք խմենք ծնողների կենացը:

Երջանիկը սքքում է արցունքը:

ԱՆԵՏԱ - Ժողովուրդ, աս մարդուն ինչ պատահեց:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Պարոն պատգամավոր, ձեզ ինչ պատահեց:

ՀԱՄԵՍ - Երևի մեղքերն է հիշել:

ԱՆԵՏԱ - Դուն լռե՛: Բեզի նայե, նոր ուրիշներուն մեղադրե:

ՍԱՄՍՈՆ - Պարոն Երջանիկ, ինչո՞նք լաց լինում:

ԵՐՋԱՆԻԿ - Է՛, Սամսոն պապի, էդ կենաց էր, որ խմեցիր: Մորս հիշեցի: Փողն ինձ փչացրեց: Փողից ու աթոռից բացի ուրիշ ոչինչ չէի տեսնում: Հարգատներս դարձան ինձ օտար, թշնամիներս՝ դիմակավորված հարազատ: Նոր շրջապատս ստիպեց ինձ փոխվել: Մանկությանս ընկերները, որոնք ամեն երեկո գալիս էին, նստում էինք ու խոսում գրականությունից, երաժշտությունից, էլ չկային, երբ դարձա աթոռակովի մասնակից: Պաշտոնիցս հետո

տանս հյուրերը փոխվեցին: Ես հրաժարվեցի մորիցս, ամաչեցի, որ պաշտոնավոր ընկերներս կարող են զալ ու տեսնել հիվանդ ու ծեր մորս: Մայրս ծերանոցում ապրում էր թագուհու պես, բոլորը նրան նախանձում էին: Իսկ ես նրան այցելում էի գիշերով, որպեսզի ոչ ոք չիմանար, թե Երջանիկ Ճիվաղյանն ուր է գնում և ինչու: Ինքս ինձ մխիթարում էի՝ մայրս ոչնչի կարիք չունի, չէի հասկանում, որ նա երազում էր ինձ հետ լինել թեկուզ խրճիթում: Դա շատ ուշ հասկացա... Երբ մայրս արդեն չկար: Որտե՞ղ է հիմա մայրս, ինձ ներել է, թե՛ չէ: (Խմում է:)

ԳԱԲՐԻԵԼ - Յուրաքանչյուր ծնող ներում է զավակին, անկախ ամեն ինչից:

ԳԱԼՈՒՍ - Ձեզ շատ լավ հասկանում եմ, որովհետև այդ անիծյալ փողն ինձ էլ կուրացրեց: Մարդու իրավունքները պաշտպանելիս չպետք է տեսնես, նա փող ունի, թե՛ չէ: Ծատ անգամ փողի պատճառով անմեղ մարդկանց իրավունքը ոտնահարել ու կանգնել եմ այնպիսիների կողքին, ովքեր իրավունք չունեին իրավունք ունենալու: Ես չկարողացա վայելել այդ կեղտոտ փողերը, ինչպես վերցնում էի, այնպես էլ բաժանում էի հիվանդանոցներին... (Խմում է:)

ԳԱԲՐԻԵԼ - Ժամանակին գիտակ-

ցելը և սխալ ծանապարհից ետ կանգնելը հնարավորություն կտա ետ դառնալ և ամեն բան սկսել նորից:

ՇԱՄԵՍ - Կարծում եք, ինձ դո՞ւր էր գալիս պոռնիկի պիտակով ապրելը: Ո՞ր աղջիկը չի ցանկանա երջանիկ լինել, ընտանիքի մոր ու սիրված կին լինելու բերկրանքը վայելել: Բայց փոքրիկ սխալը կարող է վերջնականապես կյանքդ կործանել: Կործանել այն աստիճան, որ հետդարձի բոլոր դարպասները փակ լինեն:

ԳԱԲՐԻԵԼ - Երբեք ուշ չէ ամեն բան նորից սկսելու համար:

ԱՆԵՏԱ - Հայաստանը հրի ու սրի մեջ էր, բայց ես երջանիկ կզգայի ինձի, մինչև հայրս չծանոթացրեց դավաճան Դերենիկին հետ: Ան եկել էր Հայաստանից աղջիկ ընտրելու և հետը Բեյրութ տանելու: Չէի ուզե Հայաստանին դժբախտության մեջ թողնիլ ու հեռանալ: Հայրս փողի համար ստիպեց, տասնվեց տարեկան աղջիկ էի, որ լքեցի երկիրս: Հայաստանի մասին կլսեի հեռվեն և հեռվեն կկարոտեի ու կսեիրեի Հայաստանը:

Ազատը ծափահարում է: Բոլորը շրջվում, տեսնում են նրան:

ԱԶԱՍ - Պետք չէ հայրենասեր խաղալ հայրենիքից դուրս: Կուշտ փորով բոլորն էլ կսիրեն հայրենիքը:

ԳԱԲՐԻԵԼ - Պարոն Ազատ, ինչո՞ւ եք եկել այստեղ:

ԱԶԱՏ - Եկա, որ ևս մեկ անգամ համոզվեմ, թե ոմանք որքան զզվելի կարող են լինել:

ԱՆԵՏԱ - Աս պարոնն ինձի կվիրավորե՞:

ԱԶԱՏ - Ձեզ նմանները նույնիսկ վիրավորանքի արժանի չեն:

ԱՆԵՏԱ - Ձեր կարծիքով ես պակաս կսիրիմ Հայաստանը:

ԱԶԱՏ - Հայաստանի անունը չտա՞ք:

ԱՆԵՏԱ - (*գոռում է*): Ան իմ երկիրն ալ է:

ԱԶԱՏ - Եթե քո երկիրն էր, այնտեղ ապրեիր ու մեռնեիր: (*Երջանիկին ու Գալուստին:*) Սրանց նմանների պատճառով էր, որ սահմանին կռվում էինք ժանգոտած զենքերով, որոնք դառնում էին զինվորների մահվան պատճառը: (*Երջանիկին Համեստին:*) Ոմանք էլ հյուրանոցի լյուքս համարներում մի քանի գրոշով վաճառվում էին այն ստահակներին, ովքեր նոր զենք ու զինամթերքի փողերով իրենց ողորմելի ժամանակն անցկացնում էին անկողնուց անկողին թռչկոտելով:

ԵՐԶԱՆԻԿ - Հրեշտակ ջան, էս մարդուն ասա, թող գնա էնտեղ, որտեղից եկել է:

ԳԱԲՐԻԵԼ - Պարոն Ազատ, խնդրում եմ, պետք չէ նորից սկսել:

ԱԶԱՏ - Իհարկե, պետք չէ, միննույն է, ոչինչ ետ բերել չենք կարողանա:

ՄԹՆԵՑՈՒՄ

Բենը լուսավորվում է: Սեղանն ու նստարանները մախկին տեղում են: Նուռուֆարը նստած է սեղանի մոտ: Գալուստն ու Երջանիկը, գլուխները բռնած, նստած են նստարանին՝ իրար կողք: Ազատն ու Գաբրիելը կանգնած են դրախտի դարպասների, իսկ Մոստոն ու Մամսոնը՝ դժոխքի դարպասների մոտ: Համեստն ու Անետան նստած են մյուս նստարանին:

Դժոխքի դարպասներից դուրս է գալիս Աթաբեկը՝ քահանայի հագուստով:

ԱԹԱԲԵԿ - (*Մոսոյին*): Զավակս, աշխատողներիդ ասա, կրակը մի քիչ թուլացնեն, շոգից մեռա: Էդքան աղոթե՛լ կլինի, որ ես աղոթեցի, որ ջերմաստիճանը իջնի: Ոչ մի կերպ չի իջնում:

ԱԶԱՏ - Սուրբ հայր, էն կյանքում պետք է արդար աղոթե՛իր:

ԱԹԱԲԵԿ - Զավակս, դու, ինչպես միշտ, քո տարերքի մեջ ես: (*Նկատում է Համեստին, հայացքը փախցնում է:*) Թույլ տուր մեր նոր հյուրերը հանգստանան, շունչ քաշեն և նոր աղոթքներով լցվեն:

ԳԱԲՐԻԵԼ - Ավելի լավ է ես գնամ: (*Մտնում է դրախտ:*)

ՄՈՍՈ - Նունիկ ջան, էլի զանգիր Արտոյին: Պարոն քահանա, շատ չուշանաք:

ԱԹԱԲԵԿ - Հիմա կգամ, Մոսո գավակս:

Մտան մտնում է դժոխք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - (*հեռախոսով*): Արտո, այ տղա, ո՞ր ես... (*Դուրս է գնում*):

ԵՐԶԱՆԻԿ - Տեր հայր, ինչքան ժամանակ է չէինք տեսնվել, ինչպէս եք:

ԱԹԱԲԵԿ - Ինչպէս պետք է լինեմ, զավակս: Ամբողջ կյանքս նվիրեցի եկեղեցուն, վերջում, որպես Բարձրյալի շնորհակալություն, հայտնվեցի այս անիծյալ տեղում: Բայց ոչինչ, դեռ հույսս չեմ կորցրել:

ԵՐԶԱՆԻԿ - Նոր ծրագիր ունեք:

ԱԹԱԲԵԿ - Իհարկե, օրինիբուն այդ կրակների մեջ մտածում եմ, թե ինչ կարելի է անել, որպեսզի նորից Բարձրյալի ներմանն արժանանամ:

ԳԱԼՈՒՍ - Տեր հայր, գաղտնիքը մեզ էլ ասեք, որ մենք էլ մոտենանք էդ Բարձրյալին:

ԱՆԵՏԱ - Ատիկա փայլուն գաղափար է:

ԵՐԶԱՆԻԿ - Տեր հայր, արագացրեք, ասեք, քանի չենք ուշացել:

ԱԹԱԲԵԿ - Գաղափարներս գումարների հետ են կապված: Մի քիչ գումար ունեմ պահած, պարոն Սամսոնի մոտ, բայց դա շատ քիչ է նպատակիս հասնելու համար:

ՍԱՄՍՈՆ - Տերտեր ջան, էդ փողերից մի քիչ ծախել եմ: Դժոխքի համար նոր շամփուրներ ու կացիններ եմ առել:

ԱԹԱԲԵԿ - Հոգ չէ, զավակս, դա

կիաշվենք որպես միջնորդավճար: Իսկ մնացած գումարն ո՞ր է:

ՍԱՄՍՈՆ - Հենց հիմա բերեմ, Պողոսյան ջան: (*Գնում է*):

ԱԹԱԲԵԿ - Զավակներս, ո՞վ է ցանկանում միանալ իմ նոր «Սուրբ Հայտնություն» կազմակերպությանը, որտեղ պետք է հայտնաբերենք այն, ինչը դեռ հայտնաբերված չէ:

ԵՐԶԱՆԻԿ - Դու միայն ասա, ինչ անենք, որ ազատվենք դժոխքի դարպասներից:

ԱՆԵՏԱ - Պատրաստ եմ բարձր պահել «Սուրբ հայտնություն» կազմակերպության անունը:

ԳԱԼՈՒՍ - Ես էլ կմիանամ ձեր կազմակերպությանը և էնքան կաղոթեմ, որ Աստված ինձ դրախտ ուղարկի ու վերադարձնի հիվանդանոցի ծախսած փողերը: Էդ փողերով դրախտը կվերանորոգեմ:

ԱԹԱԲԵԿ - Անպայման, անպայման, դրախտը վերանորոգման կարիք ունի:

Գալիս է Մամսոնը:

ՍԱՄՍՈՆ - Տեր հայր ջան, սա էլ էն գումարը, որ ինձ էիր վստահել: Տոկոսները հանած՝ լրիվ տեղում է:

ԱԹԱԲԵԿ - Սամսոն զավակս, դուք որ չլինեիք, փողերը կայրվեին դժոխքի կրակներում: Աստված օրհնի...

ՀԱՄԵՍՍ - (*բոլորին*): Էլ մարդ չե՞ք գտել հավատալու:

ԱՆԵՏԱ - Անառակին մեկը, նա կմտածե բոլորիս հոգիների փրկության համար:

ԱԹԱԲԵԿ - Դստրիկս, ինչո՞ւ ես դեմ, քեզ դո՞ւր են գալիս դժոխքի բոցերը:

ՀԱՄԵՍՍ - Զարոգ կարդալու փոխարեն պարտքերդ մարիր, սրիկա՛:

ԵՐԶԱՆԻԿ - Էդ ո՞նց ես խոսում Աստծո ընտրյալի հետ:

ԳԱԼՈՒՍՏ - Զեզ դժոխք ընկնելն է քիչ:

ԱՆԵՏԱ - Անառակ սատանա է:

ՀԱՄԵՍՍ - Սատանայի հետ շփվողը սատանա կդառնա:

ԱԹԱԲԵԿ - Հավանաբար այս աղջկա հոգու մեջ դև է նստել: Հիմա կաղոթեմ Բարձրյալին, որ չարաննեզ դևին հավերժ հեռացնի քեզանից:

ՀԱՄԵՍՍ - Աղոթելու փոխարեն նախկին կյանքիդ պարտքերը մարի: Բա ասում էիր՝ փող չունես:

ԱԹԱԲԵԿ - Դստրիկս, ի՞նչ պարտքերի մասին ես խոսում:

ՀԱՄԵՍՍ - Մեր վերջին հանդիպման պարտքը չես վճարել: Ասացիր, մյուս անգամ կրկնակի կվճարես, գնացիր ու մեռար: Փողերս տո՛ւր: (*Հարձակվում է Աթաբեկի վրա:*)

ԱԹԱԲԵԿ - Օգնեցե՛ք, այս աղջիկը խելագարվել է:

Մնացածները բաժանում են այդ երկուսին:

ՀԱՄԵՍՍ - Ես խելագար չեմ, էն եմ, ինչ կամ: Փողերս տո՛ւր, շո՛ւտ առա՛:

ԵՐԶԱՆԻԿ - Ա՛յ աղջի, գործ չունես տեր հոր հետ:

ԳԱԼՈՒՍՏ - Զեզ նմանները միանգամից պիտի վառվեն դժոխքի բոցերում:

ԱՆԵՏԱ - Աս աղջնակը տեղով մեղք է:

ՀԱՄԵՍՍ - Փողերս տո՛ւր, քեզ եմ ասում...

ԱԹԱԲԵԿ - Դստրիկս, այդ փողերը կազմակերպության բյուջեն հարստացնելու համար են նախատեսված:

ԵՐԶԱՆԻԿ - Տեր հայր, բյուջեն ի՞նչ նպատակի պիտի ծառայի:

ԱԹԱԲԵԿ - Զավակս, նախ քո օգնությունն է պետք, որ ավելացնենք իմ հոգեպահուստի վրա և հետո նոր կարողանանք նախագծման պրոցեսն իրականացնել:

ԵՐԶԱՆԻԿ - Ի՞նչ եք նախագծելու, տեր հայր:

ԱԹԱԲԵԿ - Եկեղեցի:

ԳԱԼՈՒՍՏ - Ի՞նչ եկեղեցի:

ԱԹԱԲԵԿ - Բազմահարկ:

ԱՆԵՏԱ - Ինչի՞ համար:

ԱԹԱԲԵԿ - Մեղքերը քավելու:

ԵՐԶԱՆԻԿ - Բայց որտե՞ղ:

ԱԹԱԲԵԿ - Հենց այստեղ:

ԲՈԼՈՐԸ - Այստեղ...

ԱԹԱԲԵԿ - Որոշել եմ գլխավոր մուտքի մոտ կառուցել եկեղեցի, որպեսզի մեռած հոգիներն այս-

տեղ ընկնելով, միանգամից մուտք գործեն այնտեղ և ստանան մեղքերի թողութայուն: Իսկ մոմերը կվաճառեն այն կյանքի եկեղեցուց կես գնով պակաս:

Գալիս է Նունուֆարը, ձեռքին՝ բենզինի տարա:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Տնաշենն էնքան էլ ծանր է, թներս կոտրվեցին: Արտոն մինչև բենզինը բերեց, հասցրեց, հոգիներս դուրս եկավ: Էդ կրակն արդեն հանգած կլինի:

ԱԹԱԲԵԿ - Չի հանգել, այնքան թեժ էր, որ դուրս եկա մի քիչ հովանալու:

ՍԱՄՍՈՆ - Նունիկ ջան, տուր ես տանեմ, դու մի տանջվիր: *(Բենզինի տարայով մտնում է դժոխք:)*

ԵՐԶԱՆԻԿ - Նունուֆար ջան, դուք աղոթքի կարիք ունեք:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ես արդեն վաղուց աղոթել, վերջացրել եմ:

ԳԱԼՈՒՍ - Դուք չեք հասկանում, սա մեր փրկության վերջին հնարավորությունն է:

ԱՆԵՏԱ - Դուք հրաժարվում եք ընդգրկվել նոր կազմակերպության մեջ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Հրաժարվում եմ, ինձ ջնջեք ձեր ցուցակից: *(Դուրս է գնում:)*

Դժոխքից գալիս Մամսոնը:

ՍԱՄՍՈՆ - Որ չգոռա՝ չի լինի: Կարծես ես եմ մեղավոր, որ Արտոն խցանման մեջ էր ընկել:

ԱԹԱԲԵԿ - Պարոն Սամսոն, բարկանալու փոխարեն դուք էլ ընդգրկվեք մեր կազմակերպության շարքերը:

ՍԱՄՍՈՆ - Այ մարդ, գնա գործիդ, հա՛, ինձ իմ մեղավոր հոգիները լրիվ հերիք են: Նոր գլխացավանք չեմ ուզում: *(Գնում է:)*

ԱԹԱԲԵԿ - *(Ազատին):* Իմ ազատամարտիկ հերոս որդի, կցանկանայինք, որ դուք էլ լրացնեիք մեր շարքերը: Նոր ծրագիր, նոր գաղափար, նոր որակի աղոթարան պետք է հիմնենք:

ԵՐԶԱՆԻԿ - Ես էլ փողը ավելացնելու եմ, որ եկեղեցին կենտրոնում կառուցենք ու մեղմենք հոգիների ցավը:

ԱԶԱՏ - Վայ, ես ձեր մարդ ասողի հերն եմ անիծել: Թո՛ւ... *(Մտնում է դրախտ:)*

ԳԱԼՈՒՍ - Իր տեղն ապահովված է, դրա համար էլ հրաժարվեց:

ՀԱՄԵՍ - Ի տարբերություն մեր ազգի հերոսի, իմ տեղն ապահովված չէ, բայց ես էլ եմ հրաժարվում և պատրաստ եմ պատասխան տալ արածներիս համար: Աստված իմ, գլուխս էլի պտտվեց... սրտխառնոց ունեմ: Տիկին Անետա, խնդրում եմ, օգնեք:

ԱՆԵՏԱ - Աստված ըսել է, որ պետք է սիրիս անգամ քո թշնամուն:

Համեստն ու Անետան մտնում են լոգարան: Գալիս է Մոսոն:

ՄՈՍՈ - Տեր հայր, ձեր վճարած գու-

մարի ժամը լրացավ: Ներս եկեք:
ԵՐԶԱՆԻԿ - Կրկնակի կվճարեմ, միայն թողեք գործերս վերջացնենք: *(Վճարում է Մոսոյին:)* Բենզինի հետ ջուր խառնեք, որ խեղձերը շատ չտանջվեն: Ի վերջո, մեր նոր կազմակերպության ապագա անդամներ են:

ՄՈՍՈ - Ոնց կասեք: Ինչքան շատ փող, այնքան շատ ջուր: *(Մտնում է դժոխք:)*

ԱԹԱԲԵԿ - Զավակներս, եկեղեցին անպայման պետք է լինի մարմարից, իսկ գմբեթին էլ գրված լինի իմ անունը՝ «Սուրբ Աթաբեկ»:

ԵՐԶԱՆԻԿ - Փողը ես տամ, ձեր անունը գրվի:

ԱԹԱԲԵԿ - Զավակս, ես հոգևոր աշխարհից եմ և Աստծուն ավելի մոտ եմ կանգնած: Երբ Աստված եկեղեցու գմբեթին իմ անունը կարդա, շատ կշոյվի: Իսկ եթե ձեր անունը գրենք, նա գլխի կընկնի, որ ապօրինի ենք գործել:

ԵՐԶԱՆԻԿ - Բայց եթե «Սուրբ Աթաբեկ» եկեղեցին չօգնեց, որ դրախտ ընկնեմ, փողերս ետ կվերցնեմ, Մոսոյին վճարածի տոկոսներն էլ հետը:

Դրախտից լավում են Պայծառի և Ազատի ձայները:

ՊԱՅՅԱՌ - Խնդրում եմ, բաց թողեք, ես պետք է տեսնեմ նրան:

ԱԶԱՏ - Տիկին, հանգստացեք, ձեզ հուզվել չի կարելի:

ՊԱՅՅԱՌ - Ես չեմ կարող նրան

չգրկել, դա կյանքիս միակ երագանքն է:

ԱԹԱԲԵԿ - Ինչ խառնաշփոթ է այնտեղ: Հետո էլ կասեն, թե դրախտավայրում հոգիները երջանիկ կապրեն:

ԵՐԶԱՆԻԿ - Դրախտն էլ փչացրին:

ԳԱԼՈՒՍՏ - Հրաշագործյանը թերանում է իր պարտականություններում: Հետո էլ կգա էստեղ ու ավել-պակաս ելույթ կունենա:

ՊԱՅՅԱՌ - Ազատ ջան, խնդրում եմ, թող գնամ: Ես այդ հնարավորությունը չեմ կարող բաց թողնել:

ԱԶԱՏ - Գաբրիել ջան, օգնիր, էս կնոջը ետ պահենք:

ԳԱԲՐԻԵԼ - Պարոն Ազատ, եթե ուզում է, թող գնա: Ես իրավունք չունեմ նրան գրկելու այդ երջանկությունից:

Գալիս են Սամսոն ու Նունուֆարը՝ թրթրը ձեռքին:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ինչ ձայներ են, ինչո՞ւ եք գոռում:

ԱԹԱԲԵԿ - Դատրիկս, դրախտում իրարանցում է, հոգիները հայուցինացիայի մեջ են:

ՍԱՄՍՈՆ - Այ, տեսնո՞ւմ ես, Նունիկ ջան, հետո էլ դժոխքն են վատաբանում:

ՄՈՍՈ - *(գալով)*: Ինչ իրարանցում եք սարքել: Նունուֆար, քեզ հազար անգամ զգուշացրի, որ վերջ տաս հոգիների հետ վիճելուն:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Զարագործյան ջան, ես ի՞նչ անեմ, Հրաշագործյանն

անի՝ մեղավորը եւ լինեմ: *(Թողթե-
րը դնում է սեղանին:)*

ՄՈՍՈ - Էդ հրեշտակն ինչո՞ւ է կա-
տաղել:

**Դրախտից գալիս եմ Գաբրիելը,
Ազատը և Պայծառը: Երջանիկն
ու Պայծառը նայում են իրար:**

ՊԱՅԾԱՌ - Երջանիկ...

ԵՐԶԱՆԻԿ - Մամ ջան... *(Գրկում են
իրար:)*

ՊԱՅԾԱՌ - Բալես, երբ ես եկել:

ԵՐԶԱՆԻԿ - Մի քիչ առաջ, մամ:

ՊԱՅԾԱՌ - Հրաշագործյան ջան, նա
իմ միակ տղան է, ում մասին քեզ
այդքան լավ բաներ էի պատմում:

ԱԶԱՏ - *(հեզանսքով):* Մենք էլ գի-
տեհնք այդ լավ բաները:

ԵՐԶԱՆԻԿ - *(ծնկելով):* Մամ ջան,
ներիր ինձ, խնդրում եմ, ես չէի ու-
զում քեզ ցավ պատճառել, վիրա-
վորել, մենակ թողնել:

ՊԱՅԾԱՌ - Բալես, ախր քո ինչ
տարիքն է, որ եկել ես էստեղ:

ԵՐԶԱՆԻԿ - Աստված ինձ ուղարկեց,
որ քեզ տեսնեմ ու ներողություն
խնդրեմ:

ԳԱՐԻԵԼ - Աստծուն մի խառնեք
այդ գործերին, ի սեր Աստծո:

ՊԱՅԾԱՌ - Ո՛նց էի քեզ կարոտել,
Երջանիկ ջան, ինչ լավ է, որ նո-
րից միասին ենք: Խնդրում եմ, էլ
ինձ մենակ չթողնես:

ԵՐԶԱՆԻԿ - Չեմ թողնի, մամ ջան,
երդվում եմ, որ չեմ թողնի:

ՊԱՅԾԱՌ - *(Գաբրիելին):* Հրեշտակ
ջան, տղաս երբ կգա ինձ մոտ:

ԳԱՐԻԵԼ - Այդ հարցի վերջնական

լուծումը ես չեմ կարող տալ, բայց
որքան հասկանում եմ, ձեզ մոտ
նրա լինելը կասկածելի է:

ԵՐԶԱՆԻԿ - Հրեշտակ ջան, ինչքան
փող է պետք, դու միայն ասա:

ԱԹԱՐԵԿ - *(Երջանիկին):* Զավակս,
այդ գումարները պետք են «Սուրբ
Աթաբեկ» եկեղեցու կառուցման
համար, պետք չէ գումարներն աջ
ու ձախ բաժանել:

ԳԱԼՈՒՍ - Պատգամավոր ջան,
միայն քո մասին ես մտածում, բա
մենք...

ԱԶԱՏ - Էնտեղ հերիք չէր, հիմա էլ
էստեղ եք ուզում կեղտոտել: Ամեն
բան անելուց առաջ պետք է մեկ
քայլ առաջ նայելիք, որպեսզի հի-
մա չհայտնվելիք փրփուրներից
կախված վիճակում:

ԳԱԼՈՒՍ - Իսկ դուք քանի՞ քայլ ա-
ռաջ եք նայել, որ հաշմանդամ
գնացել եք պատերազմ: Չէի՞ք
հասկանում, որ պիտի մեռնենիք:

ՄՈՍՈ - Ազատ պապի, ո՞վ գնահա-
տեց հայրենիքին մատուցած ար-
յանդ գինը, ո՞վ... Մի նորմալ
զենքն ինչ էր, որ էդ էլ չունեիք:

ԱԶԱՏ - *(նայելով Երջանիկին):* Եթե
կեղծ ձայներով ընտրված պատ-
գամավորը և նրա նմանները հայ-
րենիքի ազատության փողերով
առանձնատներ չկառուցեին, ես
ու ինձ նման շատերն այստեղ
չէինք լինի:

ՊԱՅԾԱՌ - Ազատ ջան, քեզանից
չէի սպասում, որ այդպես կարող
էիր վիրավորել որդու:

ՍԱՄՍՈՆ - Այ՛ մարդ, ինչի՞ ետևից եք ընկել:

ԱԹԱԲԵԿ - Զավակներս, շուտով կկառուցեմ «Սուրբ Աթաբեկ» եկեղեցին, և բոլորս կարժանանք Աստծո ներմանը: Ես էլ վերջապես կազատվեմ այդ սարսափելի կրակներից ու պարոն Մոսոյին վճարած տոկոսադրույքներից:

Լոգարանից լսվում է Համեստի ձայնը:

ՀԱՄԵՍ - Վայ, Աստված իմ, ես հիմա կմեռնեմ:

ԱՆԵՏԱ - *(ներս մտնելով):* Ասիկա խենթանալու բան է: *(Տեսնելով Պայծառին:)* Ինչ լավ է, որ նոր հյուր ունինք:

Գալիս է Համեստը:

ՀԱՄԵՍ - Երևի ճնշումս էլի բարձրացել է...

ՊԱՅԾԱՌ - Այս ի՞նչ սիրուն հարսիկ է: Երջանիկ ջան, չլինի՞ քո հարսնացուն է:

ԱՆԵՏԱ - Արդեն՝ կինը:

ՊԱՅԾԱՌ - Բալես, երբ ես ամուսնացել:

ԵՐԶԱՆԻԿ - Տիկին Անետա, մի փչացրեք տրամադրությունս, թողեք վայելեմ մորս ներկայությունը:

ԱՆԵՏԱ - Մո՛ր... Ծատ աղվոր բան պատահած է: *(Ցույց տալով Համեստին:)* Աս հարսնացուն հղի է:

ԲՈԼՈՐԸ - Ի՛նչ...

ԱՆԵՏԱ - Պարոն Երջանիկ, Համեստը ձեր երեխային կսպասե:

ՊԱՅԾԱՌ - Ուրեմն թոռնիկ պիտի ունենամ... Ծնորհակալ եմ, Տեր Աստված:

ԱՆԵՏԱ - Ես էլ եմ Աստծուն շնորհակալ: Վերջապես հասկըցա, որ Դերենիկս ինձի չի դավաճանել, պարոն Երջանիկը աս գեղեցկուհուն հղիացրած ու փախած է:

ՄՈՍՈ - Մի՛ րոպե, մի՛ րոպե... սա ձեզ համար ծննդատուն չէ:

ՍԱՄՍՈՆ - Նունիկ ջան, դու բան հասկանում ես:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Սամսոն պապի, լռիր, հասկանանք, թե ինչ է կատարվում:

ԱԹԱԲԵԿ - Ծնորհավորում եմ, զավակներս:

ԵՐԶԱՆԻԿ - Տո, ի՞նչն եք շնորհավորում: *(Համեստին.)* Այ՛ աղջի, բացատրիր հասկանամ, էս ի՞նչ հանելուկ է:

ՀԱՄԵՍ - Ինձ էս վիճակով լքեցիր ու անհետացար, սրիկա՛մ, բայց ձակատագիրն էնպես դասավորվեց, որ էստեղ հանդիպեցինք:

ՊԱՅԾԱՌ - Իմ թոռնիկն է... Իմ հարսիկը...

ԱԹԱԲԵԿ - Մենք նրանց կամուսնացնենք «Սուրբ Աթաբեկ» նորակառույց եկեղեցում, իսկ նրանց զավակին կմկրտենք եկեղեցու բակում: Այստեղ ամուսնությունն ու մկրտությունը ավելի էժան են, որովհետև գործում է գեղչերի ձկուն համակարգ:

ԳԱԲՐԻԵԼ - Հարգարժաններս, հասկանում եք, թե ինչ եք խոսում:

ԱԹԱԲԵԿ - Ես առաջարկում եմ, որ պարոն Գալուստն էլ դառնա նորածնի կնքահայրը: Ես կպաշտպանի փոքրիկի իրավունքները:

ԳԱԼՈՒՍՏ - Ինձ համար մեծ պատիվ կլինի լինել հարգարժան պատգամավորի փոքրիկի կնքահայրը:

ՊԱՅՅԱՌ - Հարսիկ ջան, ո՞նց ես:

ՀԱՄԵՍՏ - Ծնորհակալ եմ, բայց իմ մասին պետք չէ մտածել:

ՊԱՅՅԱՌ - Ախր, ո՞նց չմտածեմ, այն բալա:

ԱՆԵՏԱ - Նունուֆար ջան, ինձ թուղթ ու գրիչ կտամ:

Նունուֆարը թուղթ ու գրիչը տալիս է Անետային:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Խնդրեմ:

ԱՆԵՏԱ - Ծնորհակալ եմ: *(Սկսում է գրել:)* Ումի՞ց ենք սկսում:

ՍԱՄՍՈՆ - Ա՛յ կնիկ, ի՞նչ ես անում:

ԱՆԵՏԱ - Հարսանիքի հյուրերի ցուցակ կլրացնիմ:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Տիկին Անետա, հոչ է՞ք գժվել:

ԱՆԵՏԱ - Կուզիմ ձեզի համար աղվոր բան ըրած ըլլամ, ինձի գիժ կանվանիք:

ՀԱՄԵՍՏ - Ես չեմ ուզում ամուսնանալ այս դավաճանի հետ:

ԳԱԼՈՒՍՏ - Համեստ ջան, կյանքն էսպիսի հնարավորություն մեկ անգամ է տալիս:

ԱԹԱԲԵԿ - Դատրիկս, քեզ հուզվել չի կարելի, երեխային կվնասես:

ԳԱԲՐԻԵԼ - Եթե այստեղ մի քիչ էլ մնամ՝ կխելագարվեմ:

ԳԱԼՈՒՍՏ - Ուրախության առիթից դեռ ոչ ոք չի խելագարվել:

ԳԱԲՐԻԵԼ - Մեղավոր հոգիների հետ խոսելն անիմաստ է: Տիկին Պայծառ, պարոն Ազատ, խնդրում եմ, ներս եկեք, քանի դուք էլ չեք շարժել Աստծո զայրույթը:

ԱԶԱՏ - Իրոք որ, կարելի է խելագարվել: Երկիրը հիմնահատակ թաղեցին մեղքերի մեջ: *(Մտնում է դրախտ:)*

ՊԱՅՅԱՌ - *(Երջանիկին):* Ոչ մի տեղ չգնաս, ես շուտ կվերադառնամ: Կխոսեմ Աստծո հետ, չէ՞ որ նրա շնորհիվ է մարդ լույս աշխարհ գալիս: *(Մտնում է դրախտ:)*

ԳԱԲՐԻԵԼ - Բոլորիդ բարի ժամանց: *(Մտնում է դրախտ:)*

ՄՈՍՈ - Եթե ինչ-որ բանով կարողանամ օգնել, անպայման դիմեք: Ես կարող եմ միջնորդել երկնային արքայությանը, որ դատաստանի օրը մի փոքր հետաձգի:

ԳԱԼՈՒՍՏ - Պարոն Մոսո, ձեզնից շատ շնորհակալ ենք:

ՄՈՍՈ - Պարզապես մի փոքրիկ խնդիր կա:

ԱԹԱԲԵԿ - Մեզ նման Աստծո հավատացյալների համար ի՞նչ խնդիր կարող է լինել, դժոխքի տիրակալ:

ՄՈՍՈ - Միջնորդավճարը բավականին թանկ է, չէ՞ որ հատուկ դիմում-խնդրանքով պետք է գնամ ընդունարան:

ԳԱԼՈՒՍՏ - Փողը խնդիր չէ, մեր պատգամավորը բոլոր հարցերը կլուծի:

ԵՐՋԱՆԻԿ - Ինչքան է պետք, էդ դասատանի օրը հետաձգեք:

ՄՈՍՈ - Գումարը փոխանցեք իմ հաշվեհամարին: *(Այցեքարտը տալիս է Երջանիկին:)* Պարոն քահանա, երկար սպասեցնել չտաք, դժոխքի տարածքում ձեր բացակայության ժամկետը շուտով լրանալու է: *(Մտնում է դժոխք:)*

Համեստն իրեն վատ է զգում, բռնում է գլուխը:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Ձեզ ի՞նչ պատահեց, նորի՞ց սրտխառնոց...

ԵՐՋԱՆԻԿ - Սամսոն պապի, բժիշկ կանչիր, շուտ արա:

ՍԱՄՍՈՆ - Ես ի՞նչ անեմ, որ էստեղ բժիշկ չկա:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Բժշկի ծառայություններն այստեղ ավելորդ են:

ԱՆԵՏԱ - Ես կօգնեմ, նախորդ կյանքում բժշկուհի եղած եմ:

ԵՐՋԱՆԻԿ - Ինչ լավ է, որ Համեստիս վտանգ չի սպառնա:

ՀԱՄԵՏՍ - Ես քո Համեստը չեմ: Մենել ենք, նոր ես հիշում:

ԳԱԼՈՒՍՏ - Համեստ ջան, դու պիտի երջանիկ լինես, որ երեխայիդ հայրը մեր պատգամավորն է:

ՀԱՄԵՏՍ - Ավելի լավ է փոքրիկս առանց հայր մեծանա, քան նրանման հայր լինի կողքին:

ԵՐՋԱՆԻԿ - Չփորձեն ինձ հետ էդպես խոսել... *(Ուզում է հարվածել:)*

ԱՆԵՏԱ - *(նրանց բաժանելով):* Խե-

լագարվել եք, չե՞ք հասկընա, թե ինչ վիճակում է:

ԳԱԼՈՒՍՏ - Իմ ապագա սանիկին կվնասեք և ինձ էլ կզրկեք նրա կնքահայրը լինելու հաճույքից:

ԱԹԱԲԵԿ - Եթե վնասվի փոքրիկը, ես անկարող կլինեմ նորակառույց եկեղեցու բակում կատարել մկրտության արարողությունը:

ՀԱՄԵՏՍ - Ինձ պետք չեն ձեր օգնությունները, բոլորդ մտածում եք միայն ձեր մասին, ձեր շահի մասին: Ես պատրաստ եմ Աստծո արդար դատաստանին: Ինձ համար ինչ էլ որոշվի, պատրաստ եմ կրել պատիժս, որովհետև արժանացել եմ դրան: *(Գոռում է:)* Ես պատրաստ եմ դատաստանին: Դարպասները բացեք... *(Հարվածում է դժոխքի դարպասներին:)*

ՆՈՒՆՈՒՖԱՐ - Օգնեք, աղջիկը խելագարվել է:

ԱԹԱԲԵԿ - Հավանաբար որոշել է մեղքերն ավելացնել:

ԱՆԵՏԱ - Ասիկա բնականոն պահվածք չէ:

ԳԱԼՈՒՍՏ - Ծատ եսասեր ու նախանձ աղջիկ է:

ՀԱՄԵՏՍ - *(ազատվելով նրանցից):* Թողեք, ասում եմ, ես չեմ ուզում ապրել:

ԵՐՋԱՆԻԿ - Մորս երջանկությունը երկրորդ անգամ չկուտրես:

ՀԱՄԵՏՍ - Բաց թող... *(Ուշաթափվում է:)*

Խառնաշփոք:

ԼՈՒՆՈՒՖԱՐ - Այն կյանքի իրարան-
ցումը տեղափոխվել է այստեղ:

ԱԹԱԲԵԿ - Տեր Աստված, մեզ ազա-
տիր մեղավորներից:

ՍԱՄՍՈՆ - Ծուտով կազատի:

Շնչակտուր ներս են վազում Ա-
զատն ու Պայծառը:

ՊԱՅԾԱՌ - Թռռնիկս...

Հնչում է երկնային Առաջին զան-
գը: Լռություն: Բոլորը նայում են
երկինք:

ԱՆԵՏԱ - Համեստը կորցրեց երե-
խային:

ՊԱՅԾԱՌ - Ո՛հ... (Գրկում է ուշա-
թափված Համեստին:)

Հնչում է երկնային Երկրորդ զան-
գը: Լռություն: Բոլորը նայում են
երկինք:

ԼՈՒՆՈՒՖԱՐ - Աստված իմ... մոտե-
նում է:

ՍԱՄՍՈՆ - Հազիվ հասցրել էինք ըն-
տելանալ, մարդավարի շփվել: Է-
լի մոտենում է:

ԱԹԱԲԵԿ - Իսկ «Սուրբ Աթաբեկ» ե-
կեղեցու կառուցումը ի՞նչ պիտի
լինի...

ԱԶԱՏ - Մեկը լիներ, քեզ օգներ,
պարոն քահանա:

ԱԹԱԲԵԿ - Լռիր, հաշմանդամ սրի-
կա:

Հնչում է երկնային Երրորդ զան-
գը: Լռություն: Բոլորը նայում են
երկինք:

ԵՐԿՆԱՅԻՆ ԶԱՅՆ - Ուշադրություն,
դարպասները բացվում են:

Դրախտի և դժոխք դարպասները
բացվում են: Դուրս են գալիս
Գաբրիելն ու Մոսն՝ դիմակնե-
րով, յուրաքանչյուրը մնում է իր
դարպասի մոտ կանգնած: Հա-
մեստն ուշքի է գալիս: Երջանիկը,
Գալուստը նստում են Անետայի
և Համեստի կողքին: Ազատը
հպարտ կեցվածքով նստած է:
Պայծառը ծնկի է եկել նրա կողքը
և ձեռքերը երկինք է պարզել:
Մամսոնը զինվորի պես կանգ-
նած է, իսկ Նունուֆարը նստած է
սեղանի մոտ: Մոսն, ժամացույ-
ցին նայելով, Աթաբեկին ցույց է
տալիս դժոխքի կողմը: Աթաբեկը
երեսը խաչակնքելով մտնում է
դժոխք: Մոսն զրպանից հանում
է արնոտ թուղթը, կարդում ու
ցույց է տալիս Համեստին: Մամ-
սոնը բռնում է Համեստի թևը:

ՀԱՄԵՏՍ - Ստանում եմ այն, ինչին
արժանի եմ:

Մամսոնը Համեստին տանում է
դժոխք, վերադառնում է: Մոսն
մատնացույց է անում Անետա-
յին:

ԱՆԵՏԱ - Բայց ի՞նչ մեղք գործած եմ,
որ ինձ դժոխքի վառ բոցերուն
կարժանացնիք: Ամուսնուս հետ
միայն զինի խմած եմ... Դերե-
նիկ... Դերենիկ...

Մամսոնը Անետային տանում է

դժոխք, վերադառնում է: Մոսոն մատնացույց է անում Գալուստին:

ԳԱԼՈՒՍՏ - Չէ, խնդրում եմ, խղճացեք ինձ: Ես իրավունքները լավ գիտեմ: Խոստանում եմ, եթե ինձ դրախտ ուղարկեք, ես կպաշտպանեմ Աստծո շահերը:

Մամսոնը Գալուստին դժոխք է տանում, վերադառնում է: Երջանիկն ու Պայծառը նայում են իրար: Պայծառն ուզում է մոտենալ Երջանիկին, Գաբրիելը թույլ չի տալիս: Մոսոն մատնացույց է անում Երջանիկին:

ՊԱՅԾԱՌ - Խնդրում եմ, իմ բալային մի տարեք...

ԵՐՋԱՆԻԿ - Մամ...

ՊԱՅԾԱՌ - Ինձ երկրորդ անգամ մի գրկեք իմ գավակից:

ԵՐՋԱՆԻԿ - Մամ ջան, խնդրում եմ, ինձ ներիր: Ներիր ամեն ինչի համար: Ներիր, որ ամբողջ կյանքում քեզ միայն ցավ եմ պատճառել:

ՊԱՅԾԱՌ - Իմ Երջանիկ դժբախտ բալային մի տարեք, նրա փոխարեն ինձ ուղարկեք դժոխք: Ես կարող եմ այնտեղ դիմանալ: Իմ Երջանիկը թող գնա դրախտ, թո-

ղեք գոնե այնտեղ երջանիկ ապրի:

ԵՐՋԱՆԻԿ - Չէ, մամ, դրախտը ինձ նմանների համար չէ: Դրախտում Ազատի և քեզ նման մարդիկ պիտի ապրեն, որպեսզի Աստված միշտ ժպտա ձեզ տեսնելիս: Ես իրավունք չունեմ այնտեղ ոտք դնելու, ես մեղավոր եմ, չգնահատեցի, ինչ Աստված ինձ տվել էր...

Մամսոնը Երջանիկին տանում է դժոխքի դարպասներից ներս:

ՊԱՅԾԱՌ - Երջանիկ... *(Անզորացած ընկնում է հատակին:)*

Գաբրիելն ու Ազատը Պայծառին բարձրացնում են: Մամսոնը գալիս, կանգնում է իր տեղում: Մոսոն բարձրաձայն ծիծաղում է, Նունուֆարին ձեռքով ինչ-որ բան է հասկացնում և մտնում է դժոխք: Գաբրիելը գլխահակ, Ազատի ու Պայծառի հետ մտնում է դրախտ: Մամսոնը գնում է «Ընդունող հանձնաժողով» դռնով:

ՆՈՒՆՈՒՖԱՐ - *(հեռախոսով):* Արտո ջան, Մոսոն էլի վառելիք է պատվիրել...

Ամսագրային տարբերակ

ՊԱՀՈՉ ՊԱՀՈՉ ՊԱՀՈՉ ՊԱՀՈՉ ՊԱՀՈՉ



**Գոհար
ՄԱՐԿՈՍՅԱՆ-
ԿԱՍՊԵՐ**

ՀՈՒՇԱՐՉԱՆ

Գործող անձինք

ՄԱՅՐ

ԿԱՐԻՆԵ - նրա դուստրը

ՍՈՒՐԵՆ - Կարինեի ամուսինը

ՀԱՍՄԻԿ - նրանց դուստրը

ԻՆՆԱ - հարսը

Գործողությունը կատարվում է նույն սենյակում:

ՏԵՄԱՐԱՆ. Մայրը նստած է բազմոցին: Մտնում է Կարինեն, նրան հետևում է Իննան:

ՄԱՅՐ - Ցերեկը Գուրգենը զանգեց, ասաց, հարմար քար է գտել: Գնացի տեսա՝ դուրըս եկավ: Քարտաշների հետ էլ խոսեցի, արհեստանոց տեղափոխելու համար էլ... Մ'նում է՝ փողը մուծենք:

ԿԱՐԻՆԵ - Ինչքա՛ն:

ՄԱՅՐ - Հե՛չ, չորս հազար:

ԻՆՆԱ - Չորս հազար...

ՄԱՅՐ - Թանկ է, բայց ծարներս ի՛նչ, ավելի էժան կարգին բան չենք գտնի: Լավ քար է, մեծ:

ԻՆՆԱ - Իսկ փողը որտեղի՞ց պիտի ծարնեք:

ՄԱՅՐ - Որտեղի՞ց... դու ոնց որ մոռացել ես, որ իմ որդին ետ գցած փող ուներ:

ԻՆՆԱ - Ուզում եք ասել՝ իմ ամուսինը:

ՄԱՅՐ - Մինչև քեզ ամուսինը դառնալը նա քառասուն տարի իմ տղան է եղել:

ԻՆՆԱ - Դա ոչինչ չի նշանակում: Հիմա կարևորն այն է, որ մնացել եմ մենակ, երկու երեխա ձեռքիս ու միտք չունեմ ամեն մի հիմարության համար փող շաղ տալ: Այդ փողով երեխաներիս պիտի պահեմ, մեծացնեմ:

ՄԱՅՐ - Հիմարությամբ... դու հիմարություն ես համարում էն, որ... Քեզ համար ամուսնուդ հիշատակը ոչինչ չի նշանակում:

ԻՆՆԱ - Մարմարե անմիտ քարով չէ, որ պիտի նրան հիշեմ: Այդ քարե-

րի կարիքը երևի նրանք ունեն, ովքեր գոնե քարին նայելով իրենց վիշտը կբորբոքեն:

ՄԱՅՐ - Ո՞նց ես համարձակվում... ո՞նց ես համարձակվում քո վիշտը համեմատել իմի հետ, մինուժար որդուն կորցրած մոր վշտի հետ: Դու... դու, որ նրա խելքը կերար, ծանկոզ գցեցիր... միայն մի բանի համար...

ԻՆՆԱ - Ինչի՞ համար... Չլինի՞ այս քնձոռտ երեք սենյակի համար: Աղջկադ, նրա ամուսնու, երեխաների հետ անընդհատ վեճ ու կռվի համար, զզվոտոցի ու շան կյանքի համար... թե՛ եղած-չեղած մի քանի հազարի համար, որ նա մի կերպ ետ էր գցել տասնհինգ տարում:

ՄԱՅՐ - Ձենդ:

ԿԱՐԻՆԵ - Պետք չէ, մամ, հանգստացիր:

ՄԱՅՐ - Հանգստացիր... Տեր աստված, իմ խեղճ տղան ամբողջ կյանքում ճորտի պես աշխատեց, հոգին ելավ, որ հիմի ափսոսան գոնե մի թեթև քար դնել գերեզմանին, որ նրա գերեզմանը հողին հավասարվի, խոտ ու փշով ծածկվի, որ մարդիկ գան ու մատով ցույց տան՝ ըհը՛, տեսե՛ք, ինչ անխիղճ-անաստված մայր է ունեցել, որ փողը խնայել ու որդու գերեզմանն էսպես առանց քար է թողել:

ԻՆՆԱ - Ա՛յ, հենց դա է... ձեզ համար կարևոր է, թե ինչ կասեն մարդիկ, մատով ցույց կտան, ոչ թե...

ԿԱՐԻՆԵ - Վերջ տուր, Իննա, ո՞նց է լեզուդ պտտվում...

ԻՆՆԱ - Ոնց է պտտվում, ոնց չի պտտվում՝ չգիտեմ: Մի բան գիտեմ՝ Վիլիկի փողից ոչ մի կոպեկ չպիտի ծախսվի այդ անմտության վրա: Այդ փողը պատկանում է իմ երեխաներին:

ՄԱՅՐ - Առայժմ ես եմ էս տան տերը, ոնց ասեմ՝ էնպես էլ պիտի լինի:

ԻՆՆԱ - Դեռ կտեսնենք:

ՄԱՅՐ - Կտեսնե՞նք... Տես, է, ոնց է էս անամոթը խոսում հետս: Էլ համբերություն չթողեց, պիտի դուրս քշեմ... Դուրս իմ տնից:

ԻՆՆԱ - Այս տունը որքան ձերն է, այդքան էլ իմն է: Ես այստեղ գրանցված եմ ու ոչ մի տեղ չեմ պատրաստվում գնալ:

ՄԱՅՐ - Որ էդպես է՝ ես կգնամ:

ԻՆՆԱ - Խնդրեմ:

Մայրը դուրս է գնում՝ դուռը շրխկացնելով:

ՏԵՍԱՐԱՆ. Իննա, Կարինե:

ԿԱՐԻՆԵ - Ինչո՞ւ վիրավորեցիր մամային: Դու իսկապես մտածում ես, որ նա քեզնից պակաս է տանջվել:

ԻՆՆԱ - Չեմ մտածում, բայց համաձայնվիր, որ այսպես էլ չի կարելի: Այդքան փող քամուն տալ... իսկ իմ երկու երեխաները, մեծս ընդամենը տասնչորս տարեկան է: Չե՞ս մտածում, ինչպես եմ պահելու նրանց, իմ հարյուր տասը ուրբի՞ով:

ԿԱՐԻՆԵ - Հասկանում եմ քեզ, բայց մամային էլ պետք է հասկանալ: Ախր, իսկապես չի կարելի Վիլիկի գերեզմանը էդպես թողնել: Գուցե մաման չափն անցնում է հուշարձանի հարցում, բայց ինչոր քար պետք է դնել, չէ՞:

ԻՆՆԱ - Է, կդնենք: Փոքրիկ, սիրուն սալաքար, ու վերջ: Ո՞ւմ է պետք այդ ցուցամուկությունը:

ԿԱՐԻՆԵ - Օ՛ֆ, չգիտեմ... բայց գուցե...

ԻՆՆԱ - Կներես, բայց դու էլ մորիցդ պակասը չես: Ինչ կասեն-ինչ չեն ասի-մատով ցույց կտան: Տես, ինչ ես դարձել, քեզ չես հետևում, ի՞նչ ես ուզում դրանով ասել: Որ աշխատակիցներդ նայեն քեզ, իրար մեջ փսփսա՞ն՝ ախ, խեղճ աղջիկ, ոնց է դարդ անում եղբոր համար: Դա՞ է քեզ պետք: Իսկ ես չեմ ուզում, որ ինձ խղճան, տեսնո՞ւմ ես, ոնց եմ ինձ հետևում: Իսկ գուցե իմ սիրտը բոլորիդ սրտից շատ է ցավում... ասենք, ի՞նչ իմանաս: Ամեն օր գերեզմանոց չեմ գնում, ձեռքերս երկինք չեմ տնկում ու մորդ պես ողբ ու լաց չեմ դնում... կամ քեզ պես մազերս զգզված ման չեմ գալիս: Էհ, միևնույն է, չես հասկանա: *(Սենյակից գնում է:)*

ՏԵՍԱՐԱՆ. Կարինե:

ԿԱՐԻՆԵ - Հա, իհարկե, ո՞նց հասկանամ, հո քեզ պես զարգացած չե՞մ: Երեք տարի է՝ կինո չեմ գնացել, չեմ էլ հիշում, թե վերջին

անգամ երբ եմ ձեռքս գիրք վերցրել: Երբ որ պետք էր երեխային մոտս թողնել ու առողջարան գնալ՝ հասկացող էի, իսկ հիմա...

ՏԵՍԱՐԱՆ. Սուրեն, Կարինե:

ՍՈՒՐԵՆ - *(սենյակ է մտնում)*: Էլի լաց ես լինում: Լավ, հերիք չէ՛, արդեն կես տարի է անցել:

ԿԱՐԻՆԵ - Դրա համար չեմ լալիս:

ՍՈՒՐԵՆ - Բա ինչի՛: Մորդ հենտ ես կռվել:

ԿԱՐԻՆԵ - Չէ:

ՍՈՒՐԵՆ - Պարզ է, Իննայի հետ: Ինչի՛ համար եք մի գլուխ վիճում, չհոգնեցի՞ք:

ԿԱՐԻՆԵ - Էլ չեմ դիմանում... Էս տանը էլ չեմ կարող մնալ, Սուր, չեմ կարող:

ՍՈՒՐԵՆ - *(գրկում է նրան)*: Իսկ ես կարող եմ: Դու գոնե տանջվում ես հարազատ մորդ աչքի առաջ, իսկ ես՝ զոքանչի... մի հատ պատկերացրո՞ւ: Երեխեքի լացն ու դժժոցն էլ... Ոչ կարդալ է լինում, ոչ հեռուստացույց նայել: Լստելու տեղ չկա, ինչ հեռուստացույց: Աշխատելու մասին չեմ ասում՝ մի գիծ քաշելն անհնար է, մեկ Հրանտիկն է դուրս թռչում ոտքերիս տակից, մեկ դու ես դիպչում ձեռքիս, մեկ հարսդ է խանգարում... Լավ, մի լա, հո քեզ բան չեմ ասում: Քիչ մնաց, շուտով որոշումը կլինի, ու մի կես տարուց կսկսվի շինարարությունը: Մեր սեփական բնակարանը կունենանք: Վաղուց կունենայինք, եթե

մեր էս հիմարությունը չլիներ:
ԿԱՐԻՆԵ - Ինչ իմանայինք, որ Վիլիկը կորոշի նորից Երևան գալ: Էնպես կտրական էր ասում՝ ո՛չ մի դեպքում, երբեք:

ՍՈՒՐԵՆ - Շատ էլ ասում էր... Մեկ էլ, ըհը՛, հայտնվեց: Էն էլ՝ կնոջ ու երեխայի հետ: Բարև ձեզ, ես ձեր եղբայրն եմ, ազատեք, խնդրեմ, բնակարանը:

ԿԱՐԻՆԵ - Լա էդպիսի բան չի ասել: Իմ եղբայրը չէր կարող...

ՍՈՒՐԵՆ - Լավ, չէր կարող, չէր կարող, մի փշոտվի: Պարզապես իր տունը եկավ: Ու վերջ:

ԿԱՐԻՆԵ - Գոնե մեռածների մասին կարող ես հարգանքով խոսել:

ՍՈՒՐԵՆ - Ինչ ասացի՞ որ... Դու գիտես, միշտ էլ սիրել եմ նրան, մեզ ինչ կա, տղամարդիկ իրար հետ հաշտ են ապրում, էդ դուք եք մի գլուխ կռվշտում:

ՏԵՍԱՐԱՆ. Սուրեն, Կարինե, Հասմիկ:

ՀԱՍՄԻԿ - *(սենյակ է մտնում)*: Մա, ես գնում եմ, կգամ տասնմեկին:

ՍՈՒՐԵՆ - Էդ ո՞ր է գնում իմ գեղեցկուհին:

ԿԱՐԻՆԵ - Ընկերուհու տուն:

ՀԱՍՄԻԿ - Մեր աղջիկներից մեկի ծննդյան օրն է: Մայրիկը գիտի:

ՍՈՒՐԵՆ - Հա-ա... Լավ, գնա, գնա:

ՏԵՍԱՐԱՆ. Սուրեն, Կարինե, Հասմիկ, Մայր:

ՄԱՅՐ - *(հայտնվում է շեմին)*: Ո՞ր, հո չե՞ք գժվել: Էդ ո՞ր է գնում:

ՀԱՍՄԻԿ - Ծնունդի:

ՄԱՅՐ - Ի՞նչ ծնունդ, ի՞նչ բան, քեռիդ մեռել է, իսկ դու՝ ծնունդի...

ՀԱՍՄԻԿ - Արդեն ինչքան ժամանակ է անցել:

ՄԱՅՐ - Չորս ու կես ամիս:

ԿԱՐԻՆԵ - Մամ, բայց տասնինը տարեկան աղջիկը չի կարող ամբողջ տարին տանը նստել: Սարսափելի ոչինչ չի պատահի, եթե գնա ընկերուհու մոտ: Ընդամենը մի քանիսն են լինելու, ընկեր-ընկերուհիները:

ՄԱՅՐ - Ավելի վատ: Բոլորն էլ եկել են թաղմանը, ի՞նչ կմտածեն, եթե Հասմիկն իրենց հետ քեֆ-ուրախություն անի: Ամոթ է, հասկացե՛ք:

ՀԱՍՄԻԿ - Բայց, տատի...

ՄԱՅՐ - Լավ, գնա, գնա, արա սրտիդ ուզածը, երգիր, պարիր, ուրախացիր, էլ ոչ մի բանի չեմ խառնվի: Էս տանը ես չկամ, մենակ տղես էր սիրում ինձ, իմ խեղճ բալեն... *(Արտասովորով դուրս է գնում:)*

ՏԵՍԱՐԱՆ. Մուրեմ, Կարինե, Հասմիկ:

ՀԱՍՄԻԿ - *(անգոր):* Ի՞նչ անեմ, մա:

ԿԱՐԻՆԵ - Ոչ մի տեղ էլ մի գնա:

ՀԱՍՄԻԿ - Բայց, մա...

ԿԱՐԻՆԵ - Խնդրում եմ, քեզ, Հասմիկ: Իմ խաթեր համար:

ՀԱՍՄԻԿ - Զո խաթեր համար, քո խաթեր համար... Իսկ ի՞մ խաթեր համար երբ պիտի լինի: Չէ, ո-

չինչ, ես կմնամ, բայց կարելի է էսպես...

ԿԱՐԻՆԵ - Հասկացիր, աղջիկս, նա բոլորիցս շատ է տանջվում: Մայր է, չէ... դեռ չգիտես, ինչ ասել է մայր: Նա ծանր է տանում ամեն ինչ, պիտի աշխատենք հետը չվիճել, ի վերջո, կարելի է, չէ, ինչ-որ բան զոհել:

ՀԱՍՄԻԿ - Ինչ-որ բան: Կարծում ես՝ չե՞մ տեսնում... Ես արդեն մեծ եմ, մա, դու չես նկատում, ախր, տեսնում եմ, թե ոնց է քեզ իրեն ենթարկել ամեն ինչում: Իսկ դու անում ես նրա ուզածը ոչ թե որ մտածում ես՝ ինքը ձիշտ է, այլ պարզապես զոհում ես: Ամեն ինչ ես զոհում, ինչքան կարելի է...

ԿԱՐԻՆԵ - Հեշտ ես դատում: Կարծում ես, նա ինձ համար ոչինչ չի՞ զոհել:

ՀԱՍՄԻԿ - Ի հարկե, նա էլ քեզ համար է ինչ-որ բան զոհել, դա բնական է՝ հարազատ մայրդ է, չէ՞, բայց դու ավելին ես արել: Ու վատն այն է, որ նա սովորել է դրան, մտածում է, որ էդպես էլ պիտի լիներ: Բայց ինձ հետ նույն ձևով չի կարելի վարվել, թող լավ իմանա: Այսօր ես չեմ գնա, բայց ոչ նրա դատարկ նախապաշարումների պատճառով, այլ քեզ համար: Գիտեմ, որ փնթփնթալու է վրադ՝ էնպես չես դաստիարակել աղջկադ, որ հարգի մեծին: *(Դուրս է գնում:)*

ՏԵՍԱՐԱՆ. Մուրեմ, Կարինե:

ՍՈՒՐԵՆ - Ճիշտ որ մեր աղջիկը մե-

ծացել է... Լավ, բակ իջնեմ, շախմատ խաղալու: Պետք եղավ՝ կանչիր: (Գնում է:)

ՏԵՄԱՐԱՆ. Կարիճե, Ինճա:

ԻՆՆԱ - (դռնից ներս նայելով): Տանն ես, չէ... Հրանտիկի հետ մի քիչ ման գամ, խեղճ երեխան ամբողջ օրը չորս պատի մեջ է: Փոքրը քնած է, աչքը վրան պահիր, լավ: Չեմ կարծում, որ զարթնի, բայց մեկ-մեկ նայիր: Հուսով եմ, քեզ դժվար չէ...

ԿԱՐԻՆԵ - Չէ, ինչ ես ասում: Գնա:

ՏԵՄԱՐԱՆ. Կարիճե, Մայր:

ՄԱՅՐ - (սենյակ է մտնում): Կարիկ, աղջիկս, ուզում եմ հետո խոսել:

ԿԱՐԻՆԵ - Ի՞նչ է որ, մա:

ՄԱՅՐ - Հա՛ գլուխ եմ կոտրում, թե որտեղից փող ձարենք: Էն անպետքն իսկապես չի տա, իսկ առանց նրա համաձայնությանը չեմ կարող վերցնել:

ԿԱՐԻՆԵ - Նա անպետք չէ, մա, իր երեխաների մասին է մտածում: Ոնց որ դու...

ՄԱՅՐ - Իսկ քո կարծիքով, ես չեմ մտածում նրա երեխեքի մասին: Իմ թոռների մասին: Վերջապես, նա մենակ չէ, հո Վիլիկի երեխեքին փողոց չե՛նք օգի. ես կօգնեմ, դու կօգնես: Հետո՝ հո մտքովդ չի՞ անցնում, որ էդ թեթևսովիկը պատրաստվում է մենակ ապրել:

ԿԱՐԻՆԵ - Պետք չի, մամ:

ՄԱՅՐ - Ինչի՞ ես դրան պաշտպանում, հը: Ինչի՞ ես բոլորին պաշտ-

պան կանգնում, էդ ի՞նչ բնավորություն է քո բնավորությունը: Մի երեսիդ խփում են՝ մյուսդ ես դեմ անում: Նա մի գլուխ քեզ կոպտում է, իսկ դու... Ինքնասիրություն չունես: Հպարտություն չունես:

ԿԱՐԻՆԵ - Հա, երևի չունեմ, որ թույլ եմ տալիս՝ էդպես խոսես ինձ հետ:

ՄԱՅՐ - Ինձ ամեն ինչ կարելի է, ես մայր եմ: Իսկ նա՛ ով է... Լավ, հիմի դրա մասին խոսելու ժամանակը չի: Ուրեմն, մտածում էի, մտածում...

ԿԱՐԻՆԵ - Ու գտա՛ր:

ՄԱՅՐ - Գտա: (Կարճ դադար:) Ախր, Սուրիկն ու դու փող ունեք: Մի վախենա, կտամ, թոշակս կհավաքեմ՝ կտամ:

ԿԱՐԻՆԵ - Բայց դու գիտես, որ էդ փողը կոռպերատիվ բնակարանի համար է: Ու շուտով առաջին մուծումը պիտի անենք:

ՄԱՅՐ - Լավ, մի երկու տարի չե՛ք կարող սպասել: Փառք աստծու, փողոցում չեք, վարձով չեք ապրում, ձեր մոր մոտ եք, հարազատ մոր մոտ:

ԿԱՐԻՆԵ - Դու գիտես, որ արդեն երրորդ տարին երազում ենք բնակարանի մասին: Ինչքան կարելի է էսպես ապրել:

ՄԱՅՐ - Ինչո՞վ քեզ հարմար չէ մեր կյանքը:

ԿԱՐԻՆԵ - Սա ընդհանրապես կյանք չէ, մամ, հասկացիր, մենք էլ իրավունք ունենք աշխատանքից հետո նստել, խոսել, հանգստանալ:

Արդեն ուսանող աղջիկ ունեմ: Միթե երբեք հյուրասենյակ չպիտի ունենանք, որ ընկերները գան աղջկաս մոտ, որ մեր ընկերները մեզ հյուր գան: Ամբողջ կյանքում Սուրենը բակում շախմատ չի խաղալու, վերջապես, ես իրավունք ունեմ գոնե երբեմն մենակ մնալ ամուսնուս հետ:

ՄԱՅՐ - Միանգամից ասա, որ հոգնել ես ինձնից, որ ուզում ես ազատվել իմ փնթփնթոցից: Հա, երևի մեկ-մեկ ջղայնացնում եմ քեզ, ծերացել եմ, հա, փնթփնթում եմ...

ԿԱՐԻՆԵ - Պետք չէ, մամ, ուրիշ բան էի ուզում ասել, ինձ սխալ հասկացար:

ՄԱՅՐ - Մտքովդ անցել է, իմ օրն ինչ կլինի, եթե ուրիշ տեղ գնաս ապրելու: Ուզում ես՝ էստեղ մենակ մնամ Իննա չեղածի հետ: Ախր, նա ինձ գերեզման կիջեցնի, հարազատ մորդ չեմ խղճում, Կարոչկա:

ԿԱՐԻՆԵ - Զեզ էլ հետս կտանեմ:

ՄԱՅՐ - Ի-ինչ: Թողնեմ, որ ինձ դուրս հանեն իմ սեփական տնից: Որտեղ ապրել եմ երեսունհինգ տարի: Չէ, Կարինե... Գիտե՞ս ինչ, արի մի քիչ սպասիր, մի երկու տարի, ես երկար ապրողը չեմ: Սպասիր, մինչև կմեռնեմ, ու հետո ապրիր՝ ոնց կուզես: Չես կարող թողնել, որ մնացած կյանքս հանգիստ չապրեմ, ինձ՝ հարազատ մորդ...

ԿԱՐԻՆԵ - Ինչ ուզում ես՝ արա, մամ, ինչ ուզում ես... Վերցրու մեր փողը, հուշարձան կանգնեցրու, դամբարան կառուցիր, խնդրեմ, ինձ համար մեկ է:

ՄԱՅՐ - Թե երեսով ես տալու, որ հարազատ եղբորդ...

ԿԱՐԻՆԵ - Մամ, հանգիստ թող ինձ, խնդրում եմ: Ասացի, չէ, ինչ ուզում ես, արա, միայն, ի սեր աստծու, ինձ հանգիստ թող: (Դուրս է վազում):

ՏԵՍԱՐԱՆ. Հասմիկ, Իննա:

Իննան սենյակն է հավաքում:

Մտնում է Հասմիկը՝ քնաթաթախ, պիժամայով:

ՀԱՍՄԻԿ - Իսկ ո՞ր են մերոնք:

ԻՆՆԱ - Ո՞վ է քեզ հետաքրքրում:

ՀԱՍՄԻԿ - Ասենք՝ մամաս:

ԻՆՆԱ - Ծուկա է գնացել:

ՀԱՍՄԻԿ - Էսքան շո՞ւտ:

ԻՆՆԱ - Ծո՞ւտ... իսկ գիտե՞ս՝ ժամը քանիսն է:

ՀԱՍՄԻԿ - (նայելով ժամացույցին):

Տասնմեկն անց կես: Տես, է:

ԻՆՆԱ - Զնելուց լավ ես, օրիորդ:

ՀԱՍՄԻԿ - Ախր, ուշ քնեցի, մինչև երեքը կարդում էի:

ԻՆՆԱ - Ու տատո՞ղ չփնթփնթա՞ց վրադ:

ՀԱՍՄԻԿ - Նրա քնելուց հետո լամպը վառեցի:

ԻՆՆԱ - Եվ ի՞նչ էիր կարդում:

ՀԱՍՄԻԿ - Հիմար մի վեպ, նույնիսկ վերնագիրը չեմ հիշում: Բոլորը սիրում են մեկմեկու, կրակում իրար վրա, վերջն էլ մեկը կախվում

է: Անհույս սիրուց: Հեղինակը որտեղի՞ց է գտել էդ տեսակ մարդկանց: Թե՛ տասնութերորդ դարում իսկապես եղել են նման բաներ:

ԻՆՆԱ - Երևի եղել են: Գուցե չեն եղել: Թեև հիմա էլ ինչ ասես լինում է:

ՀԱՍՄԻԿ - Լավ, էլի... ու կախվում են: Մենամարտում: Ինչ-որ չեմ տեսել:

ԻՆՆԱ - Դեռ քիչ բան ես տեսել դու: Գնա հազնվիր, սկեպտիկ:

ՀԱՍՄԻԿ - Իսկ տատի՞ն ուր է, հո զբոսնելու չի՞ գնացել երեխեքի հետ:

ԻՆՆԱ - Ջբոսնելու... անհարմար չէ: Արհեստանոց է գնացել, քարտաշներին հրահանգներ տալու: Հիմա նրա միակ գործը դա է: Իսկ Հրանտիկը բակում է, եղբորդ հետ:

ՀԱՍՄԻԿ - Իսկ պապան չի՞ եկել:

ԻՆՆԱ - Պապադ իր համար քեֆ է քաշում:

ՀԱՍՄԻԿ - Ինչո՞ւ ես էդպես ասում: Ես ընկերոջ մոտ է:

ԻՆՆԱ - Հա, բա ո՞նց, գիտենք այդ ընկերներին:

ՀԱՍՄԻԿ - Իննա՛...

ԻՆՆԱ - Ինչ: Կարծում եմ, էլ փոքր չես, թե՛ արդեն մորդ ու տատիդ պատճեն ես դառնում՝ ամեն ինչ լավ է, ամեն ինչ կարգին է, մեր ընտանիքի պես ընտանիք չկա... Միայն թե մեկը չտեսնի, զլխի չընկնի, չբամբասի: Ի դեպ, հորդ էլ եմ հասկանում, ինչքան կարելի

է այսպես ապրել: Տունը լիքը մարդ, կարգին նստելու, պառկելու տեղ չկա, զոքանչի փնթփնթոց, ախու՛վախ... Իսկ կինը՝ ինչ կին, կարծես ձևի համար է, մի սենյակում տասներկու տարեկան տղայի հետ: Լավ, լավ, էլ չեմ խոսի: Գնա հազնվիր, կմրսես:

ՀԱՍՄԻԿ - Իննա, իսկապե՛ս կարծում ես, որ պապան... Իննա՛...

ԻՆՆԱ - Հանգստացիր, ի սեր աստծու, ոչինչ էլ չեմ կարծում, կատակ արեցի: Ըհը, երևի մայրդ է, դուռը բաց:

Հասմիկը գնում է:

ՏԵՍԱՐԱՆ. Կարինե, Իննա:

ԿԱՐԻՆԵ - (մտնում է սենյակ): Սուրիկը չի՞ գանգել:

ԻՆՆԱ - Չէ:

ԿԱՐԻՆԵ - Չէ՛... (Աննպատակ շրջում է սենյակում):

ԻՆՆԱ - Գուցե մի քիչ քնե՛ս, երևի ամբողջ գիշեր մտածել ես: Կամ, ուզո՞ւմ ես, սուրճ դնեմ, կթարմացնի:

ԿԱՐԻՆԵ - Սո՛րժ... չէ, շնորհակալ եմ:

ԻՆՆԱ - Իզուր ես քեզ տանջում: Ամեն ինչ լավ կլինի:

ԿԱՐԻՆԵ - Ինչո՞ւ պիտի տանջեմ, երևի դեռ չեն եկել Դիլիջանից:

ԻՆՆԱ - Դիլիջանի՞ց:

ԿԱՐԻՆԵ - Երեկ Լյուդվիգի հետ Դիլիջան պիտի գնար, աշխատանքից հետո, երևի չեն կարողացել վերադառնալ:

ԻՆՆԱ - Գոնե ինձ մոտ մի կեղծիր: Լավ, ինչո՞ւ ես քեզ միամիտի տեղ դրել, դու էլ, ես էլ շատ լավ գիտենք, թե որտեղ է և ում հետ է: Եթե դավաճանում է քեզ ու դու ներում ես նրան, գոնե համարձակություն ունեցիր...

ԿԱՐԻՆԵ - Վերջ տուր:

ԻՆՆԱ - ...համարձակություն ունեցիր ասել՝ հա, ինձ դավաճանում է, բայց ներում եմ իրեն: Որովհետև սիրում եմ, առանց նրան չեմ կարող ապրել:

ԿԱՐԻՆԵ - Եթե էդքան ամենագետ ես, ուրեմն առանք խոսքի էլ կարող ես հասկանալ, թե ինչու եմ ներում: Հանուն երեխաների, միայն հանուն երեխաների, նրանց հայր է պետք: Ես հասած աղջիկ ունեմ, չեմ ուզում, որ գան նշանելու և իմանան՝ հայր չունի գլխին... Հանուն երեխաների եմ համբերում, Իննա:

ԻՆՆԱ - Հանուն երեխաների: Այս, ինչ անձնագոհություն: Բայց դու էլ գիտես, որ երեխաները կապ չունեն: Որ բաժանվես՝ նա էլի երեխաների հայրը կմնա, բայց էլ քո ամուսինը չի լինի, սա է խնդիրը: Մայրական զգացումների տակ ուզում ես թաքցնել քո սերը, կարծես սիրելի ամոթ է: Թե ո՞վ է դա քեզ ներշնչել... Սիրում ես՝ սիրիր, ինչ վատ է որ...

ԿԱՐԻՆԵ - Դու ոչինչ չես հասկանում:

ԻՆՆԱ - Ուրեմն բացատրիր: Բացատրես՝ գուցե հասկանամ, այդքան էլ բուրբ չեմ:

ԿԱՐԻՆԵ - Չասացի՝ բուրբ ես, պարզապես... պարզապես դու երբեք իմ վիճակում չես հայտնվի: Տեր աստված, եթե իմանայիր՝ ինչ ստորացուցիչ է ձևացնելը, թե գլխի չես ընկնում, ոչինչ չես հասկանում: Ամենասարսափելին էն է, որ ինքն էլ է հասկանում, տեսնում է, որ աչք եմ փակում արածի վրա: Եթե կարողանայի նրան ասել՝ գնա... Բայց չէ, չեմ կարող:

ԻՆՆԱ - Ինչո՞ւ:

ԿԱՐԻՆԵ - Չե՞ս հասկանում: Իսկ եթե իսկապե՞ս գնա: Ծուռ գա ու գնա:

ԻՆՆԱ - Ուրեմն, այնուամենայնիվ, սիրում ես նրան, չէ՞... Լսիր, ո՞նց կարելի է այդ տեսքով... նայիր հայելու մեջ: Քառասուներկու տարեկան ես, դու պիտի վարսավիրանոցներից, կոսմետիկ կաքինետներից դուրս չգաս, լավ հագնվես, քեզ հետևես: Եթե գոնե մեկ տղամարդու նկատմամբ անտարբեր չես, պիտի քո մեջ հարգես կնոջը:

ԿԱՐԻՆԵ - Ուրեմն, քո կարծիքով, ես պիտի հրապուրեմ իմ սեփական ամուսնուն:

ԻՆՆԱ - Նորից... ազնիվ խոսք, անուղղելի ես: Սեփական ամուսնուն... Լավ, մի՞թե կարծում ես, թե տղամարդուն անձնագրի կնիքն ավելի մեծ հաճույք է պատճառում, քան կանացի հրապուրը: Հիշո՞ւմ ես մի դեպք, որ Վիլիկն աչք օգած լինի ուրիշ կնոջ: Թեկուզ մեկ անգամ:

ԿԱՐԻՆԵ - Լա քեզնից մեծ էր տասնհինգ տարով:

ԻՆՆԱ - Ճիշտ է: Իսկ Սուրիկը քեզնից փոքր է երկու տարով ու տղամարդ է, մի ամբողջ կյանք ունի առջևում, այնինչ դու...

ԿԱՐԻՆԵ - Ինձ համար արդեն ուշ է փոխվելը, Իննա:

ԻՆՆԱ - Լավ, լավ, դու գիտես, բայց զգուշացնում եմ՝ կթողնի, կգնա: Միայն առիթի է սպասում: Այ, հենց իմացավ փողի մասին...

ԿԱՐԻՆԵ - Դու է՛լ ես ինձ երեսով տալիս:

ԻՆՆԱ - Հիմար ես, դու, Կարիկ, հիմար, ես խղճում, ափսոսում եմ քեզ:

ՏԵՍԱՐԱՆ. Կարիճե, Իննա, Հասմիկ:

ՀԱՍՄԻԿ - (*հայտնվելով շեմին*): Ինչ փողի մասին է խոսքը:

ԿԱՐԻՆԵ - Ոչ մի... հենց էնպես...

ԻՆՆԱ - Չէ, ինչո՞ւ՝ հենց էնպես.... Մեծ աղջիկ է, ինքն էլ պիտի իմանա: Ուրեմն, տատիդ սրտաձմիկ խոսքերից հետո մամադ սովորականի պես փափկեց ու հավաքած փողերը տվեց, որ նա մի նոր Թաջ Մահալ կառուցի:

ՀԱՍՄԻԿ - Ո՞նց թե... ուրեմն մենք մեր սեփական բնակարանը չենք ունենալու: Իսկ պապան համաձայն է:

ԻՆՆԱ - Հայրդ տեղյակ չէ: Ու ես վախենում եմ, որ իմանալուց հետո դուք ոչ միայն բնակարան չունենաք, այլև...

ԿԱՐԻՆԵ - Ինչո՞ւ էդքան չարալեզու ես, Իննա:

ԻՆՆԱ - Չարալեզո՞ւ... Լավ, կապրենք, կտեսնենք:

ՀԱՍՄԻԿ - Սա ի՞նչ է, մամ... ինչո՞ւ համաձայնվեցիր: Իսկ նա՛մ, նա ինչպե՞ս կարողացավ վերցնել այդ փողը, ես միշտ էլ զգում էի, գիտեի, որ ամենաշատը սիրում է քեռի Վիլիկին, բայց որ էսպես...

ԻՆՆԱ - Սխալվում ես, սիրելիս, նա քեռի Վիլիկին մորիցդ շատ չէր սիրում: Եթե, աստված չանի, իհարկե, մենոնողը մայրդ լիներ, ճիշտ նույն ձևով կվարվեր քեռի Վիլիկի հետ: Պարզապես նրա համար... ինչո՞ւ միայն նրա, մարդկանց մեծ մասի համար մեռածները թանկ են ապրողներից: Թեև հակառակը պիտի լիներ:

ՀԱՍՄԻԿ - Հիմա ի՞նչ պիտի անենք:

ԻՆՆԱ - Այ, դա չգիտեմ: (*Երեխայի լացի ծայն է լսվում*.) Կներեք, որդիս պահանջում է մորը: (*Գնում է*.)

ՏԵՍԱՐԱՆ. Դռան զանգ: Հասմիկը գնում է դուռը բացելու: Մտնում է Սուրենը:

ՍՈՒՐԵՆ - Հը՛, ո՞նց եք ապրել առանց ինձ: Ինչպե՞ս է իմ թանկագին կինը, չի՞ տխրել առանց սիրեցյալ ամուսնու: Իսկ ես էնպես եմ հոգնել, մեքենան փչացավ, ստիպված գիշերը մնացինք: Լյուդվիգը կատաղել էր, ոնց էր կատաղել, ասում էր՝ պիտի ծախեմ, կորցնեմ մեքենաս, հոգեհան արեց, ես դրա...

ԿԱՐԻՆԵ - Լյուդվիգը:
ՍՈՒՐԵՆ - Հա, ի՞նչ է որ...
ԿԱՐԻՆԵ - Ոչինչ:
ՍՈՒՐԵՆ - Չէ, ի՞նչ նկատի ունես:
 Տոնդ էն տեսակ էր, կարծես կասկածում ես ինձ:
ԿԱՐԻՆԵ - Չեմ կասկածում...
ՍՈՒՐԵՆ - Ուրեմն պետք չէ ակնարկներով խոսել:
ԿԱՐԻՆԵ - ...չեմ կասկածում, հաստատ գիտեմ:
ՍՈՒՐԵՆ - Իսկ ի՞նչ գիտես... հաստատ:
ԿԱՐԻՆԵ - Բացատրե՛մ քեզ:
ՍՈՒՐԵՆ - Պետք է՝ բացատրիր, թե էլի բան ես հնարել՝ ասա, մի պահիր: Հը, ի՞նչ կա:
ԿԱՐԻՆԵ - Ինչ կա՞: Առանձնապես ոչինչ: Պարզապես երեկոյան քեզ զանգեց Լյուդվիգը:
ՍՈՒՐԵՆ - Լյուդվիգը:
ԿԱՐԻՆԵ - Կարող էիր նրան նախազգուշացնել, թե՞ նույնիսկ հարկ չես համարում մտածել վկաների մասին: Միևնույն է, ես կհավատամ, չէ՞: Ինչո՞ւ ես լռում: Արդարանալու կարիք չե՞ս զգում: Առանց դրան էլ կներեմ, չէ՞:
ՍՈՒՐԵՆ - Կարիկ, սիրելիս... *(Գրկում է նրան:)*
ԿԱՐԻՆԵ - Թող:
ՍՈՒՐԵՆ - Կարիկ, լավ, ես... հա, մեղավոր եմ քո առաջ... Մեղավոր եմ, հա:
ԿԱՐԻՆԵ - Ու դեռ գոռո՞ւմ ես վրաս:
ՍՈՒՐԵՆ - Ներիր: Ներիր, խնդրում եմ, ես...
ԿԱՐԻՆԵ - Ի՞նչ՝ ես: Ի՞նչ՝ ես: Տեր

աստված, գոնե մի բան ասա, հնարիր, ստիր, արդարացիր: Թե՛ ինձ մարդ չես համարում:
ՍՈՒՐԵՆ - Կարիկ, անուշա, լաց մի լինի, պետք չէ... Հա, ես սրիկա եմ, անասուն, ներիր ինձ, երդվում եմ՝ էլ երբեք, ոչ մի դեպքում... Էդ բոլորը աննորմալ պայմանների պատճառով է: Չեմ կարող, հասկանում ես, չեմ կարող, նյարդայնանում եմ, կատաղում ու ապուշություններ եմ անում: Այ, կգնանք էստեղից, մարդավարի կապրենք: Ամեն ինչ ուրիշ կլինի, խոսք եմ տալիս: *(Գրկում է նրան: Լռություն:)*
ԿԱՐԻՆԵ - Սուրիկ, քեզ մի բան պիտի ասեմ:
ՍՈՒՐԵՆ - Հը... ասա:
ԿԱՐԻՆԵ - Վախենում եմ:
ՍՈՒՐԵՆ - Վախենո՞ւմ ես: Ի՞նչ է պատահել, հուսով եմ՝ մարդ չես սպանել, տուն չես թալանել:
ԿԱՐԻՆԵ - Մի կատակիր:
ՍՈՒՐԵՆ - Լավ, լուրջ եմ: Ասա:
ԿԱՐԻՆԵ - Գիտես ինչ, Սուրիկ... մի խոսքով... քարի համար փող չկար, ու ես տվեցի... պարտք տվեցի մեր փողը:
ՍՈՒՐԵՆ - Ի-ի՞նչ: Մեր փողը: Մեր բնակարանի փողը... դու չե՞ս գժվել:
ԿԱՐԻՆԵ - Մաման խոստացավ վերադարձնել: Նրա թոշակը...
ՍՈՒՐԵՆ - Վերադարձնել... ու դու հավատացիր: Մի քոռ կոպեկ էլ չի տա: Չէ, դու վերջնականապես գժվել ես, կորցրել ես չունեցած խելքդ: Հիմա ի՞նչ պիտի անենք:

Մարդ ապրի էս գծանոցում... չէ-
է, հերիք է: Չզվել եմ, լսում ես,
զզվեցրել եք դու էլ, մայրդ էլ,
հարսդ էլ, երեխաներն էլ իրենց
դժժոցով... ամեն, ամեն ինչ: Ախր,
չի կարելի էդպես ապուշ լինել, չի
կարելի, հասկանում ես... Բայց
հում եմ ասում, դու անողղելի հի-
մար ես, մերդ էդպես էլ մատի
վրա կխաղացնի քեզ մինչև մեռ-
նելը... ասենք, նա ինձնից էլ, քեզ-
նից էլ երկար կապրի, մեզ
բոլորիս կթաղի:

ԿԱՐԻՆԵ - Չհամարձակվեն էդպես
խոսել մորս մասին:

ՍՈՒՐԵՆ - Հա, կթաղի ու հուշարձան
կդնի մեր գերեզմանին: Ողջերին
կթալանի՝ մեռածներին հաճույք
պատճառելու համար:

ԿԱՐԻՆԵ - Եղբորս մասին ես ասում:

ՍՈՒՐԵՆ - Հենց եղբորդ մասին:
Հասկացիր վերջապես, եղբայրդ
չկա, նրա համար՝ թքած, հասկա-
նում ես... թուհ, ինչ եմ ասում...
Ախր, ինչ ես արել, ինչ ես արել
դու... Ոնց էի սպասում՝ շուտով
բնակարան կստանանք, կգնանք
էստեղից, մարդավարի կապ-
րենք...

ԿԱՐԻՆԵ - Ինչ ես անընդհատ
կրկնում՝ մարդավարի հա՛ մարդա-
վարի: Մի՞թե էստեղ էդքան վատ է:

ՍՈՒՐԵՆ - Էստեղ վատ չէ, էստեղ
անտանելի է: Էլ չեմ կարող, մի
օր, մի ժամ էլ չեմ կարող ապրել
էս տանը, որտեղ ոչ միայն քուն ու
դադար չեն տալիս, այլև թալա-
նում են:

ԿԱՐԻՆԵ - Չհամարձակվեն... էս
տունը քեզ դուր չի գալիս՝ կարող
ես գնալ, ոչ ոք չի պահում:

ՍՈՒՐԵՆ - Հիմար ես, հիմար: Քեզ եմ
խղճում, թե չէ...

ԿԱՐԻՆԵ - Ինձ պետք չէ խղճալ, ա-
ռանց քեզ էլ կապրեմ:

ՍՈՒՐԵՆ - Ախ, էդպես... Լավ, որ ա-
սում ես՝ կգնամ:

ԿԱՐԻՆԵ - Հա, ասում եմ, գնա:

ՍՈՒՐԵՆ - Ու կգնամ: (*Գնում է:*)

**ՏԵՄԱՐԱՆ. Կարինե քարացած
կանգնել է մինչև դռանը աղմու-
կով փակվելը, հետո սկսում է հե-
կեկալ: Ներս են վազում Իննա
ու Հասմիկը:**

ԻՆՆԱ - Ինչ է պատահել:

ՀԱՍՄԻԿ - Ինչ է եղել, մա:

ԿԱՐԻՆԵ - Սուրիկը գնաց... գնաց
ընդմիշտ, Իննա:

ԻՆՆԱ - Լավ, հանգստացիր, ետ
կգա: Անպայման կգա: Երևի տա-
քացել է, կսառչի՝ կվերադառնա:

ԿԱՐԻՆԵ - Չէ, չի վերադառնա, գիտեմ:

ՀԱՍՄԻԿ - Լաց մի լինի, մա:

**ՏԵՄԱՐԱՆ. Կարինե, Հասմիկ,
Իննա, Մայր:**

ՄԱՅՐ - (*սենյակ է մտնում*): Ինչ է
պատահել: Կարիկ...

ՀԱՍՄԻԿ - Պապան գնացել է:

ՄԱՅՐ - Ո՞ր է գնացել: Ինչո՞ւ: Չլինի՞
վիճել եք:

ԿԱՐԻՆԵ - Ես... ես ասացի նրան...
փողի մասին...

ՄԱՅՐ - Ու նա... տեր աստված, էս-
քան տարի ապրել է իմ տանը,

որդու տեղ է եղել ինձ, ու մի քանի հազարի համար... գլուխս չի մտնում: Էհ, որ գնացել է, էլ ոտքը չդնի էս շեմից ներս: Մեկ է, չեմ թողնի, էդ վիրավորանքը կուլ տվողը չեմ: Նա արժանի չէ իմ աղջկան, արժանի չէ էս տանը...

ԿԱՐԻՆԵ - Մամ, վերջ տալի՞ս ես, թե՞ չէ:

ՄԱՅՐ - Ո՞նց թե... էդ ո՞ւմ վրա ես գոռում, մո՞րդ:

ԿԱՐԻՆԵ - Հա, մորս... Դու էլ գնա, ինձ մենակ թող:

ՄԱՅՐ - Լավ է... չմեռանք՝ էս էլ տեսանք: Է, որ ասում ես՝ կգնամ, մենակ թե հանգստացիր, հանգստացիր: *(Գնում է:)*

Կարիսեն հեկեկում է Իննայի գրկում:

ՏԵՍԱՐԱՆ. Հասմիկ:

ՀԱՍՄԻԿ - *(մենակ, հեռախոսով):* Գիտես ինչ, էդքան էլ միամիտ չեմ, որ ամուսնանամ էգոիստ ու ինքնահավան մեկի հետ... Հայրս... հայրս՝ ինչ, դրանք բոլորն են էդպես՝ ինքնահավան, ստոր, ուզում են՝ ամբողջ կյանքում հնազանդ ծառայես իրենց, հավատարիմ մնաս, իսկ իրենք մի գեղեցիկ օր որոշեն, որ դու պառավել ես, արժանի չես, թողնեն ու գնան ավելի ջահելի մոտ: Ծատ շնորհակալ եմ... Ով, էս... Ես պատրաստվում եմ ապրել ինձ համար ու ոչ թե ուրիշների, և ապրել այսօր, քանի դեռ կյանք

կա մեջս... Ով, մամա՛ս: Բայց նա ի՞նչ կարող է անել: Նրան ոչ ոք մարդու տեղ չի դնում: Գիտես, ճիշտն ասած, մեկ-մեկ իմ համբերությունն էլ է հատնում ու ես էլ եմ գոռում նրա վրա... Ախր, չի կարելի էդքան փափուկ լինել: Պապան թողել գնացել է, իսկ ինքը սպասում է աչքը դռանը, մեկ էլ տեսար՝ եկավ: Եկավ էլ, մեկ է, նրան հայր չեմ հաշվելու էսքանից հետո... Վայ, Անո ջան, ներիր, արդեն ժամը վեցն է, դեռ չեմ հագնվել, սանրվել... Ըհը, լավ, լավ... առայժմ: *(Գնում է՝ հեռախոսը ձեռքին:)*

ՏԵՍԱՐԱՆ. Մտնում է Կարիսեն, պայուսակը, լրագրերը դնում է սեղանին, հանում է կոշիկները, հողաթափերը փնտրում է մահճակալի տակ: Գալիս է Մայրը:

ՄԱՅՐ - Էս ինչի՞ ուշացար:

ԿԱՐԻՆԵ - Ծուկա մտա:

ՄԱՅՐ - Ծուկա... ո՞վ է էս ժամին շուկա մտնում:

ԿԱՐԻՆԵ - *(կտրուկ):* Ես: Ուրիշ ժամանակ չունեմ:

ՄԱՅՐ - Լավ, լավ, մի խոսք ասել չի լինում:

ԿԱՐԻՆԵ - Ո՞ր է Հովիկը:

ՄԱՅՐ - Բակում, էլ ո՞ր պիտի լինի: Առավոտից իրիկուն էստեղ է, ամեն տեսակ խուժանների հետ, ոչ դաս, ոչ բան: Տես, Կարիկ, շատ ես կապերը բաց թողել, Հասմիկի մասին էլ չեմ ասում: Չի լսում ոչ մեկին, կորչում է մինչև կեսգիշեր,

տանը մատը մատին չի խփում, ինձ լեզու է դարձնում: Հենց հիմի զուգվում-զարդարվում է հայելու առաջ, էլի չքվելու է: Խոսեիր հետը...

ԿԱՐԻՆԵ - Հետո, մամ:

ՄԱՅՐ - Ե՛րբ՝ հետո, աղջիկը ձեռից գնում է, իսկ սա... Այ, երեկ մեր մուտքում ժամերով տնկված էր մի լակոտի հետ: Ի՞նչ կասեն հարևանները:

ԿԱՐԻՆԵ - Լավ, մա, կխոսեմ, հենց հիմա: Հասմիկ, Հասմիկ... իսկ դո՞ւ ուր ես պատրաստվում գնալ:

ՄԱՅՐ - Գերեզմանոց, էլ ո՞ւր:

ԿԱՐԻՆԵ - Էս ժամի՞ն:

ՄԱՅՐ - Իմ գործը ժամ չի հարցնում, ծաղիկների համար պիտի խոսեմ:

ԿԱՐԻՆԵ - Ի՞նչ ծաղիկ:

ՄԱՅՐ - Ուզում եմ գերեզմանին վարդի թուփ տնկել: Ախ, ախ... (Գնում է:)

ԿԱՐԻՆԵ - Վարդի թուփ, ծաղիկ, մարգեր, Ծամիրամի այգիներ... Ես, ճիշտ որ, կգժվեմ: Մութն ընկնում է արդեն, իսկ ինքը մենակ... Հասմիկ, Հասմիկ...

ՏԵՍԱՐԱՆ. Կարիմե, Հասմիկ:

ՀԱՍՄԻԿ - (դռնից ներս նայելով): Ի՞նչ է:

ԿԱՐԻՆԵ - Իննան տանն է:

ՀԱՍՄԻԿ - Հա, երեխային է կերակրում:

ԿԱՐԻՆԵ - Ի՞նչ անեմ, տատդ գերեզմանոց գնաց: Մենակ:

ՀԱՍՄԻԿ - Հետո ինչ:

ԿԱՐԻՆԵ - Ո՞նց թե՛ հետո ինչ: Ուզում էի Իննային խնդել, որ ետևից հասնի...

ՀԱՍՄԻԿ - Իննան չի գնա: Տատին արդեն առաջարկել է՝ չի գնացել: Երեխաներով է զբաղված:

ԿԱՐԻՆԵ - Իսկ դո՞ւ:

ՀԱՍՄԻԿ - Չեմ կարող, մա, հասկանում ես, ինքն էլ չի ուզի ինձ հետ: Չեմ կարող...

ԿԱՐԻՆԵ - Իսկ լակոտների հետ կարո՞ղ ես: Երեկ քեզ տեսել են մեր շքամուտքում, ժամերով մեկի հետ կանգնած:

ՀԱՍՄԻԿ - Էլի տատին է բամբասել: Հա, կանգնած եմ եղել, բայց ոչ թե ժամերով, այլ ընդամենը տասը րոպե, ու ոչ թե լակոտի, այլ մի շատ լավ տղայի հետ: Ինչ է, չի կարելի:

ԿԱՐԻՆԵ - Կարելին՝ կարելի է, բայց... ավելի լավ կլիներ կինո, թատրոն գնայիք կամ տուն գայիք: Այնուամենայնիվ, անհարմար է...

ՀԱՍՄԻԿ - Ինչո՞ւ տանը հարմար է, շքամուտքում՝ անհարմար: Հարևաններն ինչ կասեն, հա՛: Գիտեմ, բոլորդ էլ սուտ ձգնավորներ եք, ձեզ մի բան է հետաքրքրում՝ չբամբասեն հանկարծ: Իննան ճիշտ է ասում...

ԿԱՐԻՆԵ - Հասմիկ...

ՀԱՍՄԻԿ - Հա, սուտ ձգնավորներ եք, կեղծում եք շարունակ: Կարծում ես, մոռացել եմ, որ քեռի Վիլիկի թաղմանը Լիան ինձ համոզում էր՝ լաց լինեմ, անհարմար է, մարդիկ ինչ կմտածեն:

ԿԱՐԻՆԵ - Լիան:

ՀԱՍՄԻԿ - Հա, մորաքրոջդ աղջիկ Լիան: Նա էլ, դու էլ, բոլորդ էլ նույնն եք, ամեն ինչ՝ ցուցադրական, նույնիսկ վիշտը: Դագաղի կափարիչները՝ տնկված փողոցներում, թաշկինակն աչքերին դրած հետաքրքրասեր կանայք, իբր լալիս են, մի աչքից զոռով արցունք են հանում, մյուսով նայում են, թե ով իրեն ոնց է պահում, ոնց՝ վիշտ խաղում, ու դնում են իրենց գնահատականները՝ «անբավարար», «բավարար», «գերազանց»... Ատում են: Ափսոս, որ այդ ժամանակ դիտմամբ չքրքջացի, չխայտառակեցի ձեզ: Իհարկե, ինձ վրա ընդհանրապես թքած ունենաք, միայն թե ձեր ընտանիքը չվարկաբեկեն:

ԿԱՐԻՆԵ - Ինչ ես ասում, Հասմիկ, հասկանում ես, ինչ ես ասում:

ՀԱՍՄԻԿ - Հասկանում եմ: Կարծում ես՝ չգիտեմ, ինչու ես չարացած ինձ վրա: Որովհետև չեմ ուզում ապրել քեզ նման, որովհետև համարձակվում եմ ապրել, ինչպես ես եմ ուզում:

ԿԱՐԻՆԵ - Բեզ չի՞ թվում, որ դա է-գոհիզմ է:

ՀԱՍՄԻԿ - Այո, էգոհիզմ է, հետո՞ ինչ: Գիտեմ, հիմա ինչ կասես՝ իմ բարին ես ցանկանում, իմ մասին ես մտածում: Պետք չէ, հազար անգամ լսել եմ: Հերիք է: Ես չեմ ուզում լսել քո խորհուրդները, չեմ ուզում կյանքս կործանել քեզ նման, թույլ չեմ տա, որ քամեն հյութերս ու դեն շարտեն:

ԿԱՐԻՆԵ - Ինչո՞ւ էդքան դաժան ես, Հասմիկ:

ՀԱՍՄԻԿ - (*սթափվելով ու շփոթվելով*): Մա... ներիր ինձ, խնդրում եմ: (*Գրկում է մորը:*)

ԿԱՐԻՆԵ - Ոչինչ, ոչինչ.... (*Շոյում է աղջկա գլուխը:*) Ճիշտ ես ասում, դու մեղավոր չես:

ՀԱՍՄԻԿ - Ուղղակի դուրս տվեցի, հիմարի մեկն եմ ես, ներիր...

ԿԱՐԻՆԵ - Ոչինչ, աղջիկս, ոչինչ: Միայն թե ծաշիր՝ հետո գնա:

ՏԵՍԱՐԱՆ. Հասմիկը գնում է: Կարհինն մուրը շրջում է սենյակում, ցրված մայրում լրագրերը, մամակ է գտնում, կարդում է:

ՀԱՍՄԻԿ - (*դռնից ներս նայելով*): Մա, հաց չկա, վազեմ բերեմ... Բեզ ի՞նչ պատահեց:

ԿԱՐԻՆԵ - Ոչ մի բան: (*Նամակն աննկատ թաքցնում է լրագրերի տակ:*) Գնա: Գնա հաց բեր:

ՏԵՍԱՐԱՆ. Հասմիկը գնում է: Նրա ետևից դուրս է գալիս Կարհինն: Մտնում է Իննան, ինչ-որ բան է փնտրում պահարանում: Ներս է վազում Հասմիկը՝ հացի բոքոնը ձեռքին:

ՀԱՍՄԻԿ - Իննա, քիչ առաջ սարսափելի վիրավորեցի մամային: Ինչ անեմ, ասա:

ԻՆՆԱ - Ներողություն խնդրիր:

ՀԱՍՄԻԿ - Արդեն խնդրել եմ, բայց դա քիչ է: Ուրիշ ի՞նչ անեմ, ասա:

ԻՆՆԱ - Պատկերացնում եմ, ինչեր ես դուրս տվել: Ուրիշ ինչ անես... Երեկոյան տե՛ղ ես գնալու:

ՀԱՍՄԻԿ - Ըիր:

ԻՆՆԱ - Ո՞ր:

ՀԱՍՄԻԿ - Ժամադրության: Լյովկայի հետ: Հիշում ես Լյովկային: Բարձրահասակ տղա է, «վարյոնկա» է հագնում:

ԻՆՆԱ - (*ծիծաղում է*): Նրա հիմնական հատկանիշը «վարյոնկամն» է:

ՀԱՍՄԻԿ - Հա, ինչ կամ որ: Տասներորդ դասարանում «վրանգլեր» էր հագնում ու հիմա էլ նույնն է հագին: Պիտի որ հիշես, անպայման կհիշես, երկու անգամ եղել է մեր տանը... վայ, մոռացա ասեմ, մեր դասարանից է:

ԻՆՆԱ - Էդպես ասեիր, թե չէ՝ «վարյոնկա»... Հիշում եմ:

ՀԱՍՄԻԿ - Լավ տղա է, չէ՞:

ԻՆՆԱ - Համակրելի է: Ծատ: Ուրեմն այդ լավ, համակրելի տղան այսօր մենակ ման գա:

ՀԱՍՄԻԿ - Ինչո՞ւ:

ԻՆՆԱ - Ո՞նց թե՛ ինչու: Հենց նոր ինձնից խորհուրդ չէ՛իր հարցնում:

ՀԱՍՄԻԿ - Ախ, հա, մոռացա:

ԻՆՆԱ - Ուրեմն, այսօր տանը կնստես մորդ հետ, կխոսես դեպիգ-դենից, կօգնես տան գործերում: Ախր, շատ քիչ բան է ուզում քեզնից:

ՀԱՍՄԻԿ - Կարծում ես: Կարելի է, իհարկե... Իսկ մենք ուզում էինք կինո գնալ:

ԻՆՆԱ - Չես ուզում՝ քո գործն է:

ՀԱՍՄԻԿ - Չէ, չէ, կմնամ... Կմնամ, միայն Լյովկային զանգեմ:

Հարևան սենյակից աղմուկ է լսվում:

ՀԱՍՄԻԿ - Մամ... ինչ պատահեց, մամ...

Երկուսն էլ դուրս են վազում: Անցնում է որոշ ժամանակ: Ունաճայներ, մուտքի դռան շրխկոց, աղմուկ:

ՏԵՍԱՐԱՆ. Մտնում է ԻՆՆԱՆ, գնում-գալիս է սենյակում, մեքենայորեն բարձերը, ծածկոցներն է ուղղում, մահճակալի վրայից վերցնում է լրագրերը, տեսնում է նամակը, կարդում է: Ներս է մտնում Մայրը:

ՄԱՅՐ - Էս ինչ է կատարվում տանը: Ինչո՞ւ էր դուռը կրնկի վրա բաց: Մի տեսնես՝ ինչ սիրուն հուշարձան է դուրս եկել... Ի՞նչ ես կարդում: Իզուր չեկար հետս... Ո՞ր է Կարիկը:

ԻՆՆԱ - (*դանդաղ և ընդհատ-ընդհատ*): Տանը կատարվում է այն, ինչ վաղուց պիտի կատարվեր: Ես կարդում եմ ձեր փեսայի նամակը. նա ողորմաճաբար հայտնում է ձեր աղջկան, որ ամուսնանում է ուրիշի հետ ու խնդրում է, որ պաշտոնապես ձևակերպվի բաժանումը: Կարիկին տարան հիվանդանոց, կես շիշ քացախի էսենցիա էր խմել: Եթե ձեր աղջիկը մեռնի, ում փողով եք նրա գերեզմանին հուշարձան կանգնեցնելու...

1989 թ.



**Օլեգ
ՄԻԽԱՅԼՈՎ**

ԵՐԳՎՅԱԼ ԿՈՒՅՍԵՐԸ

Գործող անձինք
ՔԵՌԻ ԿԵԿԻ - 65 տարեկան
ՏԵՌԻՏԱ - 60 տ.
ԷԳՈՆԱ - 40 տ.
ԼԻՐԻ - 25 տ.
ՌՈՉԵՖԱ - 17 տ.
ՊԱՌԱՎ - 80-ն անց

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Գործողությունը կատարվում է մեր օրերում, Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայի արվարձաններից մեկում: Սա այն բացիկային Տիրանան չէ՝ սպիտակագագաթ սարերի համայնապատկերով, որը կարելի է տեսնել մարտյան պարզ օրը Sky Tower-ի բարձունքից: Եվ անգամ այն Տիրանան չէ, ուր հազվադեպ են այցելում տուրիստները՝ ոլորապատույտ փողոցների անանցանելի ցեխակեղտով ու տների՝ եվրոպացիների աչքի համար զարմանալի չքավորությամբ: Սա ուրիշ Տիրանա է, որ գոյություն ունի միայն պիեսի հեղինակի երևակայության մեջ, թեև այլբանացիների կենցաղի ու սովորությունների որոշ առանձնահատկություններ իրական են (իրենք իրենց երկիրն անվանում են Շկիպերիա): Բայց և այնպես, պիեսի գործողությունը կատարվում է հնարածին Տիրանայում, որտեղ անանուն փողոցում (իրական այլբանական մայրաքաղաքում էլ ցուցանակները հարզի չեն), մեծ ու հին միհարկանի տան մեջ ապրում է քեռի Կեկի Ռակիպին ու նրա ընտանիքը: Տանը կից փոքրիկ խանութ է (ընտանիքի ապրուստի միակ միջոցը) և բարձիթողի այգի,

որը հասնում է մինչև կեղտոտ կոյուղի հիշեցնող Լամա գետը:

Այսօր մարտի 14-ն է, ամռան գալստյան Օրը: Քեռի Կեկիի տանը հարսանիք է: Ասենք, հարսանիքին մի քիչ ուշացել ենք, արդեն ուշ երեկո է ու հյուրերը ցրվել են:

Նրանց ձայները դեռ լսվում են այգուց, որտեղ սեղաններն են բացված, իսկ այստեղ՝ տան խորքում, լուռ ու խավար է: Շուտով դուք կհասկանաք,

որ քեռի Կեկիի տանը միշտ է լուռ ու խավար, բայց դա կլինի հետո:

Իսկ հիմա եկեք ծանոթանանք պիեսի հերոսների հետ:

Ահա մեր առջև քեռի Կեկին է: Նա շատ ծեր, համար զառամյալ է թվում, թեև վերջերս է լրացել նրա վաթսուհինգ տարին: Հարսանիքի առիթով քեռի Կեկին հազել է ասեղնակար շապիկ ու ժիլետ: Գլխին գլխարկ է, որը համարյա երբեք չի հանում: Կեկին նստած է բազկաթոռին, շավարի փողքերը վեր քաշած, ոտքերը թասով ջրի մեջ են, որտեղ սափորից ջուր է լցնում տարեց կինը: Տեստան է՝ քեռի Կեկիի կրտսեր քույրը: Սափորը մի կողմ դնելով՝ լվանում է նրա ոտքերը: Սա նորմալ է, Ալբանիայի ավանդույթներին հարիր, երբ կանայք լվանում են տան գլխավորի՝ հոր, ամուսնու կամ ավագ եղբոր ոտքերը: Երբ Տեստան կավարտի եղբոր ոտքերը լվանալը, կարբի մեծ մաշված սրբիչով, քեռի Կեկին գուցե վերջապես հազնի կեռ քթերով հողաթափերը: Իսկ տոնական երկարաճիտք կոշիկները, որոնց մեջ նա տանջվեց տոնական օրվա երկար ժամերի ընթացքում, կպահպեն սնդուկում մինչև մի նոր տոնական առիթը:

Միայն թե այդ առիթը էլ երբեք չի լինի: Սա քեռի Կեկիի կյանքի վերջին տարին է:

Նա իր կյանքը կավարտի բանտում, չհասնելով ձմռան ցրտերին: Միայն թե քեռի Կեկին այդ մասին, բնականաբար, չգիտե: Եթե լրիվ անկեղծ լինենք, ապա քեռի Կեկին ոչ մի «քեռի» էլ չէ: Այն իմաստով, որ ինքն էլ կին է, ինչպես պիեսի մնացած հերոսները: Եվ այս դերը պետք է խաղա դերասանուհի:

Կեկիի նմաններին Ալբանիայում անվանում են «բուռնեշ»: Թե ովքեր են «բուռնեշները», մենք անպայման կիմանանք: Իսկ հիմա եկեք լսենք,

ինչի մասին են խոսում Կեկին ու Տեստան:

ՏԵՌՏԱ - Հոգնեցիր:

ԿԵԿԻ - Իսկ ի՞նչ ես կարծում: Էս անիծված սապոզներն էլ... Հեռու տար, դրանց նայելուց անգամ ոտքերս ցավում են:

ՏԵՌՏԱ - Բեզ չէի ասում՝ մի համար մեծ վերցրու:

ԿԵԿԻ - Ի՞նչ էիր ինձ ասում: Երբ: Ինձ քարշ տվեցիր Ալիի կրպակը՝ գնանք, հա գնանք, կարծես ամբողջ Տիրանայում քրիստոնյա չէիր գտնի ու նրանք սապոզ կարել չեն կարող:

ՏԵՌՏԱ - Չի եղել էդպիսի բան:

ԿԵԿԻ - Եղել է: Ու չհակաձառն: Ես լավ եմ հիշում: «Ախ, նա էն վարպետն է, էն վարպետն է», - բզզում էիր դու: Ականջներս տարար քո Ալիով: Իսկ նա վարպետ է, հա: Աչքերը յուղոտեցնի ձեր քամակներին՝ դրա վարպետն է:

ՏԵՌՏԱ - Ուշքի արի, Կեկի, ի՞նչ ես ասում: Կոշկակար Ալին արդեն ութ տարի է՝ գերեզմանում է:

ԿԵԿԻ - Նա գուցե գերեզմանում է, աստված հոգին լուսավորի: Իսկ նրա սապոզները մինչև էսօր վրեժ են հանում ինձնից: Զսան տարի ինձ տանջում են: Պահիր դրանք, աչքիցս հեռու...

Տեուտան դժվարությամբ ոտքի է կանգնում, վերցնում է երկարաձուլներն ու գնում է դեպի սնդուկներից մեկը: Կանգ է առնում:

ՏԵՌՏԱ - Բանալին տուր:

ԿԵԿԻ - Բանալին: Բանալի՛ տուր

նրան: Էդ սապոզների համար փետով մեջքդ պիտի դաղել, ոչ թե բանալի տալ: Թող, հետո ինքս դրանք կպահեմ:

Տեուտան երկարաձուլները դնում է սնդուկի վրա:

ԿԵԿԻ - Էլի ռակիա լցրու:

Տեուտան լուռ է, տեղից չի շարժվում:

ԿԵԿԻ - Խլացա՛ր: Թե՛ փետը ձեռքս առնեմ: Հիմա իսկապես փետը կվերցնեմ, Տեուտա: Չեմ նայի, որ քույրս ես: *(Չզվում է դեպի բազմոցի թիկնակից կախված ձեռնափայտը:)*

Տեուտան գնում է դեպի սեղանիկը, որի վրա մատուցարանն է ռակիայի շշով ու միակ բաժակով: Խմիչք է լցնում: Տալիս է Կեկին:

ԿԵԿԻ - *(խմելուց հետո):* Էլի:

ՏԵՌՏԱ - Գուցե հերիք է: Գլուխդ կցավի:

ԿԵԿԻ - Բիչ խոսի: Դու ի՞նչ գիտես իմ գլխի մասին:

Տեուտան նորից է բաժակը լցնում, տալիս նրան: Լուռ նայում է, ինչպես է նա խմում:

ԿԵԿԻ - *(վերադարձնելով բաժակը):* Այ, հիմա հերիք է: Բեզ էլ կարող ես լցնել: Հետո՛:

ՏԵՌՏԱ - Էնպես էի երազում էս հարսանիքի մասին:

ԿԵԿԻ - Մի հատ էլ լաց, հիմա՛ր: Ինձ

Էդոնան էլ հերիք է, առավոտից գիշեր արցունք է թափում, կարծես մեր Սալիին սպանդանոց եմ ուղարկում:

ՏԵՈՒՏԱ - Իրավունք ունի՝ տղային է ամուսնացնում:

ԿԵԿԻ - Դուք իրավունք չունեք էս տանը: Չե՞ք կարողանում էդ մի բանը հիշել:

ՏԵՈՒՏԱ - Մի չարանա, Կեկի, վերջապես տոն է: Դու էլ էնքան սիրուն էիր փեսացուի տեղում:

ԿԵԿԻ - Ավել-պակաս դուրս մի տա: Լեզվիդ մի տա, մի բզբզա, քանի անգամ քեզ ասեմ: Առանց էդ էլ ամաչում եմ մարդկանց աչքերին նայեմ՝ փեսային խնամիներին ներկայացնել չկարողացանք, հեռակա ամուսնացրինք, լիազորագրով:

ՏԵՈՒՏԱ - Բայց հարսանեկան խնջույքին փեսան չի մասնակցում: Թե՛ նրանք ծեսերը չգիտեն:

ԿԵԿԻ - Խնջույքն ի՞նչ կապ ունի, մենք փեսային ընդհանրապես նրանց ցույց չտվեցինք: Ընդհանրապես: Տարբերությունը զգո՞ւմ ես: (*Լռություն:*) Ամեն ի՞նչ ես նրան բացատրել:

ՏԵՈՒՏԱ - Ինչքան կարողացա: Ասացի՝ երբ երեխա ես սարքում, ատամներդ սեղմի, ու տղա կստացվի: Իմ Դավմատն էր էդպես ասում:

ԿԵԿԻ - Ո՞ւմ է հետաքրքիր, թե ինչ էր ասում քո մարդը: Գլխավորը, որ մեր պստիկ Սալին հասկանա, թե իրենից ինչ է պահանջվում:

ՏԵՈՒՏԱ - Դե, էնքան էլ պստիկ չէ: Անամոթ ամսագրերից խելքը կտրում է: Լերս եմ մտնում, իսկ ինքը դրանց էջերը պատռել ու պատերին է կախել: Սկզբում չհասկացա, թե ինչով է կացրել: Իսկ նա հանեց իր գործիքն ու ցույց է տալիս...

ԿԵԿԻ - Լսել չեմ ուզում... գարշանք: Թող Էդոնան նրան նախապատրաստի:

ՏԵՈՒՏԱ - Էսօր:

ԿԵԿԻ - Իսկ ե՞րբ: Մի տարուց հետո՞:

ՏԵՈՒՏԱ - Ես իմ Դավմատին երեք օր ու երեք գիշեր մերժեցի: Էդպես է ծեսը: Չար ոգիներից հենու:

ԿԵԿԻ - Եվ ի՞նչ: Զեզ օգնե՞ց: Հայելուն նայիր, ինքդ ոնց որ չար ոգի լինես: Դրանց պես էլ հոտած ես:

ՏԵՈՒՏԱ - Ախ, Կեկի...

ԿԵԿԻ - Ի՞նչ... Չէ, ի՞նչ... ի՞նչ երեք օր: Պառկեց, ոտքերը բացեց, էդքան բան: Գուցե նրա համար սովորական բան է:

ՏԵՈՒՏԱ - Ինչի՞ ես աղջկա մասին էդպես ասում:

ԿԵԿԻ - Ես ասում եմ, որ ձգելու կարիք չկա: Այ թե ինչ եմ ասում: Մեկ էլ ասում եմ, որ ինչքան շուտ Սալին նրան հղիացնի, էնքան լավ: Մեզ տղա է պետք: Բայց սկզբում թող Էդոնան նրան էստեղ բերի: Պետք է ստուգել, թե նա ինչ աղջիկ է:

ՏԵՈՒՏԱ - Տղամարդու գործ չէ դա: Մենք ինքներս...

ԿԵԿԻ - Գիտեմ ես ձեզ: Կնիկը կնկան միշտ կպաշտպանի: Ձեր սիրտը մոմից է: Իզուր չէ, որ հարսանիքին հարսի հայրը փեսային փամփուշտ է նվիրում: *(Ժիլենտի գրպանից փամփուշտ է հանում:)* Ըհը... փամփուշտը: Բեզիմը մեր սովորությունները գիտե: Դրա համար էլ նվիրեց:

ՏԵՌԻՏԱ - Բայց դու փեսան չես, ոչ էլ ինքը՝ հայրը:

ԿԵԿԻ - Հորեղբայրն է: Հարազատ արյուն: Ու ընտանիքի գլխավորն է:

ՏԵՌԻՏԱ - Իսկ ո՞վ է նրա հայրը:

ԿԵԿԻ - Ամեն ինչ գլխիցդ թռնել է: Երբեք ինձ չես լսում:

ՏԵՌԻՏԱ - Ներիր, Կեկի, դուք էնքան արագ իրար հետ պայմանավորվեցիք: Առաջ մի շաբաթ հարսանիք էին անում, իսկ հիմա ամեն ինչ շտապով, վազքի մեջ... Ոչ քեզ ցորենը աղալու Օր, ոչ փայտ պահեստավորելու Օր: Լույնիսկ անասուն չմորթվեց:

ԿԵԿԻ - Ի՞նչ ցորեն, ի՞նչ փայտ... Զեզնից բացի էդ կանոնները ոչ մեկը չի հիշում:

ՏԵՌԻՏԱ - Բայց քո Բեզիմը փամփուշտի մասին հիշեց:

ԿԵԿԻ - Դա ուրիշ է: Էստեղ տղամարդկանց գործ է:

ՏԵՌԻՏԱ - Ես էլ նոր բարեկամներից ոչ մեկին չմտապահեցի:

ԿԵԿԻ - Իսկ քեզ պետք էլ չէ: Նրանցից ոչ մեկին տունս չեմ թողնի, մինչև տղա չծնվի:

ՏԵՌԻՏԱ - Կսկսեն ավել-պակաս խոսել: Ինքդ ասացիր՝ թարս էին նայում, որ փեսային ցույց չտվեցինք: Հիմա էլ հարսին ենք թաքցնելու: Աստված չանի՝ աղմուկ բարձրանա:

ԿԵԿԻ - Չի բարձրանա: Բեզիմին ամեն ինչ բացատրել եմ, նա գիտե մեր վիճակը: Ինքն էլ առաջարկեց հարսանիքն անել լիազորագրով: Էնպես որ սուս կմնա: Մնացածներին էլ կհանգստացնի: Նա գյուղացի է, բռունցքները պինդ են: Իսկ նրա եղբայրը ժամանակին քաղաք տեղափոխվեց: Սովորեց, պրոֆեսոր դարձավ, գյուղի բարեկամությանը նայում էր որպես կեղտի: Իսկ երբ մեռավ՝ թաղող չեղավ: Կինը վաղուց էր մեռել, ծննդաբերելիս: Լավ է, Բեզիմը միանգամից եկավ, ըստ կարգի ամեն ինչ կարգավորեց, ոնց որ հնից է ընդունված: Որք զարմուհուն տեր կանգնեց...

ՏԵՌԻՏԱ - Եղբոր ժառանգությանը տեր կանգնեց, ոչ թե զարմուհուն: Նրան անպետք ամանի պես մեր վրա սաղացրեց:

ԿԵԿԻ - Ծատ է խելքդ կտրում: Կանոնում գրված է. «Կինը չի ժառանգում ո՛չ ծնողներից, ո՛չ ամուսնուց»:

ՏԵՌԻՏԱ - Ես չեմ վիճում:

ԿԵԿԻ - Լավ էլ վիճում ես: Մեզ համար կա միայն Կանոնը, Լեկա Դուկագյինի տված միակ օրենքը, ոչ թե ամեն տեսակի Սահմանադ-

րություններ, թքած ունենամ դրանց վրա: Ու քանի դուք իմ տանն եք, կապրեք ըստ Կանոնի:

ՏԵՈՒՏԱ - *(կամաց):* Սա կյանք է որ...

ԿԵԿԻ - *(չի լսել նրան):* Բեզիմն էլ է հարգում Կանունը: Հին կարգի մարդ է: Մենք շինարարության վրա ենք ծանոթացել, հանրակացարանում մեր մահճակալները իրար կողք էին: Ա՛յ թե ժամանակներ էին: Վրաս թարս նայել չէին համարձակվում, ուր մնաց՝ մատով կպնեին:

ՏԵՈՒՏԱ - Հա, էնվերի ժամանակ կարգուկանոն կար:

ԿԵԿԻ - Չհամարձակվեն: Չհամարձակվես էդպես խոսել: Մեկ էլ նրա անունը տաս՝ փետով ծեծ կտամ:

ՏԵՈՒՏԱ - Լռում եմ, աղբերիկս, լռում եմ: Մի բարկանա վրաս: Արի ոտքերդ սրբեմ:

Կեկին հանդարտվում է, թույլ է տալիս ոտքերը սրբել ու հագցնել փափուկ, կեռփիթ հողաթափերը: Բայց չի շտապում տեղից բարձրանալ:

ԿԵԿԻ - Բեզիմը որ եկավ քաղաք, տեսավ՝ ոնց են մարդիկ ապրում, մեկ էլ ասում է ինձ. «Վերջը եկել է, Կեկի: Կնիկները գնում են աշխատանքի, կարծացրել են փեշերը, բացել փորերը, օղակ են կացրել պորտերին: Ու հիմա ամերիկացիները նրանց...»: *(Բնորոշ շարժում է անում:)*

ՏԵՈՒՏԱ - Ինչո՞ւ միանգամից՝ ամերիկացիները:

ԿԵԿԻ - Նրանք ամեն ինչում են մեղավոր: Նրանցից է ամենայն չարիքը: Մեկ էլ, իհարկե, սերբերից:

ՏԵՈՒՏԱ - Ասում ես, էլի... Էսքան ապրել եմ, մի կենդանի ամերիկացու տեսած չկամ:

ԿԵԿԻ - Կին, եթե դու ամերիկացու չես տեսել, չի նշանակում, որ բնության մեջ նրանք գոյություն չունեն:

ՏԵՈՒՏԱ - Բա ինչի՞ ամերիկյան ինչ ապրանք գնես, վրան գրված է՝ պատրաստված է Չինաստանում:

ԿԵԿԻ - Այ հիմա ինչի՞ ես էդ հարցը տալիս: Ուզում ես ինձ կատաղեցնել:

ՏԵՈՒՏԱ - Ասում եմ, ե՞րբ ենք ջահելների նվերները բացելու:

ԿԵԿԻ - Զո ի՞նչ գործն է: Ինքդ ասացիր՝ ջահելների նվերները: Դու ջահել ես: Չէ՛: Դու պառավ ես: Էնպես որ՝ հանգիստ... Սիրտը նվերներ է ուզում: Մեր գլխավոր նվերը տղան է: Ժառանգը: Ուրիշ նվեր ինձ պետք չէ: Դե հերիք է, գնա, շտապեցրու Էդոնային, թող աղջկան էստեղ բերի: Ու կակաչի թուրմ խմեցրեք: Թե չէ՛ մեկ էլ տեսար՝ դիմադրեց, գոռաց: Ինչնե՛րիս է պետք:

ՏԵՈՒՏԱ - Կակաչի թուրմը երեխեքին են տալիս, իսկ նա պինդ գամբիկ է: Ես նրան իմ հաբերն եմ կերցրել, որ քնելու համար են: Էնպես որ, ինքն արդեն ոչինչ չի հասկանում:

ԿԵԿԻ - Ոնց որ դու: Քեզ որ մնա՝ մենկ նվերները բացենք, մենկ էլ ամերիկացիներ գոյություն չունեն:

ՁԱՅՆ - Իսկ նվերները բացելու ենք:

ԿԵԿԻ - Ըհը, էլի մեկը, հիացեք: (*Տեուտային.*) Քո դաստիարակությունն է:

Մենյակ է գլորվում հաշմանդամի սայլակը, մատածը Լիբին է՝ Տեուտայի աղջիկը, Կեկիի զարմուհին: Լիբիի ծնկներին հարսամեկան զգեստն է՝ ծալված ու գեղեցիկ ասեղնագործած քսակ:

ԿԵԿԻ - Ի՞նչ ես էստեղ կորցրել: Դու գործ չունես տղամարդկանց հարկաբաժնում:

ԼԻԲԻ - Իսկ կանանոցում ի՞նչ չեմ տեսել որ...

ԿԵԿԻ - Երես ես առել, Լիբի, վաղուց քեզ չեն ծեծել:

ԼԻԲԻ - Ծեծեն թե չծեծեն՝ միևնույն է, մեջքիցս ներքև ոչինչ չեմ զգում: Մի խոսքով, զեկուցում եմ՝ Էդոնան նրան հազցրել է: Ծորը ձեզ եմ բերել: (*Ձեռքն է վերցնում ծանր քսակը:*) Ու ոսկեղենը, որ վրան էր:

Կեկին առույգ վեր է թռչում բազմոցից, գնում է դեպի Լիբին: Ագահորեն խլում է քսակը, թափահարում է:

ԿԵԿԻ - Եղածը սա՛ է: Մոտը էլ բան չկա՛ր:

ՏԵՈՒՏԱ - Չէ, Կեկի, ես ստուգել եմ: Միայն հազուստն էր ու զարդերը: Իսկ եղած կոսմետիկան միանգամից շարտեցի: Էլ ուրիշ ոչինչ:

ԿԵԿԻ - Լավ: Թե չէ մեր տանը միայն բջջային հեռախոսներն էին պակաս: Կամ դրանից ավելի վատը...

ԼԻԲԻ - Ավելի վատը ո՞րն է:

ԿԵԿԻ - Էլի կոպտում է: Ավելի լավ է պատասխանիր, վրայից բան չե՞ս թոցրել:

ԼԻԲԻ - Էդ էր պակաս:

ԿԵԿԻ - Իսկ ես կստուգեմ: Նրա հորեղբայրը ինձ ցուցակ է տվել: Բոլոր զարդերի ցուցակը:

ԼԻԲԻ - Էլ բան ու գործ չունե՞ս:

ՏԵՈՒՏԱ - Լիբի, քեռուն չկոպտես:

ԿԵԿԻ - (*Տեուտային*): Դեռ էստեղ ես: Էսպես մինչև առավոտ գործը ավարտին չենք հասցնի:

ՏԵՈՒՏԱ - Գնում եմ, Կեկի... հիմա նրան էստեղ կբերենք: (*Վերցնում է ջրով թասն ու ուղղվում դեպի դուռը:*)

ԼԻԲԻ - Դուք, ինչ է, ամուսնական առաջին գիշերը նրանց հետ եք անցկացնելու:

ԿԵԿԻ - Մոռացանք քեզ հարցնել:

ԼԻԲԻ - Չէ, լրորջ... ուղիղ էստեղ կգնաք:

ՏԵՈՒՏԱ - Սալին մեծ տղա է, ինքը զուլխ կհանի:

ԿԵԿԻ - (*Տեուտային*): Վերջապես գնալու ես:

Կեկին գրպանից ծալծված թուղթ է հանում: Բացում, փորձում է կարդալ: Թուղթը դնում է սեղանին: Ջղային ստուգում է գրպանները, ակնոցն է փնտրում:

ԼԻԲԻ - Մարտի տասնչորսը:

ԿԵԿԻ - Հը՛...

ԼԻՐԻ - Ամռան գալստյան օրը:
ԿԵԿԻ - Ինչ ես ասում:
ԼԻՐԻ - Էլի մի ամառ... էլի մեկը...
ԿԵԿԻ - Տառապելու, լալու համար ես էստեղ հայտնվել: Սենյակումդ քիչ տեղ կա:
ԼԻՐԻ - Ինչ է, աչքերդ ցավեցնում եմ:
ԿԵԿԻ - Մնա, բայց լուռ կնստես:
ԼԻՐԻ - *(կամաց ծիծաղում է):* Փոքր ժամանակս էիր էդպես ասում, երբ տղամարդիկ էին գալիս: Ես նստում ու լսում էի ձեր խոսակցությունը:
ԿԵԿԻ - Ու մոխրամաններն էիր բերում: *(Դադար:)* Ծխելը չէն թողել: Տես, մայրդ կիմանա...
ԼԻՐԻ - Իսկ ինչ պիտի անի: Չի թողնի, որ փողոցում ֆոֆոամ:
ԿԵԿԻ - Ակնոցս չեմ գտնում, երևի խանութում եմ թողել:
ԼԻՐԻ - Փնտրեմ:
ԿԵԿԻ - Պետք չէ: Դրա համար չես եկել էստեղ, որ հիմա էլ գնաս:
ԼԻՐԻ - Կարդում ես մտքերս:
ԿԵԿԻ - Չէ հա... առանց ակնոց տառերը չեմ կարող կարդալ, ուր մնաց՝ մտքերդ:
ԼԻՐԻ - Իսկապես պիտի էդ բանը անեք:
ԿԵԿԻ - Ոչ առաջինն է, ոչ վերջինը: Մորդ հարցրու, ոնց են իրեն ամուսնացրել: Հորդ ամբողջ կյանքում ատել է: Հիմա էլ է ատում, չնայած քսանհինգ տարի է՝ նա գերեզմանում է: Փոխարենը մարդկանց մոտ ամեն բառից հետո իր Դավաատին է հիշում:

(Նմանակելով Տեուտային:) «Ա՛խ, իմ Դավաատը: Ա՛խ, մարդս: Մարդ չէր՝ ոսկի էր»: Իսկ նա մահու ատիժան ծեծում էր ու մերկ այգի քշում: Բոլոր հարևաններն էլ գիտեին: Իսկ մենք ամեն ինչ անձայն կանենք: Էդոնան կիետևի, որ Սալին հանկարծ նրան չվնասի:

Կեկիին լսելով՝ Լիրին ծնկներին է փռում հարսանեկան զգեստը: Հետո այն հարմարեցնում է իր վրա:

ԼԻՐԻ - Սազում է: *(Կեկին լուռ նայում է Լիրիին:)* Հայելու մեջ նայեի... *(Կեկիին.)* Իսկ դու չես ուզում փորձել: *(Մեծ դադար:)* Ներիր, ներիր ինձ... քեռի: Հիմար եմ ես, չար հիմար: Խնդրում եմ, մի բարկանա վրաս:
ԿԵԿԻ - Չեմ բարկանում, աղջիկս... Գնամ ակնոցս բերեմ: *(Գնում է դեպի դուռը:)*

Գալիս է Տեուտան:

ՏԵՈՒՏԱ - *(տեսնելով Լիրիին՝ հարսի զգեստը բռնած):* Մտքինդ ինչ է... Ուրիշի շորը չեն հագնում, վատ նշան է:
ԼԻՐԻ - Եթե ամուսնանաս: Իսկ դա ինձ համար չէ:
ՏԵՈՒՏԱ - Ո՞ր, Կեկի:
ԿԵԿԻ - Ակնոցս բերեմ: Խանութում եմ թողել:
ՏԵՈՒՏԱ - Իմը վերցրու: *(Մեկնում է ակնոցը:)*

ԿԵԿԻ - Զո ակնոցով բան չեմ տեսնում:

ՏԵՈՒՏԱ - Ստիպված սիգնալիզացիան ենք անջատելու: Պիտի զանգենք, տոն օրով մարդկանց նեղություն տանք: Ասենք, բոլորն արդեն հարբած են:

ԿԵԿԻ - Նրանց համար տոն է... իսկ ես էստեղ քոռ-քոռ նստեմ:

ՏԵՈՒՏԱ - Ի՞նչ պիտի կարդաս: Տուր ես կարդամ:

ԿԵԿԻ - Դե, հանգիստ թողեք ինձ վերջապես:

ՏԵՈՒՏԱ - *(փնթփնթոցով մի կողմ է քաշվում)*: Մի բառ ասել չի լինում:

ԿԵԿԻ - Ո՞ր է Հերոսան:

ՏԵՈՒՏԱ - Հարսի մազերն է չորացնում, հիմա կզան: Էնքան լաք էին փչել մազերին՝ ստիպված գլուխը լվացինք: Իսկ մենք գուցե նվերները նայենք:

ԿԵԿԻ - Ինչ ուզում եք՝ արեք: Թեկուզ «Նապոլոնի» էստեղ պարեք, միայն ինձ հանգիստ թողեք:

Տեուտան մոտենում է սնդուկին, որի վրա նվերներն են դարսած: Վերցնում է աուփեռից մեկը, քափահարում է: Նայելով սենյակում ջղային քայլող Կեկիին՝ նվերը տեղն է դնում:

ԼԻՐԻ - *(անսպասելի)*: Իսկ եթե նա կույս չէ:

Կեկին կանգ է առնում: Լռում է:

ՏԵՈՒՏԱ - Լեզվիդ մի տուր, հիմար, նա լավ ընտանիքից է, պրոֆեսորի աղջիկ:

ԼԻՐԻ - Առավել ևս: Զեռի Կեկի, նրան կգնդակահարեն:

ՏԵՈՒՏԱ - Մի օր ես քեզ կգնդակահարեմ: Ու այգում, տանձի ծառի տակ կթաղեմ: Կասեմ, որ աղջիկ չեմ ունեցել:

Կեկին սեղանից վերցնում է թուղթը, տալիս է Տեուտային:

ԿԵԿԻ - Կարդա՛:

Մինչև Տեուտան նորից գրպանից կհաներ ակնոցը՝ Կեկին քսակի պարունակությունը լցնում է սեղանին:

ՏԵՈՒՏԱ - *(կամաց)*: Թե հանկարծ էդպես լինի... կարելի է աքլորը մորթել ու արյունով սավանը...

ԿԵԿԻ - Կարդա՛:

ՏԵՈՒՏԱ - Կարդում եմ, Կեկի, կարդում եմ... *(Դնում է ակնոցը)*:

ԿԵԿԻ - Ձեր սավանը ոչ մեկին պետք չի գա: Բեզլիմը եղբոր բնակարարանն արդեն վաճառել է, վաղը վերադառնում է գյուղ: Վերջ, հարցը փակված է: *(Տեուտային.)* Դե... երկամր եմ սպասելու:

ՏԵՈՒՏԱ - *(կարդում է)*: «Ոսկե շղթա կարմիր քարե կախիչով»: Էդ ի՞նչ է, ռուբլին:

ԿԵԿԻ - *(պրպտում է զարդեղենը)*: Սպասիր... ըհը, էս է: Ոնց որ ռուբին է: *(Շղթան մի կողմ է դնում)*: Հաջորդը:

ԼԻՐԻ - Չէ, լուրջ որոշել եք ոսկեղենը հաշվել:

ԿԵԿԻ - Փակի՛ բերանդ:

ՏԵՌԻՏԱ - (կարդում է): «Ոսկե շղթա, հաստ»: Կամ:

ԿԵԿԻ - (կոյտից հանելով շղթան): Սա համստ է:

ՏԵՌԻՏԱ - Նայած ո՞ւմ համար:

ԿԵԿԻ - Սրանից հաստ չկա:

ՏԵՌԻՏԱ - Ուրեմն ինքն է: (Կարդում է): «Բան մազերի համար: Ճերմակ, կապույտ քարերով»: Միանգամից երևում է, որ տղամարդ է գրել: Կարո՞ղ է՝ սանր է:

ԿԵԿԻ - Էգրետ:

ՏԵՌԻՏԱ - Հը՞...

ԿԵԿԻ - Կոչվում է էգրետ: Սա է: (Յույց է տալիս զարդը:)

ՏԵՌԻՏԱ - Սիրուն է: Արժամք է:

ԿԵԿԻ - Բեզիմն ասաց՝ ձերմակ ոսկի է: Ստուգել է պետք: Հետո ոսկերիչին կտանեմ:

Մենյակ է մտնում միջին տարիքի կին հոգնած ու դիմակի պես քարացած դեմքով: Էդո՞նան է: Նա, ուսերից ամուր բռնած՝ ներս է բերում գիշերանոց հագած հարսին: Չարդերով տարված Կեկին ու Տեուտան նրանց չեն նկատում: Փոխարենը նրանց տեսնում է Լիլին: Տեսնում, բայց բառ չի ասում, միայն ետ է քաշվում սայլակով՝ տեղ բացելով եկողների համար: Էդո՞նան էլ չի խոսում: Նա մշտապես լուռ է: Լուռ է նաև Ռոզաֆան, բայց դա բացատրվում է նրանով, որ աղջիկը քնաբեր դեղի ազդեցության տակ է:

ՏԵՌԻՏԱ - (կարդում է ցուցակը): «Ոսկե ամուսնական մատանին»: Էս մեկը հասկացանք: (Կոյտից

դուրս է հանում մատանին:) Ծատ բարակ է:

ԿԵԿԻ - Իսկ քեզ ո՞րն է պետք, ի՞նչ ես նորից սկսում...

ՏԵՌԻՏԱ - Ի՞նչ ես ասում, Կեկի, ինձ ոչ մի բան էլ պետք չէ: Դու սրանք հետո թաքցրու, սեյֆում փակիր:

ԿԵԿԻ - Առանց կնկա խորհուրդների էլ մի կերպ գլուխ կհանեմ:

Լիլին անսպասելի փոթկացնում է: Կեկին ու Տեուտան նայում են նրան, նկատում են Էդոնային ու Ռոզաֆային: Տեուտան շփոթված տեղից վեր է բռնում:

ՏԵՌԻՏԱ - Ահա և Ռոզաֆան: Ահա և մեր գեղեցկուհին: Ախ, ի՞նչ գեղեցկուհի է:

ՌՈՂԱՖԱ - Որտե՞ղ է...

ՏԵՌԻՏԱ - Ի՞նչ է, սիրելիս:

ՌՈՂԱՖԱ - Հորեղբայրս...

ՏԵՌԻՏԱ - Հորեղբայրդ գնաց: Իրենց գյուղը: Հիմա դու մեզ մոտ ես ապրում:

ՌՈՂԱՖԱ - Ես ուզում եմ գնալ...

ՏԵՌԻՏԱ - Հիմա կգնաս, կպառկես... Ամեն ինչ լավ կլինի, թռչնակս:

ՌՈՂԱՖԱ - Թողեք ինձ...

ԿԵԿԻ - Սրան ի՞նչ ես կերցրել, թունավոր սո՞նկ...

ՏԵՌԻՏԱ - Ասում եմ, չէ՞, իմ հաբերն եմ տվել: (Ռոզաֆային.) Ո՞նց ես քեզ զգում, սիրունիկս, սիրտդ չի՞ խառնում:

ԿԵԿԻ - Բիչ խոսեք: (Գոտիկից անջատում է բանալին, տալիս է Տեուտային:) Տարեք սրան, ժամանակն է:

ՏԵՌԻՏԱ - (վերցնելով բանալին):

Դե, որ ժամանակն է, ուրեմն՝ ժամանակն է:

Առաջինը գնում է **Տեուտան**, նրան հետևում է **Էդոնան**, նա իր ամուր ձեռքերից բաց չի թողնում **Ռոզաֆային**: **Լռութուն**:

ԿԵԿԻ - «Ամուսինն է կնոջ գլխավորը, ինչպես Քրիստոսն է Եկեղեցու գլխավորն ու նաև մարմնի Փրկիչը»:

ԼԻՐԻ - Էդ Սալիի մասին ես ասում:

ԿԵԿԻ - Ընդհանրապես եմ ասում: Էն մասին, թե ոնց է ամեն ինչի կարգը:

ԼԻՐԻ - Պարզ է:

ԿԵԿԻ - Ոչ մի բան էլ թեզ պարզ չէ: Ինձ էլ ոչինչ պարզ չէ:

Ներս է վազում Տեուտան:

ԿԵԿԻ - Ինչ կա:

ՏԵՌԻՏԱ - Էդ բանալին չէ: Սեյֆինն ես տվել:

Կեկին գոտիկից ուրիշ բանալի է անջատում: Բանալիները փոխանակում են:

ԿԵԿԻ - Էս ինչ բան է, էլի շփոթեցի: Հետո կհիշեցնես՝ Սալիի սենյակի կողպեքը փոխեմ, թե չէ ինչքան պիտի էսպես...

ՏԵՌԻՏԱ - (հրնթացս): Կհիշեցնեմ, կհիշեցնեմ, եթե ինքս չմոռանամ: (Գնում է):

Կեկիի ու Լիրիի ծանր, ճնշող լռությունը շարունակվում է մինչև Տեուտայի վերադարձը:

ԿԵԿԻ - Իսկ ո՞ր է Էդոնան:

ՏԵՌԻՏԱ - Էնտեղ, դռան մոտ մնաց: Բանալին մոտն եմ թողել: Համենայնդեպս:

ԿԵԿԻ - Հիմարի մեկն ես, որ էնտեղ ես թողել: Էդոնայի մտքով ինչ ասես՝ կանցնի:

ՏԵՌԻՏԱ - Վերջ տուր... Ախր, մայր է:

ԿԵԿԻ - Հայրենիքը հերոսների է սպասում, իսկ կնանիք հիմարներ են ծնում: Այ, էս մեկը նրա ու մեր Սալիի մասին է:

Կեկին նստում է սեղանի մոտ, Տեուտային է մեկնում զարդեղենի ցուցակը:

ԿԵԿԻ - Որտեղ կանգ առանք:

Տեուտան դժկամ մտռնում է Կեկիին, վերցնում ցուցակն ու նստում է կողքին:

ՏԵՌԻՏԱ - (ականջ դնելով տան խորքի լռությանը): Ամուսնական մատանու վրա կանգ առանք: (Կարդում է): «Թիթեռնիկի ձևով ականջօղեր: Մարգարիտներով»:

ԿԵԿԻ - Կա... ականջող կա: Ոսկուց:

Այդ պահին խուլ լսվում է կանաչի ճիչ: Կինը ճչում ու ճչում է...

ԿԵԿԻ - (պահանջկոտ): Հետո... կարդա:

Ճիչերը շարունակվում են:

ՏԵՌԻՏԱ - (բարձրացնում է ձայնը ժիչերը խլացնելու համար): «Ապարանջան՝ օձի զմրուխտե աչքերով»:

ԿԵԿԻ - Ըհը ապարանջանը: Իսկ ինչ աշուկներ են:

Լիբին սայլակը մոտեցնում է նրանց:

ԼԻՐԻ - Չեք լսում: Խլացել եք... վերջ տվեք:

ՏԵՈՒՏԱ - Գուցե իսկապես... գնանք... նայենք...

ԿԵԿԻ - Նստիր: Արդեն ուշ է:

ԼԻՐԻ - Ինչո՞ւ է նա գոռում: Ինչո՞ւ է էդպես գոռում: Էդքան ցավո՞ւտ է դա:

ՏԵՈՒՏԱ - Հեչ էլ ցավոտ չէ: Սկզբում տհաճ է... հատկապես անսովորությունից: Իսկ հետո՝ ոչինչ, նույնիսկ չես նկատում: Հիշում եմ, իմ Դավմատը վրաս իրեն չի խնայում, իսկ ես էդ ժամանակ...

Կեկին անսպասելի ապտակում է Տեուտային: Նա ճշում է, ձեռքով փակում է այտը: Լռում է: Լռում է նաև Կեկին: Գլուխը ձեռքերի մեջ թաքցրած Լիբին ևս լուռ է: Ու միայն Ռոզաֆան է շարունակում գոռալ:
Խավար:

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

Քեռի Կեկիի փոքրիկ խանութը, ուր վաճառվում է ամեն ինչ: Հիմնականում երկարաժամկետ պահպանվող ապրանք՝ բակալեա, պահածոներ, զարեջուր... Լիբիի աշխատանքային տեղում՝ դրամարկղի շուրջը, պաստառներ են Մայր Թերեզայի պատկերով, բունկերի (դրանք վիթխարի քանակով կառուցել էր Էնվեր

Խոջան Ալբանիայով մեկ) ձև ունեցող հուշանվերային մոխրամանների դարակը, բացիկներով ցուցափեղկն ու սիգարետների վաճառարկողը:

Փողոց տանող դուռը բաց է: Մուտքի մոտ, պլաստիկ աթոռին նստած, օրվա մեծ մասն է անցկացնում քեռի Կեկին, շփվում է հարևանների ու անցորդների հետ՝ նրանց հրավիրելով խանութ: Փողոցում է թեյ խմում ու ծխում, առանց հատուկ պահանջի կրպակ չի մտնում: «Հատուկ պահանջների» համար խանութում կա զուգարան, որի դուռը թաքցրած է ապրանքների կանգադարակների ետևում: Խանութից կարելի է ուղիղ տուն մտնել, ինչը շատ հարմար է: Հատկապես սայլակին նստած Լիբիի համար: Լիբին նստած է դրամարկղի ետևում, ամսագիր է թերթում, ծամռն է ծամում՝ այն փուչիկ սարքելով ու պայթեցնելով:

Փողոցից խանութ է մտնում քեռի Կեկին՝ պառավին թևանուկ արած:

ԿԵԿԻ - Համեցեք, հարգելիս: Զգույշ, էստեղ աստիճան կա... Վաղուց մեզ մոտ չեք եղել:

ՊԱՌԱՎ - Վաղուց, Կեկի, վաղուց:

ԿԵԿԻ - Սա Լիբին է, զարմուհիս: Հիշո՞ւմ եք նրան: Տեուտայի աղջիկը:

ԼԻՐԻ - Բարև ձեզ, տատի:

ԿԵԿԻ - Համեցեք, ընտրեք, Լիբին ձեզ կօգնի:

ՊԱՌԱՎ - Ծնորհակալ եմ, Կեկի, աստված քեզ առողջություն տա: Գնա, ինքս գլուխ կհանեմ: Պա-

ոավել եմ, բայց խելքս տեղն է:
Առևտուր անելը չեմ մոռացել:
(Գնում է խանութի խորքը:)

ԿԵԿԻ - (Լիբիին): Փող չվերցնես:

ԼԻԲԻ - Ինչի հանկարծ...

ԿԵԿԻ - Իսկ երեխայի օժիտը ո՞վ պիտի կարի: Կարո՞ղ է, դու քո ծուռ ձեռքերով...

ԼԻԲԻ - Հարսանիքից երկու շաբաթ է անցել, իսկ դուք արդեն իրար եք խառնվել: Եկեք մի հատ էլ երեխայի անունը սկսենք ընտրել:

ԿԵԿԻ - Անունը վաղուց է ընտրված:

ԼԻԲԻ - Ուրիշ բանագործ չունեիք:

ԿԵԿԻ - Լեզուդ քեզ քաշի...

ԼԻԲԻ - Ու ձեռքերս էլ ծուռ չեն:

ԿԵԿԻ - Քեզ նույնիսկ մահվան պատանքս կարել չէի վստահի:
(Գնում է դեպի դուռը:)

ԼԻԲԻ - Ծատ պետքս է...

Կեկին դուրս է գնում: Հայտնվում է պառավը մի քանի տոպրակ ձեռքին, հիմնականում չորաբլիթ է ու կոնֆետեղեն: Պառավը գնումները դնում է դրամարկղի կանգնակի վրա:

ՊԱՌԱՎ - Ինչքան նման ես եղբորդ: Լա՛մ ոնց է, վաղուց չեմ տեսել:

ԼԻԲԻ - (դադարից հետո): Տատի, Ռինորը մահացել է: Ծուտով տաս տարի կլինի: Սպանել են նրան:

ՊԱՌԱՎ - Հա, հա... Մեկն ինձ ասել է, բայց ես մտածել եմ, որ էդ Սալին է գնացել սպանելու Կեկիի արյան վրիժառուին ու նրան էստեղ էլ գնդակահարել են:

ԼԻԲԻ - Չէ, տատի, Սալին ողջ է ու...

Ու առողջ է: Տնից դուրս չի գալիս, վախենում է, որ արյան վրիժառուները կսպանեն:

ՊԱՌԱՎ - Ուրեմն էդ Սալին է երեխա ունեցել:

ԼԻԲԻ - Դեռ չէ, տատի, նոր է կնոջը տուն բերել:

ՊԱՌԱՎ - Հասկացա, հասկացա... Չէի սիրում նրա հորը, չար մարդ էր: Իսկ Էդոնային միշտ էլ հավանել եմ՝ լավն է, գործունյա: Էսօր տեսա, ինչ-որ ջահելի հետ էր:

ԼԻԲԻ - Դուք ոչինչ չե՞ք շփոթում, տատի:

ՊԱՌԱՎ - Ջահել հետ էր, ջահելի... Տեսել եմ, ոնց որ քեզ եմ տեսնում: Լա Էդոնային փող տվեց: Ես էլ դեռ մտածեցի, որ փողը փողոցում գրպանից չեն հանում՝ վատ նշան է: Ինչ պիտի վճարեմ:

ԼԻԲԻ - Ոչինչ չեք վճարելու, տատի, ամեն ինչ ձրի է: Ձեզ՝ նվեր:

ՊԱՌԱՎ - Այ, շնորհակալ եմ, շնորհակալ եմ քեզ:

ԼԻԲԻ - Ինձ չէ, տատի, քեռի Կեկիին շնորհակալ եղեք:

ՊԱՌԱՎ - Միշտ եմ ասել, Ռեկիպիները լավ ընտանիք են: Անպայման կգամ ձեր մանչուկի օժիտը կարելու:

ԼԻԲԻ - Իհարկե, եկեք, ուրախ կլինենք: Տվեք ձեր գնումները մեծ տոպրակի մեջ դնեմ, հարմար կլինի տանելը: (Գնումները տեղավորում է տոպրակի մեջ:)

ՊԱՌԱՎ - Ծնորհակալ եմ, սիրելիս,

առաձս էլ մեծ բան չէ: Ծատ բան տանելը դժվար է: Ամեն ինչից քիչ-քիչ եմ վերցրել: Իմոնց ուրախացնելու համար: Նրանք քաղցր սիրում են: Սկզբում Իլլկեին ու Արտեին կգնամ այցի: Քույրերս են: Նրանց համար թխվածք եմ վերցրել: Վերադարձին մորս կհանդիպեմ, նա սառնաշաքար է սիրում: Մարդուս կողմն էլ կգնամ: Թեև ինձ դուրս է արել, ինչ է, նրան երեխաներ չկարողացա նվիրել: Եթե ուզում ես, եղբորդ մոտ էլ կգնամ: Նա ինչ է սիրում:

ԼԻՐԻ - Ուրեմն դուք... Դուք գերեզմանոց եք գնալու:

ՊԱՌԱՎ - Էլ ուրիշ ո՞ր գնամ: Երբ առաջին անգամ, պստիկ աղջիկ էի, գերեզմանոցում հայտնվեցի, հա՛ զարմանում էի. «Բա ո՞ր եմ մարդիկ: Էստեղ միայն բանջարանոցներ են»: (Ծիծաղում է:) Ես որ չեմ հիշում, ծնողներիս պատմածն է: Ամեն անգամ ծիծաղում էին, երբ հիշում էին...

Լիբիան սիգարետների վաճառարկից մեկ տուփ է հանում:

ԼԻՐԻ - Ուրեմն էս սիգարետները վերցրեք: Ռիհորը միայն սրանցից էր ծխում:

ՊԱՌԱՎ - Էդպիսի սովորություն կա: Երբ փեսացուն տուն է գալիս, սկզբում նրան սիգարետ են առաջարկում: Ու քանի նա ծխում է, հանկարծ ներս են բերում ապագա հարսնացուին ու էլի մի սիգարետ են առաջարկում: Եթե

չփորձմունքից նորը ծխեց, ուրեմն հարսնացուն դուրը եկավ, սիրահարվեց:

ԼԻՐԻ - Ռիհորը տասնհինգ տարեկան էր: Ծխել սովորեց, իսկ սիրահարվել չհասցրեց: (Ծրջվում, դարակից վերցնում է հուշանվերային մոխրամանը:) Մոխրամանն էլ վերցրեք նրա համար: Թեթև է:

ՊԱՌԱՎ - (տնտղելով մոխրամանը): Մարդս հենց էսպիսի բունկեր էր կառուցել Գիրոկաստրայի մոտ: Էդ ժամանակ էնտեղ էինք ապրում: Գիտես, որ դա Էնվերի հարազատ քաղաքն է: Էնտեղ է ծնվել:

ԼԻՐԻ - Գիտեմ, տատի: Դպրոցում անցել ենք: (Սիգարետի տուփն ու մոխրամանը դնում է տոպրակը՝ մնացած գնումների հետ:)

ՊԱՌԱՎ - Էնվերը հա՛ թշնամիներից էր վախենում, ամրացնում էր երկիրը: Իսկ հենց մեռավ՝ ամեն ինչ քանդվեց: Ամեն ինչ:

Պառավը վերցնում է տոպրակը, գնում է դեպի դուռը: Ծրջվում է:

ՊԱՌԱՎ - Էդոնային ասա, որ էն ջահելը ինձ դուր եկավ: Լավ տղա է: Միայն թող փողը փողոցում գրպանից չհանի: Դժբախտություն կլինի: (Գնում է:)

Մայրակին նստած Լիբիան դուրս է գալիս դրամարկղի ետևից, անցնում է դարակների կողքով, կանգ է առնում: Դժվարությամբ

ձգվում-հասնում է գարեջրի տուփերի դարակից, վերցնում է քիթեղյա տուփը, բայց չի հասցնում բացել: Կրպակի խորքից լավում է Տեուտայի ձայնը:

ՏԵՈՒՏԱ - Դե շարժվի, ինչ ես տնտնում... դոյլն ու լաթերը գուգարանում են:

Լիբին գարեջուրը քաքցնում է քիկունքում: Հայտնվում է Տեուտան:

ՏԵՈՒՏԱ - Այ թե ինչու երբ կրպակ մտնեմ, քեզ միշտ գարեջրի դարակի մոտ եմ տեսնում: Կարո՞ղ ես, խմում ես:

ԼԻՐԻ - Ըհը, նաև ծխում եմ:

ՏԵՈՒՏԱ - Համարյա երեքն է, Կեկիի ձաշի ժամն է, իսկ մենք պետք է հատակը լվանանք:

ԼԻՐԻ - Իմ ինչ գործն է...

ՏԵՈՒՏԱ - Ամեն ինչն էլ քո գործն է: Ախր, զարմանալու չափ լավ ես հարմարվել էս կյանքում:

ԼԻՐԻ - Կարող ենք տեղերով փոխվել: Ես գնամ հատակը լվանամ, իսկ դու իմ սայլակում կնստես:

ՏԵՈՒՏԱ - Հատակը Ռոզաֆան կլվանա:

ԼԻՐԻ - Էդ ինչի՞ հանկարծ...

ՏԵՈՒՏԱ - Որովհետև երկու շաբաթ է անցել:

ԼԻՐԻ - Օյ, թող ես գուշակեմ: Երկու շաբաթ է անցել ու ինչ-որ մի ծեսի համաձայն ջահել կինը պետք է լվանա հատակը:

Տեուտան դատերը պատասխանում է նրա ուր թեթևակի կամքե-

լով, ինչից Լիբին վեր է թռչում, իսկ գարեջրի տուփը դավաճանաբար գլորվում է հատակին: Լռությամբ: Տեուտան վերցնում է տուփը, դնում է դարակից:

ՏԵՈՒՏԱ - Ինչքան նման ես եղբորդ...

ԼԻՐԻ - Գիտե՞ս, մամ, ավելի լավ է՝ ինձ ծեծեիր: *(Շարժվում է դեպի դրամարկղը:)*

Հայտնվում է Ռոզաֆան, ձեռքին՝ դոյլ ու հատակը լվանալու փալաք:

ՏԵՈՒՏԱ - Դռներից էլ սկսիր, ամենակեղտոտը էստեղ է: Ու ջուրը շուտ-շուտ փոխիր: Գլուխ կհանես: *(Ռոզաֆան հաստատական գլխով է անում:)* Գնամ Կեկիի ետևից: *(Գնում է դեպի փողոց բացվող դուռը:)*

Ներս է մտնում Կեկին՝ քարշ տալով Էդոնային: Կեկիին տեսնելով՝ Ռոզաֆան գնում է դարակների ետևը:

ԿԵԿԻ - *(Տեուտային):* Փակիր խանութը:

ՏԵՈՒՏԱ - Բայց դեռ երեքը չկա:

ԿԵԿԻ - Փակիր:

ՏԵՈՒՏԱ - *(շտապում է կատարել Կեկիի հրամանը):* Բան է պատահել:

ԿԵԿԻ - Ըհը, հիացիր:

Կեկին հատակին է շարտում մի բուռ կոնֆետ: Լիբին սայլակով առաջ է գալիս, զննում է կոնֆետները:

ԿԵԿԻ - Պառավիճ մինչև ավտոբուսը ուղեկցեցի: Վերադառնում եմ, ու մեկ էլ... էս անպետքը (*ցույց է տալիս Էդոնային*) հարևանի լակոտներին կոնֆետ է հյուրասիրում: Բռերով: Թալանեց ինձ, անպետքի մեկը...

ԼԻՐԻ - Զեռի, նա չէր կարող, մեր խանութում էս կոնֆետներից երբեք չենք ունեցել:

ԿԵԿԻ - Ուրեմն փողերս է գողացել: Ու դրանով կոնֆետ է գնել: Լիրի, բաց դրամարկղը:

ԼԻՐԻ - Ինչո՞ւ բացեմ, եթե առավտոսից մի գնորդ չի եղել: Դրամարկղում նույնիսկ մի լեկա չի հավաքվի:

ՏԵՈՒՏԱ - Էս տանը բոլորն ինձ հակառակ են խոսում: Բոլորը: Ձեզ քիչ եմ ծեծել: (*Գնում, բացում է դրամարկղը:*) Խուզարկիր դրան, Տեուտա:

ԼԻՐԻ - Էլ անելու բան չգտար:

ՏԵՈՒՏԱ - Բայց ինչի՞ ես:

ԿԵԿԻ - Ես պիտի եղբորդ կնոջը շոշափեմ: Իսկ դու... ինչքան չլինի՝ կին ես:

Տեուտան ստուգում է Էդոնայի հագուստը:

ԼԻՐԻ - Մայրիկ, պետք չէ:

ԿԵԿԻ - Ձենդ... գողին ես խղճում: Թե՛ նրա հետ միասին եք ինձ թալանում:

Էդոնան չի ընդդիմանում խուզարկությանը: Տեուտան ստուգում է Էդոնայի կրծկալն ու

այնտեղից դուրս է բերում բջջային հեռախոս:

ԿԵԿԻ - Էդպես... տեղ հասանք:

ՏԵՈՒՏԱ - Էս ի՞նչ է... հեռախոս:

Կեկին Տեուտայի ձեռքից վերցնում է հեռախոսը, զննում է: Անսպասելի հարվածում է Էդոնային:

ԼԻՐԻ - Զեռի, պետք չէ... դա իմ հեռախոսն է: (*Կեկին կանգ է առնում:*) Մի խփիր:

Լռություն:

ԿԵԿԻ - Իսկ... քեզ որտեղի՞ց:

ՏԵՈՒՏԱ - (*անսպասելի*): Ես եմ նրա համար գնել:

ԿԵԿԻ - Դո՞ւ:

ՏԵՈՒՏԱ - Ինչ է՞ որ... Թող աղջկա մոտ հեռախոս լինի, ի՞նչ վատ է...

ԿԵԿԻ - Ի՞նչ... Դեռ հարցնում ես: Դրա մեջ ժամացույց կա:

ՏԵՈՒՏԱ - Ի՞նչ ժամացույց:

Կեկին վրա է պրծնում, նրա դեմքի առաջ թափահարում է հեռախոսը:

ԿԵԿԻ - Ըհը... չեն տեսնում, սրանով ժամանակը կարելի է իմանալ: Կինը չի կարող ժամացույց ունենալ: Իրավունք չունի: Ոչ ժամացույց, ոչ գլխարկ: Մի հատ էլ շալվար գնեիր նրա համար, հիմար:

ԼԻՐԻ - Բայց ժամացույցը կարելի է անջատել:

ԿԵԿԻ - Անջատել... Հիմա անջատելուց կտամ...

Կեկիմ հեռախոսը շարտում է հատակին, ոտքերով տրորում:

ԿԵԿԻ - Ա՛ն քեզ ժամացույց... ըհը: Ուզում ես տղամարդ լինել... անը քեզ... (Տնքում, ձեռքը տանում է սրտին:)

ՏԵՈՒՏԱ - Էլի՛... (Լետվում է դեպի եղբայրը:)

ԿԵԿԻ - (վանելով նրան): Չկանես ինձ, ծձ... դուք մահս եք ուզում:

ՏԵՈՒՏԱ - Ի՛նչ ես ասում, Կեկի, ինչի՞ ես էդ բառերն ասում:

ԿԵԿԻ - Մեռնեմ՝ սովից կսատկեք:

ԼԻՐԻ - Էլի մի հարյուր տարի ապրի, քեռի:

ՏԵՈՒՏԱ - (գրպանից հանում է դեղահաբերի տուփը): Ա՛ն, խմիր:

Կեկիմ կուլ է տալիս հաբը:

ԿԵԿԻ - Հա, թունավորի ինձ: Դրան ես սպասում, որ սատկեմ: Կարծում ես, էդ ժամանակ կարող եք փողերովս հեռախոս գնել, ժամացույց կրել:

ՏԵՈՒՏԱ - Ոչ մի բան էլ չեմ մտածում:

ԿԵԿԻ - Ճիշտ ես անում, չմտածես: Դուք ոչինչ եք, ու էս տնից ո՛չ մի բան ձերը չէ: Իսկ ձեր կյանքը շան կյանքից թանկ չէ:

ՏԵՈՒՏԱ - Ոնց կասես, Կեկի: Դու տղամարդ ես, տան գլխավորը: Գնանք, պառկիր, հանգստացիր:

ԿԵԿԻ - Կհանգստանամ գերեզմանում, իսկ դուք վրան կպարեք: Փորներդ բաց: Իսկ հետո ամերիկացիները բոլորիդ... (Բազմանշանակ շարժում է անում:)

Դարակների ետևից լավում է հատակին ընկնող դուլի աղմուկը:

ՏԵՈՒՏԱ - Այ քեզ հիմար... գործ անել չգիտի:

ԿԵԿԻ - Ո՛վ...

ՏԵՈՒՏԱ - Մեր ջահել հարսը: Խնդրեցի հատակը լվանալ, իսկ նա դուլը շուռ տվեց: (Գոռում է:) Ավելի լավ է գլուխդ ջարդեիր:

ԿԵԿԻ - Ոնց եք բոլորդ զզվեցրել: Մեկն իմանար... եթե իմանար, ոնց եք զզվեցրել...

ՏԵՈՒՏԱ - Էդոնա, օգնիր, Կեկիին տանենք ննջարան: (Գոռում է:) Թափածո մաքրի, լսո՛ւմ ես, Ռոզաֆա:

ԿԵԿԻ - Մի գոռա, առանց էդ էլ գլուխս պայթում է: Ի՛նչ ես անընդհատ գոռում:

ՏԵՈՒՏԱ - Լռում եմ, Կեկի, լռում եմ:

Տեստան ու Էդոնան, երկու կողմից քանցուկ անելով Կեկիին, նրան տուն են տանում: Դադար:

ԼԻՐԻ - Դե՛... գոնե դուրս արի, քեզ տեսնենք:

Դարակների ետևից դուրս է գալիս Ռոզաֆան, գլխահակ կանգնում է:

ԼԻՐԻ - Վերցրու հեռախոսը, ինձ տուր, միայն զգույշ, վերջնակա նապես չջարդես: Ոչինչ, էկրանը չի վնասվել: Սկոտչով կփաթաթեմ՝ կաշխատի: Զո՛հն է:

ՌՈԶԱՖԱ - Ի՛նչ...

ԼԻՐԻ - Սիրեկանդ Էդոնային փող ու

հեռախոս է տվել: *(Ռոզաֆան լուռ է:)* Զոհն է: Ուրիշ մեկինը չի կարող լինել: Ես հեռախոս չունեմ, ո՞ւմ զանգեմ: Էդոնան ընդհանրապես չի խոսում: Միայն լուռ ու լսում է: Ոնց որ դու՝ էս պահին: *(Ռոզաֆան չի պատասխանում:)* Ինձ սպիտակեղեն կարող պառավն ասաց, որ Էդոնային մի ջախելի հետ է տեսել: Ու նա ոնց որ Էդոնային փող է տվել: Էդ ինչի՞ հանկարծ... Չգիտեմ: Ես պառավին չհավատացի, մտածեցի՝ խելքը լրիվ է թոցրել: Իսկ հետո քեռին Էդոնային բռնացրեց կոնֆետ բաժանելիս: Էդ թուլությունը ունի, վերջին ունեցածը փողոցի երեխաներին կտա: Երբեմն նրան կոնֆետ եմ տալիս, որ երեխաներին բաժանի, ինքը վախենում է քեռուց գողանալ: Իսկ ես չեմ վախենում: Ես ոչ մի բանից էլ չեմ վախենում: Չե՞ս հավատում: Այ, էն գարեջրի տուփը տուր: Կողքիդ է: *(Ռոզաֆան տուփը տալիս է:)* Ուզեմ՝ կխմեմ: Բայց չեմ ուզում: *(Ուժեղ թափահարում է տուփը:)* Առ, տեղը դիր: Մեր հաբեցողներից մեկի համար տոն կդառնա: Էդպես հաճախ եմ անում: Ինչ է՞ որ... Պետք է մի ձևի զվարճանալ: Ինձ որ տղաները հեռախոս չեն տալիս: Ես ընդհանրապես ծանոթ տղամարդիկ չունեմ: Իսկ դու ունես: *(Ռոզաֆան լուռ է, քիթն է վեր քաշում:)* Բայց լացդ չդնես: Գժվեցնում է: Չգոռաս, լսո՞ւմ ես:

Էս տանը լաց չեն լինում: Էստեղ միայն ատում ու անիծում են: Իսկ կսկսես լալ՝ Էդոնայի տեղը կբռնես: *(Դադար:)* Նրանք ամեն գիշեր են քեզ զուգավորման տանում: *(Ռոզաֆան գլխով է անում:)* Պառավ քաճեր: Չեն համբերում: **ՌՈՁԱՖԱ** - Ինչո՞ւ են ինձ հետ էդպես վարվում: Ախր, նա... այլանդակ է: Գիժ այլանդակ: Նրա հոտը վրայիցս մաքրել չեմ կարող: Ախր, նրան կապած են պահում, նա տակն է անում: Գիտե՞ս էդ մասին: **ԼԻՐԻ** - Գիտեմ: Մեր Սալին հազվադյուտ այլանդակ է: Երեխեքին կարելի է նրանով վախեցնել: Բայց դու չմտածես, ձեր երեխային նրա գծությունը չի փոխանցվի: Էդոնան դժվար ծննդաբերեց, Սալինն աքցաններով են դուրս քաշել: Տատմերը նրա ուղեղը վնասեց, գանգն էլ այլանդակեց: Փոքրուց են մարդկանցից թաքցնում: Ու խաբում են: Ամեն քայլափոխին խաբում են: Ատում եմ: Նրանք բոլորին ասում են, որ Սալին տնից դուրս չի գալիս, որովհետև արյան վրիժառուներից է վախենում: Փչո՞ց: Էլ ոչ մի արյան վրիժառու չունենք: Մայիսին տաս տարին կլրանա, ինչ վերջինին սպանեցին: **ՌՈՁԱՖԱ** - Ո՞վ է սպանել: **ԼԻՐԻ** - Ծատ հետաքրքրասերն ես... գարեջուրը տեղը դիր ու գործիդ գնա: Թե չէ՛ մայրս կգա, գոռոցը կդնի:

ՌՈՂԱՖԱ - (տուփը դնում է դարակին, կամաց): Իսկ հեռախոսը:

ԼԻՐԻ - Հեռախոսը՝ ինչ...

ՌՈՂԱՖԱ - (դադարից հետո): Ինձ կտամ:

ԼԻՐԻ - Կտամ: Եթե քոնն է:

ՌՈՂԱՖԱ - Իմն է:

ԼԻՐԻ - Ուրեմն կտամ: Միայն սկզբում կսարքեմ:

ՌՈՂԱՖԱ - Իսկ կարող ես:

ԼԻՐԻ - Կփորձեմ: Համակարգիչս խելքի բերի, հեռախոսից էլ գլուխ կհանեմ:

ՌՈՂԱՖԱ - Համակարգիչ ունեն:

ԼԻՐԻ - Նորթուկ: Հին է, բայց լավն է: Ամերիկական է: Հարավսլավիայում նատոյականներից են թոցրել: Դեռ պատերազմի ժամանակ: Էնպես որ վետերան է: Միայն սկոտչոլ մի լավ փաթաթել եմ:

ՌՈՂԱՖԱ - Իսկ ինտերնետ: Ինձ ինտերնետ է պետք:

ԼԻՐԻ - Էյ, կամաց... Կարող է, մեր միջնադարում երեսուներեք հաճույքն էլ միասին ես ուզում: Չունեմ ինտերնետ:

ՌՈՂԱՖԱ - Բա համակարգիչն ինչի համար է:

ԼԻՐԻ - Իսկ ինչ ես կարծում, ո՞վ է էստեղ հաշվապահությունը վարում: Մայր Թերեզան: Գոնե խաղալ են թոյլատրում՝ էլի բան է: Մի խոսքով, գիշերը արի հեռախոսիդ ետևից, ամեն ինչ ցույց կտամ:

ՌՈՂԱՖԱ - Էդոնան մինչև առավոտ դուռը վրաս կողպում է: Սալի մոտից բերելուց հետո:

ԼԻՐԻ - Լավ, էլի, էստեղի կողպեքները մատով կարելի է բանալ: Ծամկալ ունեն:

ՌՈՂԱՖԱ - Ունեմ:

ԼԻՐԻ - Դրանով էլ կբացես:

ՌՈՂԱՖԱ - Չեմ կարող:

ԼԻՐԻ - Ես յոթ տարեկանում եմ սովորել, դու էլ կսովորես: Եթե լրիվ հիմար չես:

ՌՈՂԱՖԱ - Իսկ եթե Էդոնան լսի: Նրա սենյակը իմինի կողքին է:

ԼԻՐԻ - Եթե համաձայնվել է հեռախոսը քեզ փոխանցել, քեզ չի մատնել, ուրեմն մեռածի պես էլ կքնի: Հաստատ:

ՌՈՂԱՖԱ - Նա ինչո՞ւ համաձայնվեց: Ախր ես...

ԼԻՐԻ - Դավաճանում ես նրա որդուն: Ամուսնո՞ղ:

ՌՈՂԱՖԱ - Դե... Էդպես է ստացվում: Միայն թե ես նրան չեմ դավաճանում: Ես ու Մայքլը պարզապես...

ԼԻՐԻ - Մայքլը... արտասահմանցի է:

ՌՈՂԱՖԱ - Ամերիկացի է: Դեսպանատանն է աշխատում:

ԼԻՐԻ - Բախտդ ո՞նց չի բերել:

ՌՈՂԱՖԱ - Ինչո՞ւ:

ԼԻՐԻ - Բեռի Կեկին աշխարհում ամենաշատը ամերիկացիներին է ատում: Բայց քո բախտը ուրիշ հարցում է բերել: Էդոնան քեռի Կեկին ավելի է ատում, քան նա՝ ամերիկացիներին: Դրա համար էլ չի մատնել: Ես էլ քեզ չէի մատնի:

ՌՈՂԱՖԱ - Իսկապես բոլորդ իրար ատում եք:

ԼԻՐԻ - Վարժվիր: Ատելը սիրելուց

հեշտ է: Ծուտով ինքդ էլ կհասկանաս: (Լռությամբ: Ականջ է դնում:)
Մայրս է գալիս: Գնա, գոնե ձևի համար գործ արա:

Ռոզաֆան գնում է: **Գալիս է Տեոտան:**

ՏԵՈՒՏԱ - Հազիվ պառկեցրի, հա՛ ուզում էր Էդոնայի սենյակը խուզարկել:

ԼԻՐԻ - Էլ անելու բան չունեիր:

ՏԵՈՒՏԱ - Հոգնել եմ... ո՞նց եմ հոգնել:

ԼԻՐԻ - Ուրեմն գնանք էստեղից:

ՏԵՈՒՏԱ - Ո՞ր: Ո՞ւմ ենք մենք պետք:

ԼԻՐԻ - Իսկ էստեղ ում ենք պետք: Ծնից վատ ենք ապրում:

ՏԵՈՒՏԱ - Էդպես էլ կա, միայն հաշում ու կծում ես: Ծնից ի՞նչ պակաս ես: Իմ վրա ես հաշում, քեռուդ... իսկ դու պիտի հարգես: Նրա ձեռքերը պիտի լիզես:

ԼԻՐԻ - Բայց ինչի՞:

ՏԵՈՒՏԱ - Նա տղամարդ է, տան գլխավորը, նա է մեզ պահում:

ԼԻՐԻ - Զթներիցս է գալիս նրա պահելը:

ՏԵՈՒՏԱ - Այ, եթե ողջ լինեիր Ռիստրը... այ էդ ժամանակ...

ԼԻՐԻ - Դե սկսիր, ասա՛, որ լավ կլինեիր, եթե նրա փոխարեն ինձ սպանեին: Չէ՞ որ դա ես ուզում ասել, լեզվիդ ծերին է, տեսնում եմ, չէ՞:

Լռություն:

ՏԵՈՒՏԱ - Զո հեռախոսն է:

ԼԻՐԻ - Իսկ եթե իմն է՞... հետո՞ ինչ:

ՏԵՈՒՏԱ - Ոչինչ:

Տեոտան դարակից վերցնում է այն տուփը, որը թափահարել էր Լիրին: Բացում է: Փրփուրի շիթը թրջում է Տեոտայի հագուստը, թափվում հատակին: Լիրին անձայն հռչում է: Տեոտան վազում է դարակների ետևը: Մեծակ մնալով, Լիրին գնում է հեռախոսը:

ԼԻՐԻ - Ոչինչ, կարելի է վերանորոգել: Կարելի է... կարելի է:

Վերադառնում է Տեոտան, տենդորեն գնում դարակները, ինչ-որ բան է փնտրում:

ԼԻՐԻ - Մայրի՛կ...

ՏԵՈՒՏԱ - Ո՞ր են...

ԼԻՐԻ - Ի՞նչը:

ՏԵՈՒՏԱ - Ո՞ր են... դրանք...

ԼԻՐԻ - Ինչե՞րը:

ՏԵՈՒՏԱ - Տեստերը: Հղիության տեստերը: Ո՞ր են:

ԼԻՐԻ - Գժվեցիր, ինչի՞դ են պետք:

ՏԵՈՒՏԱ - Ինձ չէ, հիմար: Նրան... սիրտը ետ է տալիս... Ներս եմ մտնում, իսկ նա... (Յույց է տալիս:)

ԼԻՐԻ - Ռոզաֆայի սիրտն է խառնում:

ՏԵՈՒՏԱ - Ո՞ր են տեստերը:

ԼԻՐԻ - Վաճառասեղանի տակ: Կանացի ապրանքները քեռին էստեղ է տեղավորել:

Տեոտան փնտրում, միջադիրներ

ու մնան բաներ է շարուն վաճառասեղանի վրա:

ԼԻՐԻ - Մամ, ախր երկու շաբաթ է անցել:

ՏԵՌԻՏԱ - Ծանո ես հասկանում... գտնա: (Ճանկում է տեստն ու վազում գուգարան:)

ԼԻՐԻ - (հեռախոսին): Դե ինչ, Մայքլ, կդառնան հայրիկ, թե՛ չէ: Ի՞նչ ես կարծում:

Խավար:

ԵՐՐՈՐԳ ՏԵՍԱՐԱՆ

Մայիսյան տոթ գիշեր է, բայց Լի-րիի սենյակի փակոցափեղկերը փակ են: Հեռվից լսվում է որոտի ձայնը: Լիրին մտած սայլակում, խախտու սեղանի կողքին, համակարգիչով խաղ է խաղում: Ռոզաֆան սենյակի անկյունում է, պատուհանից ոչ հեռու: Նա կանգնել է աթոռակին, գլխից վերև է պարզել կաշուն ժապավենով փաթաթված հեռախոսը: «SMS»-ին հատուկ ազդանշան: Ռոզաֆան իջնում է աթոռակից, կարդում է հաղորդագրությունը: Ժպտում է:

ԼԻՐԻ - (խաղից կտրվելով): Ի՞նչ է գրում:

ՌՈԶԱՖԱ - Դե... գրում է, որ սիրում է, որ առանց ինձ ապրել չի կարող:

ԼԻՐԻ - Սպասիր, էդ նախորդ հաղորդագրությունում չէ՞ր գրել:

ՌՈԶԱՖԱ - Ամեն մեկի մեջ էլ գրում է: Նա ինձ սիրում է:

ԼԻՐԻ - Չեմ հասկանում: Մի անգամ ասաց, էլ ինչո՞ւ կրկնել:

ՌՈԶԱՖԱ - Ինչ է, ոչ մի անգամ չե՞ս սիրահարվել: (Լիրին լուռ է:) Ներիր, երևի չպիտի ասեի...

ԼԻՐԻ - Իսկ ինձ կարելի է սիրահարվել:

ՌՈԶԱՖԱ - Դե...

ԼԻՐԻ - Պարզ է:

ՌՈԶԱՖԱ - Ինչո՞ւ քեզ չես հետևում:

ԼԻՐԻ - Հետևում եմ:

ՌՈԶԱՖԱ - Սանրվածք արա, մանիկյուր... Էսպես գեղեցիկ չէ:

ԼԻՐԻ - Էլ բան ու գործ չունեմ: Որ հետո քեռի Կեկին աքցանով ներկած եղունգերս պոկի՞: Երկու ամիս է՝ մեզ հետ ես ապրում ու դեռ չե՞ս հասկացել, ուր ես ընկել:

ՌՈԶԱՖԱ - Լիրի, սիրելիս, քեզնից բացի ոչ մեկը ինձ հետ չի խոսում: Քեռի Կեկին ինձ չի նկատում, ասես ես չկամ: Մայրդ անընդհատ վրաս գոռում է: Իսկ Էդոնան լուռ է: Նայում ու լուռ է: Վախենալու է: (Անսպասելի ծիծաղում է:)

ԼԻՐԻ - Բեզ ի՞նչ եղավ:

ՌՈԶԱՖԱ - Հենց էնպես... Մի բան հիշեցի: Փոքր ժամանակ անանաս շատ էի սիրում, հորս անընդհատ խնդրում էի գնել ինձ համար: Իսկ երբ փող չէինք ունենում, հայրս ասում էր, որ եթե հաճախ անանաս ուտեմ՝ կհամրանամ... Ու ես միշտ մտածել եմ, որ համրերը պարզապես շատ անանաս են կերել... Ծիծաղելի է:

ԼԻՐԻ - Էդոնան համր չէ, նա կարող է խոսել: Բայց չի ուզում:

ՌՈՂԱՖԱ - Ինչո՞ւ: Ինչպե՞ս կարելի է չուզենալ խոսել:

ԼԻՐԻ - Ես էլ հաճախ չեմ ուզում, հատկապես երբ մայրս սկսում է հարցեր տալ:

ՌՈՂԱՖԱ - Ուրեմն նրանը ինչ-որ հիվանդությունն է:

ԼԻՐԻ - Երևի, միայն թե ոչ մեկի պետքն էլ չէ:

ՌՈՂԱՖԱ - Քո պետքն է՞լ չէ: (*Լիրին լուռ է:*) Ըհը, էլի սխալ բան ասացի: Քեզ հետ երբեմն դժվար է ընկերություն անել:

ԼԻՐԻ - Իսկ մենք ընկերուհիներ ենք:

ՌՈՂԱՖԱ - Հա: Կարծում եմ, հա:

ԼԻՐԻ - Բեզմից առաջ միայն մի անգամ եմ ընկերուհի ունեցել: Վաղուց էր: Բայց նա տարօրինակ էր: Միասին հիվանդանոցում էինք պառկած: Գիշերները ինքն իրեն թաց անձեռոցիկներով շոյում-փաղաքշում էր, հետո դրանք չորացնում էր ջեռուցիչի վրա:

ՌՈՂԱՖԱ - Այ քեզ զզվանք: Ինչո՞ւ:

ԼԻՐԻ - Նա էդ անձեռոցիկների մեջ Սատանայի նամակներն էր փաթաթում ու դրանք պահում էր սրտի վրա... չարքից խնդրում էր ամեն տեսակի բաներ... Դե, գժից ինչ պահանջես: Էնտեղ բոլորն էին էդպես: Գժերով լիքը հիվանդանոց:

ՌՈՂԱՖԱ - Իսկ դու ինչ էիր անում գժերի հիվանդանոցում: Դու է՞լ...

ԼԻՐԻ - Ես նորմալ եմ: Բռնի Կեկին

փող տվեց, որ ինձ էնտեղ... բան-տի փոխարեն:

ՌՈՂԱՖԱ - Բանտ... քե՞զ... Ինչի՞ համար:

ԼԻՐԻ - Հիմար էի, տհաճությունների մեջ ընկա:

ՌՈՂԱՖԱ - Երբ փոքր էի ու տհաճություններ էին պատահում, հայրս ասում էր. «Տրամադրությունդ չագես, գնանք թեյ խմենք»:

ԼԻՐԻ - Իմը ուրիշ տհաճություն էր, ոչ մի թեյ չէր օգնի:

ՌՈՂԱՖԱ - Իսկ ինձ մինչև հիմա օգնում է: Հայրս մահացավ, իսկ ես առաջվա պես ծանր օրից հետո նստում եմ թեյ խմելու ու մտածում եմ, որ մենակ չեմ:

ԼԻՐԻ - Դու մենակ չես: Դու ունես... (*«Ինձ» բառը Լիրին չի համարձակվում ասել:*) Հիմա դու ամուսին ունես:

ՌՈՂԱՖԱ - Խնդրում եմ, մի խոսիր նրա մասին: Մի հիշեցրու: Ամեն օր աստծուն փառք եմ տալիս, որ հենց իմացան հղիությանս մասին, էլ նրա մոտ չեն տանում: Երեխայիս արդեն միայն դրա համար սիրում եմ: Որ ազատեց ինձ...

ԼԻՐԻ - Ամեն ինչ էդքան վաճ էր: (*Ռոզաֆան լուռ է:*) Իսկ ես հորս ընդհանրապես չեմ հիշում: Երբ մահացավ, նրա ընտանիքը ինձ ու եղբորս անօրինական հայտարարեց, որ ժառանգություն չտա: Մեզ վռնդեցին: Ու մայրս ստիպված ապաստան խնդրեց քեռի

Կեկիից: Ու նա մեզ ընդունեց, անտեսելով խայտառակությունը:

ՌՈՂԱՖԱ - Ուրեմն նա լավն է:

ԼԻՐԻ - Ո՛վ:

ՌՈՂԱՖԱ - Զեռի Կեկին:

ԼԻՐԻ - Չգիտեմ: Երբեմն կարող եմ նրան սպանել:

ՌՈՂԱՖԱ - Ես էլ:

Գաղար:

ԼԻՐԻ - Այ, դու Էդոնայի մասին էիր հարցնում: Պատմեմ: Իննսունյոթին, երբ հարավում ապստամբություն սկսվեց, մարդիկ սկսեցին զենքի պահեստները թալանել: Իսկ հետո գնացին Տիրանայի վրա: Ու քեռի Կեկին Էդոնայի ամուսնուն համոզեց գնալ հարավ, Բերատ, զենք ձեռք գցելու:

ՌՈՂԱՖԱ - Չենքը նրա ինչի՞ն էր պետք:

ԼԻՐԻ - Ո՛նց թե՛ ինչին... վաճառելու: Էն օրերին շատերն էի դրա առևտուրն անում: Էդոնայի վերջին ամիսներն էին, Սալիով էր հղի, բայց նրա հետ գնաց: Մտածում էին, որ երկուսով հեշտ կլինի: Որ հղի կնոջ հետ տղամարդուն հեշտ բաց կթողնեն: Բայց զինվորները ամուսնուն սպանեցին, իսկ Էդոնային... Մի խոսքով, էդ օրվանից նա չի խոսում: Իսկ թե ինչ ու ոնց է էստեղ եղել՝ էդպես էլ ոչ մեկը չգիտի: Նրան ուշաթափ, արյան մեջ կորած տուն բերեցին: Իսկ երբ ծննդաբերության ժամանակ Սա-

լիի գլուխը վնասեցին՝ ամեն ինչ ավելի վատացավ... Փոքրուց Սալին խղճացել եմ, խաղում էի հետը, իսկ երբ մեծացավ, մոռացա նրան: Երբեք նրա սենյակը չեմ մտել: Դե, երբ դեռ կարողանում էի քայլել... Դու չե՞ս լսում ինձ:

ՌՈՂԱՖԱ - *(SMS է գրում):* Ներիր, խնդրում եմ, Մայքլին պիտի պատասխանեմ: Սպասում է:

ԼԻՐԻ - Հա, իհարկե:

Ռոզաֆան գնում է սենյակի անկյունը, բարձրանում է աթոռակին ու հեռախոսը պարզում է գլխից վերև:

ՌՈՂԱՖԱ - Տարօրինակ է... Իմ սենյակում ազդանշանը չի բռնում, իսկ քեզ մոտ... *(Բարձրանում է ոտնաթաթերին:)*

ԼԻՐԻ - Ու դու միայն դրա համար ես ինձ մոտ գալիս:

ՌՈՂԱՖԱ - Չէ, ի՞նչ ես ասում: Չէ որ մենք ընկերուհիներ ենք: Զեզ հետ շատ հետաքրքիր է:

ԼԻՐԻ - Այ թե հետաքրքիր ես գտել:

ՌՈՂԱՖԱ - Գտել եմ:

ԼԻՐԻ - Էդ ինձ է հետաքրքիր քեզ հետ: Ինչ սկսեցիր ինձ մոտ գալ, արթնանում եմ երջանիկ: *(Բնորոշ ձայնը հավաստում է, որ SMS-ը ուղարկվել է: Ռոզաֆան իջնում է աթոռակից:)* Ի՞նչ գրեցիր նրան:

ՌՈՂԱՖԱ - Նրան գրեցի... Ես նրան գրեցի... Որ չափազանց շատ եմ սիրում նրան: *(Պտտվում է սենյակում, ծիծաղում է, ընկնում է անկողնու վրա:)*

ԼԻՐԻ - Գեղեցիկ է:

ՌՈԶԱՖԱ - Ինչ հիմարն եմ... Արդեն տասնութ եմ, ամուսնացած եմ, երեխայի եմ սպասում... Լիրի, էնպիսի անհավանական գեղեցիկ երազներ եմ տեսնում... Ու հավատում եմ, որ մի օր կարթնանամ ու ուրիշ կյանք կտեսնեմ: Մայքլի հետ: Էստեղից հեռու-հեռու:

ԼԻՐԻ - Եվ ինչ... Էդպիսի տեղ կա, որտեղ կինը մաքր է:

ՌՈԶԱՖԱ - Իհարկե: *(Դադար:)* Հիմա քեզ մի բան կասեմ, միայն սկզբում երդվիր, որ չես մատնի:

ԼԻՐԻ - Ո՞նց երդվեմ: Իսկական երդումի համար պետք է ձեռքը դնել սրբազան իրի վրա: Թե չէ երդում չես տվել: Էդպես Կանոնում է գրված:

ՌՈԶԱՖԱ - Գժվել կարելի է ձեզ հետ: Զեզ որտեղից սրբազան իր գտնեմ: *(Շուրջն է նայում:)* Գտա: *(Շրջում է համակարգիչը, էկրանին Մայր Թերեզայի նկարն է:)* Ահա: Երդվիր Մայր Թերեզայի վրա:

ԼԻՐԻ - *(ձեռքը դնում է էկրանին):* Երդվում եմ Մայր Թերեզայով, որ ոչ մեկի չեմ ասի:

Դադար:

ՌՈԶԱՖԱ - Մայքլը առաջարկում է Ամերիկա փախչել:

ԼԻՐԻ - Ոտքով:

ՌՈԶԱՖԱ - Ձեռն ես առնում: Իհարկե, ինքնաթիռով:

ԼԻՐԻ - Բայց ո՞վ քեզ Ամերիկա կթող-

նի: Ոչ մի փաստաթուղթ չունես, քեռի Կեկին սեյֆի մեջ է պահել:

ՌՈԶԱՖԱ - Դրանք կարելի է ինչ-որ կերպ գողանալ:

ԼԻՐԻ - Խելքդ թոցրե՛լ ես:

ՌՈԶԱՖԱ - Ինչ է՞ որ... Դրանք իմ փաստաթղթերն են: Սեյֆի ոսկին էլ իմն է, մորիցս է մնացել: *(Լալիս է:)*

ԼԻՐԻ - Զեզ ի՞նչ եղավ... դե, լաց մի լինի:

ՌՈԶԱՖԱ - Իսկ եթե նրա երեխան չէ: Մայքլի երեխան չէ... Հանկարծ ու Սալիի երեխան է:

Դադար:

ԼԻՐԻ - Ուրեմն դու Մայքլի հետ...

ՌՈԶԱՖԱ - Հա՛:

ԼԻՐԻ - Իսկ ինչո՞ւ ես ինձ պատմում:

Ռոզաֆան անսպասելի մատը դնում է շուրթին: Մի քանի քայլ է անում դեպի դուռը, ականջ է դնում: Դռան կամաց քակոց:

ՏԵՈՒՏԱՅԻ ձայնը - Լիրի, ես եմ, բաց:

Լիրին ցույց է տալիս պատուհանը: Ռոզաֆան բացում է փեղկն ու դուրս է գալիս բակ: Դռան քակոցը կրկնվում է:

ԼԻՐԻ - *(կամաց):* Հիմա: *(Գնում, բացում է դուռը:)*

ՏԵՈՒՏԱ - Ինչո՞ւ ես փակում դուռը: *(Հոտոտում է:)* Էլի ծխե՛լ ես:

ԼԻՐԻ - Էլ բան ու գործ չունեմ: Համակարգիչով խաղում եմ: Իսկ դո՞ւ...

ՏԵՌԻՏԱ - Քունս չի տանում: Տոթ է:
Ամպրոպ է լինելու:

ԼԻՐԻ - Մամ, դեղ կուլ տուր ու գնա
քնիր:

ՏԵՌԻՏԱ - Արդեն խմել եմ, չի օգնում:
(Փակում է դուռը, հետո սեղանին
է դնում շիշը:): Բուրբոն է: Ասում
են, ամերիկյան քաշած օղի է:
Երևի ստում են: Ամերիկյան ամեն
ինչ պատրաստված է Չինաստա-
նում: Ոչինչ, մեզ հիմա չինականն
էլ ձեռ է տալիս: Խմիր:

ԼԻՐԻ - Ինչի՞ հանկարծ...

ՏԵՌԻՏԱ - Եղբորդ հիշենք, էսօր
տարելիցն է: Տասը տարի: Մոռա-
ցնել ես:

ԼԻՐԻ - Չէ, հիշում եմ: (Խմում է շիշ,
ծոմոմով դեմքը:)

ՏԵՌԻՏԱ - Ինձ էլ տուր:

ԼԻՐԻ - Դու դեղ ես խմել:

ՏԵՌԻՏԱ - Հետո՞ ինչ:

ԼԻՐԻ - Դեղի հետ ալկոհոլ չի կարե-
լի: Հետո քեզ ուշքի չենք բերի:

ՏԵՌԻՏԱ - Հիմա ի՞նչ դեղ, բոլորը
կավիճ է: Ամբողջ կյանքում դեղե-
րը Էմին Ծպախյայից եմ գնել:
Հենց նա մեռավ՝ էլ ոչինչ չի օգ-
նում: Ոչ քուն կա, ոչ՝ կյանք: Մահ
էլ չկա: (Դադար:) Խմեցի՞ր: (Լի-
րին գլխով է անում:): Եվ ի՞նչ...

ԼԻՐԻ - Նորմալ է, կապրեմ:

ՏԵՌԻՏԱ - Լավ է: Իսկ հիմա պատ-
միր:

ԼԻՐԻ - Չէ, մայրիկ, ոչ էս անգամ,
խնդրում եմ:

ՏԵՌԻՏԱ - Ես ուզում եմ լսել:

ԼԻՐԻ - Ամեն տարի լսում ես: Տաս

տարի շարունակ: Ամեն ինչ ան-
գիր գիտես: Գուցե բավականն է:

ՏԵՌԻՏԱ - Ես կորոշեմ՝ երբ կլինի էդ
բավականը: Պատմիր:

ԼԻՐԻ - Ինչի՞ համար:

ՏԵՌԻՏԱ - Ուզում եմ համոզվել, որ
դու էլ ոչինչ չես մոռացել:

ԼԻՐԻ - Ես չեմ մոռացել, չեմ
մոռացել: Ես հիշում եմ ամեն ինչ:

ՏԵՌԻՏԱ - Ուրեմն՝ պատմիր:

ԼԻՐԻ - (դադարից հետո): Ռիսորը
գնաց սպանելու Պետր Վուկաին:
Ես գնացի նրա հետ:

ՏԵՌԻՏԱ - Չէ, էդպես չէ: Ամենա-
սկզբից պատմիր:

ԼԻՐԻ - Լավ, մայրիկ: Քեռի Կեկին իր
մոտ կանչեց Ռիսորին: Ասաց, որ
նրա պապին սպանողը վերա-
դարձել է Տիրանա: Ասաց, որ Կա-
նունում գրված է. «Արյունը միայն
արյունով է մաքրվում»: Որ պետք
է վրեժխնդիր լինել: Ատրձանակը
տվեց: Հասցեն տվեց:

ՏԵՌԻՏԱ - Ռիսորը միանգամից
վերցրեց ատրձանակը:

ԼԻՐԻ - Հա: Նա չտատանվեց:

ՏԵՌԻՏԱ - Իսկական տղամարդ: Հե-
տո՞:

ԼԻՐԻ - Քեռի Կեկին ասաց, որ իս-
կական վրեժը հեշտ գործ չէ՝
թշնամուն պետք է սպանել դեմ
առ դեմ, որպեսզի մեռնելիս զոհը
իմանա՝ ով է նրան սպանել ու ին-
չի համար: Հարցրեց Ռիսորին՝
ամեն ի՞նչ նա մտապահեց:

ՏԵՌԻՏԱ - Նա ամեն ինչ մտապա-
հեց, նա խելացի տղա է:

ԼԻՐԻ - Ես ասացի Ռինորին, որ կգնամ նրա հետ: Պատասխանեց, որ վրեժը կնոջ գործ չէ: Բայց ես խնդրեցի՝ ինձ էլ տանի: Ասացի, որ նրան սպանեն, ես էլ հետը կմեռնեմ: «Ինչի՞ հանկարծ», - հարցրեց նա: Ես միշտ էր ասում «ինչի հանկարծ», երբ ծիծաղում էր ինչ-որ բանի վրա:

ՏԵՈՒՏԱ - Ես չէր ծիծաղում:

ԼԻՐԻ - Լավ, մայրիկ, նա չէր ծիծաղում:

ՏԵՈՒՏԱ - Ինչ եղավ հետո:

ԼԻՐԻ - Առավոտյան հավաքվեցինք ու գնացինք ծերուկ Վուկաին տան կողմը: Ինձ հետ դանակ վերցրի:

ՏԵՈՒՏԱ - Ռինորը գիտե՞ր դրա մասին:

ԼԻՐԻ - Չգիտեր: Ես թույլ չէր տա: Տեղ հասանք, թռանք ցանկապատի վրայով: Ծերուկ Վուկաին գործ էր անում այգում: Պարզվեց՝ նա շատ ծեր է: Ես միանգամից հասկացա, որ ինքն է, թեև երբեք չէի տեսել նրան: Կանոնը արգելում է արյան վրիժառուին սպանել իր տան մեջ, բայց Վուկաին այգում էր: Այգին տուն չէ, ասացի ես: Հա, այգին տուն չէ, համաձայնվեց Ռինորը: Մինչև հիմա չեմ հասկանում, ինչու ինձ հետ համաձայնվեց: Ինչո՞ւ նրան չկանգնեցրի: Այգին տուն չէ, բայց դրանից վերջին հաշվով ոչինչ չի փոխվում: Ոչ մի բանից ոչինչ չի փոխվում: Մենք արեցինք մեր ընտրությունը: Ռինորը առաջ ան-

ցավ, բարևեց ու հարցրեց նրա անունը: Երբ ասաց իր անունը, Ռինորը կրակեց: Ես էլի ինչ-որ բան ասաց ծերուկին, բայց ես չլսեցի, ես կանգնած էի ծառի ետևում:

ՏԵՈՒՏԱ - Դու թաքնվել էիր:

ԼԻՐԻ - Հա, ես թաքնվել էի: Ես վախենում էի: Ծեր Վուկաին պառկած էր գետնին, իսկ Ռինորը խոսում ու խոսում էր:

ՏԵՈՒՏԱ - Ես ինչ էր ասում:

ԼԻՐԻ - Չգիտեմ, մայրիկ: Չեմ հիշում: Էդ պահին ես միայն մի բանի մասին էի մտածում՝ ոնց էդտեղից փախչենք:

ՏԵՈՒՏԱ - Ու դու չէիր տեսնում տղայիս:

ԼԻՐԻ - Չէ: Սկզբում կրակոց լսեցի: Ծրջվեցի: Երեխա էր մեր կողմը վազում, պստիկ Վուկաին՝ գենքը ձեռքին: Ծրջվեցի Ռինորի կողմը, նախազգուշացնելու, բայց Ռինորն արդեն պառկած էր գետնին, ծերուկի կողքը: Երեխան մեր կողմն էր վազում: Մեռնող ծերուկի մոտ: Ինձ նույնիսկ չնկատեց:

ՏԵՈՒՏԱ - Իսկ ինչ արեցիր դու, Լիրի: (*Լիրին լուռ է:*) Ինչ արեցիր հետո: Պատասխանիր:

ԼԻՐԻ - (*կամաց*): Ես նրան սպանեցի:

ՏԵՈՒՏԱ - Բարձր ասա:

ԼԻՐԻ - Ես սպանեցի նրան: Սպանեցի ութ տարեկան երեխայի, ծերուկի ծոռին: Դանակը խրեցի ու կանգնել-նայում էի, ինչպես է նա մեռնում:

ՏԵՌՏԱ - Դու սպանեցիր վերջին Վուկաին: Եվ էդ պահին չէիր մտածում եղբորդ մասին:

ԼԻՐԻ - Չէի մտածում: Ես գիտեի, որ նա մեռած է: Ու չէր հետաքրքրում, թե ինչ կլինի ինձ հետ:

ՏԵՌՏԱ - Ու դու չտեսար, որ ծերուկ Վուկաին դեռ ո՞ղջ է:

ԼԻՐԻ - Չէ: Ես նայում էի, թե ինչպես է մեռնում երեխան, որին հենց նոր էի սպանել: Հետո ինչ-որ բան հարվածեց մեջքիս: Ու ամեն ինչ ավարտվեց:

Լռություն:

ՏԵՌՏԱ - Փոքր էի, մի անգամ հայրս ինձ ու քրոջս տարավ Պոգրադեց, էնտեղ գործեր ուներ: Է-միրի օրոք ոչ մեկը մեքենա չուներ, գնացքով գնացինք: Երկար ճանապարհ էր, ութ ժամում էինք հասնում: Գուցե և ավելի: Հայրս գինի խմեց ու քնեց: Իսկ դրսում գարուն էր, սարերը՝ սիրուն, ամեն ինչ ծաղկել էր: Բոլորս կպանք պատուհաններին: Գնացքը հազիվ էր շարժվում ու մեր վագոնից մի ջահել՝ զինվորական գալիֆեով ու շապիկով, թռավ ընթացքից ու սկսեց ձեռքին եկած ծաղիկները հավաքել: Մի մեծ, վառ ծաղկեփունջ... Հիշում եմ, ոնց էի ուզում ստանալ էդ փունջը: Երևի ես միակը չէի՝ վագոնում բոլոր կանայք լուռ, բայց հիացած հետևում էին էդ տեսարանին:

Զարմանալի է, ինչքան երկար եմ հիշում դա, կյանքումս էլ երբեք չեմ ցանկացել նվեր ստանալ: Բայց ես ոչ մի իրավունք չունեի: Հույս անգամ չկար, որ փունջը ինձ կհասնի: Ո՞վ եմ ես: Ոչինչ: Կուզիկ դեռահաս: Իսկ քույրս՝ Կեկիլիան, գեղեցկուհի է, աչքը վրայից չես պոկի: Ծատ էի նրան սիրում: Բայց ո՞նց էի նախանձում... Այ, նա իր խոշոր սև աչքերով կարող էր երազել փունջը ստանալու մասին... Գնացքը արագացրեց ընթացքը: Վագոնում բոլորն անհանգստացան, իրար խառնվեցին, որ տուն գնացող զինվորը չի հասցնի գնացք բարձրանալ: Իսկ նա թեթև թռավ աստիճանին, մութ տամբուրից մտավ վագոն, որտեղ պատուհաններին խենթացել էին վարագույրները, ու բոլոր կանայք միաժամանակ նրա կողմը շրջեցին լարված դեմքերը: Ո՞ւմ: Ո՞ւմ... Ես ինձ տվեց էդ ծաղիկները: Բռլորը: Հետո էլ ոչինչ չեմ հիշում: Երևի էդ պահին բացարձակ երջանիկ էի: Ու գիտե՞ս, Լիրի, էդ օրվանից էլ երբեք չեմ նախանձել քրոջս: Ու նա գիտի էդ մասին: Բայց նա չգիտի, թե ինչքան ուժեղ եմ նրան ատում: Որ զավակիս մահվան բերանը ուղարկեց: Որ աղջիկս գնդակ ստացավ մեջքին ու երբեք չի կարողանա քայլել: Բայց մի օր նա կիմանա էդ մասին: Անպայման կիմանա: Լսում

ես, ինձ, Լիրի: *(Տեղից բարձրանում, գնում է դեպի դուռը:)*

ԼԻՐԻ - Դեղ տուր ինձ, մամ, ուզում եմ քնել ու չհիշել ոչինչ: Ինձ դեղ տուր:

ՏԵՌԻՏԱ - *(գրպանից հանում է սրվակն ու շարտում անկողնուն):* Միայն թե բոլորը միանգամից չխմես: *(Գնում է:)*

Լիրին վերցնում է սրվակը, երկար նայում վրան: Դբսում սկսվում է ամպրոպը: Խավար:

ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Քեռի Կեկիի տան ներքին բակը, որտեղ բացվում են տան տղամարդկանց ու կանանց սենյակները տանող դռները, ինչպես նաև բոլոր սենյակների պատուհանները: Ամենուր կախված են եղջրավոր զանգեր սխտորի կապուկներով՝ հմայիլներ: Այստեղ է ամառային խոհանոցը՝ զագօջախ, սեղաններ, նստաբաններ, որոնցից մեկի վրա նստած են պառավն ու Էդոնան: Պառավը ձևում է սեղանի վրա փռած կտորը, Էդոնան կարում է:

ՊԱՌԱՎ - *(նրա քրթմնջոցը աստիճանաբար հասկանալի է դառնում):* Ջահել էր ու ոնց որ թե ման եկող չէր: Իսկ հետո նայում եմ՝ փորն սկսել է մեծանալ: Դե, մտածում եմ, աստված էդպես է կամեցել: Ախր, անցած տարի բոլոր կատուներս սատկեցին:

Յոթից մեկը մնաց: Ես էլ ուրախացա, որ ավելանալու ենք: Բայց պարզվեց՝ ոչ թե փիսիկներ էին, այլ ջուր էր հավաքվել փորի մեջ: Նրա կյանքը էդ ջրի մեջ էր գնում: Վերջում լրիվ նիհարեց, մազը թափվեց: Իսկ ես, ծեր պառավս, մինչև վերջ նրա հիվանդությունը չտեսա: Վաղ առավոտ զարթնեցի, իսկ նա խոխոռում է, գալարվում է ոտքերս տակ՝ հոգին է տալիս: Նայում եմ ու մտածում. «Իսկ երբ է իմ հերթը: Կարո՞ղ է՝ անմիջապես նրանից հետո»: Դե, հետո վեր կացա, փաթաթեցի սրբիչի մեջ ու թաղեցի: Ու վերջ: Ոչ մեկը չմնաց: Բոլորին աստված իր մոտ կանչեց: Ինչ է աստվածը: Աստվածը մահ է: Ինչի՞ համար է աստվածը, եթե մահ չկա: Ու ամեն մեկը մեռնելու իրավունք ունի: Ճի՞շտ եմ ես ասում:

Էդոնան լուռ կարում է:

ՊԱՌԱՎ - Լավ է քեզ հետ զրուցելը, Էդոնա: Համբերատար ես: Լսում ես պառավիս: *(Դժվարությամբ տեղից բարձրանում, ուղղում է մեջքը:)* Ըհը, պստիկի շապիկը ձևեցինք, մինչև մայրամուտ ավարտեցինք: Վաղը բոլորը կիսվաքեմ ու կսկսեմ ասեղնագործել: Իսկ դու, տեսնում եմ, բարուրներն ես եզրակարել: *(Նայում, շոշափում է:)* Մաքուր գործ է, Էդոնա: Կարը կարին: «Եթե սկսես տնտեսել մեխերը, կկորցնես

պայտը»: Մարդս էր էդպես ատում: Թեև նրանից ինչ հեծյալ... Իսկ դու մարդուդ հիշում ես: Չէ:

Էդոնան լուռ կարում է:

ՊԱՌԱՎ - Իսկ ես շատ բան եմ հիշում: Երբեմն մինչև լույս անկողնումս շուռումուռ եմ գալիս, ջահել կյանքս եմ մտաբերում: (Ծիծաղում է:) Պառավի ու ջահելի ծամփան երագում էլ նույնը չէ՝ երագանքները տարբեր են: Էդպես չէ... Դու դեռ ջահել ես: Կեկին էլ: Տեուտան: Մարդդ էլ՝ Գուլգիմը: Նրա հայրը՝ Ոսկան Ռակիպին էլ ջահել է եղել: Ճանաչում էի իրեն: Հարևաններ էինք: Հավատարիմ ընկեր ուներ՝ Պետր Վուկաին: Բանակում միասին էին ծառայել, էնտեղ էլ ընկերացել էին, իսկ հետո Պետրը նրանց տնից ոչ հեռու տուն գնեց: Կեկիլիան ծնվեց ավագ եղբոր մահից հետո: Ոսկանը որդի էր ուզում, դրա համար էլ աղջկան տղայի պես դաստիարակեց: Իսկ հետո Տեուտան երեխեք ունեցավ ու Կեկիլիայի ազատ կյանքն սկսվեց, կարծես իսկական տղամարդ էր մեծանում: Ամեն անգամ, երբ մայրը փորձում էր նրան աղջկա շոր հագցնել, Ոսկանը սպառնում էր. «Հեռու մնա տղայիցս»: Խիստ էր: Ու միայն երբ ծնվեց Գուլգիմը, Ոսկանը վերջապես փափկեց ու ընդունեց, որ Կեկիլիան աղջիկ է: Բայց արդեն

ուշ էր... Եփած սուրճը նորից հատիկ չես դարձնի: Ոսկանն ու Պետր Վուկաին որոշեցին Կեկիլիային ու Պետրի որդուն՝ Ալբանին նշանել: Իսկ Կեկիլիան՝ չէ ու չէ, չի ուզում Ալբանին, թեև նա տեսքով տղա էր: Ասում է՝ ավելի լավ է երդում տամ ու բուռնեշ դառնամ, քան թե մարդու գնամ: Ոսկանը թեև ամոթով մնաց Վուկաի ընտանիքի առաջ, բայց դեմ չեղավ, նրա համար Կեկին էդպես էլ տղա էր մնացել: Կեկիլիան կուսակրոնության երդում տվեց, կտրեց մազերը, շավար հագավ ու օրենքով դարձավ տղամարդ: Ու մտքով էլ չանցավ, որ մերժելու համար Ալբանը քեն կպահի ամբողջ ընտանիքի վրա: Մի տարի չանցած նա հարբած, փողոցում հրեց Կեկիի հորը: Կռիվ սկսվեց: Ոսկանը ավելի ուժեղ էր ու սպանեց ջահելին: Զարով գլուխը ջնջխեց: Պիտի միանգամից փախուստի դիմեր, բայց մնաց: Հույս ուներ, որ հին ընկերությամբ Պետրի հետ համաձայնության կգան: Ու հետո, վկաներ կային, որ կռիվն սկսողը Ալբանն էր: Միայն թե Պետրը մի բառ էլ չասաց, Ոսկանին գնդակահարեց: (Դադար:) Էդպես տասնյոթ տարեկանում Կեկին ոչ միայն «երդվյալ կույս» դարձավ, այլև ընտանիքի գլխավոր: Էլ ետդարձի ծամփա չուներ՝ ընտանիքին պիտի կերակրեր: Մորը, քրոջը,

փոքր եղբորը: Իսկ էդպիսի բեռով կնկա շոր չես հագնի: Պետրին նստեցրին... Էնվերի ժամանակ արյան վրեժի համար խիստ էին դատում... Իսկ նրա ընտանիքը միանգամից գնաց Տիրանայից, ինչ-որ տեղ հարավ: (Դադար:)

Գալիս է Տեուտան, մի ձեռքում կացին, մյուսում՝ գլխատված աքլոր:

ՊԱՌԱՎ - Վերջդ եկավ, հարագատս... Դու էլ երևի մտածում էիր, որ կյանքը հավերժ է, տեսա՞ր, ինչ եղավ:

Տեուտան աքլորը շարտում է սեղանին, կտորից ոչ հեռու:

ՊԱՌԱՎ - Տեուտա, խելքդ թոցրե՛լ ես: (Սեղանից վերցնում է արնոտված կտորը:)

ՏԵՈՒՏԱ - Մե՞ծ բան է, մի կաթիլ արյուն: Պետք է պաղ ջրում լվանալ: (Յած է դնում կացինը:)

ՊԱՌԱՎ - Բա ո՞նց, կլվանաս... Արյունը ջուր չես դարձնի: Արյունը միշտ էլ իրենը կվերցնի: Ջուրը թափվեց արածս, նորից պիտի սկսեմ... (Հավաքում է ձևվածքը, քրթմնջում է:)

ՏԵՈՒՏԱ - Ի՞նչ անեմ, մի է՞ծի գանգ էլ էստեղ կախեմ: Առանց էդ էլ ոնց որ գերեզմանոցում ապրենք: Ոչ

մի հմայիլ էլ չի օգնի էս տանը: (Ճանկում է աքլորը, կատաղի փետրահան անում:)

ՊԱՌԱՎ - Ախր, սկզբում եռման ջրի մեջ պիտի դնես:

ՏԵՈՒՏԱ - (կամաց): Հանկարծ քեզ էլ մի բանի մեջ չդնեմ: (Շարտում է աքլորը:)

Մայրակով բակ է մտնում Լիբի:

ԼԻԲԻ - (Տեուտային): Ռոզաֆան չի՞ վերադարձել:

Տեուտան թափ է տալիս ձեռքն ու տուն է մտնում:

ՊԱՌԱՎ - Ո՞նց է էն բանի անունը, հա մոռանում եմ...

ԼԻԲԻ - Ո՞ր բանի:

ՊԱՌԱՎ - Դե, որով Ռոզաֆային պիտի նայեն:

ԼԻԲԻ - Ուլտրաձայնային հետազոտություն:

ՊԱՌԱՎ - Ու հենց էդպես էլ երևում է, հա... աղջիկ, թե՛ տղա:

ԼԻԲԻ - Ասում են՝ երևում է:

ՊԱՌԱՎ - Թե ինչի՞ վրա են փող ծախսում: Իմ ժամանակ փողի ձևով էին որոշում:

ԼԻԲԻ - Հիմա՝ գիտությունով:

ՊԱՌԱՎ - Լավ բանի չի բերի էդ ձեր գիտությունը: Ինչի՞ եք շտապում, երեխան կծնվի՝ ամեն ինչ էլ կտեսնեք: Կեկիից չէի սպասում էդ բանը: Չէի սպասում:

ԼԻՐԻ - Ոչ մեկն էլ չէր սպասում:

ՊԱՌԱՎ - Երևի գնամ, ընթրիքին չեմ սպասի:

ԼԻՐԻ - Մնացեք, տատի, քեռի Կեկին Ռոզաֆային կբերի, ու միանգամից սեղան կնստենք:

ՊԱՌԱՎ - Բայց ինչի՞ն մնամ, մայրդ աքլորը մորթեց, բայց չփիղրեց: Ծպրտեց: Մինչև ձեր ապուրը եփվի, կհասցնեմ տուն գնալ ու ընթրել: Սերիալս էլ շուտով կսկսվի: Չէ, գնամ... Գնամ:

Էդոնան ուղեկցում է պառավին:

ՊԱՌԱՎ - *(շրջվում է):* Մորդ ասա, որ ամեն ինչ նորից պիտի ձևենք:

ԼԻՐԻ - Կասեմ, տատի: Ցտեսություն:

ՊԱՌԱՎ - Աստված քեզ պահապան, սիրելիս:

Էդոնան տանում է պառավին: Կանացի հարկաբաժնի պատուհաններից մեկը բացվում է, դուրս է նայում Տեոտան:

ՏԵՈՒՏԱ - Գնա՞ց: *(Լիռին լուռ է:)* Ամբողջ օրը ուղեղս կերավ, ծեր ագռավ: Գրողի ծոցը... Ավելի լավ է ես կարեի, քան թե ինչ ասես լսեի: Բարուր է մոզոնել: Մենք մանկական տակդիրներ ենք վաճառում, իսկ մեր երեխայի համար բարուրաշոր ենք կարում: Ո՞վ պիտի դրանք վաճառի:

ԼԻՐԻ - Հաստատ՝ ոչ ես:

ՏԵՈՒՏԱ - Պարզից էլ պարզ էր: Էստեղ երկու բանող ձի կա՝ ես ու Էդոնան: Մեզ հեծած գնում եք:

ԼԻՐԻ - Ձեզ կհեծնենք, բա ո՞նց: Գոնե ընթրիք կլինի՞:

ՏԵՈՒՏԱ - Իհարկե, կլինի, դու սեղանը հավաքիր: *(Ներս է գնում:)*

Լիռին սայլակին նստած, ճարակորեն հավաքում է սեղանը, տեսնում է կտորի վրայի արյունը, զննում է լույսին: Գալիս է Տեոտան:

ՏԵՈՒՏԱ - Ստիպված աքլորը մորթեցի, որ պառավը փասսփուսան քաշեր: Թե չէ ընթրիքին էր մնալու:

ԼԻՐԻ - Մի ափսե ապուրը ափսոսացիր:

ՏԵՈՒՏԱ - Ես ինձ ափսոսացի: Ներվերս ափսոսացի: *(Դադար:)* Կեկին իր քանդված մեքենայով հանկարծ հարսին թափ չտա... մեկ էլ տեսար՝ վիժեց:

ԼԻՐԻ - Մամ, իսկ քո՞ ինչին է պետք երեխան:

ՏԵՈՒՏԱ - Իսկ դու հաշվիր: Դպրոցում մաթեմատիկա անցել ես:

ԼԻՐԻ - Ի՞նչ հաշվեմ:

ՏԵՈՒՏԱ - Կեկին վաթսունհինգ տարեկան է: Ես էլ ջախել չեմ: Նա որ մեռնի՝ ո՞ր ենք գնալու: Տունը ո՞ւմ կհասնի:

ԼԻՐԻ - Չգիտեմ:

ՏԵՈՒՏԱ - Ես էլ չգիտեմ: Տունն առանց տղամարդ չի լինի: Իսկ ո՞վ է մեր տղամարդը: Ո՞վ մեզ կպաշտպանի: Գիժ Սալի՞ն:

ԼԻՐԻ - Թե ինչի՞դ է պետք էս տունը: Ախր, էստեղ շնչել չի լինում: Արի գնանք...

ՏԵՈՒՏԱ - Ո՞ր ես պատրաստվում
գնալ, հիմար:

ԼԻՐԻ - Ուր ասես, միայն թե էստե-
ղից հեռու: Բնակարան կվար-
ձենք: Միայն ես ու դու:

ՏԵՈՒՏԱ - Իսկ ինչո՞վ կապրենք:

ԼԻՐԻ - Կաշխատեմ: Արհեստանոց
կընդունվեմ: Հեռուստացույց ու
հեռախոս կվերանորոգեմ:

ՏԵՈՒՏԱ - Յնդե՛լ է էս աղջիկը, ո՞վ
կնոջը հեռուստացույց կվստահի:
Ո՞ր մի տղամարդը:

ԼԻՐԻ - Մամ, հիմա ուրիշ ժամանակ-
ներ են: Ամեն ինչ է փոխվել...

ՏԵՈՒՏԱ - Ի՞նչ՝ «ամեն ինչ»: Որտե՞ղ:
Աշխարհը տղամարդիկ են կա-
ռավարում: Էդպես եղել է ու էդ-
պես կլինի: Թե ինչ եմ
բորբոքվում, տղամարդկանց ճա-
նաչելու կարիքը չունես... (Վեր է
թռչում:) Եկան:

**Չեռնափայտին հենվելով գալիս
է քեռի Կեկիհն: Էդոնան բերում է
անձայն հեկեկացող Ռոզաֆա-
յին:**

ՏԵՈՒՏԱ - Ի՞նչ է պատահել... Չլինի՞
երեխային թափ է տվել:

ԿԵԿԻ - Դրան ներս տար, Էդոնա ու
դուրը լավ կողպիր:

**Էդոնան Ռոզաֆային տանում է
կամանց հարկաբաժինը:**

ՏԵՈՒՏԱ - Գուցե բացատրե՞ք, թե ինչ
է պատահել:

ԿԵԿԻ - (Լիրիին): Դու էլ չքվիր:

ԼԻՐԻ - Ինչի՞ որ...

ԿԵԿԻ - (ձեռնափայտը թափահարե-
լով): Չքվիր, ասացի:

**Լիրին տուն է գնում: Քեռի Կեկիհն
ծանր նստում է, գլուխն առնում
ձեռքերի մեջ:**

ԿԵԿԻ - Աստված, ինչի՞ համար...

ՏԵՈՒՏԱ - Կեկի, մի վախեցնի ինձ:

ԿԵԿԻ - Ինչի՞ համար...

ՏԵՈՒՏԱ - Ի՞նչ անեմ քեզ համար,
հարազատս, ի՞նչ...

ԿԵԿԻ - Հանգիստ թող ինձ:

ՏԵՈՒՏԱ - Քեզ հանդարտվել է պետք...

ԿԵԿԻ - Ասացի՝ հանգիստ թող ինձ:

**Տեուտան վազում է դեպի ամե-
նամոտիկ պատուհանը, մերս է
նայում:**

ՏԵՈՒՏԱ - Լիրի, դեղի սրվակը
տուր... մեկ էլ շիշը... էն մեկը...
շուտ, ո՞ւմ եմ ասում: (Վերադառ-
նում է սրվակով ու բուրբոնի կի-
սատ շշով:)

ՏԵՈՒՏԱ - (Մի քանի դեղահար պար-
զելով): Առ, կուլ տուր:

**Կեկիհն խույս է տալիս, բայց Տեու-
տային հաջողվում է հաբերը
խցկել նրա բերանը: Հերքը հաս-
նում է բուրբոնին: Քեռի Կեկիհն
խմում է շիշ, կռնչում, կնճռու-
վում է:**

ԿԵԿԻ - Էս ի՞նչ գարշանք է:

ՏԵՈՒՏԱ - Դեղ է, չինական օդի:

ԿԵԿԻ - Հիմար, որոշել ես ինձ թու-
նավորել...

ՏԵՈՒՏԱ - Դե, հերիք է: Տղամարդ
ես, թե՛ ինչ ես... պատմիր:

Ճշարվ դուրս է վազում Էդոնան,

ընկնում է Կեկիի ոտքերը, գրկում երկարաճիտք կոշիկները: Ու ոռնում է...

ԿԵԿԻ - Արդեն պատմել է...

ՏԵՌԻՏԱ - Ի՞նչ է պատմել... Ձենդ կտրի, Էդոնա, քեզ հետ եմ... Թե չէ որ խփեցի...

Էդոնան քիչ հանդարտվում է, բայց շարունակում է գրկել քեռի Կեկիի ոտքերը: Կեկին գրպանից հանում է դրամապանակը, այնտեղից՝ ուլտրաձայնային հետազոտման պատկերը, պարզում է Տեուտային:

ՏԵՌԻՏԱ - *(զննելով պատկերը)*: Սա ի՞նչ է:

ԿԵԿԻ - Աղջիկ է, աղջիկ:

Էդոնան խլում է պատկերը, բառաչում է, փորձում է ինչ-որ բան տեսնել պատկերի վրա: Տեուտան ծանրորեն մատում է Կեկիի կողքը:

ՏԵՌԻՏԱ - Բա ի՞նչ ենք անելու:

ԿԵԿԻ - Չգիտեմ:

ՏԵՌԻՏԱ - Ստում ես, ամեն ինչ էլ գիտես: Թե չէ էս հիմարը չէր ոռնա:

ԿԵԿԻ - Ո՞նց ես խոսում եղբորդ հետ:

ՏԵՌԻՏԱ - Լսիր, Կեկի... երբեք սա չեմ ասել քեզ...

ԿԵԿԻ - Դե՛...

ՏԵՌԻՏԱ - Եթե մեջդ գոնե ինչ-որ բան է մնացել կնոջից... չանեն էդ բանը: Չստիպեն աղջկան... Ինքն էլ դեռ երեխա է, խղճա... *(Լալիս է:)*

ԿԵԿԻ - Կնո՞ջ... Կնոջ մասին հիշեցիր: Իսկ ձեզնից ո՞վ է ինձ խղճացել: Կյանք չտեսա ձեզ հետ: Չտեսա: Ատում եմ ձեզ: *(Շեկեկում է:)* Գողացել են կյանքս ու չեն ուզում ետ տալ... *(Տեղից ելնում է:)* Հենց վաղը աբորտ կանի: Լսում եք, վաղը: Ես տղամարդ եմ: Տղամարդ: Իմ մեջ կանացի ոչինչ չկա: Ստում եք: Վաղը, հենց վաղը... Էդ երեխան չի լինելու:

Էդոնան վեր է թռչում, սեղանից ճանկում է կացինն ու հարձակվում է Կեկիի վրա: Տեուտան ճչում է: Կեկին ձեռնափայտով խփում է Էդոնայի փորին, մաքս է գցում կացինն ու փլվում է գետնին: Կեկին նորից է հարվածում:

ՏԵՌԻՏԱ - Չէ, հերիք է, Կեկի... Երան որ սպանես՝ բանտ կնստեցնեն: Մենք սովից կսատկենք:

Կեկին ձեռնափայտը շարտում է: Տեուտան Էդոնային քարշ է տալիս տուն: Կեկին ճոճվելով գնում է տղամարդկանց հարկաբաժինը: Կանանց հարկաբաժնից սայլակով հայտնվում է Լիբին:

ԼԻԲԻ - Զեռի:

ԿԵԿԻ - *(կանգ չառնելով)*: Ի՞նչ...

ԼԻԲԻ - Զեռի, սպասիր:

ԿԵԿԻ - *(փաթ ընկնող լեզվով)*: Հանգիստ թող...

ԼԻԲԻ - Սալիին չենք կերակրել: Բանալին տուր, ծաշ տանեմ նրան:

Կեկին կանգնում է դռան մոտ,

հենվում պատին, գոտուն կապած բանալիների տրցակից անջատում է մեկը, տալիս է Լիբիին:

ԼԻԲԻ - Զեռի, սա էն բանալին չէ:

Կեկին բանալի է տալիս, մյուսը վերցնում ու գնում է ներս: Լիբին մոտենում է պատուհաններից մեկին, մազերից հանում է ծամկալը: Կախավի կողպեքը բզբզում է, բացում է փակոցափեղկը:

ԼԻԲԻ - (դեպի սենյակը): Հագնվիր, շոտ... հեռախոսը վերցրու: Դուրս արի, միայն թե կամաց:

Լիբին շուրջն է նայում, սայլակով հասնում է բակի կենտրոնը: Պատուհանից դուրս է սողում երկար գիշերանոց հագած Ռոզաֆան:

ԼԻԲԻ - (մոտ կանչելով, նրան է մեկնում բանալին): Սեյֆի բանալին է:

ՌՈՂԱՖԱ - Դու...

ԼԻԲԻ - Կամաց... հա, գողացել եմ: Մայրս Կեկիին իր հաբերն է տվել, նա հիմա կքնի: Ես էլ քեզ հետ կգայի, բայց էստեղ աստիճան կա, դրա համար էլ մենակ գնա: Սեյֆում քո փաստաթղթերն են, ոսկեղենը, նաև փող կա...

ՌՈՂԱՖԱ - (համբուրում է Լիբիին): Ծնորհակալ եմ:

ԼԻԲԻ - (կողքի է քաշվում): Մի բան էլ...

ՌՈՂԱՖԱ - Ի՞նչ:

ԼԻԲԻ - Թղթերի մեջ իմ անձնագիրն էլ կա: Էդ էլ վերցրու:

ՌՈՂԱՖԱ - Ինչի՞ համար:

ԼԻԲԻ - Ռոզաֆա, նա ինձ կսպանի,

եթե իմանա, որ նրան թալանել ենք: Ես քեզ հետ կգամ:

ՌՈՂԱՖԱ - Ո՞ր:

ԼԻԲԻ - Զո Մայքլի մոտ: Դեսպանատուն:

ՌՈՂԱՖԱ - Չէ, սպասիր... ես չեմ կարող քեզ հետս տանել: Ինչպե՞ս բացատրեմ Մայքլին, ով ես դու:

ԼԻԲԻ - Ես քո ընկերուհին եմ: Ես քեզ օգնել եմ, որ փախնես:

ՌՈՂԱՖԱ - Ընկերուհի՛ հա: Ամեն ինչ ծիշտ է, էդպես էլ կա... բայց ի՞նչ ես պատրաստվում անել հետագայում:

ԼԻԲԻ - Դա պետք է քննարկել հենց էստեղ ու հիմա՛:

ՌՈՂԱՖԱ - Պետք է: Մայքլը նույնիսկ իմ հղիության մասին դեռ չգիտի:

ԼԻԲԻ - Դու չե՞ս ասել:

ՌՈՂԱՖԱ - Պարզապես... չեմ հասցրել: Եվ ընդհանրապես, ինչո՞ւ պիտի քեզ հաշիվ տամ:

ԼԻԲԻ - Լսի, դու լրիվ հիմար ես:

ՌՈՂԱՖԱ - Հերիք է ինձ հիմար անվանեք: Դու շա՛տ խելացի ես... Ու քեզ հետս չեմ տանի:

ԼԻԲԻ - Ի՞նչ:

ՌՈՂԱՖԱ - Ինչ լսեցիր: Զեզ նայիր, ո՞ւմ ես պետք Ամերիկայում: Այլանդամկ:

ԼԻԲԻ - (դադարից հետո): Դու հասկանո՞ւմ ես, որ հիմա կարող եմ գոռալ:

ՌՈՂԱՖԱ - Հետո՞ ինչ, գոռա: Գոռա, ինչքան ուժդ կհերիքի:

ԼԻԲԻ - Բոլորը էստեղ կվազեն: Իսկ սեյֆի բանալին քո մոտ է:

ՌՈԶԱՖԱ - Գոռա: Ես բոլորին կասեմ, որ դու ես ինձ ստիպել: Կասեմ, որ ստիպել ես շատ վատ բաներ անել: Ամեն գիշեր ես ստիպել...

ԼԻՐԻ - Ինչ ես ուզում ասել:

ՌՈԶԱՖԱ - Չես հասկանում, հա՛... Որտեղի՞ց հասկանաս, ախր դու կույս ես: Փոխարենը նրանք կհասկանան ասածս: Կհասկանան, այ, կտեսնես... Ու էդ ժամանակ քեզ չեմ նախանձի: Նրանք քեզ նորից գժանոց կուղարկեն: Էնտեղ է քո տեղը, այլասերված: Իսկ հիմա գոռա, բարձր գոռա: Դե՛... Ինչի՞ սկզբեցիր:

ԼԻՐԻ - (դադարից հետո): Ես ամեն ինչ հասկացա: Դու նրանց նման ես, ես հասկացա: Բոլորդ էդպիսին եք:

ՌՈԶԱՖԱ - Փակիր կեղտոտ բերանդ, թե չէ, երդվում եմ աստծով, հիմա ես կգոռամ:

Լիլին դեմքը քաքցնում է ձեռքերի մեջ: Ռոզաֆան մտնում է տղամարդկանց հարկաբաժինը: Կանանց հարկաբաժնից գալիս է երկար գիշերանոց հագած Տեուտան: Նա անլսելի մոտենում, գրկում է դատեր ուները:

ԼԻՐԻ - (վեր է թռչում): Մայրիկ:

ՏԵՈՒՏԱ - Կամաց, մի գոռա... ես ամեն ինչ լսեցի: Թող գնա:

ԼԻՐԻ - Մայրիկ... (Լաց է լինում):

ՏԵՈՒՏԱ - Թող գնա:

Տեուտան ջրում է դատեր սայլակը, տանում դեպի տուն:

Տղամարդկանց հարկաբաժնից կրակոցի ձայն է լսվում: Տեուտան վազում է ներս:

ԼԻՐԻ - Չէ, չէ, չէ...

Հայտնվում է Տեուտան, նրան է տալիս Ռոզաֆայի հեռախոսը:

ՏԵՈՒՏԱ - Չգիտեմ սա ոնց է աշխատում: Զանգիր 129:

ԼԻՐԻ - Ոստիկանությո՛ւն:

ՏԵՈՒՏԱ - Ծտապ օգնությունը չի օգնի: Կեկին սպանեց նրան:

Դողացող ձեռքերով Լիլին փորձում է համար հավաքել: Գալիս է Կեկին:

ԿԵԿԻ - Սպասիր, Լիլի:

ՏԵՈՒՏԱ - Կեկի, եթե մենք չզանգենք ոստիկանություն, դա կանեն հարևանները: Ավելի վատ կլինի:

ԿԵԿԻ - Սրանից վատ ո՞րն է, ո՞րը...

ՏԵՈՒՏԱ - Զանգիր, Լիլի:

ԿԵԿԻ - Պետք չէ: Երբ ազդանշանային համակարգ էին անցկացնում խանութում, սեյֆին էլ մի լար միացրին, էնպես որ ոստիկանները շուտ կգան, իսկ մենք դեռ գործ ունենք: (Տեուտային.) Ջուր տուր, խոսել չեմ կարող... գլուխս էլ պայթում է... (Տեուտան գնում է:) Ախր, ինչի՞ էր էդտեղ խցկվում, հույսն ինչի՞ վրա էր դրել:

ԼԻՐԻ - (կամաց): Նա չգիտեր ազդանշանի մասին:

Տեուտան ջուր է բերում, Կեկին ազահորեն խմում է:

ԿԵԿԻ - Տեուտա, էս ամենի մեղավորը դեղերդ են... Ու հերիք է դրանք խժռես, մի օր դրանք քեզ կսպանեն:

ՏԵՈՒՏԱ - Լավ, Կեկի, կշարտեմ բուլորը:

ԿԵԿԻ - Լիրի, աղջիկս, քիչ ժամանակ ունենք, դրա համար էլ ձիշտը ինձ կասես: Դու կոնյս ես:

ԼԻՐԻ - Զեռի, ես...

ԿԵԿԻ - Պատասխանիր, հասարակ հարց է:

ԼԻՐԻ - Հա, քեռի... Հա:

ԿԵԿԻ - Լավ է: Հիմա քեզ կխնդրեմ, որ մի երդում տաս:

ՏԵՈՒՏԱ - Սրբապատկեր բերեմ:

ԿԵԿԻ - Ժամանակ չկա, Տեուտա... (Վզից հանում է մեղալիոնը:)
Մեջը Ռինորի լուսանկարն է, միշտ ինձ հետ է... Երդվիր եղբորդ նկարի առաջ, որ...

ԼԻՐԻ - (գոռում է): Չէ-է-է-է... Չէ, քեռի, չէ-է-է...

ԿԵԿԻ - Տեուտա, մկրատ է պետք, մազերը պիտի կտրենք:

ԼԻՐԻ - Չէ, քեռի, չէ-է-...

ԿԵԿԻ - Լիրի, աղջիկս, հիմա ոստիկանները կգան ու ինձ կտանեն ձեզնից:

ՏԵՈՒՏԱ - Կեկի, դու ոչ մի մեղք չունես, աղջիկն ուզում էր քեզ թալա-

նել: Դու չես տեսել, ում վրա ես կրակել:

ԿԵԿԻ - Հիմա դա կարևոր չէ: Կարևորն էն է, որ ընտանիքին տղամարդ է պետք: Հասկանում ես, ինչ եմ ասում... Հասկանում ես, Լիրի: Մեկը պիտի հոգա բուլորի մասին: Մեկը պիտի սիրի... Ես չկարողացա, բայց դու... դու կարող ես...

ԼԻՐԻ - Չէ, չէ, չեմ ուզում...

ՏԵՈՒՏԱ - (բերում է մկրատը): Կեկի, նա համաձայն է, ես իմ աղջկան լավ եմ ծանաչում:

ԿԵԿԻ - Թող ինքն ասի, ես պիտի ինքս լսեմ... Հասկանամ, որ էս ամենը իզուր չէր...

ՏԵՈՒՏԱ - (Լիրիին): Ամեն ինչ լավ կլինի, ես քո կողքին եմ: Մենք, ախր, ընտանիք ենք... (Գրկում է աղջկան:)

ԿԵԿԻ - Վերցրու մեղալիոնը: (Մեղալիոնը դնում է նրա ձեռքի մեջ:)
Կրկնիր ինձ հետ: Երդվում եմ...

Տանը, ինչ-որ անկյունում, ոռնում է Էդոնան:

ԿԵԿԻ - Կրկնիր ինձ հետ: Երդվում եմ...

ԼԻՐԻ - Ես երդվում եմ... Երդվում եմ: Երդվում եմ:

Խավար:

Ռուսերենից թարգմանությունը՝ Կարինե Խոդիկյանի

ԴՐԱՄԱՍՏՈՒՐԳԻԱ

գրական-գեղարվեստական հանդես

ISSN 1829-0701

© «Դրամաստուրգիա», 2017
Տպագրվել է պետական աջակցությամբ

Խմբագիր՝
ԿԱՐԻՆԵ ԽՈՒՐՄԱՆՅԱՆ

Կազմը և էջադրումը՝
ՆԱՌԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Նյութերն ընդունվում են մեքենագիր կամ շարվածքով:
Բնագրերը չեն վերադարձվում:

Հանդեսում տպագրված պիեսների բեմադրությամբ շահագրգիռ
թատրոնները դրանց օգտագործման թույլտվության համար
դիմեն անմիջական իրավատերերին՝ հեղինակներին:

Խմբագրության հասցեն՝
Երևան, Օրբելի 18/6, հեռ. 22-76-08

Ստորագրված է տպագրության 16.12.2017
Գինը՝ պայմանագրային:

Գրանցման վկայական՝ 01Մ 000089

Չափը՝ 70x100, 1/16: Ծավալը՝ 10.5 տպ. մամուլ:
Թուղթը և տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 500 օրինակ:

Տպագրվել է
«Վան ԱՐՅԱՆ» ՍՊԸ-ը՝
ՀԳՄ «Լ. Զ. ՍՈՒՐՄԵԼՅԱՆ» տպագրատանը: